



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

**NEW WORDS IN WEST ARMENIAN
LANGUAGE**

BOOK 2

**НОВЫЕ СЛОВА НА ЗАПАДНОАРМЯНСКОМ
ЯЗЫКЕ**

КНИГА 2

Yerevan 2024
Երևան 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼԵԶՈՒԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐ ԲԱՌԵՐ
ԱՐԵՒՍՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ

Բ. ԳԻՐՔ

Երևան
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

Ն 930

Կը տպագրուի ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի
ինստիտուտի գիտական խորհուրդի որոշմամբ

Խմբագիր՝ Բ.Գ.Պ. Վ. Լ. Կատվայան
Գրախօս՝ Բ.Գ.Թ. Ա. Ս. Գալստյան

Նոր բառեր / Կազմ.՝ Ս. Տիոյեան, Ս. Ֆալակեան, Ա.

Ն 930 Ֆիշենկճեան, Յ. Մարաշլեան, Զ. Խալիկեան, Ն.

Խաչիբաբեան.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2024.

Գիրք Բ.- 193 էջ:

«Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» խորագիրով Բ գիրք աշխատասիրութիւնը կ'ընդգրկէ արեւմտահայերէնի աւելի քան 800 բառեր, որոնք արեւմտահայերէնի որեւէ բառարանին մէջ տակաւին չեն վկայուած: Ատոնք քաղուած են արեւմտահայերէն արձակ ու չափածոյ ստեղծագործողներու գիրքերէն, ամսագիրերէն, շաբաթաթերթերէն եւ օրաթերթերէն:

Աշխատասիրութիւնը կրնայ օգտակար ըլլալ ոչ միայն արեւմտահայերէնի բառագիտութեամբ ու բառակազմութեամբ հետաքրքրուող մասնագէտներուն, այլեւ՝ ուսանողներուն եւ ուսուցիչներուն համար:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-970-09-7

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անվան լեզվի ինստիտուտ, 2024

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արևմտահայերենի նորաբանությունների Բ գիրքը պարունակում է ավելի քան 800 բառ, որոնք գրանցված չեն արդի բառարաններում: Նյութը քաղված է սփյուռքահայ մամուլից, գիտական, գեղարվեստական ինքնուրույն և թարգմանական գրականությունից: Գլխաբառից հետո նշվում է նորաբանության խոսքիմասային պատկանելությունը, ըստ անհրաժեշտության արվում են ոճական նշումներ, ապա բառը բացատրվում է, բերվում են բնագրային օրինակը և սկզբնաղբյուրը: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. // – զուգահեռները կը դրուին գլխաբառի արեւմտահայերէն եւ արեւելահայերէն բացատրութիւններու միջեւ, այլեւ յապատումներու մէջ եզրոյթային տարբերութիւնները նշելու ժամանակ:

2. / – բանաստեղծական տողերու միջեւ, եթէ աստոնք կը բերուին շարունակաբար

3. ած. – ածական

4. բ. – բայ

5. բժշկ. – բժշկական

6. բնատ. – բանաստեղծական

7. գեղգտ. – գեղագիտական

8. գեղնկ. – գեղանկարչական

9. գ. – գոյական

10. գրկն. – գրականագիտական

11. գրք. – գրքային

12. դիպվ. – դիպուածային

13. երժշտ. – երաժշտական

14. ընկ./սոց. – ընկերաբանութիւն/ սոցիոլոգիա

15. իրավ. – իրաւաբանական

16. լեզվ. – լեզուաբանական

17. կենս. – կենսաբանական

18. կզմխս. – կազմախօսական

19. կր. – կրօնական

20. հեգն. – հեգնական

21. մկբ. – մակբայ

22. մարգ. – մարգական

23. մսնգ. – մասնագիտական

24. շին. – շինարարական

25. ռազմ. – ռազմական

26. փիլ. – փիլիսոփայական

27. փխբ. – փոխաբերական

28. քղք. – քաղաքական

29. օղգ. – օղագնացութիւն

30. օտրբ. – օտարաբանութիւն

ԱԶԱՏԱՏԵՆՉՈՒԹԻՒՆ, գ., Ազատ ըլլալու մեծ փափաք՝ իղձ տենչ, ազատասիրություն // Ազատություն տենչալը, ազատատենչի հասկությունը: Իր բազմաբնոյթ հրապարակումներով «Ազդարար»-ը նաեւ անդրադարձած էր հայ ժողովուրդի լուսատրույթեան, ազգային ինքնաճանաչողութեան եւ հայրենիքի ազատագրութեան հետ առնչուող խնդիրներու լուսաբանութեան՝ միշտ փորձելով ընթերցողներուն մէջ արթնցնել ազգային գիտակցութիւնը, միաժամանակ ամրապնդելով **ազատատենչութեան** եւ հայրենասիրութեան վսեմ ոգին (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԱԶԳԱՅՆԱՊԱՇՏ, ան., Ծայրայեղօրէն՝ մոլի ազգասէր, ազգայնամուլ // Ազգայնականությունը պաշտող, ազգայնական: Թիւ երկու, Սայիտ հռչակ վայելած իր գիրքի հրատարակութենէն ետք անտեսած է այն պարագան, որ վերջինս ծառայած է որպէս **ազգայնապաշտ** հոսանքներու գործիք, շահագործուելով որպէս իմաստասիրական արդարացում շատ մը պահպանողական, հիմնապաշտ կեցուածքներու (Բազ, թիւ 2-3 2021, էջ 90):

ԱԶՐՊԷՅՃԱՆՑԻ, 1. գ., ան., Ազրպէյճանի ազգի անդամ՝ ներկայացուցիչ: 2. գ., Ազրպէյճանի մէջ ծնած, այնտեղի բնակիչ // Ադրբեջանի բնակիչ, ներկայացուցիչ: Իրանի եւ Ազրպէյճանի միջեւ լարուածութեան լոյսին տակ, **ազրպէյճանցիները** որոշած են իրենց ձեռով պայքարիլ իրանցիներուն դէմ. Պաքուի մէջ Իրանի դեսպանատան առջեւ դրուած են լուսցարանի մէջ անհրաժեշտ սափորներ, որոնք կ'օգտագործուին մաքրելու եւ մաքրուելու համար (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԱԹԵՆԱԿԱՆ, ան., Աթենք քաղաքին իւրայատուկ՝ ուրոյն, անոր վերաբերող, Աթենքին մէջ տեղի ունեցող // Աթենք քաղաքին հատուկ՝ բնորոշ, Աթենքում գտնված ժամանակ, աթենքում ընթացող: Պրոտրեսիոս անունով ճանչցուող Պարոյր Հայկազնի **աթենական** կեանքը կը պատկերէ այն ապագան, որ Հայկունին պիտի գտնէ Ամերիկայի մէջ (Բազ., թիւ 4, 2020, էջ 67):

ԱԺԱՆԱԲԱՐՈՅ, ան., **Բարոյական արժեք գուրկ, սին, բարոյապէս անարժեք // Բարոյագուրկ, ազգային արժեքներից խուսափող:** Երեսուն տարի շարունակ հասարակութիւնը կերակրած ենք **աժանաբարոյ** դրուագաշարներով, օտարաբոյր երաժշտութեամբ սին ու անիմաստ խօսքերով պարուրուած, սուտերով ու անհեթեթի սահմանները հատող հռետորաբանութեամբ (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱԼՔԵՄԻՍ, գ., **Տարրալուծութեան օգնութեամբ սովորական նիւթը՝ առարկան անսովոր բացառիկ դարձնող մարդ, տարրախոյզ // Ալքիմիայով զբաղվող մարդ, ալքիմիկոս:** Համաձայն մեծ **ալքեմիստ** Բիէր տը Պոնիֆասին, ադամանդը կրնար անտեսանելի դարձնել մարդը, եւ հնդկական ակատը կ'ընէր զայն պերճախօս (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 221):

ԱԿԱԴԵՄԱԿԱՆՕՐԵՆ, մկբ., **Ակադեմիային՝ զիտութեանը ուրոյն՝ յատուկ եղանակով // 1. Ակադեմիական ձևով: 2. Փխբ. Գիտականտրեն:** Այդ գործընթացը սակայն դարձեալ ունի իր խոցելի կողմերը՝ շատերը չէ որ հայերէն աղբիւրներն ու հայերէն վերլուծական արտադրութիւնները ուսումնասիրելու հակումն ունին, ու դեռ նուազ՝ **ակադեմականօրէն** անշահ այդ լեզուով գրելու (Բագ, թիւ 2-3 2021, էջ 56):

ԱԿԱՆԹԱՆՄԱՆ, ան., **Բոյսի մը երկար ցօղունի վրայ քով քովի բացուած սպիտակ ծաղիկներուն պէս, անոնց նման // Ականթի՝ շղթայաձև ծաղիկներով արևադարձային մի բույսի նման: Ականթանման գանգուրներով Գրիֆոնետսո Պագլիոնին նաեւ՝ որ սպաննեց Աստորը իր նորահարսին հետ... (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 240):**

ԱԿՆՈՑԱՎՃԱՌԱՏՈՒՆ, գ., **Ակնոցներ շինելու, նորոգելու և ծախելու խանութ // Ակնոցների վաճառքի, պատրաստման և նորոգ-**

ման խանութ: Մեկուն **ակնոցավաճառատունը**, միսին նպարավաճառատունը, երրորդի մը կառատունը, չորրորդի մը աշխատանոցը կամ ճաշարանը եւ այլն (Կրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 66):

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ, ան., **Ահաբեկչութեան՝ ժողովուրդին ահաբեկելով նպատակին հասնելուն վերաբերող, անոր յատկանշական // Ահաբեկչին հատուկ, ահ ու սարսափ տարածող, առաջացնող:** 11 սեպտեմբեր 2001-ի **ահաբեկչական** յարձակումներէն օրեր առաջ կարելի եղած է Նիւ Եորքի յարձակումներու երկու զոհերու ինքնութիւնը ճշդել ծիներու յայտնաբերման նոր ճարտարագիտութեան շնորհիւ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 8):

ԱՂԵՏԱՀԱՐՈՒԹԻԻՆ, գ., **Դաժան փորձանքի՝ սուկալի դրժբախտութեան հանդիպած՝ մատնուած // Ծանր աղէտի ենթարկված:** Սակայն, այդ լեզուին «համրութիւն»ը նշանակ էր անոր **աղէտահարութեան** (Բագ, թիւ 2-3 2021, էջ 182):

ԱՄԲՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ, ան., **Յատկանշական է այն համոզումին, որ իրադարձութեան մը կամ առարկայի մը տարբեր մասերը սերտ առնչութեան մէջ են, ուստի անոնք պէտք է հետազօտուին ընդհանրականօրէն, ամբողջապէս // Ընդհանուր առմամբ, ամբողջութեամբ:** Այժմէականութեամբ կը հասկնամ մեթօտաբանական պայմանը, որ կը նշանակէ ըլլալ քննական (critical) եւ ոչ թէ՛ նկարագրական եւ զգացական, **ամբողջաբանական** (holistic), այսինքն՝ նկատի առնել բոլոր երեւոյթները, առանց կանխադատումներու (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԻԻՆ, գ., **Առարկայի, նիւթի (հոս՝ երկիրի մը տարածքի) անբաժանելի ըլլալը // Անբաժանելիություն:** Այնուհետեւ դասախօսը ներկայացուց Անգարայի կողմէ վերափոխուած նախապայմանները՝ Թուրքիոյ տարածքային **ամբողջականութեան** ճանաչում կամ Կարսի պայմանագիրի վերահաստատում,

Երեւանի կողմէ Յեղասպանութեան միջազգային ճանաչման պահանջէ հրաժարում, Ազրայէճանի հետ տարածքային **ամբողջականութիւններու** փոխադարձ ճանաչում՝ սահմանազատման եւ սահմանագծման գործընթացներով, ինչպէս նաեւ Սահմանադրութեան վերանայում՝ Յեղասպանութեան ճանաչման բաժինը Անկախութեան հրչակագիրէն դուրս հանելու առումով (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7,8):

ԱՄԵՆԱՇԱՐԺ, ած., **Ամէն բան սասանող՝ ցնցող // Ամէն ինչ՝ ամենքին շարժող:** Քանի բազմաթիւ առիթներով կրկնած է Նշանեան, թէ Աղէտը «ղէպք» է, ապա հոգեկանութիւն բառով կը հասկնամ այն՝ որ հեղեղուած է «ղէպք»(եր)է եւ կը ծածկէ ընդհանրական հոգիին «երկինք»ը՝ իբր անոր խաւար գիշերներուն թաքուն, **ամենաշարժ** իսկութիւնը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 168):

ԱՄՈՒՄՆԱՅԵԱԼ, ած., **Պսակուած՝ ամուսնացած // Ամուսնացած:** Մեր օրերուն, բոլոր ամուսնացածները կ'ապրին ամուրիներու նման, ու բոլոր ամուրիները՝ **ամուսնացեալներու** նման (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 294):

ԱՄԲԱՅՈՒՄ, գ., **Բան մը զօրացնելը, այն ազդու գործօն դադանելը // Ամբացնելը, ամբացվելը, ամբապնդում:** Այս կենսանիւթը կը նպաստէ մեր մարմնի դիմադրականութեան (հիւանդութիւններուն եւ վարակումներուն դէմ պայքարելու կարողութեան) **ամբացումին**, կ'օգնէ մեր ոսկորներուն աճումին եւ առողջութեան (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԱՄԲՕԲԷՆ, ած., **Հաստատուն, անխախտ ձեւով //Անսասան, հաստատուն:** Կիպրոսի մասնակի կորուստին պատասխանատուները ստացան իրենց արժանի պատիժը, քաղաքացիական պատերազմի քէնի ու փոխադարձ ռիսի մթնոլորտը փարատեցաւ, տեղի ունեցաւ ներազգային հաշտութիւն, եւ յուլիսեան առաւօտ մը յոյները արթնցան տեսնելու համար, որ ժողովրդավարութիւնը **ամբո-**

րէն հաստատուած է իրենց հայրենիքէն ներս (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱՆԱՐԽԻԻԱԻՈՐԵԼԻՈՒԹԻԻՆ, գ., **Պատմական փաստի՝ իրողութեան չվերածուիլը, անոր անկարելիութիւնը // Արխիվավորելիություն չունենալը, արխիվավորման ենթակա չլինելը:** Վկայութիւնը կ'երաշխաւորէ ոչ թէ արխիւին մէջ պահուած աստօթեան փաստական ճշմարտութիւնը, այլ անոր **անարխիւաւորելիութիւնը** (Բազ, թիւ 2-3 2021, էջ 116):

ԱՆԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ, ան., **Բանաստեղծին յատուկ մոգական հմայք՝ դիւթանք չունեցող/փխր., Ոչ գրավիչ, հասարակ:** Մեծ բանաստեղծը, ի՛րապէս մեծ բանաստեղծը, կ'ըլլայ ամենէ՛ն աւելի **անբանաստեղծական** արարածը բոլոր մարդոց մէջ (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 91):

ԱՆԲՈՒԺԵԼԻՕՐԷՆ, մկբ., **Բուժում՝ դարման չունեցողի պէս // Անբուժելի ձևով, չբուժվող:** Քսաներորդ դարու վերջին, Թումի հայրը կը համաձայնի զակկին **անբուժելիօրէն** հիւանդ մարմինը սառեցնել մինչէւ բուժման մը գիտը (Բազ., թիւ 4, 2020, էջ 68):

ԱՆԳԼԻԱԳԻՐ, գ., **Հայ գրող, որ անգլերէն կը ստեղծագործէ // Անգլերէն գրող, անգլերենով ստեղծագործող:** Հարազատ հայկական ուստանին մէջ իր արժանապատիւ դիրքը չգտնող Հայկունին պիտի դառնայ տարաբնակ, հետամուտ ամերիկեան խորթ միջավայրին մէջ **անգլիագիր** հեղինակի մը համբաւին (Բազ., թիւ 4, 2020, էջ 66):

ԱՆԳԼԻԱԳԻՐ, ան., **Գլխագիր՝ վերնագիր չունեցող // Անվերնագիր:** Դեմքին շնորհիւ, նկարի ու պատկերի, **անգլիագիր** պատկերի եւ գլխագրուած պատկերի տարբերութիւններն են որ երեւան կու գան (Մ.Ն., 2015, էջ 51):

ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ, անծ., Ազգայինի ըմբռնումէն վեր, բոլոր ազգերուն վերաբերող // Որնէ ազգի՝ երկրի սահմաններից դուրս, անդրազգայն: Նշանեանի քննադատական մօտեցումը կը ներկայացնէ այս հոսանքին դէմ այլընտրանք մը, որ միեւնոյն ժամանակ քննադատութիւնը կը դարձնէ աշխարհիկ՝ սփիւռքեան **անդրազգային** պայմաններէ բխած եւ սփիւռքեան **անդրազգային** պայմաններու խօսող (Բագ, թիւ 2-3 2021, էջ 61):

ԱՆԴՐԱԶԳԵԱՆ, անծ., Ազգ հասկացողութենէն այն կողմ, հասարակաբար բոլոր ազգերուն յատուկ // Ազգային պատկերացումներից վեր, բոլոր ազգերին հատուկ, **անդրազգային**: Անդին կար նոր Սփիւռքը, մանաւանդ այն գաղութները, ուր գաղթական հայութիւնը տասնեակ հազարներով համախումբ կ'ապրէր յարաբերաբար թոյլ եւ հանդուրժող վարչակարգերու տակ եւ **անդրազգեան** պայմաններու մէջ (Բագ, թիւ 3, 2020, էջ 65):

ԱՆԴՐԱԿԵՐՊԵԼ, Բ., Եղելութիւն մը ձեւափոխել՝ **անոր լեզուական տարագ մը տալով** // Արտապատկերէ: «Իրողութիւն» մը լեզուական հաստատում մըն է, զուտ լեզուական երեւոյթ մը: Տեսակ մը բարբառում (utterance) մըն է, որուն նպատակն է դէպք մը **անդրակերպել** զիտութեան առարկայի մը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 173):

ԱՆԴՐԱՆՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Ճանաչողութեան եղանակ, որուն համաձայն առարկաներու եւ երեւոյթներու ներքին բնոյթի ճանաչողութիւնը կախուած չէ թանձրացեալ փորձի ու փորձառարութեան հետ, ինքնօրէն ճանաչելի // Փիլիսոփայական ուսմունք՝ համաձայն որի զիտակցության փորձի վրա չհիմնված ձևերը նախորդում են փորձին և հանդիսանում են դրա պայմանները, **տրանսցենդենտալիզմ**: [Գիտակարգեր]...որոնց մէջ քննական միտքը ինքզինք դուրս կը կացուցանէ հետազօտութեան մէջ ոչ միայն առարկայէն այլեւ շրջապատէն եւ կ'ապաստանի իտեպական ու «մաքուր» **անդրանցականութեան** մը մէջ.... (Գրիգոր Պըլտեան,

Սարգիս Խաչենց, ՓԲԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոթյուն գրադարան', Անտարես, 2017, էջ 10):

ԱՆԴՐՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ, ան., **Քաղաքականապես որոշեալ տարածաշրջանի մը սահմանէն անդին //Որնէ որոշակի տարածաշրջանից դուրս հեռու:** Ան պատասխանատու էր Քայիտայի անդրտարածաշրջանային յարձակումներու կազմակերպման, ֆինանսաւորման եւ հաստատման համար (Ազգակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԱՆԵՔԹՈՏ, գ., **Իրական կամ յօինուած կարճ պատմութիւն՝ ծիծաղաշարժ կամ անբարոյ բովանդակութեամբ //Զվարճալի՝ հումորային կարճ պատմություն:** Ուրեմն՝ կատարած եմ բանահաւաքչական ու բանագիտական աշխատանք ու փրկած բազում երգեր, խաղիկներ, հեքիաթներ ու գրոյցներ, առածներ ու սասցուածքներ, **անեքթոտներ**, խաղեր ու պարեր... (ԱԶԳԱԳՐԱԳԵՏ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄՂՈՒՄՈՎ, <https://www.azg.am>):

ԱՆԶԱՆԱԶԱՆԵԼԻՈՒԹԻՒՆ, գ., **Պատմական եւ բանասիրական տեսանկիւններէ զանազանելի՝ ուրոյն չըլլալը, կրկնուող չըլլալը //Անզանազանելի լինելը, զանազանելիություն չունենալը:** Բանասիրութեան, որպէս արդի իմացակարգ, ծննդաբանութիւնը առաջին հերթին Ֆուկոյէն առնելով, սակայն ներյայտօրէն հիմնուելով յետարդիական մտածողութեան ընձեռած կարելիութիւններու վրայ, Նշանեանի մեկնաբանութիւնները աղէտը կը պատմականացնեն որպէս բանասիրութեան դարաշրջանի կողմէ որոշադրուած պատմականացումէն ձերբազատելու կարելիութիւնը: Այս հակասութիւնն է՝ որպէս **անզանազանելիութիւն**, որպէս ապապատմականացնող պատմականացում, որ ուժ կու տայ անոր կազմալուծական ծրագիրին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 98):

ԱՆԹԻՄԵԼԻ, ան., իսկց., **Ծայրէ ծայր լեցուած իր՝ նիւթ, ուր անզամ ուժով կարելի չէ նոր բան աւելցնել // Անլցնելի, այն, որ**

հնարավոր չէ թխմել՝ վրա-վրա լցնել մի բանի մեջ: Ակնածանքս անմարսելի ահա կը փռուի գետինը, գոր մաքրել կ'արտորան, շփոթած, գործ տեսնողի կուրութեամբ, որ չտեսնուի, չգիտցուի **անթխմելի** ստամոքսներու պարզութիւնը (Պարութճեան՝ Լորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 22)):

ԱՆԹՈՅԼԱՏՐԵԼԻՈՒԹԻՒՆ, գ., **Տէրութեան օրէնքով արտօնուած չըլլալը, հաստատապէս թոյլատրուած չըլլալը //Պետական օրէնքով չարտոնվելը:** Իրան կը խօսի իր սահմաններու փոփոխութեան անընդունելիութեան եւ **անթոյլատրելիութեան** մասին եւ կը խոստանայ հակազդել, եթէ որեւէ ոտնձգութիւն կատարուի (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻՈՒԹԻՒՆ, գ., **Առարկայ (կամ երեւոյթ) որուն արժէքը՝ կարելորութիւնը ժամանակի ընթացքին չի նուազիր, մշտապէս պիտանի //Անժամկետանցություն, անանցանելիություն, հավերժություն:** Յաճախ, ինչպէս հինաւորց օրէնք է մեր մէջ, այդ պատասխանները յանգած են լուտանքներու, խեղաթիրումներու եւ ափյափոյ կիսափաստերու տարատեսակ գումարումին, վերահաստատելով Յակոբ Պարոնեանի «հայիոյանքը փաստի սով է» խօսքին **անժամանցելիութիւնը**, ինչպէս եւ բանավիճելու քաղաքավարութեան (կուլտուրայի՝ հայաստանեան բառով) ահաւոր պակասը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 44):

ԱՆԻՆՔՆ, ած., **Ինքն իր անձը՝ սեփականը չունեցող (հոս. իշխանութիւնը՝ տէրութիւնը կորսնցուցած) // Ինքնությունը՝ էությունը՝ անհատականությունը կորցրած:** Անոր բանտարկումը Անյուշ բերդին մէջ, ինչպէս սպարապետ Վասակի մորթին խոտով լըցնումը կը նշեն գահակալին հիւծումը, պարապ, **անինքն** գոյութիւնը, օտար հողի վրայ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 34):

ԱՆԻՐԱԻԱՑԻՈՒԹԻՒՆ, գ., **Անձ մը կամ ազգ մը բնական եւ քաղաքական իրաւունքներէ զրկելը, անիրաւացի՝ անօրինական**

ըլլալը // **Անիրավացի լինելը, անարդարություն:** Ցաւի ու ցասման ձայնը հնչեցնող Իշխանին հեղինակած երգը չի հանդիսանար լոկ դաշնակցական մարտիկի եւ զինակից ընկերոջ յիշատակի յարգանքի տուրք, այլ կ'ընկալուի՝ իբրեւ պոռթկում, բողոք՝ քաղաքակրթութեան պատմութեան մէջ թոյլ տրուած սարսափելի **անիրաւացիութեան** դէմ, հաստատում՝ իւրաքանչիւր ազգի ազատ եւ խաղաղ կեանքի իրաւունքին (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ԱՆԽԱՌՆՕՐԷՆ, մկբ., **Երեւոյթ մը իր սկզբնական՝ անարատ ձեւով, զերծ օտար ազդեցութիւններէ // Անխառն՝ անարատ ձեւով:** Զուտ, **անխառնօրէն** գեղջկական կեանք մըն է իրենց վարածը (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուք, 1992, էջ 289)

ԱՆԿԱԽԱՆԱԼ, բ., **Ուրիշի մը՝ օտարի մը կամքէն ազատիլ, հոս՝ քաղաքական անկախութիւն ձեռք ձգել, ինքնավար ըլլալ // Ազատություն, ինքնավարություն ձեռք բերելը:** Ո՞վ պիտի մտածէր, որ տարիներ ետք Արցախը կ'անկախանար Ազրպէյճանէն, ես կը դառնայի նախարար եւ կը հանդիպէի Մեծ վարպետին հետ (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԱՆԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ, գ., **Կարգէ՝ կարգուկանոնէ՝ որոշակի տրամաբանութեամբ դասաւորութենէ գուրկ ըլլալու դրութիւն // Կարգավորություն չունենալը, կարգավորված չլինելը:** Առաջինին պարագային՝ հոս գործ չունիս, բայց կ'աշխատիս, այսինքն կը ծառայես քեզի պէտքերուն համար կարգուած օրէնքին, կը ստրկանաս անոր եւ **անկարգաւորութեան** չարիքով կը թունաւորես մթնոլորտը (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 33)):

ԱՆԿՈՒՄԱՅԻՆ, ած., **Ձեռք ձգուած յաղթութիւն մը (հստ՝ ազատութիւնը, երկիրը) կորսնցնելու ճամբուն մէջ եղող, կործանարար, աղիտաւոր, կորստաբեր // Դեպի անկում տանող, անհեռանկար, անհույս:** Հոս ալ, փաստօրէն, կորուսեալ հողերուն վերատի-

րանալու եւ **անկումային** ընթացքէն օր առաջ վերականգնելու ճիգերը, կոչերը իրենց դիմաց կը շարուակեն գտնել մաշած յանկերգներ, որոնք այլապէս չեն նպաստեր հայկական ներուժին միատրման, բռունցքին վերապրկումին (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԱՆՀԱՆԴՈՒԹՅՈՂ, ան., **Անձնապէս կամ պետականօրէն օտարի մը (հոս՝ այլազգիի)՝ անընդունելի կարծիքի մը գոյութիւնը բարեմտօրէն չընդունող //Զթույլատրող, չհամակերպվող:** Ընդհակառակն, Ազրպէյճան շատ **անհանդուրժող** ու բռնապետական երկիր է: Անոր պատմութիւնը լեցուն է բազմաթիւ հայերու կոտորածներով (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱՆՀԱՏԱԿԵԴԴՈՆՈՒԹԻՒՆ, ան., **Անձնական շահը գերադասելը, ան որոշումներու մեկնակէտ դարձնելը, անձնակեղրոնութիւն //Օայրահեղ եսակենտրոնություն՝ եզոիզմ:** Սփիւռքը, թէեւ իր տեւականութեան հանդէպ կասկածոտ կեցուածքով, սակայն դեռ գիտէր կամ գոնէ կը ձեւացնէր թէ տե՛ղ մը կ'երթար. տակաւին ունէր կեղրոններ, լեզուէն չիրաժարած կազմակերպութիւններ, մտքի ու մշակոյթի նուիրեալներ՝ ի տարբերութիւն ներկայ համայնակով **անհաստակեղրոնութեան**, ազգայինի պատրուակով նիւթականով շլվորող դեկավարներու բազմացումին, այլեւայլ առատ տրտունջներու, ինչպէս նաեւ հեռանկարներու յոգնաթշուառ աղօտութեան: (Բազ, թիւ 2-3 2021, էջ 54):

ԱՆՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ, ան., **Նոր եւ բաղձալի սպասելիք՝ կարելիութիւն չներշնչող, նման ակնկալիքի յոյս չտուող //Անհեռանկար, առանց ակնկալիքի:** Քաղաքականագէտ Հրանտ Մելիք-Շահնազարեան, անդրադառնալով ամէն գնով խաղաղութեան հասնելու առնչութեամբ Հայաստանի իշխանութիւններուն կատարած քայլերուն, կը մատնանշէ, որ անոնք **անհեռանկարային** ու վտանգաւոր են Հայաստանի համար (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱՆՁԿԱԳԻՆՕՐԵՆ, մկբ., **Անձկալիօրէն, կարօտագին //Անձկագին ձևով, չափազանց կարոտով:**— Է, եւ ա՛յդ պատճառով է որ, Եւային նման, իրենք ալ ա՛յնքան **անձկագինօրէն** կը ջանան դուրս ելլել անկէ, — ըսաւ Լորտ շէնրին (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 57):

ԱՆՁՆԱԳՐԱԻՈՐԻԼ, բ., **Երկիրի մը մշակութային ձեռքերուն ներուն պետական վաւերականութիւն (անձնագիր) տալ, անոնք օրէնքով ճանչնալ՝ պաշտպանել՝ խնամել //Այստեղ՝ փաստել, վավերացնել:** Արցախի մշակութային ժառանգութիւնը արձանագրուած է: Հայկական կողմը այդ ամէնը ունի տեսերիզներու, լուսանկարներու տարբերակով: «Մեր բոլոր յուշարձանները **անձնագրաւորուած** ունինք: Եւ մենք պիտի պայքարինք», վստահեցուց նախարարը (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ԱՆՁՆԱԿԵԴՐՈՆ, ած., **Անձնական շահագրգռութիւնները եւ նախասիրութիւնները գերադասող, անոնք գործունէութեան մեկնակէտ սեպող, անհասակեղրոն //Եսակենտրոն:** Մեր հաւաքական վճռականութեամբ եւ համայն հայութեան մասնակցութեամբ կոչուած ենք վերակերտելու այնպիսի Հայաստան մը, ուր պետութեան շահերը դառնան գերիվեր ներքաղաքական հակադրութիւններէն ու **անձնակեղրոն** նպատակներէն (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 24):

ԱՆՄԵԿՆԱԲԱՆԵԼԻ, ած., **Այն ինչ կարելի չէ բացատրել՝ մեկնել, անբացատրելի, անհասկնալի, մութ // Անբացատրելի, չմեկնաբանվող:** Երկխօսութեան այլապէս ողջունելի, սակայն տուեալ պայմաններուն մէջ **անմեկնաբանելի** տրամադրութիւնը տարածուեցաւ ու ընդհանրացաւ, երբ ՀՀ վարչապետը ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի 76-րդ նստաշրջանին ուղղուած իր առցանց ելոյթին ճամբով արտայայտուեցաւ իրականութիւնները անտեսող բարի նպատակներու մասին (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԱՆՄԻԱԻՈՐՈՒՄ, գ., **Երկու կամ ավելի համաչափ, բայց ներհակ իրողություններու քով քովի գոյությունը, անոնց չմիահիստիլը, աններդաշնակություն // Անմիավորվելը, չմիավորվելը, բաժանմանալը:** Երկու լեզուի, ուստի բազմաթիւ լեզուներու միջեւ ապրող - եւ հայրենականը[∞] կամ համայնքայինը դիտող դուրսէն, նոյն ատեն զայն նոր իրականութեան յարմարցնելու, զօդելու միտող, այդ տեսակ մը ինքն իրեն հետ **անմիատրման** դիրքին մէջ որ իրն է, աքսորական միտքը լեզուախօսական միջոցը կ'ապրի տեսական լարումի մէջ (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոթյուն գրադարան', Անտարես, 2017, էջ 18):

ԱՆՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Սկսած որեւէ բանի շարունակությունը կամ նոր բանի մը սկիզբը չըլլալը, տեսականություն չունենալը, ընդհատում // Շարունակություն չունենալը, անշարունակական լինելը:** Իր «Ի՞նչ է ժամանակակիցը» յօդուածին մէջ Զ. Ազամբէն դիտել կու տայ. «ԱՆ որ կրնայ ըսել «իմ ժամանակս» զայն կը բաժնէ, բեկում մը եւ **անշարունակակություն** մը կ'արձանագրէ իր մէջ», որով նաեւ ժամանակներուն միջեւ կարող է հաստատել նոր յարաբերություններ (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոթյուն գրադարան', Անտարես, 2017, էջ 7):

ԱՆՇՐՁԱՆՑԵԼԻ, ած., **Այն, ինչ հնարաւոր չէ անտեսել՝ շրջանցել // Անխուսափելի:** Արտասահմանեան կազմակերպական շրջանները բնականաբար ունին տեղական գործեր, որոնք գաղութներուն համար կարելոր են ու **անշրջանցելի** (Ազգակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱՆՇՐՁԱՆՑԵԼԻՕՐԷՆ, մկբ., **Բացառապէս, անժխտելիորէն, անուրանալիորէն // Անշրջանցելի ձևով, անժխտելիորէն:** Յոյժ օգտակար պիտի ըլլար այս թարգմանութեան վրայ ուշադրություն դարձնելը, հասկնալու համար Նշանեանի թարգմանական որոշումները, ինչպէս նաեւ զանոնք մանրակրկիտ կերպով նկատի ունենալու այն թարգմանություններուն եւ քննարկումներուն պարա-

գային, զորս երկու հայերենները **անշրջանցելիօրէն** կը պարտին Ֆուկոյի աշխատութիւններուն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 88):

ԱՆՇՐՁԱՐԿ, անծ., **Առարկան՝ առանց իր բնական միջավայրին կամ պատմական հանգամանքներուն //Առարկան ինքնին: Անշրջարկ**, անշրջանակ, անաշխարհ, անմարդաբնակ լուսանկարներ են ուրեմն, թատերական կազմակերպութիւն մը, խորութիւնը ջնջելու, երրորդ տարածութիւնը (երրորդ չափումը) մոռնալու միտումնաւոր ձգտումը, նկարին եւ առարկային մակերեեսները իրարու հաւասարեցնող աշխատանք մը (Մ.Ն., 2015, էջ 36):

ԱՆՈՐՈՇԱԴԲԵԼԻՈՒԹԻՒՆ, գ., **Իրողութիւն, որուն բնութիւնը կամ ծիրը ստուգապէս կարելի չէ որոշել, անհասանելիութիւն, առարկայական՝ ճշգրիտ բնորոշում չունենալը //Անորոշ դրվածքը, անորոշություն:** Նոյնիսկ երբ վկայութիւններու ամբողջութիւնը դարձեալ եւ միշտ ճշմարիտը կ'ըսէ, կը տեսնուի որ դեռ տեղ մը կայ հարցադրութեան համար, քանի որ տեղ մը կայ մեկնաբանութեան համար: Քանի կարելի են բոլոր մեկնաբանութիւնները... Անորոշելիութեան եւ **անորոշադրելիութեան** պարագայի մը առջեւ ենք: Չենք կրնար գիտնալ, թե ցեղասպանութեան մը կը վերաբերի՞, թե՞ ոչ...: (Բագ, թիւ 2-3 2021, էջ 177):

ԱՆՊԵՂ, անծ., **Հողը, հոս՝ նիւթը, որ տակաւին չէ հետազոտուած, չէ քրքրուած՝ ուսումնասիրելու նպատակով //1. Չպէղված: 2. փխր. Չբացահայտված, անհայտ:** Իրմէ առաջ՝ Կաֆկա կամ Ռիլկէ նոյն փորձառութեան մասի խօսած էին, **անպէղ** անջրպետի մը առաջին այցելուներն էին (Մ.Ն., 2015, էջ 25):

ԱՆՁՐՊԵՏԱՆԱԻ, գ., **Զանազան նպատակներով դէպի տիեզերք՝ երկնային տարածութիւն առաքուած մեքենայ, տիեզերանաւ //Տիեզերանավ:** Երկու պատումներուն միակ հերոսը առանձին է վթարուած եւ կորած **անջրպետանաւի** մէջ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ, ած., Այն, ինչ որեւէ զիջում՝ ընկրկում՝ սակարկում չի հանդուրժեր, որեւէ այլ արժէքով փոխարինելի չէ // **Անատարկելի**: Հայութեան միասնականութեան հարցը **անսակարկելի** անհրաժեշտութիւն է (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ԱՆՍԳԱԼԻ, ած., Ողբալու՝ սգալու՝ վիշտ զգալու կարելիութիւնէն զրկուած // **Որ չի կարելի սգալ, ոչ սգալի, անմխիթարելի**: Օսմանեան կայսրութենէն դէպի թրքական պետութիւն բիրտ անցման շրջանին, հայերուն պատահածին հիմնական եղելութիւններէն մէկը այն եղած է, որ սպանութիւնները **անսագալի** (unmournable) դարձան, ու այսպէսով՝ որեւէ մարդկային փորձառութենէ անդին զետեղուեցան, վերածուելով անսահման բանի մը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 148):

ԱՆՍԼԱՔ, ած., 1. Ժամը ցոյց տուող սլաք՝ նետաձեւ թելիկ չունեցող: 2. փխբ. անորոշ, անստոյգ // **Սլաքներ չունեցող, սլաքները կորցրած**: Երկաթուղիի զիծը իր վերջաւորութեան կը հասնէր հանքային ճամբարի մը մէջ, Բերիաշէնի կայարանէն եւ իր **անսլաք** ու կոյր ժամացոյցէն հազիւ տասը քիլոմէթր անդին: (Բագ, թիւ 3, 2020, էջ 17):

ԱՆՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԻՈՒԹԻՒՆ, գ., **Նորոգուելու, կորսնցուցածը գտնելու, քայքայուածը իր նախկին վիճակին դարձնելու կարելիութիւն չունենալը, հոս՝ կրկին կեանքի կոչելու, վերապրելու անհնարինություն // Վերականգնելի չլինելը, վերականգնելու՝ վերականգնվելու անհնարինություն**: Յիշողութիւնը կը պահպանէ դէպքը, դէպքը՝ որ այդ յիշողութեան իսկ ծնունդ կու տայ, կը ստեղծէ կարօտ ու կոտտանք, թելադրող խլումին ու խզումին անկարելիութիւնը, այսինքն՝ նաեւ անոր **անվերականգնելիութիւնը** (Բագ, թիւ 2-3 2021, էջ 32):

ԱՆՅԱԿԷՏ, գ., **Երկիրի սահմանը օրինական ձևով անցնելու համար մասնաւոր վայր՝ կայան, որ կը հսկեն զինուորները. ուղեկալ // Ուղեկալ:** Անոր համաձայն, դէպի Ռուսիա Իրանի արտաձման 80 առ հարիւրը կը կազմեն գիւղատնտեսական եւ պարենային ապրանքները, որոնց մեծ մասը կ'անցնի Ասթարայի **անցակէտէն** (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ, ած., **Վիճակէ մը մէկ ուրիշ վիճակի անցումը կարելի դարձնող, այն դիւրացնող միջին վիճակ, որ ուղիղ կապ չունի ո՛չ նախորդի, ո՛չ յաջորդի հետ // Միջանկյալ:** «Միջազգային ընտանիքի պահանջները, որոնց մասին Ֆրանսսան քանիցս յիշեցուցած է, առաւելագոյնս յստակ են. ...մարդասիրական օգնութենէն օգտուելու կարելիութիւն... մարդու իրաւունքներու, մասնաւորաբար կիներու իրաւունքներու յարգում, ինչպէս նաեւ **անցումային** կառավարութեան ստեղծում՝ Տոհայի բանակցութիւններու ծիրին մէջ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 1):

ԱՆՅՈՒՑԱԴՐԱԿԱՆ, ած., **Հանրութեան ուշադրութիւնը գրաւելու, զայն հրապուրելու միտում՝ նպատակ չունեցող, համեստ // Ցուցադրելու համար չնախատեսված, ոչ ցուցադրական:** Հետաքրքրութեանս թիրախը իր լուսանկարներու գրքոյկն էր սակայն, ուր ան կը ներկայանար իր արտաքին եւ ներքին **անցուցադրական** գեղեցկութեան առինքնող ոճով (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 11)):

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ*, գ., **Նոյն գործի՝ ձեռնարկի՝ հիմնարկի պաշտօնէաններու ամբողջութիւն // Անձնակազմ:** Այս մասին «Հապեր Կլոպալ»-ի հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարած է Թուրքիոյ նախագահի **աշխատակազմի** բանբեր Իպրահիմ Քալըն (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԱՇԽԱՏԵԼԱԶԵԻ, գ., **Աշխատելու՝ գործ մը ընելու ձեւը՝ եղանակը // Աշխատելու ձևը՝ եղանակը, աշխատաձև:** Խնդալով, կատա-

կելով, մեր **աշխատելաձևին** եւ կենցաղին մասին տարրական տեղեկութիւններ փոխանցելով հասած էինք, աւելի ճիշդը՝ հասցուցած էի այն միջանցքները, ուրկէ փսփսալով կ'անցնին, ոչ թէ որպէսզի շխանգարեն անկողնին մէջ սաւանին նոյնացած ոսկրագունդը, այն իբրեւ յարգանք անոր վերջին ոտնաձայներէն կախուած մոռցուելիք անցեալին (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 32)

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ*, ած., **Ներքին քաղաքականութեան եւ պետութիւններու միջեւ յարաբերութեան վրայ աշխարհագրութեան ունեցած ազդեցութեանը վերաբերող, անոր յատուկ //Աշխատհարադարականությանը հատուկ:** Արդարեւ, ճակատագրական պայմաններու մէջ կերտուած Հայաստանի անկախութիւնը ահաւոր տագնապներ դիմագրաւեց եւ **աշխարհաքաղաքական** պարտադրանքներու հետեւանքով Հայաստանը կորսնցուց իր անկախութիւնը (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 3):

ԱՇԽԱՐՀԻԿԱՆԱԼ, չբ., **Աշխարհի՝ նիւթականի մէջ մարմին առնել, մարմնանալ, մարդանալ // Իրական՝ նյութական դառնալ:** Հարիւրաւոր էջերու երկայնքին՝ Օշական ուրեմն այդտեղ կը գրէ վիպագիրի ծնունդին Աւետումը, որպէս **աշխարհիկացած Մեսիա** կամ Դերաքրիստոս (Բագ, թիւ 2-3 2021, էջ 165):

ԱՊԱԳԱՅԱՍԼԱՅ, ած., **Կորովով՝ եռանդով լաւ ապագայ մը կերտելուն միտուած //Դեպի ապագան սլացող՝ ուղղված:** Վեհափառ Հայրապետը 2008-ին **ապագայասլաց** պատգամով Միւռնոսինութեան պահուն երիտասարդութիւնը զգաստութեան կը հրաւիրէր՝ ըսելով. «Արթուն կաց հայ երիտասարդ.» (Զարթօնք, Կիրակի, 10.07.2022)

ԱՊԱԳԱՅԱՏԵՄԻԼ, ած., **Ծաղկուն ապագայի ակնկալիքով՝ յոյսով ապրող, անոր ձգտող, անոր համար ճիգ թափող //Ապագան տեսնող, դեպի ապագան նայող:** Այս տարի տեսիլքի ու յոյսի իւրն է

որ կ'օրհնուի ու կը պատրաստուի երախաները Աստուծոյ որդիներ եւ մարդը **ապագայատեսիլ** երկնախօս արարած դարձնելու (Զարթօնք, Կիրակի, 10.07.2022):

ԱՊԱԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ, գ., **Իմաստութեան՝ իմացականութեան դէմ ըլլալը, այն իր գործունէութեամբ ժխտելը // Իմացականության դէմ լինելը, այն ժխտելը:** Չափազանց շահագրգռական են Բատայլի մօտ (որպէս բնանիւթ կամ որպէս յատկանիշ) սրբազնութեան երկակիութիւնը, կատարեալ հակաիդէապաշտութիւնը, քաղաքական գործունէութեան իմաստին **ապաիմաստութեան** շուրջ վարանումներն ու վերիվայրումները, հեզելեան փիլիսոփայութեան քննադատութիւնը... (Մ.Ն., 2015, էջ 18):

ԱՊԱԻՐԱԳՈՐԾՈՒՄ, գ., **Կազմալուծում, քայքայում, փլուզում, ամբողջականութեան խախտում // Ապաիրագործելը, չիրագործելը, իրագործման խափանումը:** ...պատահար, որ պիտի կրնար յառաջ բերել աշխարհի տեսակ մը ընդհանրացած **ապաիրագործումը** (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչէնց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոթյուն գրադարան', Անտարես, 2017, էջ 135):

ԱՊԱԿԵԴՈՒՌ, եր և ներ, գ., **Ապակիէ շինուած կամ ապակիէ մակերես ունեցող դուռ // Ապակիներով պատված՝ ապակէ դուռ:** «Ահռելի է», մրմնջեց ինքնիրեն, թալեց դեպի **ապակէդուռը** ու բացաւ զայն: (Օսգար Ուայլը, Տորիլն Կրէյի Պատկերը, Պէյրուք, 1992, էջ 150)

ԱՊԱՀԱՅԱՑՆԵԼ, բ., **Հայութենէ՝ հայկական սովորութիւններէ օտարացնել, ապազգայնացնել, ուժացնել // Ազգային՝ հայկական ինքնությունից զրկել:** Ազգային ինքնութեան առողջ պահպանումը համաշխարհայնացման **ապահայացնող** հոսանքներուն դիմաց՝ դառնայ առաջնահերթ նախանձախնդրութիւն (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 24):

ԱՂԱՄՇԱԿՈՒԹԱՅՆԱՑՈՒՄ, գ., Մշակութային արժեքներէ հեռանալը՝ օտարանալը, մշակութային մակարդակի իջնելը // Մշակութային նենգափոխումը՝ վերացումը: Տեղւոյն վրայ ձեր ճանչցած ֆրանսահայ, ամերիկահայ տարեկիցներուն մօտ, ճիշդ է, դուք հաստատեր էիք հայեցի այն **ապամշակութայնացումը**, որուն կը սպասէիք. լեզուական-մշակութային խորթացումը, որուն հեռակայ ծանօթացումը ունեցած էիք՝ երէցներու ողբազին ահագանգումներուն մէջէն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 19):

ԱՂԱՇՐՁԱՓԱԿՈՒՄ, գ., Չորս կողմէն փակուած՝ զոցուած ճամբայ մը կամ վայր մը բանալը, անոնց դուրսի հետ խզուած կապերը վերականգնելը // Շրջափակման -վերացում: Անդրկովկասի մէջ փոխադրամիջոցային ուղիներու **ապաշրջափակման** ուղղուած եռակողմ աշխատանքային խումբը՝ Ռուսիոյ, Ազրպէյճանի եւ Հայաստանի փոխվարչապետներու ձեւաչափով, կը շարունակէ աշխատիլ (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԱՂԱՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ, ան., Հանրութիւնը թիրիմացութեան մէջ ձգելու՝ խաբելու նպատակով իրականութիւնը նենգափոխելուն վերաբերող // Իրականութեան նենգափոխմանն ուղղված լրատվություն: «Այս անմիջական սպառնալիքէն պաշտպանուելու համար անհրաժեշտ են ժամանակաւոր միջանկեալ քայլեր», ըսած է ան՝ աւելցնելով, որ Հայաստանը նաեւ կը շարունակէ ատելութիւն եւ բռնութիւն հրահրել ազրպէյճանցիներուն դէմ՝ ապաստան տալով զինեալ խումբերու եւ ֆինանսաւորելով կամ աջակցելով **ապատեղեկատուական** գործողութիւններուն (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԱՂԱՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ, գ., Հանրութիւնը թիրիմացութեան մէջ ձգելու՝ խաբելու նպատակով փաստերը նենգափոխելը, զանոնք չարափոխելը // Իրականութիւնը նենգափոխող տեղեկատվություն: Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը տարածեց **ապատեղեկատուութիւն** մը, ըստ որուն, 1 Յունիսի երե-

կոյեան, 40 Հայ զինուորներ հատած են Ատրպէյճանի սահմանը... (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 9):

ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱԲԱՐ, մկբ., **Առաջնահերթօրէն, հրամայականօրէն // Առաջնահերթ ձևով, անհրաժեշտաբար:** Միւիթարեան հայրերն էին, որ **առաջնահերթաբար** պիտի մխրճուէին բանասիրութեան մէջ, ապա այլք, եւ այսպէս պիտի ծագէր ու տարածուէր «նոր-հայկականութիւն» մը, այլ խօսքով՝ սկսէր ազգին ազգայնականացումը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 180):

ԱՌԱՍՏԱՂԱԶՈՒՐԿ*, ած., **փխբ. Ունենալիք ազդեցութիւնը առանց նկատի ունենալու եղած յայտարարութիւն, կատարուած գործողութիւն // փխբ. Անիխն:** Երկար ժամանակէ ի վեր փոխադարձ եւ **առաստաղագուրկ** յայտարարողական յարձակումները գետնի վրայ թարգմանուեցան պատերազմը յիշեցնող գործողութիւններով, փոքր եւ կիսաձանր զէնքերու գործածութեամբ, նահատակներու եւ վիրաւորներու արձանագրութեամբ (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԱՌԱՐԿԱՅԱԲԱՐ, մկբ., **Առանց անձնական համակրանքն ու հակակրանքը նկատի ունենալու, իրապաշտօրէն // առարկայական ձևով, օբյեկտիվորէն:** Գեղեցկութիւնը մարդոց կողմէ յաճախ կը դիտուի ենթակայական տեսակիւնէ եւ ոչ **առարկայաբար** (Յ. Չոլաքեան, ԼԵԶՈՒ ԵՒ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ԱՌՀԱԻԱԿԱՆ, ած., **Նախահայրերէն ժառանգած յատկութիւններուն, հոս՝ համոզումներուն յատուկ, անոնց վերաբերող //Նախնիներից ժառանգած:** Արդարեւ, երկու համաշխարհային պատերազմներու միջեւ ժամանակաշրջանին զարգացած էր բանաստեղծներու, գրագէտներու խումբ մը, որ... ընկերային արդարութեան առնչուող գաղափարաբանութիւն մը որդեգրելով հանդերձ, խորքային կերպով կնքուած էր յունական ազգային գաղա-

փարներու հանդէպ **առհասակ**ան հաւատքով (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱՌՈՒԱԿՈՒՄ, գ., **Համակարգչային ցանցով տեղեկութիւններու (ձայնագրութիւններու եւ տեսանիւթերու) անընդհատական փոխանցում՝ հոսում (streaming)//Ցանցային եղանակով տեղեկութիւնների հաղորդում:** Փորձեր կան նաեւ անցեալի յաջող բեմադրութիւններ յարմարեցնելու առցանց ցուցադրութեան: Այդ կը կոչուի **առուակում** (հոսք) (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԱՌՑԱՆՑ, գ. **Համացանցի կամ այլ կապի միջոցով կատարուող, այդ եղանակով իրագործելի //Համակարգչի կամ կապի այլ միջոցով իրագործելի (online):** Փորձեր կան նաեւ անցեալի յաջող բեմադրութիւններ յարմարեցնելու **առցանց** ցուցադրութեան (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3): - էջ 3

ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՈՒՉՈՒԹԻՒՆ, գ., **Նոր կարգի՝ աւելի բարձր պաշտօնի շնորհում //Բարձր աստիճանի՝ պաշտօնի շնորհում:** Հովանաւորութեամբ ՀՄԸՄ Այնճարի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպութեամբ Սկաուտական խորհուրդին, խմբապետական կազմին եւ պասքեթպոլի յանձնախումբին... Այնճարի ՀՄԸՄ-ի դաշտին վրայ տեղի ունեցաւ խմբապետներու **աստիճանատուչութիւն** եւ պասքեթպոլի մրցում... (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱՍՏՂԱԿԱՅԼԱԿ, ած., փխբ. **Աստղերէ՝ լուսատու աղբիւրներէ հոսող՝ կաթող, վերերկրային // փխբ. Աստղերից եկող՝ կաթող, աստղածոր:** Անոնք կեանքէն մեծ են: Մարդկութեան եւ իրենց ժողովուրդին համար չեն տատամսիր հաշիւ պահանջելէ բոլոր աստուածներէն եւ սատանաներէն: Անոնք հանճարներ են, որոնք **աստղակայլակ** իրենց խօսքը կ'ըսեն եւ իրենց հմայքին տակ կը պահեն դարե՛րը (Վեհանյշ Թէքէեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԱՍՏՂԱՆԱԻ, գ., **Զանազան նպատակներով դեպի տիեզերք՝ երկնային տարածություն առաքուած մեքենայ, անջրպետանալ** //Տիեզերանալ: Կելպի աստղանալը կը բախի անջրպետի մէջ թափառող անհամար ժայռաբեկորներէն մէկուն եւ կը վթարուի (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԱՍՏՈՒԱԾԳԻՏԱԿԱՆ, ած., **Աստծուն գիտակ՝ գայն ճանաչող // աստվածագետին հատուկ բնորոշ:** Լեզուի ճշմարտութիւնը ներգոյական ալ չէ, ինքնագոյ, որ հոն ընդմտած ըլլար, ծուարած անոր չես գիտեր ո՞ր բնիկութեան կամ բնակութեան խորշերուն, ըսենք ենթադրեալ մաշտոցեան **աստուածգիտական** բարբառին, կարծես թէ այդ նախաւորին մէջ, սկզբնապէս միայն կրէր վաւերի անադարտ լուսապսակը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 37):

ԱՍՏԲԱԽԱՆԷ, ած., **Գարագուլ տեսակի ոչխարի մորթով կարուած // Կարակուլյան գառի թանկարժէք մորթուց կարված՝ պատրաստված, կարակուլ:** Ձեռքերը պահեր էր **աստրախանէ** վերակուին գրպաններուն մէջ... (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 275):

ԱՏԱՄՆԱՓԱՅԼ, ած., **Մաքրութենէն փայլփլող՝ շողացող ակռաներ ունեցող // փայլուն՝ փայլող ատամներով:** Ատամնափայլ խափշիկներ հրէշայնօրէն կը դափափէին պղինձէ թմբուկներ... (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 218-219):

ԱՐԱՐԵԱԼ, 1. ած., **Աստուծմէ գոյութիւն՝ կեանք ստացած, ստեղծուած (էակ, մարդ) //Արարված, ստեղծված: 2. գ., փխբ. Արարված (էակ), մարդ:** Մարդը դարձաւ մահկանացու: Մահուան այս ժառանգութիւնը իզեց կապը Արարողին եւ **Արարեալին** միջեւ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 211):

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ*, գ., **Նպատակի մը համար մարդոց գործունեութեան ծիրը սահմանափակելը // Մեկուսացում:** Համաճարակի բոլոր արգելափակումներով եւ ֆիզիքական հեռաւորութեամբ, միլիոնաւոր մարդիկ իրենց անձին տրամադրելու շատ ժամանակ ունեցան (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԱՐԳԻԼԵԱԼ, ան., **Օրէնքով արգիլուած, իրաւունքի զանցումով ձեռք ձգուած // Չարտոնված:** Եթէ Ազրայէճանի դէմ մեղադրանքները ընդգրկած են Արցախի հայկական հողերուն շուրջ 75 առ հարիւրին գրաւումը, շէքներու կործանումը, **արգիլեալ** զէնքերու գործածութիւնն ու սհաբեկիչներու ռազմադաշտ բերուիլը, այդ մասին ինչո՞ւ լուռ մնացին հաղորդումները (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, գ., **Մեքենաներու կազմածի փոխարինումը նոր՝ արդի կազմածով // Արդիական դարձները, նորացում, թարմացում:** Անցեալ ամիս Թուրքիան նամակ յղած էր՝ խնդրելով 40 «ԷՖ-16» օդանաւ եւ 80 **արդիականացման** հաւաքածոյ (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԱՐԴԻԻՆԱԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Արդիւնաբերական՝ հում նիւթը մշակելով նոր իր արտադրող ըլլալը // Արդյունաբերական դարձները՝ լինելը, արդյունաբերացում:** Հակառակ որ առաջին պետութիւնն ենք որ Քրիստոնեութիւնը ընդունեցինք, չպաշտպանուեցանք: Պատերազմ ու պատերազմ: Ծնունդ ու ոճիր: Գիւտ ու աղէտ: Համաշխարհային պատմութիւն եւ ազգային պատմութիւն... Մանրանկար ու ժայռակերտ տաճար... Չարը, Բարին, Գեղեցիկը: Բնագանցութիւն, Գոյապաշտութիւն, **Արդիւնաբերականութիւն**, քարայրի մէջ մոմեր ու շուրքեր: Անշուշտ նաեւ այժմ ու միշտ ու յաւիտեան՝ Ապրիլ Քսանչորս (Վեհանոյշ Թեքէեան, Բարեկամ՝ Անունը Տաղանդ, <https://granish.org/barekam-anuuny-tagahnd/>):

ԱՐԴԻԻՆԱԻԷՏՕԴԷՆ, մկբ., **Արդիւնաւոր՝ արգասաւոր ձեւով, արդիւնաշատօրէն, բեղուն արդիւնք տալով // Արյունավետ ձևով, ըստ նպատակի, շահավետ:** Քննարկուեցան երկրի ապահովութեան, շրջանային մարտահրաւերներուն դիմակայելու, երկրին մէջ առկայ լարուած բարոյահոգեբանական մթնոլորտը կարգաւորելու, սփիւռքի ներուժը **արդիւնաւետօրէն** օգտագործելու առնչուող հարցեր (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԱՐԵԻԱՄԱՂ, ան., **Կենսատու լոյս՝ ջերմութիւն սփռող՝ ճառագայթող // Արև՝ լոյս՝ ջերմություն սփռող, լուսացող:** Ինչպիսի՛ երաժշտականութեամբ, **արեւամաղ** յոյգերով կ'ընթանայ այս քերթողաշարքը, կը ցոլացնէ հրճուանքը, ինքնավստահութիւնը մարդոց որ կը ստեղծեն հացը կենաց (Վեհանոյշ Թեքեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԱՐԵԻԵԼԱԲԱՆ, ան., **Ճոխ՝ հարուստ լեզու ունեցող // Արևելյան լեզուներին (արաբերենին, պարսկերենին) բնորոշ ճոխություն ունեցող:** Սարկ «Աղէտի վէպը»ին մէջ կը նկարագրէ ինչպէս բացարձակ ենթարկուածութիւնն ու **արեւելաբան** ճառագրանութիւնը «բնիկը», երկիր մնացած հայը կը պահեն վիճակի մը մէջ, ուր անոր խօսքը բառացիօրէն չգործող դարձած է՝ անջատուած, կամ անոր վկայութիւնը առաջուց ջնջուած է (Բագ, թիւ 2-3 2021, էջ 120):

ԱՐԵԻԵԼԱՍԻՐԱԿԱՆ, ան., **Եւրոպականարվեստի գործերու մէջ արեւելեան կենցաղի, բարքերու նկարագրութիւններուն վերաբերող // Արևլյան ոճով երանգավորված:** Ասոնք են, որ երկար ատեն հայագիտութիւնը սահմանափակած են բանասիրութեան անունին տակ տիրական դարձած բնագրագիտութեան ծիրին մէջ՝ համեմուած **արեւելասիրական** (orientalism) նկրտումներով: Վերջերս է միայն, որ մասամբ Նշանեանի արտադրութիւններու մղումով, արեւմտեան հայագիտութիւնը սկսած է շեշտել մտածումի տարրը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 56):

ԱՐԵԻԵԼԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ., **Երոպական արվեստի գործերու մէջ արեւելեան կենցաղի, բարքերու նկարագրութիւն // Եվրոպական մշակույթի մէջ Արևելքի երկրների արվեստին բնորոշ ոճավորում:** Այս բոլորին մէջ տակաւին կարելի է ընդնշմարել թէ ինչպէս հին **արեւելասիրութիւնը** դերակատար կը մնայ. ան այսօր կու գայ զգեստաւորուած ժամանակակից նորոյթի.... տիրական տեսութիւններու պատմուճանով.... (Բագ, թիւ 2-3 2021, էջ 56):

ԱՐԺԱՆԹԻՆՅԻ, ան., **Արժանքին ծնած կամ հոն ապրող // Արգենտինացի, Արգենտինայում ծնված:** Նշենք, որ **արժանքինցի** մարզիչ Մաուրիցիօ Փոքեթինյի գլխաւորած կազմէն՝ Սեն Ժերմենէն իբրեւ հիմնական մարզիկ ներկայացած էին Լիոնէլ Մեսսի, Նէյմար եւ Քիլիան Էմպապիէ (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ԱՐԺԵԶՐԿԻԶ, ան., **Արժէքէ զրկող, երեւոյթի մը վարկը՝ պատիւը նսեմացնող // Արժեզրկող:** Ասիկա փորձառութիւնն է վերապրելու ջանքի մը որ տեղի կ'ունենայ հարկադրաբար թշնամական, կամ **արժեզրկիչ** նկատուած շրջապատի մը մէջ (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչէնց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոյթուն գրադարան', Անտարես, 2017, էջ 53):

ԱՐԺԵԻՈՐՈՒՄ, գ., **Գնահատում, վերարժեքաւորում // Գնահատում:** Երէկ՝ երկուշաբթի, 19 հոկտեմբերին, Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիային մէջ իր աշխատանքներուն սկսաւ «Հայաստանը եւ տարածաշրջանը. դասեր, **արժեւորումներ**, հեռանկարներ» խորագիրով եռօրեայ միջազգային գիտաժողովը՝ նուիրուած 1921 թուականին կնքուած Մոսկուայի եւ Կարսի համաձայնագիրներու 100-ամեակին (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 1,7):

ԱՐԻՒՆՎԱԾ, ան., **Արիւնով ողողուած, հոս՝ ոճիրի՝ եղենի գոհ դարձած // Արյունով օծված՝ պատված, արյունատ:** Թերեւս ան, պահ մը մտովի կը միանար 1915-ի նահատակներուն, կը յիշէր **արիւնած** բազմութիւնը հայորդիներուն, եւ առ Տէր կ'աղաչէր, որ-

պէսզի օրհնուած Միւռնով հաստատուին խաղաղութիւնն ու սերը հայ հասարակութեան մէջ (Զարթօնք, Կիրակի, 10.07.2022):

ԱՐԽԻԻԱԳՐԵԼ, գ., **Արխիւի անցնել, կարեւոր դէպք մը պատմականացնել, արխիւացնել //Արխիվավորել, արխիվում գրանցել և պահել:** Այս նախաձեռնութիւնը կը թուի իրականութենէն կըտրուած՝ գրեթէ խելագար նախաձեռնութիւն մը, արխիւագրողի մեքենայացած աշխատանք, առանց որեւէ ստեղծագործական նախադրեալի (Բագ, թիւ 2-3 2021, էջ 200):

ԱՐԽԻԻԱԽՍ, գ., դիպվ., **Պատմական նշանութեան փաստերու անհարկի՝ չափազանցուած կարեւորութիւն տալը //Արխիվների հանդէպ հիվանդագին հակում:** Բենիամինի մեծ յատկանիշը այն է, որ ինքը այդ արխիւի օրէնքը չի պահեր զուտ տեսաբանական գետնի վրայ, օրինակ՝ իմացաբանական նկատառումներով, ինչպէս կ'ընէր դը Մերտոն, տեսանք քիչ մը առաջ, կամ ինչպէս կ'ընէ Դերիդան, **արխիւախտին** նուիրուած իր գիրքին մէջ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 86):

ԱՐԽԻԻԱՄՈԼ, ած., **Արխիւային նիւթերը պատմութեան միակ անվիճելի աղբիւրը համարող //Արխիվների մուլտցք՝ անդիմադրելի հիվանդագին ձգտում ունեցող:** Ուրեմն, որեւէ պատմագետ չի կրնար հոսանքին հակառակ շարժիլ, քանի որ ամէն ինչի մեկնակետը **արխիւամուլ** խոտորումն է, այլասերումն է (Բագ, թիւ 2-3 2021, էջ 175):

ԱՐԽԻԻԱՄՈԼՈՒԹԻԻՆ, գ., **Արխիւային նիւթերը պատմութեան միակ անվիճելի աղբիւրը համարելը //1. Արխիվամուլ լինելը: 2. Արխիվամուլի հատկանիշը:** Արխիւամուլութիւնը անգիտութեան թակարդն է՝ լարուած բնաջնջողներէն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 177):

ԱՐԽԻԻԱՑՆԵԼ, ք., **Արխիւի՝ փաստերու անժխտելի աղբիւրի վերածել, արխիւագրել //Արխիվավորել, իբրև արխիվ պահել:** Անոնք

պիտի կամենային, որ իրենց վկայութիւնները **արխիւացուէին**, որպէսզի «իրողութիւն» բառը վերստին իմաստ մը ունենար քաղաքակրթուած մարդկութեան համար (Բագ, թիւ 2-3 2021, էջ 176):

ԱՐԽԻՒԱՅՈՒՄ, գ., **Արխիւի՝ փաստերու անժխտելի աղբիւրի վերածելը, արխիւագրելը // Արխիվացնելը, իբրև արխիվ պահելը:** Այո, ո՞ր արխիւը վերապրողին համար լուծում կրնայ ըլլալ, երբ **արխիւացման** կարողականութիւնն է որ զիս կը զրկէ ենթակայ ըլլալու կարողութենէն: Եթէ անոր պատճառով դատապարտուած եմ վերապրող ըլլալու առ յաւետ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 203):

ԱՐԽԻՒԱԻՈՐՈՒԻԼ, բ. և չբ., **Արխիւի՝ փաստերու անժխտելի աղբիւրի վերածուիլ //Արխիվացվել, պահվել իբրև արխիվ: Արխիւաւորուած է**, դամբանի մը վրայ արձանագրուած է, որպէսզի մարդիկ կարդան եւ սորվին անկէ, անորոշ ապագայի մը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 131):

ԱՐԾԻՒԱՆԱԼ, չբ., փխբ., բնատ., **Աներկիւղ՝ անվեհեր ըլլալ, արծիւի պէս ազատ ըլլալ //Արծիվ՝ քաջ անվախ դառնալ, խիզախանալ:** ... Կը ներքաշուի ծուծին մէջը իր հողին/ կը լիանայ կ'արծիւանայ/ ուր յաջորդ օր/ ժայռէ փրթած բեկորի պէս/ նոյն դարպասը կը բանայ... (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 29)):

ԱՐՀԵՍՍԱԾԻՆ, ած., **Բնական եղանակով չառաջացած՝ կեղծ, արուեստական //Արհեստականորեն ծնված՝ ստեղծված:** Փաստօրէն ան, ի հեճուկս նշեալ հերձուածին ընդունեց, որ ՀՅԴ-ի միջոցներով սնանող ու անոր քաջալերանքով իր ողորմելի գոյութիւնը քարշ տուող այդ **արհեստածին** խմբակին կրաւորական կեցուածքները եւ օրն ի բուն ՀՅԴ-ին ծառայող յայտարարութիւնները, առ ոչինչ են (Զարթօնք, Հինգշաբթի, 14.07.2022):

ԱՐՁԱԳԱՆԳՈՒՄ*, գ., **Դեպքի մը (մանաւանդ չնախատեսուած) պատշաճօրէն՝ ըստ հարկի հակազդելը //Անդրադարձ կատարելը, անդրադարձումը:** Ըստ հաղորդագրութեան, Լաւրով եւ Մաուրեր հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին միտքեր փոխանակած են աշխարհի տարբեր շրջաններու մէջ ճգնաժամային **արձագանգման** նիւթերու շուրջ, ներառեալ Սուրիոյ, Աֆղանիստանի, Միանմարի, ներուքրանական եւ դարաբաղեան հակամարտութիւններու գօտիներուն մէջ մարդասիրական կացութիւնը (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԱՐՄԷՆՈՅԻՏ, գ., **Արիական ցեղէն ծագած, անոր ճիւղերէն մէկը նկատուող աւելի պզտիկ ցեղ, այդ ցեղի անդամ //Եվրոպեոիդական մեծ ռասայի մէջ մտնող մարդաբանական ենթատիպին (հիմնական ներկայացուցիչներն են հայերը) պատկանող անձ, արմենոիդ:** Կարեկցանքի պէս բան մը զգաց **արմենոյիտին** դէմքին կանոնաւոր գիծերը, վառվռուն սեւ աչքերը, կիսով սպիտակացած գանգրահեր մազերը, մկանտոտ թելերը դիտելով (Բագ., 2010, 1, էջ 31):

ԱՐՈՒԵՍՍԱԳԻՏՈՒՇԻ, գ., **Կին ստեղծագործող՝ արուեստագէտ //Կին արվեստագետ:** Առաջինը՝ «Ինքն իր պատկերը...» Կարոլ Ֆէկէտէ անունով լուսանկարիչ **արուեստագիտուհիի** մը պատկերներէն մեկնելով՝ կը հանդիպի Մորիս Բլանշոյի 1955ի «Գրական տարածքը» գիրքին մէջ որպէս յաւելուած հրամցուած պատկերի եւ «պատկերակայութեան» շուրջ մտորումներուն... (Մ.Ն., 2015, էջ 11):

ԱՐՏԱՆՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ, ած., **Խորհրդարանի կազմին մէջ չընդգրուած քաղաքական ուժ՝ կուսակցութիւն //Խորհրդարանում չընդգրկված:** Իրողական անշահաբեր «բազմաձայնութեան» դիմաց, ըստ բաւականին միաձայն են խորհրդարանական ընդդիմադիրները եւ Հայաստանի ու հայութեան էական շահերը տեսնելու, անոնց հետամուտ ըլլալու համամիտ եղող կարգ մը **արտախորհրդարանական** խմբաւորումները, սակայն այս բեմին վրայ եւս

կայ վերոյիշեալ բազմաձայնութեան արձագանգը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԱՐՏԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ան., Պետութեան մը սահմանէն ներս, սակայն անոր իշխանութեան չենթարկուող մաս՝ տարածք // Որևէ պետության մեջ այդ պետությանը իրավաբանորեն չպատկանող տարածք: Միջանցքը արտատարածքային իմաստ ունի. այսինքն Հայաստանի տարածքային ամբողջականութեան մէջ առանձին հատուած, որուն վերահսկողութիւնը անպայման հայկական չէ (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԱՐՑԱԽԱՀԱՅ, ան., Արցախի ծնած կամ արցախցի ծնողներ ունեցող հայ //Արցախում ծնված հայ: Ի մտի ունենալով արցախահայ ընտանիքներուն զանազան պետքերը՝ ՀՕՄ-ը յաջողութեամբ իրականացուց «Թիկունք կանգնինք արցախահայ ընտանիքին» բարեսիրական ծրագիրը... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹԻԻՆ, գ., Արցախի ծնած՝ ապրող կամ արցախցի ծնողներ ունեցող բոլոր հայերը միասին //Արցախում ապրող հայություն: Արցախի հարցը լուծուած չէ, քանի տակաւին յստակացած չէ Արցախի կարգավիճակի հարցը եւ քանի տակաւին **արցախահայութեան** անվտանգութիւնը լրջագոյն սպառնալիքի տակ է ամէն օր եւ ամէն ժամ», ըսած է Սերժ Սարգսեան (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ԱՐՑԱԽԵԱՆ, ան., Արցախին յատուկ, անոր վերաբերող //Արցախին վերաբերող, առնչվող: Ինչպէս նաեւ կողքին ենք բոլոր անոնց, որոնք **արցախեան** 44-օրեայ պատերազմին պատճառով կորսնցուցին իրենց սիրելի զուակը, հայրը, ամուսինը, զոհաբերեցին իրենց առողջութիւնը, լքեցին իրենց պապենական տունն ու հողը եւ տակաւին կը դիմագրաւեն պատերազմի պատճառով իրենց առաջ դրուած բազմազան խոչընդոտներ (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԱՐՔԱՅԱԲԱՂԶ, ան., փխբ. Սրտի խորքէն բխող՝ անորդ-
րուելի՝ անտեղիտալի կարօտ՝ իղձ //1. Արքայի՝ թարգմտորական
իշխանության հանդէպ բաղձանք կարօտ: 2. փխբ. Անդիմադրելի
իղձ՝ երազանք: Եւրոպայի մէկ մռայլ ուստայնը ինկած օրերէն ի վեր
Վարուժան արքայաբաղձ կարօտ մը ունէր Մեծն Տիգրանի մասին
դիւցազներգութիւն մը գրելու (Վեհանոյշ Թէքէեան, Իբրեւ Որդի եւ
Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԱԻԱՆԴԱԿԱՆԱՆԱԼ, բ., Փորձով ձեռք ձգուած եւ սերնդէ
սերունդ անցած արժէքներու եւ սովորութիւններու վրայ հիմնուած
ընկերութիւն դառնալ //????????????? Նոր մօտեցում ու դրսեւորում
ցուցաբերեց սփիւռքահայ աւանդականացած իրականութեան
(Բագին, 2010, 1), էջ 82

ԱԻԱՆԴԱԿԱՆԱՆԱԼ, բ., Փորձով ձեռք ձգուած եւ սերնդէ
սերունդ անցած արժէքներու եւ սովորութիւններու վրայ հիմնուած
ընկերութիւն դառնալ // Ավանդական դառնալ: Նոր մօտեցում ու
դրսեւորում ցուցաբերեց սփիւռքահայ աւանդականացած իրակա-
նութեան (Բագին, 2010, 1, էջ 82): կա

ԱԻԵՐԱԿԵԱԼ, ան., 1. Տապալած՝ կործանած, աւերակ դար-
ձած: 2. փխբ. Հոգով ամայացած, ապրելու իմաստը կորսնցուցած //
Ավերակված, ավերակ դարձած: Բանասիրութիւնը ասիկա չի
կրնար ընել. անիկա միայն բնիկի կերպար մը կ'արտադրէ, եւ այն
կերպարը աւերակեալ կոթող մըն է, համր գերեզման մը վաղեմի
մշակոյթին. ան երբեք ի վիճակի չէ աղէտը համարկելու իր լեզուին
մէջ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 185):

ԱՖՂԱՆԱԿԱՆ, ան., Աֆղանիստանին եւ աֆղաններուն յա-
տուկ՝ վերաբերող //Աֆղանստանին կամ աֆղաններին վերաբերող:
Միւս կողմէ, նախարարութիւնը նշեց. «Պիտի մասնակցինք
Մոսկուայի մէջ Աֆղանիստանի շուրջ ժողովին եւ աֆղանական

հարցին մեջ ազդու դերակատարություն ունինք կատարելիք» (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԲԱԶՄԱԳՐԵԱԼ, ան., Բազմաթիւ մարդոց կողմէ գրուած // Բազում գրվածքներ՝ նյութեր պարունակող: Այդ շարադրությունները խմբուեցան **բազմագրեալ** հատորիկի մը մէջ «Գրականութիւն եւ միթաբանութիւն» (Վենետիկ, 1987), որուն յառաջաբանին հետեւեալ տողերը դասարանային մթնոլորտի ցոլացումն էին. «Ահաւասիկ ուրեմն՝ գործակցութեան մը արդիւնքը, իմ ու աշակերտներուս միջեւ (Բազ, թիւ 2-3 2021, էջ 50):

ԲԱԶՄԱԹԵԼ, ան., փխբ. Կտոր-կտոր՝ մաս-մաս եղած եւ շփոթ ձեւով տարածուած // Մասերի բաժանված: Բայց մեծ պատկերդ/ ներաշխարհիս մէջ/ լուռ կը կտրատուի,/ ժամանակին հետ կարծես կ'աղօտի,/ եւ ես կը փորձեմ/ պատատիկները անոր **բազմաթել/ վերամիացնել** (Բազ., թիւ 2 2020, էջ 24):

ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ, գ., Նոյն նիւթին մասին մէկէ աւելի կարծիքներու՝ տեսակէտներու գոյութիւն // Նոյն հարցի մասին հնչող շատ տեսակէտներ: Մէկ շաբթուան մէջ երկրորդ անգամ ըլլալով Հայաստանի վերին խաւը... ներկայացաւ տարօրինակ «բազմաձայնութեան» մը պատկերով (որ մօտէն կամ հեռուէն չ'անցնիր ժողովրդավարութեան եւ **բազմակարծութեան** բովէն) (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5, 6):

ԲԱԶՄԱԿՈՒԹԻՒՆ, գ., Մէկէ աւելի եւ բազմազան ըլլալը // Բազմաթիվիները: Պըլտեան՝ սիրելիս, փողոցներդ մանկութեանս խաղավայրը եղան ու երագդ մեր ալ երագը դարձաւ, երբ հաւատացինք հայրենիքներու **բազմակիութեան** ու ազգային զարթօնքի տեսլականին (Բազ., թիւ 3 2020, էջ 43):

ԲԱԶՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ*, գ., Նոյն նիւթին մասին իրարու չհամընկնող՝ չհամապատասխանող, մէկը միւսը չլրացնող ըմբռ-

նումներու գոյութիւն // Նույն հարցի մասին իրար հակասող կարծիքներ, տարաձայնութիւն: Ամէնէն այքառու եւ նոյնքան տարօրինակ «**բազմաձայնութիւնը**» կլանած է նոյնինքն իշխանական դասը, Հայաստան-Արցախ գիծերուն վրայ, առանց նկատի ունենալու իշխանութիւն-ընդդիմադիր(ներ) տարակարծութիւնները (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ան, Միաժամանակ զանազան մշակոյթներ ընդգրկող, մէկէ աւելի մշակոյթներէ կազմուած (հանրութիւն) //Տարբեր մշակոյթներ կրող (հանրություն): Անոնց աւերակներուն վրայ ծնունդ առած էին բազմաթիւ ազգ-պետութիւններ, որոնց պետական վերնախաւի գաղափարական հիմքը մերժումն էր նախկին կայսերական **բազմամշակութային**, բազմազգեան, բազմակրօն, բազմալեզու ընկերութիւններուն... (Բազ., թիւ 3 2020, էջ 64):

ԲԱԶՄԱՍԱՐԻՔ, ան., Բազմաթիւ կապեր, հոս՝ նմանութիւններ եւ առնչութիւններ, ունեցող // Բազում սարիքներ՝ կապեր ունեցող, բազմաշար: Կոմիտաս վարդապետ ո՛չ մէկ երգ է հեղինակած, բայց ստեղծած է հայ երգին պատկերը, դիտելով անոր ոճը **բազմասարիք** փոփոխակներու մէջէն ու հասնելով իր համերգներուն սէնֆոնիք ճարտարապետութեան (Բազ, թիւ 2-3 2021, էջ 11):

ԲԱԶՄԸՆՏԲԱԿԱՆ (eclectic), ան., Նոր ոճ մը ստեղծելուն ի խնդիր զանազան աղբիւրներէ հաւաքուած միտքերու կամ ոճերու բաղադրութեանը վերաբերող // Բազմընտրությանը՝ էկլեկտիզմին հատուկ, տարբեր սկզբունքների մեխանիկական համադրամբ ստեղծված, էկլեկտիկ: Գեղեցիկ այդ շէնքը կերտուած էր ԺԹ. դարու վերջաւորութեան երեւցած ճարտարապետական **բազմընտրական (eclectic)** ոճով, ոճ, որ կը յառաջանար դասական զանազան ժամանակաշրջաններու տարբեր տարրերու համախմբումով (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 46)

ԲԱԶՍՈՒՂԻ, ան., Միօրինակ՝ միապաղաղ չեղող, բազմա-
շերտ, ճկուն, բազմաշաւիղ // փխբ. Տարբեր ուղիներով ընթացող,
տարբեր սկզբունքներով առաջնորդվող, ոչ միապաղաղ: Պոլիս. երբ
1880-էն ի վեր վենետիկեան դասականութիւնը բառարուեստի
թռիչքներուն սանձ կը դնէր, երբ լուսնասէր ու քնաբեր մեղեդիներ
մեր մամուլը կ'օրօրէին՝ ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ ոյժի պոռթկում էր
յանկարծ դարասկիզբին՝ երբ **բազմուղի** ձայնարձակութիւն մը
սկսաւ, աստուածներու վերածննդեան, անցեալի յարութեան, հե-
րոսներու ոգեկոչման (Վեհանոյշ Թէքէեան, Իբրեւ Որդի եւ Նախա-
հայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԲԱԺԱՆՈՒՄՈՒԹԻՒՆ, գ., Իրարմէ բաժնուած՝ զատուած ըլ-
լալը, անմիաբանութիւն, երկպառակութիւն // Անմիաբանություն,
երկպառակություն: Անկախ երկու պատմական օրերուն դրսեւո-
րուած «բազմաձայնութենէն», որ խորքին մէջ արտացոլացումն է
երկրին մէջ վերջին տարիներուն շեշտուած **բաժանուածութեան** եւ
իրողական խզումներու խորացման, նման վիճակ ստեղծուած է
նաեւ քաղաքական կեանքին մէջ, աւելի՛ վտանգաւոր, քան՝ երեւո-
թականները (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ, գ., Պետութեան մը զօրքը զարգաց-
նելու, զօրացնելու, կատարելագործելու աշխատանք // Որնէ պետու-
թյան պաշտպանութեան բանակ ստեղծելը, այն զարգացնելն ու
հզորացնելը: Մուսիսն Տերէ ընդգծած է **բանակաշինութեան** ոլոր-
տին մէջ տարուող աշխատանքներուն կարեւորութիւնը՝ իբրեւ
երկկողմանի յարաբերութիւններու անբաժանելի մաս, եւ նշած
Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան ռազմավարական եւ
աշխարհագրական կարեւորութիւնը (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021,
էջ 8):

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ, ան., Համաձայնութեան գալու միտումով բա-
նակցելու ընթացքին վերաբերող, անոր յատուկ // Համաձայնության

միտումով հանդիպումներին՝ երկխոսություններին հատուկ՝ բնորոշ: Շարունակելով ներկայացնել անկախութեան ճանապարհով Արցախի անցած 30-ամեայ ուղին՝ պատմաբան Էդիկ Մինասեանի յօդուածի հրապարակուող 2-րդ մասին մէջ մանրամասնօրէն կը ներկայացուի արցախեան **բանակցային** ողջ գործընթացը... (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԲԱՌԱԶԱՐԴ, ած., բնատ., **Բառերով պճնուած՝ վայելուչ ու պատշաճ դարձած // Բառերով զարդարված՝ զարդարուն:** ...Փայլփլող կացիներու հեշտանքին/ **բառազարդ** բնագոյին արդուկուած բերանէն/ կ'արտաքսուի մոլուցքն ազատօրէն... (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 70):

ԲԱՌԱՐՈՒԵՍ, գ., **Գեղեցիկ՝ բանաստեղծական բառերով ստեղծուած արուեստ // Բանաստեղծական՝ ստեղծագործելու արվեստ:** Պոլիս. երբ 1880-էն ի վեր վենետիկեան դասականութիւնը **բառարուեստի** թռչչներուն սանձ կը դնէր, երբ լուսնասէր ու քնաբեր մեղեդիներ մեր մամուլը կ'օրօրէին՝ ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ ոյժի պտոթկում էր յանկարծ դարասկիզբին՝ երբ բազմուղի ձայնարձակութիւն մը սկսաւ, աստուածներու վերածննդեան, անցեալի յարութեան, հերոսներու ոգեկոչման (Վեհանոյշ Թէքեան, Իրրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԲԱՌԵԶԸ, գ., **Գիտական ասպարէզի մը երեւոյթները ճշգրտօրէն բնութագրող մենիմաստ բառ // Տերմին:** «Չեղարկել»-ը հարցի էութեան համապատասխան **բառեզր** չէ (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԲԱՐԻԶՅԻ, ի, գ., **Փարիզ քաղաքը ծնած կամ հոն բնակող // Փարիզի բնակիչ, փարիզցի:** Գիրքին հերոսը, **փարիզցի** այդ սքանչելի երիտասարդը [...] դարձաւ իր համար տեսակ մը նախատիպը իր անձին (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 207)

ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ան., **Բարոյական վարքուբարքի՝ արժեքներու եւ հոգեկան առողջութեան ու կայունութեան վերաբերող, անոնց յատուկ // Բարոյականաւթյանը և հոգեբանութեանը հատուկ՝ վերաբերող:** Քննարկուեցան երկրի ապահովութեան, շրջանային մարտահրաւերներուն դիմակայելու, երկրին մէջ առկայ-լարուած **բարոյահոգեբանական** մթնոլորտը կարգաւորելու, սփիւռքի ներուժը արդիւնաւէտօրէն օգտագործելուն առնչուող հարցեր (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԲԱՐՈՅԱՊԱՇՏ, ան., **Բարոյական արժեքները ամէն բանէ վեր դասող, մոլի բարոյասէր // Բարոյական արժեքները գերադասող:** Այդ քրիստոնէական եւ **բարոյապաշտ** իմաստաւորումները կը հիմնուէին (եւ կը հիմնուին մինչեւ այսօր) Դէմքի, ալքի եւ Մումիայի եռեակ գործառութեան վրայ, ձեւով մը կը շահագործէին զայն (Մ.Ն., 2015, էջ 59):

ԲԱՅԱՌՈՂԱԿԱՆ, ան., **Մերժողական, ժխտողական, իրեն չնմանողը անգիտացող // Բացառող, բացառություն անող:** Բոլոր միւսներու ցաւերուն հանդէպ **բացառողական** (exclusionary) կէցուածքը յաջողէր է իմաստագերծել Նշանեան՝ իր ու մեր աղէտին շուրջ կապելով նոր իմաստաւորում (Բագ, թիւ 2-3 2021, էջ 57):

ԲԱՅԱՏՐՈՂԱԿԱՆ, ան., **Մեկնողական, խրթին հասկացութեան մը էութիւնը վերձանող՝ լուսաբանող // Մեկնողական, պարզաբանման:** Գործօնութեամբ (relevance) կը հասկնամ տեսական գիտութեանց իրողական-գործադրական կարողականութիւնը, իբրեւ **բացատրողական** գործիք՝ բոլոր պարագաներու հասկացողութեան եւ լուծումին համար (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԲԱՅ-ՕՁԻՔ, [նախընտրելի գրությունն է **ԲԱՅՕՁԻՔ**] գ., **Կիներու հագուստի օձիքը կարելու ձեւ, որ վիզը եւ լանջքը բաց կը ձգէ, լանջաբաց // Կանանց զգեստի օձիքի տեսակ՝ խոր ու լայն կտրվածքով, որ բաց է պահում պարանոցն ու կուրծքը, դէկոլտէ:** Բայց եւ

շատ լա՛ւ կը յիշեմ զինք Վիեննայէն, երեսուն տարի առաջուց, ու զհետեմ մանաւանդ՝ թէ ինչ **բաց-օձիք** բան էր ինք (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 291):

ԲԵՄԱԳՐՈՒԹԻՒՆ, գ., Շարժապատկերի դիպաշարի ընդհանուր ուրուագիծը, երկխօսութիւնները (scenario) // Դիպաշար, սցենար (Նոր ոճով շարադրված պիես): Միջնորդուած երկխօսութիւնը կ'ենթադրէ նոր ձեւի **բեմագրութիւն**, նոր ձեւի թատերագրութիւն (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԲԵՄԱԴՐՈՒՄ*, Թատերական ստեղծագործութիւն մը բեմադրելը // Գրական ստեղծագործության բեմադրությունը: Դժգոհ է որովհետեւ **բեմադրումը** ուզածին պէս չէ կրցած կատարել (Մ.Ն., 2015, էջ 39):

ԲԵՄԱԿԱՆ-ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ, ած., փխբ. Ոչ սրտէն՝ համոզումներէն բխող, արհեստական // Բեմադրության բեմում ցուցադրելու համար նախատեսված: 2. փխբ. Կեղծ, ոչ բնական: Բեմադրիչներ կը թելադրեն, որ խաղարկութիւնը ըլլայ պարկեշտ, ոչ յաւակնոտ եւ բնականապաշտ: Ոչ բեմական-ցուցադրական (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԲԵՐԱՆԱԽՈՒՈՉԱՅԻՆ, ած., Բերանի խոռոչին հետ կապուած, անոր վերաբերող // Բերանախոռոչին հատուկ՝ բնորոշ, բերանախոռոչի: Եւ **բերանախոռոչային** նման արտադրութիւններ մեզ կուշտ ու կուտ ինդացուցին (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 67)):

ԲԵՐՈՒՑԱԿԱՆ, ած. [սխալագրություն է, պետք է լինի ԲԵՐՈՒՐԱԿԱՆ] Բերուին յատուկ, այդ երկիրին համար յատկանշական // Պերուին հատուկ՝ բնորոշ, Պերուի: Ունէր նաեւ **բերույական** խեցանոթներ, որոնք կրնային հանել սուր ճիչը թոչուններու [...]: (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 219)

ԲԺՇԿԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., Բացառապես բժշկութեան սեփականութիւնը դարձնելը // Բժշկականացնելը, բժշկական՝ միայն բժիշկներին վերաբերող դարձնելը: Մահուան բժշկականացումին վերաբերեալ՝ Ֆուկոն կը մէջբերէ պետք եղած փաստաթուղթերը, բայց չի բացատրեր զայն լիովին, չի բացատրեր թէ ինչպէ՛ս բժշկագիտութիւնը (եւ ոչ թէ, ըսենք, վիճակագրութիւնը) տէր դարձաւ մահուան, ձեռք առաւ մահուան մասին գիտութիւնը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 134):

ԲԻԻՐԱՍԱՊԱՍ, ած., փխբ. Բազմաթիւ բարձրութիւններ՝ սապատի պէս դուրս գցուած կատարներ ունեցող // Բազմաթիվ գագաթներ ունեցող: ...էզը իր կողքին էր տակաւին, ծովահայեաց բիրասապատ ժայռաբլուրի է՛ն վտանգաւոր կէտին վրայ (Բագ., 2010, 1, էջ 3):

ԲՆԱԿԱՆՐԱՊԱՇՏ, ած., Բնականը, հոս՝ անկէղծը՝ հարագատը արհեստականէն՝ շինծուէն վեր դասող // Բնականը գերադասող: Բեմադրիչներ կը թելադրեն, որ խաղարկութիւնը ըլլայ պարկէշտ, ոչ յաւակնոտ եւ բնականապաշտ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԲՆԱՆԻԻԹ, գ., Բուն՝ հիմնական բովանդակութիւն, հոս՝ կրօնի պատմութիւն, որուն աղբիւրը Աստուածաշունչն է // Բուն՝ հիմնական կյոթ: Կրօնական բնանիւթեր են, կրօնական շունչով գծուած են, բայց սրբութիւն չկայ իրենց մէջ, սրբանկարի (իկոնայի) իմաստով (Մ.Ն., 2015, էջ 46):

ԲՆԱԶՆՁԱԿԱՆ, ած., Ամբողջապէս՝ հիմնովին՝ բունէն կործանելուն՝ անհետացնելուն յատուկ, այդ արարքին վերաբերող // Բնաջնջումին հատուկ՝ բնորոշ, բնից՝ հիմքից իսպառ ջնջող: Բնաջնջական կամեցողութիւնը չի կրնար արխիւներ ունենալ, եթէ ճիշդ է որ այդ կամեցողութիւնը ըստ էութեան հիմնուած է արխիւի ոչնչացումին վրայ: (Բագ, թիւ 2-3 2021, էջ 146):

ԲՆԵԲԳ, գ., փխբ. Բուն դեպքերու նկարագրություն, անոնց արմատապես կապուած ըլլալը // Բուն՝ հիմնական դեպք՝ իրադարձություն: Հանճարեղ արուեստագէտը, որ այդքան խոր ապրած է խոցը, իր գործերուն մէջ միայն անուղղակի ակնարկներով հպանցիկ կ'անդրադառնայ համաճարակի բներգին (Ազգակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3,6):

ԲՈՂՈՔԻՍԱՌՆ, ան., Երեւոյթ, վիճակ, որուն միացած է բողոքը՝ սրտունջը՝ ընդվզումը // Բողոքի հետ խառնված, բողոք պարունակող: Բողոքախառն ակնածանքդ միս-մինակ կը մնայ բերանարաց: (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 37)):

ԲՈՐՈՏԱԽՏ, գ., անհոգն., Սորթի փոխանցիկ հիւանդութիւն, քոս: 2. Փխբ. Խռովք, տագնապ, հոգիի անդորրը խանգարող զգացում // Մաշկի և հյուսվածքների քայքայում առաջացնող սուր վարակիչ հիվանդություն, բոր հիվանդությունը: 2. Փխբ. Հոգեկան տագնապ, խռովք: Ներքին կեանքին մէջ տեղի ունեցած արտակարգ գրգռումի մը հետեւանքով, մեղքին բորոտախտի մանրէները կը կրծէին զայն դանդաղօրէն (Օսգար Ուայլը, Տորիլն Կրէյի Պատկերը, Պէյրուք, 1992, էջ 259):

ԲՈՒԲԱՀԱՆԴԵՍ, գ., բնատ., Փխբ. Զանազան ախորժեղի հոտերով լեցուն սօն, հոս՝ հոգիի խորքէն բխող անարատ՝ զինովցնող ձայն // Անուշաբույր՝ ճոխ հանդես, նրա արբեցնող հնչյունները: Բոյրը Աստուծոյ, որ ձայնն էր հոգիին, օր մը օրանց չէ՞ր առած, չէ՞ր լսած իր աղոթքներուն բուրահանդէսին մեղեդիները, որ խնկարկած էր երջանիկ օր մը (Բագ., 2010, 1, էջ 11):

ԲՈՒԲԱԶՈՒԲ, եր, ի, գ., Անուշ՝ հաճելի հոտ ունեցող ջուր // Բուրումնալից ջուր, օճանելիք: – Ճիշտ է թէ այդպէս է, Հէրրի,- հարցուց Տորիլն Կրէյ,- իր թաշկինակին վրայ սրսկելով քիչ մը

բուրաջուր այն խոշոր, ոսկեգլուխ սրուակեն, որ դրուած էր սեղանին վրայ (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուֆ, 1992, էջ 92):

ԲՈՆԱՃԻԳ, ան., Ինքզինքին պարտադրելով՝ առանց ուզելու գործողութիւն մը կատարող // Բռնագրոսիկ, կեղծավոր: – Յտեաութիւն, տղա՛ս, պատասխանեց մայրը,– **բռնաճիգ** վեհութեան խոնարհումով մը (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուֆ, 1992, էջ 104):

ԲՐՏԱՐԱՐ, ան., Անգութ՝ բիրտ արարքներ կատարող, տմարդի, անողորմ // Բիրտ արարքներ կատարող, վայրագ, դաժան: Ասիկա **բրտարար** հաւաքականութեան հասնիլն է ոճի մը, «որուն ետեւ կանգնած է կատարուած ու կատարեալ զոհագործութիւնը» (Բագ, թիւ 2-3 2021, էջ 178):

ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ, ան., Այս կամ այն տեսական սկզբունքի՝ գաղափարի վրայ հաստատուած // Տեսական գաղափարի վրա հիմնված: Այժմեականութեամբ կը հասկնամ մեթոտաբանական պայմանը, որ կը նշանակէ ըլլալ քննական (critical) եւ ոչ թէ՛ նկարագրական եւ զգացական... Տրամագծօրէն հակառակ կեցուածքն է անանդականութիւնը եւ **գաղափարաբանական** արմատականութիւնը (radicalism), առնուազն՝ ազգային հարցերու պարագային (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԳԱՂԹԱԹԱՂ, գ., Քաղաքի մը մէջ գաղթականներու՝ վտարանդիներու բնակած թաղը՝ ժամանակաւոր կայքը // Գաղթականների ժամանակավոր բնակավայր: Մեզ այստեղ հետաքրքրողը ո՛չ թէ համայնքին իրագործումներն են, այլ՝ վայրը, հիմնարկէքի տեղը, գաղթակայանը, որ պատմութեան մէջ ծանօթ է նաեւ բազմապիսի անուններով. հիւղաւան, վրանաքաղաք, **գաղթաթաղ**, բայց մանաւանդ «քէմփ», որ կը դառնայ այս անուանումներէն ամենէն ժողովրդայինը (Բագ, թիւ 3 2020, էջ 60):

ԳԱՐԵԶՐԱՏԱԿԱՌ, գ., **Գարեջուրի կարաս: 2. փխբ. Գիրուկ, տակառի նման փորը ուռած՝ լայնափոր // 1. Գարեջրի տակառ: 2. փխբ., Պարարտ մարմնով, հաստափոր:** Յաղթանդամ ու տարեց մարդ մըն էր Ռումէն, պրկուած յօնքերով, ողբերգական խոպոտ ձայնով ու **գարեջրատակառի** երեւոյթով (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 82):

ԳԱԻԱՌԱԿԱՅԻՆ, ած., **Փոքր գաւառին վերաբերող, անոր յատուկ // Փոքր գավառին հատուկ:** Թ. Ընդհանուր ժողովին որդեգրուած կառոյցը կը համապատասխանէ պետութեան վարչական բաժանումներուն. գիւղական եւ թաղային ժողովներ, **գաւառակային** ժողով, գաւառային եւ քաղաքային ժողովներ, շրջանային ժողով եւ ժողովներէն բխած համապատասխան մարմիններ (Ազգակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., **Հասարակ երեւոյթի մը ազնուացումը, այն արուեստի եւ փիլիսոփայութեան նիւթ դարձնելը // Գեղագիտական դարձնելը՝ դառնալը:** Հիանալի համախմբում մըն էր, անկիւնադարձային ծրագրով, որ լեզուին «**գեղագիտականացում»**ով՝ կ'առաջադրէր ազգին «ազգայնացում»ը (ոչ՝ ազգայնականացումը), կամ՝ անոր կանգնումը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 169):

ԳԵՂԱԳԻՏԱՆԱԼ, չբ., **Որակապէս փոխուիլ՝ ազնուանալ, արուեստի եւ փիլիսոփայութեան նիւթ դառնալ // Գեղագիտական գեղագիտութեանը բնորոշ դառնալ:** Բանասիրութիւնն է, որ պիտի գեղագիտացնէ ինչ որ կը ներկայանար որպէս գրական, բայց տակաւին բաւական **գեղագիտացած չէր:** (Բագ, թիւ 2-3 2021, էջ 6):

ԳԵՂԱԳԻՏԱՑՆԵԼ, բ., **Հասարակ՝ սովորական երեւոյթ մը ազնուացնել, այն արուեստի եւ փիլիսոփայութեան նիւթ դարձնել // Գեղագիտական գեղագիտութեանը բնորոշ դարձնել:** Բանասիրութիւնն է, որ պիտի գեղագիտացնէ ինչ որ կը ներկայանար որպէս

գրական, բայց տակաւին բաւական գեղագիտացած չէր: (Բագ, թիւ 2-3 2021, էջ 6):

ԳԵՂԱԳԻՏԱՑՈՒՄ, գ., Հասարակ՝ սովորական երեւոյթ մը ազնուացնել, այն արուեստի եւ փիլիսոփայութեան նիւթ դարձնել // Գեղագիտանալը, գեղագիտացնելը: Կը գրէ ու կը նկարագրէ «գրական յղացք»ին ազատագրումը, **գեղագիտացումի** կ'ենթարկէ արեւմտահայ գրական արտադրութիւնը, ազգայնացումով կը մտահոգուի, հոն ուր ո՛չ գրական յղացք մնացած է, ո՛չ արեւմտահայ արտադրութիւն, ո՛չ ալ ազգայնացուելիք միջուկ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 7):

ԳԵՏՆԱՍՐԱՆ, գ., Թատերասրահի բեմէն հեռու գտնուող վերջին՝ աժան շարքերը՝ իր նստարաններով // Թատերական դահլիճի բեմից ամենահեռու էժանագին կարգերը: Յաճորակ կատակերգակ մըն էր ան, որ խաղին մէջ մտցուցեր էր իրեն յատուկ յավելումներ ու շահեր էր սերտ բարեկամութիւնը՝ **գետնասրահի** մարդոցմէ շատերուն (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 82):

ԳԵՐԱՊՐԻԼ, բ., Տրամաբանօրէն ըմբռնելի կարողութեան մը չափերը գերազանցել, հասկնալի սահմանէն անդին գոյութիւնը շարունակել // Ըմբռնելի սահմաններից դուրս գոյությունը պահպանելը: Վերապրողը ինքն իր մասին կը խօսի, կը պատմէ կարծէք հիմնաւոր արկածը, ապակին աչքերուն մէջ, տեսողութեան կորուստը, իր վերապրիլը կը նկրագրէ որպէս տեսողութեան վերապրիլը, տեսողութեան **գերապրիլ** մը, այդ տպաւորութիւնը ձգելով որ հիմա ի վիճակի է ուղղակի տեսնելու, դէմ առ դէմ տեսնելու, պատկերին միւս տարբերակը (Մ.Ն., 2015, էջ 27):

ԳԵՐԱՎԱՏՆՈՒՄ, գ., Մնանկանալու աստիճան վատնելը՝ ունեցածը սպառելը // Նախատեսված՝ սահմանված չափը գերազանցող վատնում: Բայց, քանի որ տասնիններորդ դարը սնանկա-

ցած է կարեկցութեան **գերավատնումով**, պիտի թելադրէի որ դիմէինք գիտութեան, որ ուղղութիւն տար մեզի (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 66)

ԳԵՐԱՐԴԻԱԿԱՆ, ան., Ամենէն արդին՝ այժմեականը // Ամենասարդի: Եւ ուրեմն **գերարդիական** կերպարուեստի մը ծայրագոյն ձեւերը կը հետապնդէր իր վարած հանդէսին մէջ (Մ.Ն., 2015, էջ 16):

ԳԵՐԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, գ., Բացարձակ, որեւէ բանով չսահմանափակուած՝ ամէն բանէ անկախ իշխանութիւն // Գերագոյն ինքնիշխանություն, ինքնիշխանության բարձրագոյն աստիճանը: Մտածելու համար **գերինքնիշխանութիւնը** (այսինքն երոպական լեզուներով՝ souveraineté կոչուածը, գերմաներէն նաեւ՝ Staatsgewalt), պէտք ունէր ինքզինքը տեղաւորելու պատմութեան վախճանին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 112):

ԳԵՐՄԱՆԱԼԵԶՈՒ, ան., Ընկերութիւն, որ գերմաներէն կը խօսի // Գերմաներէն խոսող, գերմանախոս: «Պատճառախնդիր» բառը պէտք ունի բացատրութեան. պէտք չէ մոռնալ որ այս գիրքը Վիեննա լոյս տեսած է, **գերմանալեզու** շրջարկի մէջ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 13):

ԳԵՐՆՕՍԴԱՆԱԼ, չբ., փխբ. Իբրեւ հաւաքականութիւն փոքրանալ՝ անդամներուն թիւը նուազիլ, ցանցառանալ, սկարանալ // Գերնոսը դառնալ: Գերնոսացած, իրերածանօթ մեր շուկային մէջ գրախօսին համար ուրիշ ի՞նչ կարելի է բացի քաջաբար լռելէն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 56):

ԳԻՆԵԴԵՂԻՆ, ան., Ճերմակ գինիին յատուկ ոսկեգոյնի երանգը ունեցող // Սպիտակ գինիներին հատուկ ոսկեգոյն-դեղին գույնը: Կը պատահէր յաճախ, որ ամբողջ օր մը անցընէր իրենց սուփիկներուն մէջ դասաւորելով ու վերադասաւորելով իր հաւաքած այլազան քարերը՝ [...] վարդակարմիր ու գինեդեղին տպագիտն-

ները [...] (Օսգար Ուայլը, Տորիըն Կրեյի Պատկերը, Պեյրութ, 1992, էջ 221):

ԳԻՏԱԵՐԵԻԱԿԱՅԱՍՏԱՆ, ան., Արձակի տեսակ, ուր կը պատկերուին գիտական եւ ճարտարագիտական նուաճումներու երեսակայական վարկածային հետեւանքները // Գիտաֆանտաստիկ: Լեւ հեղինակն է «Սոլարիս» գիտաերեսակայական վեպին, որ շարժապատկերի վերածուած է տաղանդաւոր բեմադրիչներ Թարքովսքիի (1972), Սոտեմպերկի (2002) եւ այլոց կողմէ (Ազգակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԳԻՏԱՇԽԱՏԱՆՈՑ, գ., Մասնաւոր սարքերով տեղ՝ գիտական հետազոտութիւններու, փորձերու համար // Գիտական աշխատանքներ կատարելու տեղ, լաբորատորիա: Հասարակաց յարմարութիւնները՝ գրադարան, գիտաշխատանոցներ, արհեստանոցներ եւ այլն, ինչպէս նաեւ ընդհանուր կեդրոնական հաւաքավայրը՝ բոլորին մատչելի (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 38):

ԳԻՏԱՐՇԵՍՏԱԳԷՏ, գ., Գիտական կրթութիւն ստացած մասնագէտ // գիտուն՝ գիտական մասնագէտ, ինժեներ: 1966 թուականն էր, ամիս հոկտեմբեր: Աւարտած էին, աւարտելու վրայ էին յաջորդ ապրիլին բացուելիք «Էքսիօ 67» միջազգային մեծ ցուցահանդէսի շինարարական աշխատանքները, եւ քանի մը տարիէ ի վեր Մոնթրէալ ներխուժած ճարտարապետները, **գիտարհեստագէտներն** ու շինարարական այլ մարզերու մասնագէտները անգործ մնացած էին (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 9):

ԳԻՏԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ, գ., Թեքնիք սարքերու մասնագէտ // Գիտարվեստագիտության՝ տեխնիկայի մասնագէտ, տեխնիկ: Ինչպէս ըսի, երիտասարդ ճարտարապետներ էինք ու ճարտարապետական արհեստագէտներ կամ **գիտարուեստագէտներ** (technician).

տասնեակ մըն էինք (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 47):

ԳԼԽԱԳՐԵԼ, ք., Յատուկ անունի մը առաջին գիրը սովորականէն մեծ տառով գրել, հոս՝ ընդգծել, շեշտել, մասնաւոր իմաստալ // Շեշտելու, ընդգծելու նպատակով մեծատառով գրել: Եւ հիմա մովիան: Նորէն կը գլխազրեմ: (Մ.Ն., 2015, էջ 39):

ԳԼԽԱՏԱԽՏԱԿ, գ., Անկողինի վերի՝ գլուխի մասը ուղղաձիգ դրուած տախտակ, գլխամասի տախտակ //Անկողնի վերին մասում ուղղաձիգ դրված տախտակ, սնար: Այսուհանդերձ, մինչ Միրանտա վերելակին չէր կրնար հասած ըլլալ անգամ՝ հեռաւոր միջանցքի մը մէջ, Ալեքս զինք կը մերկացնէր, ապա՝ կը մերկանար, դարձեալ սիրաբանելու համար, այս անգամ ննջասենեակին մէջ, այդ հոյակապ, հսկայ անկողինին մէջ, որ արաբական կամարի ձեւաւորումով **գլխատախտակ** ունէր (Բագ., թիւ 3 2020, էջ 8-9):

ԳԾԱՅԱՆՑ, գ., Ուղիղ եւ հորիզոնական գիծերու հատումով ստեղծուած ցանց //Հատվող տողերով գծված ցանց: Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած **գծացանցը** բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3) (Սապարեգ, 5 Յունիս 2021, էջ 23):

ԳՈՀԱՐԱԻՈՐ, ան., Թանկագին՝ ազնիւ քարեր ունեցող, գոհարներով զարդարուած՝ գոհարագարդ // Վրան գոհարներ ունեցող, գոհարներով զարդարված: Ծռմոված ու կեղծ գոհարաւոր մատանիներուն շարժումը տուաւ այլանդակութիւն մը իր բառերուն (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէլրոյթ, 1992, էջ 98):

ԳՈՅԱՊԱՀՊԱՆՈՒՄ, գ., Երեւոյթի մը լինելիութիւնը՝ կեանքը վտանգներէ պաշտպանելը, այն անվնաս պահելը, խնամելը //Ապրելու, ինքնութիւնը պահպանելու համար միջոցներ հայթայթելը: «Հայաստան» համահայկական հիմնադրամը իր երախտիքը կը

յայտնէ բոլոր նուիրատուներուն... լիբանանահայութեան **գոյապահպանման** խնդիրներուն արագ արձագանգելու եւ տեղւոյն վրայ դրամահաւաք կազմակերպելու համար (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԳՈՅԱՑԱՊԱՇՏ, ան., Երեւոյթի մը ինքնութեան՝ ներքին բնոյթի էական եւ անկապտելի կարգ մը յատկանիշներէ կազմուած ըլլալու տեսակէտին համախոհ //Ինքնակա գոյությունը՝ կյանքը պաշտող: Բանաստեղծութիւնն ու արձակը կը վարդապետեն «Ոչինչ»ը: Այս **գոյացապաշտ** գրողին գործերուն մէջ սակայն կայ ձայնապահութիւն մը հակա«ոչինչ»ի (Բագ, թիւ 2-3 2021, էջ 212):

ԳՈՅԱՑԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., Այն ըմբռնումը, որ ամէն երեւոյթի ինքնութիւնը՝ ներքին բնոյթը պայմանաւորուած է անոր վերագրուող կարգ մը էական եւ անկապտելի յատկանիշներէ //Ըմբռնում, որի համաձայն ցանկացած երևույթ բնորոշվում է դրան վերագրվող մի շարք էական հատկանիշներով, էսենցիալիզմ: Հայոց պատմութիւնները պէտք էր որ ըլլային հայ իրողական վիճակին եւ փորձառութեանց ցոլացումները՝ առանց **գոյացապաշտութեան** (essentialism) եւ հայակեդրոնացումի (armenocentrism), որ նշանակէ այսպէս կոչուած, «հայկական բաները» նկատել կեդրոնական, իսկ մնացեալը՝ շրջանակային (peripheral), երկրորդական եւ ոչ կենսական (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԳՈՅԱՑԱՓՈԽԵԼ, բ., Երեւոյթի մը էական՝ անկապտելի յատկանիշները այլափոխել // Գոյությունը՝ գոյավիճակը փոխել: Անիկա ունի զօրութիւնը **գոյացափոխելու** «աւերածութեան լեզու»ն, որ աղէտէն մոխրացած մնացորդն է (Բագ, թիւ 2-3 2021, էջ 185):

ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ, ան., Գոյութեան՝ լինելիութեան վերաբերող, անոր յատուկ // Գոյութեանը հատուկ՝ բնորոշ, գոյութեան: Իշխանի տիպարներուն հասարակ յայտարարը **գոյութենական** անձկութիւն մըն է, որ շարունակ կը մրճահարուի անհարազատ միջա-

վայրերու մէջ անոնց բնակութեան իրողութեամբ (Բագ., թիւ 4 2020, էջ 66):

ԳՈՐԳԱՆՄԱՆ, ան., Գորգի նման եղող, արտաքին տեսքով գորգ յիշեցնող // Արտաքինով գորգ հեշեցնող: «Փարիզեան գորգեր»-ու շարքը, ծուռումուռ գորգանման լաթեր, այն լաթերէն՝ որոնք կը գործածուին փողոցներուն մէջ ջուրին հոսանքը կասեցնելու եւ ուղղելու համար: (Մ.Ն., 2015, էջ 34):

ԳՈՐԾԵԼԱՈՃ, գ., Որեւէ բան ընելու առանձնայատուկ եղանակ՝ ձեւ // Գործելու ուրույն եղանակ: «Ռազմափորձերու ընթացքին կը քննուի ցամաքային զօրքերու եւ զօրքերու տեսակներու փոխադարձ գործակցութիւնը՝ կառավարման ժամանակակից գործելաոճերու կիրարկումով», նշուած է հաղորդագրութեան մէջ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԳՈՐԾԸՆԿԵՐ*, գ., Տարբեր հիմնարկներու կամ երկիրներու մէջ նոյն կամ նման պաշտօն կամ մասնագիտութիւն ունեցող անձ // Պաշտոնակից, աշխատակից: Բարեբախտաբար Փաշինեան ՄԱԿ դրկած էր արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանը, որ քանի մը կարելու հանդիպումներ ունեցաւ բազմաթիւ երկիրներու իր գործընկերներուն հետ... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ, ան., Երկկողմանի փոխըմբռնումով եւ համապատասխան զիջումներով կատարուող // Գործընկերներին հատուկ, գործընկերաբար կատարվող: Մեր կողմէ ողջունենք Պաքուի եւ Երեւանի դրական տրամադրուածութիւնը փոխադարձաբար ընդունելի, փաթեթային համաձայնութիւններու հասնելու հարցին մէջ, ինչ որ հեռանկարին մէջ թոյլ պիտի տայ միացեալ աշխատանքը տեղափոխել **գործընկերային** համագործակցութեան հարթութիւն», ընդգծած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԳՈՐԾՆՆԿԵՐՈՒԹԻՒՆ, գ., **Նոյն ծրագիրը կեանքի կոչելու համար համատեղ գործող երկու եւ աւելի անձանց հիմնարկներու կամ երկիրներու համաձայնութիւն՝ դաշինք // Գործընկեր լինելը, գործընկերների հատկանիշը:** Փրայս շեշտած է, որ Միացեալ Նահանգները «մեծապէս կը գնահատեն ՕԹԱՆ-ի դաշնակից Թուրքիոյ հետ գործընկերութիւնը» (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԳՈՐԾԻԶՍՅԻՆ, ան., **Գործիչին՝ կուսակցութեան մը գործուն անդամին յատուկ, անոր վերաբերող // Գործիչին հատուկ:** Իշխանը դարձաւ Մենակի ընտրութիւններէն մէկը, նկատի ունենալով, որ ան արդէն որոշ փորձառութիւն ձեռք ձգած էր՝ այս մարզին մէջ սահմանային Բասէն շրջանին մէջ **գործիչային** որոշ աշխատանքներ տանելու նպատակով (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԳՈՐԾՆԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., **Վերացական մտքի մը՝ գաղափարի մը իրական դառնալը՝ մարմնատրուիլը, իրականացում, իրագործում // Մտահղացման կենսագործում:** Յոյն ժողովուրդը օսմանեան տիրակալութեան դէմ ընթացող 1821-ին, եւ ինը տարի ետք ներկայ Յունաստանի հարաւային մասով եւ Եգէական ծովու որոշ կղզիներով հիմը դրուեցաւ արդի Ժամանակներու յունական պետականութեան՝ իբրեւ ազգ-պետութեան գաղափարին առաջին **գործնականացում** (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԳՈՐԾՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., **Խնդիր մը լուծելու արդիւնաւետ եւ կիրառելի եղանակը վերացական ու տեսական եղանակներէն զերադասելի համարելը // Գործունապաշտ լինելը, գործունապաշտի հատկանիշը, պրագմատիզմ:** Քաթարի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց. «Աֆղանական Թալեպան շարժումը **գործնապաշտութիւն** ցուցաբերեց, եւ պէտք է զայն դատել անոր գործերով՝ նկատի ունենալով, որ ան Աֆղանիստանի մէջ միակ իշխողն է» (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 1):

ԳՈՐԾՈՐՈՆՈՒՄ, գ., Գործ՝ աշխատանք՝ սպրուստի միջոց փնտռելը // Գործի՝ աշխատանքի որոնում: Ձեռնարկեցի գործորոնման արշավիս (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 10):

ԳՈՐԾՕՆՈՒԹԻՒՆ, ած., Օգտաբեր ազդեցութիւն ունենալը, արդիւնաւոր գործօն ըլլալը //Արդյունավետություն: Հայ-իսլամական միջգործօնային պատմութեան պարագային, **գործօնութիւն** կը նշանակէ վերբերել իսլամական աշխարհներու մէջ եւ ժողովուրդներու հետ հայոց պատմական փորձառութիւնը եւ անցեալի փորձառութեանց հիման վրայ հասկնալ ներկայի խնդիրները (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԳՈՒՄԱԿԱՅԻՆ, ած., Տեղափոխելուն՝ փոխադրելուն վերաբերող, անոր ընթացքին յատկանշական //Փոխադրելուն վերաբերող, հատկանշական: Ան նշեց, որ հատուցման քարտը պիտի հրապարակուի **գումակային** աշխատանքը աւարտելէ ետք (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԳՐԱԴԱՏՈՂ, գ., Գրական գործի մը առաւելութիւնները եւ թերութիւնները քննող՝ վերլուծող //Քննադատ, գրաքննադատ: Շատեր կը կարծեն կամ նոյնիսկ աներկիւղ համոզումը ունին այն մասին, թէ հայ գրողներու շուրջ հայերէնով **գրադատողին** գործը նարկիզներու ածու մը ջրելն է, ըլլան ատոնք բեղմնափոշիով յորդուն ու հոտաւէտ թէ անբոյր ու անօգուտ բոյսեր, ըլլան հեզ թէ կոկոզավիզ, քանի որ դժուար է գտնել գրող առանց այդ օրինեալ նարկիզին (Բազ, թիւ 2-3 2021, էջ 56):

ԳՐԱԿԱՆԱՅԻՆ, բ., Պատմութեան մը գրական յատկանիշներ տալ, այն գեղարուեստականի վերածել // Գրական՝ գեղարվեստական դարձնել: Երկու էջնոց յառաջաբանէ մը զատ, ծայրէ ծայր Թորոյեանն է պատմողը, Եսայեան գրի առնողը, գրականացնողը,

և վերջապահության անոր տակ իր անունը դնողը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 218):

ԳՐԵԼՈՒԹԻՒՆ, գ., Գրելը՝ շարադրելը՝ հեղինակելը //Ստեղծագործելու ունակություն: Լրագրության եւ գրելության (այո՛, գրելութիւնը, որպէս գրելու կարելիութիւն) միջեւ կարմիր թելեր կան, որոնք ճանապարհ կը բանան դէպի նոր բացատներ (Բագ, թիւ 3 2020, էջ 49):

ԳՐՉԱՎՐԷՊ, գ., Գրչի՝ գրութեան սխալ, հոս՝ միտումնաւոր արուած, նպատակ մը հետապնդող // Գրչության՝ գրային վրիպակ: Բայց հարցը հոս վէպի մտահոգութիւնն է ու անոր մէջ երեւցող վրէպը, ինչպէս կ'ըսէ Նշանեան, որովհետեւ Որբունիի վէպը **գրչավրէպներ** ու ժամանակավրէպներ կը շարէ վրայէ վրայ, որոնք բանալիներ են, կը մատնանշեն ընդհանուր խանգարում մը, որ կու գայ ժամանակի խանգարումով (Բագ, թիւ 2-3 2021, էջ 229):

ԴԱԴՐԵՑՈՒՄ, գ., Աշխատանքը կամ ընկերութեան մը գործունէութիւնը ընդհատելը կամ այն բռնի կասեցնելը //Կասեցում, արգելում: Շաբաթ, 4 սեպտեմբեր 2021-ին, տասը տարուան **դադրեցումէ** ետք, արտերկրի թռիչքներու վերականգնումով բանիլ սկսաւ Հալէպի միջազգային օդակայանը... (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 4):

ԴԱՄԱՍԿԱՀԱՅ, գ., Տամասկոս քաղաքը ծնած կամ հոն ապրող հայ //Դամասկոսում ծնված հայ: Շիրանեանները եղած են ազգասէր եւ բարերար անձնաւորութիւններ, որոնք իրենց նպաստը բերած են ընդհանրապէս **դամասկահայ** կեանքի կազմակերպման եւ աշխատանք տարած են գործող միութիւններու ու եկեղեցւոյ շուրջ հայութեան համախմբուած մնալուն ի խնդիր (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԴԱՍՊԱՍԱՍԻԻՆ*, գ., **Դուռը կանգուն պահող սին // Սյուն, որին ծխնիներով ամրանում է դարպասդուռը**: Անգամ մը, սպիտակ դարպասասինի մօտ, գայթեցաւ զամբիկը, ու քիչ մնաց որ գետին նետէր զինք (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուիթ, 1992, էջ 340):

ԴԱՏԱԿԱԶՄ, եր, գ., **Այս կամ այն ասպարէզի մէջ մեծ ներդրում ունեցած անձերէ կազմուած խումբ, որ կ'որոշէ պարգևի արժանի անհատները // Տարբեր մրցույթներում մրցանակների՝ պարգևների շնորհումը որոշող մասնագետների հանձնաժողով, ժյուրի**: Մէրքէլ պիտի ստանձնէ «Մարդասիրութեան համար» մրցանակի դատակազմի նախագահութիւնը (Նոր Մարմարա, 08 Յուլիս 2022, Ուրբաթ)

ԴԱՐԱԴԱՐԶԻԿ, ած., 1. **Նոր դարի մեկնարկը ցոյց տուող օր կամ տարի**: 2. **փխբ. Նոր շրջանի մը սկիզբը համարուող պատմական անցք կամ գիտական նուաճում // 1. Նոր դարի սկիզբ եղող՝ նշանավորող**: 2. **փխբ. Նոր ժամանակաշրջանի՝ նոր ուղղության սկիզբ դնող**: Ի վերջոյ պոլսական միջավայրի ծնունդ էր աշխարհաբարի քերականութեան հայրը՝ հայր Արսէն Այտրնեան, որ 1866-ին հրատարակեց իր «Քննական քերականութիւն աշխարհաբար լեզուի» **դարադարձիկ** դասագիրքը... (Յ. Չոլաքեան, ԱՐԵԻՄՏԱՀԱՅԵՐԷՆ... ՍՓԻԻՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ...(1): <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ԴԱՓՆԵԶԷԹ, գ., **Դափնիի ծառի տերեւներուն մշակութամբ պատրաստուած ձէթ // Դափնի ծառից ստացվող ձէթ**: 1925-ին **դափնեձէթի** ընդհանուր արտադրութիւնը եղած է 12 հազար հոխա, որ բերած է 650 օսմ. ոսկի եկամուտ (Յ. Չոլաքեան, ԴԱՓՆԻ... ԿԱՍԼԻ, <https://www.facebook.com/hagop.cholakian.9>)

ԴԵՂԱԳՈՐԾԱՐԱՆ, գ., **Դեղ արդիւնաբերող գործարան // Դեղերի գործարան**: Երբ ես միացայ, մասնագիտութեան դաշտը նաեւ

կ'ընդգրկեր, մանաւանդ կ'ընդգրկեր մաքուր միջավայրերը՝ հիւանդանոց, **դեղագործարան**, գիտական աշխատանոցներ եւ մասամբ նորին (Կրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 88):

ԴԵՂՆՈՐԱԿ-ԿԱՐՄԻՐ, ած., **Կարմիր, որ դեղին գոյնի երանգ ունի, դեղինին զարնող կարմիր //Դեղին որակներ ունեցող դեղին սվող կարմիր՝ կարմրավուն:** Տախտակամածը ծածկուած էր դեղոնրակ-կարմիր սոբոլներով, որոնք, կոխկրտուելով, տեղ տեղ վերածուէր էին ցեխի [...] (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 307):

ԴԵՐԱՎԿԱՅ, գ., **Վկայելու կարելիութիւնը թէականացնող անձ // վկային փոխարինող (անձ):** Վերապրողները, որպէս դերավկաներ, անոնց տեղը կը խօսին, լիազօրուած փոխանորդութեամբ. կը վկայեն պակտող վկայութեան մը մասին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 116):

ԴԵՐ-ՊԱՐՈՆ, գ., [նախընտրելի գրությունն է՝ դերպարոն] **Անգլիոյ մէջ ազնուական խաւի ստորին մակարդակի իշախանական կոչում կամ այդ կոչումը ունեցող անձ //1. Միջին ազնվականական տիտղոս Անգլիայում: 2. Այդ տիտղոսը կրող անձ. Բարոնետ:** -Լաւ են բոլոր ճշմարտագանցութիւնները, երբ տեղին գործածուին, -յարեց **Դեր-Պարոնը** (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 64):

ԴԻՄԱԳՐԱԻԵԼԻ, ած., **Այն ինչին դէմ կարելի է դնել՝ ընդդիմանալ՝ տոկալ //Ինչին կարելի է դիմագրավել՝ դիմադրել, դիմագրավվող:** Դիմագրաւելի նոր կացութիւններու մէջ՝ անիկա «ամէն բոլոր լուծելի, բազմաթիւ անձանթներով, բարդ հաւասարում է» պիտի ըսէիք երբեմն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 24):

ԴԻՄԱԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Ճնշումի մը դիմադրելուն, յարձակումէ մը պաշտպանելուն յատուկ ըլլալը, հոս՝ մարմինի մանրէ-**

ներէն պաշտպանուելու ունակութիւն // Հիվանդության կամ վարակի դեմ օրգանիզմի պայքարելու կարողություն, անընկալունակություն: Պաշտպանութեան երաշխիքը **դիմադրականութեան** մակարդակն է, որ պէտք է բաւարար ըլլայ հիւանդութենէ զերծ մնալու համար (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԴԻՄԱՌԴԻՍՈՒԹԻՒՆ, գ., Մէկու մը կամ երեւոյթի մը ճիշդ դիմացը ըլլալը, երես առ երես ըլլալը, հոս՝ անխուսափելի ըլլալը // **Դեմադրեմ լինելը՝ գտնվելը:** Բայց այդ «կապ»ը երեւան չի գար մահուամբ, սուգի արարողութիւններով, անհատական մահուան հետ **դիմադրիւմութեամբ**. երեւան կու գայ այն ծայրագոյն պահուն, ուր սուգը արգիլուած է (Բագ, թիւ 2-3 2021, էջ 147):

ԴԻՊԱՇԱՐ, գ., Պատմողական ստեղծագործութեան մէջ տեղի ունեցող դէպքերու յաջորդական շղթան // Սյուժե: Դիպաշարի նմուշ մը. - «Էկոն Թիչիի եօթներորդ ճամբորդութիւնը», որ հիմնուած է լեհ Սթանիսլաւ Լեմի (1921-2006) նոյնանուն պատմուածքին վրայ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԴԻԻԱՀԱՆԵԼ, բ., չբ. սնտո., Մարդու հոգիին տրիացած չար ոգին՝ սաստանան հալածել, հոգին չարի իշխանութենէն ազատել փրկել // **Հոգեկան հիվանդի մեջ՝ մարմնում իբր գտնվող դները դուրս քշել՝ հանել:** Սուտակը ունէր **դիւահանող** հատկութիւն, իսկ ջրգողիկը գունաթափ կ'ընէր լուսինը (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէրուօ, 1992, էջ 222):

ԴՊՐՈՑԱՇԻՆԱԿԱՆ, ան., Դպրոցներու՝ վարժարաններու հիմնումին՝ կառուցումին վերաբերող, անոնց յատուկ // 1. Դպրոցաշինութեանը՝ դպրոցների շինարարութեանը հատուկ: 2. Դպրոցի՝ իբրն ուսումնական և կրթական հաստատութեան, ստեղծմանը հատուկ՝ բնորոշ: Դպրոցաշինական այս մեծ գործին մէջ... մեծ դերակատարութիւն ունեցան հայրենակցականները, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու հայ միութիւնները, Հայկական բարեգոր-

ծական ընդհանուր միութիւնը... (Յ. Չոլաքեան, ԱՐԵԻՄՏԱՀԱՅԵ-
ՐԷՆ... ՍՓԻԻՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ...)(3),
<https://www.facebook.com/hagop.cholakian.9>:

ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ, ան., **Դրամատուներուն՝ անոնց աշխատանքին յատուկ // Դրամատանը՝ բանկին հատուկ:** Պարզապէս տրամաբանական կը թուէր, որ դրամը լաւ գործածուէր, քան՝ այդ գումարը **դրամատանային** հաշիւի մէջ դնելը եւ թոյլ տալը, որ ան կուտակուի եւ կուտակուի (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 2, 4):

ԴՐՈՒԱԳԱՇԱՐ, գ., **Հեռուստատեսութեան համար բեմադրուած շատ մը մասերէ բաղկացած շարժապատկեր // Սերիալ:** Երեսուն տարի շարունակ հասարակութիւնը կերակրած ենք աժանաբարոյ **դրուագաշարներով**, օտարաբոյր երաժշտութեամբ՝ սին ու անիմաստ խօսքերով պարուրուած, սուտերով ու անհեթեթի սահմանները հատող հոետորաբանութեամբ (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԵԶՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Գիտութեան կամ արուեստի այս կամ այն ասպարեզին միայն յատուկ եզրերու (գիտական բառերու) ամբողջութիւնը // Գիտության, մշակույթի կամ որևէ այլ ոլորտին հատուկ բառերի ամբողջություն, տերմինաբանություն:** Խնդիրը պայմանագիրը անօրինական նկատելու հրամայականին վրայ կը կեդրոնանայ. իսկ **եզրաբանութիւնը** կարելու է այս պարագային (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ, ան., **Ելեկտրականութեամբ աշխատող սարքերուն վերաբերող, հոս՝ համացանցին յատուկ, անոր վերաբերող // Ելեկտրոնիկային հատուկ:** Լսարանը վարեց «Ազդակ»-ի ելեկտրոնային բաժինի աշխատակից Մինաս Հանս Քէեան (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԵՂԱՆԱԿԱԻՈՐԻՉ, գ., քեր., **Վերաբերական // Եղանակավորող բառ:** Ինչ կը վերաբերի եզրոյթներուն, կը նկատենք՝ «Խօսքի եղանակավորիչներ... եզրոյթը սոսկ քանի մը հեղինակներու դասագիրքերու մէջ (Զահուկյանական ընթերցումներ, 1-2 (17-18), Երեւան 2022, էջ 205):

ԵՆԹԱԶԳԱՅԻՆ, ած., **Ազգայինի դրոշմը ունեցող, սակայն խորքին մէջ անոր ամբօրէն չկապուած՝ անոր հետ քիչ աղերս ունեցող // Ազգայինի մի ենթատեսակը՝ մի մասը կազմող:** Ի դէպ՝ նկատեցէք որ արդէն իսկ Սփիւռք էին, սփիւռքներու ժամանակէն առաջ Սփիւռք, նախազգային, **ենթազգային** Սփիւռք անշուշտ, քանի որ իրենց մտաւորականութիւնը ո՛չ մէկ կապ ունէր բնիկին հետ, ու երբ պիտի սկսէր կապ հաստատել՝ արեւելաբանութեան ինքնահայեցողական կապը պիտի ըլլար, անխուսափելի կերպով (Բագ., թիւ 3 2020, էջ 86):

ԵՆԹԱԿԱՌՈՅՑ, գ., (սով. յոգնակի) **Երկիրի մը արդիւնաւետ գործունէութիւնը կարելի դարձնող առանցքային շինութիւնները եւ կազմակերպութիւնները (եւ ծառայութիւնները) // Երկրի տնտեսական և հասարակական գործունէությունը ապահովող կառույցների ամբողջությունը:** Զառուաթի նշեց, որ ասիկա կատարելու համար պէտք է ստուգել Սուրիոյ **ենթակառուցները**, որովհետեւ անոնք պատրաստ պէտք է ըլլան ելեկտրականութիւնը Լիբանան փոխանցելու աշխատանքին (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 2):

ԵՆԹԱԿԱՌՈՒՑԱՅԻՆ, ած., **Երկիրի մը կանոնաւոր եւ արդիւնաւետ գործունէութիւնը կարելի դարձնող առանցքային շինութիւններու յատուկ, անոնց վերաբերող // Ենթակառույցներին հատուկ՝ վերաբերող, ենթակառույցների / Որևէ երկրի մասնավոր, մեկուսի գործող հատվածին հատուկ:** Փութին նաեւ յայտնած է, որ ռուս-հայկական կապերու զարգացման գործին մէջ զգալի դեր կը խաղայ միջշրջանային գործակցութեան, որ կ'արսօնէ փոխշահաւէտ նախագիծեր իրագործել տնտեսական, ընկերային, **ենթակա-**

ռուցային, մարդասիրական եւ բազմաթիւ այլ ոլորտներու մէջ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԵՆԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ան., **Ընկերութեան մը մէջ կազմուած եւ զանազան պատճառներով ընդհանուրէն զատուած փոքրիկ խումբերու ստեղծած արժէքներուն՝ ունեցած նուաճումներուն յատուկ // Որեւէ ենթամշակույթի բնորոշ՝ հատուկՈրեւէ երկրի մասնավոր, մեկուսի գործող հատվածին հատուկ:** Հետեւաբար յունական երգի ուժգնութեան գաղտնիքը ժողովրդային՝ շատերու կողմէ արհամարհուած ենթամշակութային երաժշտութեան ու երգի, արուեստագէտի տաղանդի ու ճաշակի... մէջ պէտք է փնտռել (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԵՆԹԱՈՒԴԻ, գ., 1. **Մայրուղի տանող կարճ, նեղ արահետ՝ ճամբայ:** 2. **փխբ. Գլխաւոր նպատակի մը հասնելուն ծառայող զանազան եղանակներէն իւրաքանչիւրը // փխբ. Հիմնական նպատակին միտված տարբեր եղանակներից յուրաքանչյուրը:** Նման միաձայնութիւն չի նշանակեր հակաժողովրդավարութիւն, ազատութիւններու սահմանափակում կամ իսկական բազմակարծութեան ոտնակոխում, որովհետեւ բազմաթիւ ենթաառողիներ ունեցող ճամբան մէկ է եւ կը հարկադրէ միասնութիւն... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ԵՆԹԱՏՈՂԱՅԻՆ, ան., **Անուղղակիօրէն միտք մը թելադրելուն՝ այն բացայայտ չնշելուն յատուկ, այդ եղանակով ըսուած խօսքին վերաբերող // Ենթաառողերին հատուկ, ենթիմաստային, ենթատեքստային: Ենթաառողային** ակնարկութիւններ կամ բառապաշարի բացատրութիւնները կը յուշեն Արմաշը ուր ծնած էր (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչէնց, ՓՐԻՆԹԻՆՏՈՒ, Իմացոյթուն գրադարան՝ Անտարես, 2017, էջ 131):

ԵՆԹԱՐԿՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ., **Հպատակած՝ ազատութիւնը կորսնցուցած ըլլալու դրութիւն, հոս՝ զարհուրելի փորձառութեան**

մը բեռը կրելը //Ենթարկված լինելը, ենթարկվածի վիճակը: Իր Ի. դարու հայ գրականության շարքի երրորդ հատորին մէջ, որ նուիրուած է Յակոբ Օշականի «Մնացորդաց»ին, ան վճռորոշ վերլուծումներ կ'ընէ ենթարկուածութեան վիճակի տրամաբանութեան ու անոր հոգեբանական հետեւանքներուն մասին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 118):

ԵՌԱԽՈՐՀՆՈՒՐԴ, ան., Միեւնոյն ժամանակ երեք գլխաւոր առանցք ունեցող (գիրք)՝ էական միտք արտայայտող երկ //Երեք խորհուրդ՝ կարևոր էական միտք պարունակող՝ արտահայտող: Իսկ մենք, որ եղանք անյազ ընթերցողը ներկայ հատորին, մեր շնորհաւորանքին կը միացնենք այն մտածումը, թէ եռախորհուրդ այս մատեանը կրնար մատուցուիլ նաեւ առանձին երեք հատորներով (Միոն, 1999, էջ 476):

ԵՐԱԺՇՏԱՀԱՆ, գ., Երաժշտութիւն յօրինող, երաժշտական աշխատանքներ գրող // Նվագահան, ստեղծագործող: Ալեքսանդր Սպենդիարեան (1871-1928) հայ մեծանուն երաժշտահան, իմբավար, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ, Խորհրդային Հայաստանի ժողովրդական արուեստագետ էր (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 4): - էջ 4

ԵՐԱԺՇՏԱՀԱՆՈՒԹԻՒՆ, գ., Երաժշտութիւն, երաժշտական ստեղծագործութիւններ գրելը //Երաժշտական ստեղծագործութիւններ հորինելը: Սպենդիարեան մեծ դեր ունեցած է հայկական ազգային երաժշտահանութեան դպրոցի ձեւաւորման գործին մէջ, հարստացուցած է հայկական երաժշտութիւնը նոր նիւթերով, ընդարձակած է տեսակները, հիմք դրած է հայկական ազգային «սիմֆոնիզմ»-ին (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԵՐԱԽՏԱՇՍ, ան., Մեծապէս օգտակար՝ նպաստաւոր, առատ՝ ճոխ արդիւնք տուող // Շատ երախտիքներ ունեցող, բազում երախտիքներով: Կը պատուի, որ սկսուած երախտաշատ գործը

շարունակուի եւ Զիւանին իր ամբողջական հասակով մատչելի ըլլայ մեր ժողովուրդի զանգուածներուն (Բագին, 2010, 1), էջ 69

ԵՐԱՆԱԲԱՂԶ, մկբ., **Փափաքի, տենչանքի՝ երջանկութեան՝ բարեբախտութեան սպասումով՝ յոյսով // Երանության՝ երջանկության բաղձանքով, սրտագին:** Մենք Ձեզ երանաբաղձ ընդունեցինք. տաճար եկեղեցի մատուռ ուխտատեղի կառուցեցինք: (Վեհանյշ Թէքէան, Բարեկամ՝ Անունը Տաղանդ, <https://granish.org/barekam-anuuny-tagahnd/>):

ԵՐԳԻԾԱՆԿԱՐՉԱԿԱՆ, ան., **Երգիծական նկարչութեան յատուկ:** // **Երգիծանկարչին՝ երգիծանկարչությանը բնորոշ՝ հատուկ:** Նոյն չափով, պիտի հրճուէր մեր սիրտը, ի կատարումն իր **երգիծանկարչական** փորձերուն (Սիոն, 1999, էջ 476):

ԵՐԵՒԱՅԱԿԵՐՏ, ան., **Երեւակայութեամբ ստեղծուած, երեւութեան // Երեւակայութեամբ կերտված, անիրական:** Ինչպէ՞ս վայրերը կը դառնան մեկէն անստեղծութիւն որ նենգափոխութիւնը, աս ալ զանգուածային աստիճաններու հասած, պիտի յամառօրէն շարունակէ խորացնել, ամայացումը դարձուցած **երեւայակերտ** սկիզբի մը առաջին քարը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 30):

ԵՐԵՒՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ, ան., **Անձի գիտակցութեան ինքն իրեն անդրադառնալուն՝ ինքնաքննութեան յատուկ, այդ գործողութեան վերաբերող // Ինքնաքննությանը բնորոշ:** Առաջինը՝ «Ինքն իր պատկերը...» Կարող Ֆէկէտէ անունով լուսանկարիչ արուեստագիտուհիի մը պատկերներէն մեկնելով՝ կը հանդիպի Մորիս Բլանշոյի 1955ի «Գրական տարածքը» գիրքին մէջ որպէս յաւելում հրամցուած պատկերի եւ պատկերակայութեան» շուրջ մտորումներուն, ու կը բացատրէ թէ 1948էն (Մահավճիռը) մինչեւ 1957 (Վերջին մարդը) Բլանշոյ վերապրողի կերպարին շուրջ **երեւութաբանական** տեսակի աննախընթաց աշխատանք մը կատարած է (Մ.Ն., 2015, էջ 11):

ԵՐԵՒՈՒԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ., Փիլիսոփայության մեջ ուղ-
ղութիւն, որ մարդու անձնական՝ ենթակայական (գիտակցական)
փորձը կը քննէ, այսինքն՝ կը հետազօտէ անհատի գիտակցութիւնը՝
անձնական փորձը՝ իբրեւ իմաստի, արժէքներու միակ աղբիւրի,
անոնց ստեղծման ընթացքը, ինքնաքննութիւն, ինքնախոնարհում //
Պետք ունինք երեւութաբանութիւն մը զարգացնելու: (Մ.Ն., 2015,
էջ 26):

ԵՐԿԲՆՈՅԹ, ած., Հաւասար չափով երկու էական յատկու-
թիւն՝ բնոյթ ունեցող // երկու՝ երկակի բնոյթ ունեցող: Հոս կ'որդե-
գրենք Ժ. Ի. Տադիէի սահմանումը այս երկբնոյթ սեռին յատկացու-
ցած (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչէնց, ՓՐԻՆԹԻՆՅՈ, 'Իմացոթ-
յուն գրադարան', Անտարես, 2017, էջ 136):

ԵՐԿՐԱՊԱՏԿԵՐ, գ., Գետնի վրայ մասնաւոր քարեր շարելով
կամ երկիրի կեղեւէն մաս մը հանելով ստեղծուած խոշոր պատկեր՝
խորհրդանիշ՝ նուազագոյնը չորս մէթր երկարութեամբ // Գտնի՝
երկրի վրա արված նախշ կամ երկրաչափական խոշոր պատկեր, որ
տեսանելի է միայն թռչնի թռիչքի բարձրությունից, գեոգլիֆ:
...յաջորդ գործս պետք էր որ ըլլար լայն պատմագրական
աշխատութիւն մը, որ կը սկսէր եւ կը հիմնուէր գերազանցապէս
միջգործօնային այն փաստուած նախատիպարներուն... վրայ,
որոնց համադրումը միակ գործի մէջ անպայմանօրէն պիտի ստեղ-
ծէր ցարդ անծանօթ «երկրապատկեր» (geoglyph) մը հայոց պատ-
մութեան՝ իսլամական աշխարհներու մէջ (Ազգակ, 2 Հոկտեմբեր
2021, էջ 4):

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԱՆԱԼ, բ., Երկրորդական ըլլալ՝ դառնալ,
նախկին արժէքը՝ իմաստը՝ կշիռը կորսնցնել // Ոչ առաջնային, ոչ
հիմնական՝ երկրորդական դառնալ: Իրողապէս երկրորդականա-
ցած -երկրորդականացուած է Սփիւռքը, որուն գոյութիւնը լոկ ինք-
նանպատակ ներկայութիւն չէ, այլ անոր սիրտը կը բաբախէ հայ-

րենիքի իրաքանչիւր վերիվայրումին համահունչ (Ասպարեզ, 5 Յունիս 2021, էջ 19):

ԵՐՐԱԲԱՌ, ան., Երեք բառերէ կազմուած, երեք բառերով արտահայտուած //Երեք բառից բաղկացած, երեք բառով, եռաբառ: Վերջապէս, 2015-ի Միւռնօրհներին Վեհափառ Հայրապետին կողմէ ճշդուեցաւ մեր յառաջիկայ 100-ամեակը ապահովող **երբաբառ** նշանաբանը՝ «Յիշել, յիշեցնել ու պահանջել»... (Զարթօնք, Կիրակի, 10.07. 2022)

ԵԻԲԱՄԲԱԿԱՆ, ան., Եւրոպական եւ Ասիական մայրցամաքները միասին իբրեւ մէկ ամբողջութիւն//Եվրոպական և Ասիական մայրցամաքների տարածքները համատեղ: «Կ'ակնկալեմ, որ խորհրդաժողովը տեղի պիտի ունենայ ստեղծագործական, կառուցողական մթնոլորտի մէջ, պիտի տրուի մեկնարկը նոր նախաձեռնութիւններու... ինչպէս նաեւ **Եւրասիական** տարածքին մէջ համարկումի գործընթացներու յառաջխաղացման», աւելցուցած է Ռուսիոյ նախագահը... (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԵԻԲԱՍԼԱՆՏԵԱՆ, ան., Հիւսիսային Ամերիկային, Եւրոպային (ՕԹԱՆ-ին) վերաբերող, անոնց յատուկ //Հյուսիսային Ամերիկային, Եվրոպային և ՆԱՏՕ-ին վերաբերող: Օսթին... «Թուիթըր»-ի վրայ գրեց. «Միացեալ Նահանգներ յանձնառու են օգնելու Վրաստանին անոր պաշտպանունակութեան ամրապնդման եւ **Եւրաստանտեան** համարկման աջակցելու գործին մէջ...» (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԵԻԲՈԱՄԵՐԻԿԵԱՆ, ան., Թէ՛ Եւրոպային, թէ՛ Ամերիկային հաւասար չափով վերաբերող, երկուքին ալ յատուկ //Եվրոպային և Ամերիկային (ԱՄՆ-ին) բնորոշ՝ հատուկ: Դժբախտաբար, սակայն, անոնք **Եւրոամերիկեան** տագնապներու ակնոցին ետեւէն կատարուած վերլուծումները գրեթէ հում-հում կը տարատնկեն հայկական աշխարհի (Բազ, թիւ 2-3 2021, էջ 56):

ԶԱՆԳԵԶՈՒՐԵԱՆ, անձ., Զանգեզուրի շրջանին վերաբերող, անոր վերագրուող // Զանգեզուրին՝ Սյունիքին վերաբերող: Ագրպե-
ճանական տրամաբանությամբ միջանցք-միջանցքի դիմաց բա-
նաձեւը գործի լծելու խնդիր է՝ Զանգեզուրեան միջանցքը Լաչինի
միջանցքին դիմաց (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

**ԶԱՆԳՈՒՄՍՄՏԻՊ, անձ., Արտաքին ընկալելի ձեւ՝ կերպա-
բանք չունեցող, անկերպարան, անձեւ // զանգվածի տեսք՝ ձև չափ
ունեցող, զանգվածանման:** Շրջումին մէջ Պըլտեան կը գրէ՝ «...յիշո-
ղութեան կեդրոնին, աւելի մտաբերումին քան յիշողութեան, գոյու-
թիւն ունի մահուան կտրուածքը եւ երբ որ կը յիշէր խորքին մէջ ո՛չ
թէ բան մը, ո՛չ թէ իրողութիւն մը, այլ **զանգուածատիպ** ամբողջ մը,
լեռնակուտակ դիակներու կամ զգայութեանց շեղջակոյտ մը, ուրիշ
բան չէր ըներ եթէ ոչ դիմել պատկերին, վիպասանութեան, դիւային
ուժերուն, որոնք կը բնակէին մէջը...» (Բագ, թիւ 2-3 2021, էջ 224):

**ԶԳԱՅԱԿԱՆՕՐԷՆ, մկբ., Զգացումով՝ սրտի խռովքով՝ ցաւով
(ըսել՝ արտայայտել) // զգացական ձևով, զգացմունք արտահայտե-
լով, հուզականորեն:** ... Աւետիք Իսահակեանի աւելի քան հարիւր-
ամեայ տողը դեռ աստակ է **զգացականօրէն** նկարագրելու այն «ոգու
տով»ը, որ վրայ կը հասնի ամէն ինչի մասին կուրծք ծեծուելէ եւ
ամէն ինչ նիւթապէս թէ բարոյապէս ծախու դրուելէ ետք... (Բագ,
թիւ 2-3 2021, էջ 43):

**ԶԳԱՅԱՊԱՇՏ, անձ., Զգացումներու թելադրանքով շարժող՝
որոշումներ ընդունող, զգացումներուն աւելի մեծ արժէք տուող //
Զգացմունքներով առաջնորդվող, խիստ զգացմունքային:** Զգացա-
պաշտ յեղափոխականը վերածուած էր հեռատես եւ գործնապաշտ
ֆետայիի մը, որ հակառակ գերագոյն գոհողութեան իր անառար-
կելի պատրաստակամութեանը՝ կը մերժէր շատ յաճախ ի գուր նա-
հատակութեան տանող ցարդ գործադրուող վարքագիծը (Ազդակ, 4
Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԶԵԿՈՒՑԱԲԵՐ, գ., Նիթի մը մասին կատարուած հետազոտութիւնը ներկայացնող անձ //Զեկուցով հանդես եկող:Մեր խորին շնորհակալութիւնները հայրենի ու տարբեր երկիրներէ ժամանած ակնասուր **զեկուցաբերներուն**, մասնակիցներուն եւ հիւրերուն, որոնք.... քննարկման պիտի ենթարկեն այս պայմանագիրներու ազդեցութիւնը Հայաստանի ու տարածաշրջանի ճակատագիրին վրայ.... (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԶԻԿԶԱԿԵԼ, չր., փխբ., Անուղղակիօրէն խօսիլ, մանուածապատ՝ դարձարձիկ ձեւով միտք մը յայտնել // Զիզգագներով՝ ուղիղ ճանապարհից խուսափելով ընթանալ: Եթէ փորձուինք առանց **զիկզակելու** պատասխանել, դժգոհութեան այլք կը ստեղծուի (Բագ., 2010, 1, էջ 96):

ԶԻՆԱՏԱՐ, ած., Տեղէ մը ուրիշ տեղ զէնք տանող՝ փոխադրող //Զէնք տեղափոխող: 1904-ի ապստամբութեան պատրաստուող Սասնոյ հայութեան զէնք եւ զինամթերք հասցնելու համար, 1903-ի աշնան, Հայ յեղափոխական դաշնակցութիւնը կը ձեռնարկէ իր պատմութեան մեծագոյն **զինատար** խումբին կազմութեան.... (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 5): - էջ 5

ԶՈՒԱՐԹԱԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ, գ., Խորացումի, միտքերու, լըրջութեան պակաս, մակերեսային վարք, թեթեամտութիւն // 1. Զվարթ բնավորություն ունենալը, զվարթաբարո լինելը: 2. Զվարթաբարոյի վարմունքը՝ վարքագիծը:.... Անոր ամուսինը.... իր դասակարգին պատկանող ամէն մարդու նման ունէր այն կարծիքը թէ **զուարթաբարոյութիւնը** կրնար փոխարինել գաղափարներու բացարձակ պակասը (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուք, 1992, էջ 290):

ԶՕՐԱԿԱԶՄ, գ., Զինուորներէ կազմուած խումբ // Զինվորների խումբ, զորախումբ: Ռուսական խաղաղապահ զօրակազմը ձեռք

բերուած զինադադարի դրութեան պահպանման երաշխաւորն է (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ԶՕՐԱԿՑԱԿԱՆ, ան., **Օժանդակութիւն՝ աջակցութիւն ցուցնելուն յատուկ, աջակցելուն վերաբերող //Օժանդակող, աջակցող, գորակցող:** Վարչապետ Խասատունէ ընդգծեց, որ Լիբանան իր կատարած այցելութիւնը **գորակցական այցելութիւն է՝ Լիբանանի նոր կառավարութեան կազմութեան առիթով** (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԶՕՐԱՎԱՐԺԱՆՔ, գ., **Զօրքի մարտավարական պատրաստութեան զարգացում՝ զինուորական մասնաւոր վարժանքներու միջոցով // Զինավարժանքներ՝ բանակի մարտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով:** Ըստ էութեան, Ազրպէյճանի սահմաններուն մօտ կայացած այս **գորավարժանքներուն** հիմնական ուղերձը Իսրայէլ-Ազրպէյճան ռազմական գործընկերութեան կը վերաբերէր (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԸՆԴՕՐԻՆԱԿԵԼԻ, ան., **Առաքինութիւններ՝ մարդկային արժանիքներ, որոնք խրախուսելի է որդեգրել //Ընդօրինակման արժանի:** Ան ոչ միայն **ընդօրինակելի** կերպար է ու վարպետ, այլ նաեւ կը շարունակէ դաստիարակչական ու կրթական հզօր ներգործութիւն ունենալ մեր սաներուն վրայ», յայտնեց նախարարը (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԸՆՏՐԱԿԱՐԳ, գ., **Քուէարկութեան ընթացքն ու կարգը որոշող օրէնքներ // Ընտրելու, ընտրություն կատարելու օրէնքները, կարգը, որոնցով պետք է առաջնորդվել:** Կիրակի, 17 հոկտեմբերին տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմիններու համամասնական **ընտրակարգով** հերթական ընտրութիւններ Շիրակի, Սիւնիքի եւ Տաւուշի մարզերու 6 համայնքներու մէջ... (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ, գ., Քուէարկութեան համար որոշուած մասնաւոր շրջան, որ ընդհանուր քուէարկութեան մէկ մասը կը կազմէ, ընտրաշրջան // Տարածքային միավոր ընտրություններ՝ հանրաքվէներ անցկացնելու և ձայներ հաշվելու համար: 6-7 նոյեմբերին կայանալիք ընտրութիւններուն Վանա Նազարեանը առաջադրուած է Սեն Լորան ընտրատարածքի Քոթ տը Լիես շրջանի քաղաքապետական թեկնածու (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 4):

ԹԱԹՊԱՆԱԻՈՐ, ան., Թաթայան՝ ձեռնոց ունեցող՝ դրած // թաթայան ունեցող՝ հագած, ձեռնոցավոր: [...] խումբ մը բազէական ձիաւորներ կ'անցնէին հեռուէն, իրենց թաթայանաւոր դաստակներուն վրայ կրելով կնգուղի տակ առնուած թռչուններ (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 199):

ԹԱՐԳՄԱՆԵԼԻՈՒԹԻՒՆ, գ., փխբ. Երկու եզրերու միջեւ կապ՝ յարաբերութիւն ստեղծելը, երկխօսութիւն մը սկսիլը // Փոխադարձաբար հասկանալի՝ թարգմանելի լինելը: Նոյն տեսակի փոխադրութեան մը ուզեցի անդրադառնալ հոս հրամցուած վերջին փորձագրութեան մէջ, որ Որբունի «Ասֆալթ»ը վեպէն կը մեկնի կ'անցնի Վալտեր Բենիամինի թարգմանելիութենէն ու Բոռիսէին հնարած նոյն լեզուով թարգմանութենէն, բացատրելու համար կարծեմ այս ասիէն խօսելու բայց հանդիպակաց ասիէն լսուելու գործողութեան լման բարդութիւնը: (Բագ, թիւ 2-3 2021, էջ 216):

ԹԵԹԵԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ, թեան, գ., Անլուրջ՝ մակերեսային խօսք // Թեթև՝ զվարճալի խոսք՝ արտահայտություն: Ներկաներէն երկուքը բնաւ չէր տեսած նախապէս. իսկ միւսներն էին... Տիկին Ըրլինը՝ ինքզինք պարտադրել ջանացող ոչնչութիւն մը՝ զուարճալի թեթևաբանութիւններով ու վենետիկեան կարմիր մագերով... (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 289)

ԹԵՔՆԱԲԱՆԱԿԱՆ, ան., Ճարտարագիտութեան յատուկ, այդ մասնագիտութեան վերաբերող //Տեխնիկային հատուկ, տեխնիկա-

կան: Միշտ զանգուածային, հականեխիչ եղեռնական ձեռնարկներ կան, նոյնին կրկնորդները, ֆոսֆորով, անօդաչուներով, հրասայլերով, **թեքնաբանական** բոլոր կարելի եւ անկարելի սարքերով, հարուածող ինչ որ կը նկատուէր, դեռ երէկ, անատիկ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 30):

ԹԵՔՆԻԲ, ած., գ., **Մեքենական սարքերու վերաբերող, ճարտարագիտական // Տեխնիկական:** Ծրագիրը աշխատանք կը հայթայթէ առնուազն 10 դերասաններու, որոնցմէ չորսը մնջախաղով կը հարստացնեն էլոյթները, ինչպէս նաեւ՝ թատրոնի **թեքնիք** կազմին (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 6):

ԹԷԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., **Երեւոյթ մը խնդրական՝ թեական՝ անստոյգ դարձնելը, գոյութիւն մը ուրիշէ մը կախուած դարձնելը // թեական՝ երկբայական՝ պայմանական դարձնելը՝ դառնալը:** «Իրրեւ»ը եւ **թեականացումը** ինքնաբերաբար դուռը բանալով՝ ներս կը հրաւիրեն 1995ի սահմանումը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 169):

ԹԷՔԷԵԱՆԱԳԷՏ, ի, գ., **Վահան Թեքեանի կեանքը, ստեղծագործութիւնները քննող, գնահատող մասնագէտ // Շայ բանաստեղծ, հրապարակախոս, հասարակական գործիչ Վ. Թեքեյանի ստեղծագործությունը և գործունեությունը ուսումնասիրող մասնագէտ:** Տիւնեայեան ներկաներուն փոխանցեց գիտաժողովին եօթներորդ մասնակիցին՝ **թեքեանագէտ** և չօպանեանագէտ... ամերիկաբնակ Դոկտ. Վաչէ Ղազարեանի ողջոյնները գիտաժողովի մասնակիցներուն («Աղթամար» գրական, մշակութային, հասարակական, քաղաքական օրաթերթ, 2022թ., Սեպտեմբեր 28):

ԹԻԹԵՂԱԻԱՆ, գ., **Թերթի պէս բարակ մետաղէ ծածկով հողաշէն խրճիթներ ունեցող արան կամ թաղամաս // Թիթեղյա ժամանակավոր կացարաններով ավան:** Եւ երկու տարի չանցած **թիթեղաւան** մը կայ հոն, որ շնչահեղձ կ'ընէ ճոխ թաղամասը (Բագին, 2010, 1, էջ 79):

ԹԻՐԱԽԱՅԻՆ, ած., **Նպատակին հասնելուն նպաստող, անոր ծառայող, դիպուկ // Դիպուկ:** Հաւանաբար նոյնիսկ «առ ոչինչ» յայտարարելը իրաւական առումով այս պարագային **թիրախային** չէ (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԹԻՐԱԽԱԻՈՐԵԼ, բ., **Հարուածելու՝ քանդելու նպատակով կարելոր վայր մը, շինուածք մը իբրեւ թիրախ՝ նշանակէտ ընտրել // Նպատակակէտ թիրախ դարձնել:** 2020 թուականի աշնան Լեռնային Ղարաբաղը ենթարկուեցաւ յարձակման... (որ) կ'ուղեկցուէր ազրպէյճանական զինուած ուժերու կողմէ միջազգային օրենքի բազմաթիւ կոպիտ խախտումներով, որոնց շարքին՝ բնակչութիւնն ու կենսական նշանակութիւն ունեցող ենթակառոյցները դիտաւորեալ **թիրախաւորելով** (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ԹԻՐԱԽԱԻՈՐՈՒՄ, գ., **Հարուածելու՝ քանդելու նպատակով կարելոր վայր մը, շինուածք մը իբրեւ թիրախ՝ նշանակէտ ընտրելը // Թիրախավորելը, թիրախավորվելը:** ՄԱԿ-ի անդամ պետութիւններու մեծամասնութեան մօտ սուրիական հարցին նկատմամբ ընդհանուր առմամբ միջազգային քաղաքական մթնոլորտի փոխուիլը եւ Սուրիոյ թշնամական **թիրախաւորման** նահանջը յստակ ու պարզ կերպով երեւցաւ (ՄԱԿ-ի) Ընդհանուր ժողովի աշխատանքներուն ընթացքին....(Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԹԻՆԱԴԵՂԻՆ, ած., **Գոց՝ մութ դեղին // թուխ և դեղին, գորշադեղին:** Քիչ մը դեռ ցուրտ բայց բուրումնաւէտ օդը, **թխադեղին** ու կարմիր լոյսերը, որ կը փալփիլէին անտառին մէջ.... կը դիւթէին զինք ու կը լեցնէին հոգին՝ հրաշալի զգացումով մը ազատութեան (Օսգար Ուայլը, Տորիլըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 330):

ԹՈՒԱՅԻՆ, ած., **Ճարտարագիտութեան մէջ մէկ եւ զերօ թիւերու զանազան յաջորդականութեամբ զիտելիք հաղորդելու եղանակին յատուկ // Ինֆորմացիան էլեկտրոնային համակարգերի մի-**

ջոցով երկակի՝ մեկերի և զրոների կողի փոխարկող: Այլապես ելոյթը կը վերածուի անջատ մենախօսութիւններու տաղտկալի շարանի մը: Այդ «ագուցումը» ձեռով մը **թուային** տարբերակն է դերակատարներու բեմական տեղադրումին (Ազգակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԹՈՒՆՈՒԶՅԻ, ի, գ., **Թունեսի մէջ ծնած, այնտեղ ապրող կամ այդ երկիրի քաղաքացի // Թունիսի բնակիչ, թունիսցի:**Դեղին շալերով խստադէմ թունուզցիներ կը մատնահարէին պիրկ լարերը հսկայական վիներու [...] (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 218):

ԹԲԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Բանի մը ազդեցութեամբ թրթռալուն՝ դողողալուն յատուկ ըլլալը // թրթռական լինելը, թրթիռ:** Պարտեզի տեսքանին մէջ ստացաւ սարսռուն հոգեզմայլանքի այն **թրթռականութիւնը**, որ կը հասնի մեզի լուսաբացէն անմիջապէս առաջ, երբ սոխակները կ'երգեն (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 83):

ԹԲԱՍՊԱՆ, գ., **Թիւրք սպաննող՝ սպաննած անձ // թուրք սպանող:** Մէկ լուծում ունի Վահագն. գործել թրքասպանութեան արարքը ու ապա մեռցնել ինքզինք, անով իսկ կատարելով փրկագործական կատարեալ արարքը, որ կ'ազատէ Մինասը նոյն հարկադրանքէն, այսինքն՝ կ'ազատէ զինք իր ու իրենց մէջ բնակող **թրքասպանի** ներկայութենէն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 233):

ԹԲԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, ած., **Թիւրք սպաննելը // Թուրքի սպանութիւն, թուրք սպանելը:** Մէկ լուծում ունի Վահագն. գործել **թրքասպանութեան** արարքը ու ապա մեռցնել ինքզինք, անով իսկ կատարելով փրկագործական կատարեալ արարքը, որ կ'ազատէ Մինասը նոյն հարկադրանքէն.... (Բագ, թիւ 2-3 2021, էջ 233):

ԹԲՔԱՑԵՂ, ան., Թրքական ցեղին, այդ ցեղերին մեկուն պատկանող // Թյուրքական լեզվաընտանիքին՝ ցեղախմբերին՝ ժողովուրդներին պատկանող: Խօսքը Թուրքիա-Նախիջեւան-Զանգեզուր-Ազրալեյճան եւ անկէ՝ թրքացեղ, թրքախօս ժողովուրդներու ցամաքային գերիշխան կամուրջի մասին է (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԺԱՄԱՆԱԿԱԿՐԱՆՕՐԵՆ, մկբ., Ժամանակի յաջորդականութեան սկզբունքով նկարագրուած պատմութեան դիտանկիւնէ, ըստ այդ պատմութեան // Ժամանակագրական տեսակետով՝ մոտեցմամբ, ժամանակագրորեն: Կայ նաեւ ժամանակագրականօրէն նախորդող [եղեռնին], արդիականութեան երկու դարերու երկայնքին վրայ ձգուող հայերու որպէս հաւաքականութիւն աղէտի մը արձանագրութիւնը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 97):

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐՈՒՍՏ, ան., Ժամանակը մսխող, այն նպատակի մը համար արդիւնաւէտ չգործածող // Ժամանակ կորցնելով, ժամանակի վտտումով կատարվող: Այսօր ժամանակը չէ դպրոցներուն միջեւ անիմաստ ու ժամանակակորուստ մրցակցութիւններու, քարոզչական անտեղի մթնոլորտներու ստեղծման, աշակերտ կամ ուսուցիչ «որսալու» տեւաճ մօտեցումի... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ԺԱՄԱՆԱԿԱՑՆՈՒԹԻՒՆ, գ., Ժամանակի թուային ճշգրիտ յաջորդականութեամբ ըլլալը, այդ մեկնակետէն դիտուիլը ըմբռնուիլը // ժամանակային լինելը, ըստ ժամանակի որոշվելը, ժամանակագրականություն: Այս փուլին մէջ կը մտնեն արդի պատմութեան՝ պատմական ժամանակայնութեան, զգայնութիւնը եւ օրինավիճակը... (Բագ, թիւ 2-3 2021, էջ 91):

ԺԱՄԱՆԱԿԱՑՆՕՐԵՆ, մկբ., Ժամանակի թուային ճշգրիտ յաջորդականութեան եղանակով // ժամանակային ձևով, ժամանակագրականորեն: Ուրեմն՝ գործ ունինք այս համաստեղութեան ժա-

մանակայնօրէն դիտուած առաջին աշխատութեան հետ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 87):

ԺԱՅՌԱԲԵԿՈՐ, գ., Արեւի, Հրատ եւ Լուսնթագ մուրակներու ուղեծիրներու շուրջը պատող մեծ կամ պզտիկ ժայռէ բեկորներ՝ կտորներ // Աստերոիդ, աստղակերպ: Կելպի աստղանաւը կը բախի անջրպետի մէջ թափառող անհամար **ժայռաբեկորներէն** մէկուն եւ կը վթարուի (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ԺԱՆՍԵՆԱԿԱՆ, ան., Ասուածարան Գորնելեոս Ժանսէնի վարդապետութեան յատուկ, անոր պատկանող // Կոռնելիոս Յանսէնի վարդապետությանը հետևող: Եւ Սելիլի մէջ գտայ նշխարային պահարանը, barocco ոճով կառուցուած ու զարդարուած **ժանսէնական** եկեղեցիի մը մէջ, պահարան մը որ գետնէն մինչեւ առաստաղ կը բարձրանար (Մ.Ն., 2015, էջ 39):

ԺՆՆԵԻԵԱՆ, ան., Ժընեւ քաղաքին յատուկ, այնտեղ տեղի ունեցած // Շվեյցարական Ժնև քաղաքին վերաբերող՝ հատուկ, Ժնևում կայացրած: Ալիեւ նաեւ մեղադրեց Հայաստանը՝ «միջագային իրաւունքի, ներառեալ **ժընեւեան** համաձայնագրի կոպիտ խախտման» մէջ (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԺՈՂՈՎԱՍԵՆԱԿ, գ., Ժողով գումարելու սենեակ, խորհրդակցական սենեակ, ժողովարահ // Ժողովի համար նախատեսված՝ առանձնացված սենյակ: Քարտուղարուհի մը կը դիմաւորէ զիս, կ'առաջնորդէ **ժողովասենակ** մը, ուր անմիջապէս ինծի կու գայ-կը միանայ պարոն Փոէրը (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 16):

ԺՈՂՈՎԱՎԱՐԱԿԱՆ, ան., Ժողովը վարելուն, անոր ընթացքը հսկելուն եւ կառավարելուն յատուկ, այդ գործողութեան բնորոշ // Ժողով վարելուն հատուկ՝ բնորոշ: Աւելին, խորհրդարանի նախագահին **ժողովավարական** ճկուն ու հմուտ մօտեցումը հարցե-

րուն, որոշ չափով մեղմացուց անցնող օրերու լարուած տրամադրութիւնները եւ ժողովին ընթացքը դարձուց աւելի հեզասահ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԻՄԱՅԱԿԱՐԳ, գ., Աշխարհիկ երեւոյթներու, մարդու կեանքին՝ էութեան՝ նապատակներուն մեկնաբանութեան ամբողջական եղանակ // Փիլիսոփայական ուսմունք իմացութեան պրոցեսի, աղբյուրների, ձևերի մասին, գնտեսլոգիա: Հարկ է նաեւ նկատի ունենալ, ինչպէս Նշանեան դիտել կու տայ, որ Միխիթարեաններու փորձառութիւնը դասական իմացակարգի շրջանին ամբողջութեամբ չի համապատասխաներ դասականութեան ընդունուած գործառութիւններուն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 96):

ԻՄԱՅԱԿԱՐԳԱՅԻՆ, ան., Աշխարհիկ երեւոյթներու, մարդու կեանքին՝ էութեան՝ նապատակներուն մեկնաբանութեան ամբողջական եղանակին վերաբերող, անոր յատուկ // Իմացակարգին՝ իմացաբանութեանը՝ գնտեսլոգիային հատուկ՝ բնորոշ, գնտեսլոգիական: Անգամ մը եւս, գործ ունինք բարդ հանգոյցի մը հետ ու, արդարեւ, վերը գործածուած իմացակարգային շրջանները աւելի ճշգրիտ սահմանումի կը կարօտին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 96):

ԻՄԱՅԱՊԱՇՏ, ան., Միտքը՝ մտքի զօրութիւնը՝ գիտելիքը գնահատող, զանոնք գերակայ արժէք համարող // Իմացութիւնը՝ միտքը՝ գիտելիքը պաշտող: Սփիւռքահայ իմացապաշտ միտքը առաւելաբար պիտի ուզէր ողջունել այս ոսկի երակը իր ստեղծագործութեան (Միոն, 1999, էջ 476):

ԻՆՔՆԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ (autoethnography), գ., Գրողի կենսագրութեան՝ փորձի վրայ հիմնուած, այդ դիտանկիւնէ կատարուած ազգագրական գիտական հետազոտութիւն // Հետազոտողի անձնական փորձի վրա հիմնված ազգագրական քննութեան ձև: Վերլուծաբանը «ինչպէ՞ս տեղի կ'ունենայ ազգի մը ինքնահնարումը» հարցադրումին ի պատասխան գրած է. «Կ'ուզեմ այստեղ նկատ

րագրել աղետի փորձառութիւնը, այն՝ որ կը ցուցարկուի Արովեանի մօտ եւ, գրականութեան եւ ինքնագագարութեան ծրագրի ետին... երեւան կը հանէ «բնիկի» կերպարը (Բագին, 2021, թիւ 2-3, էջ 181):

ԻՆՔՆԱԶՈՒՄՊ, մկբ., **Ինքզինք զսպելով՝ չափի մէջ դնելով // Ինքն իրեն զսպելով:** Հալածական, հազիւ ինքնագուսայ հասայ երիտասարդին (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 66):

ԻՆՔՆԱԾՐԱԳՐԵԼ, բ., **Առանց արտաքին միջամտութեան իր ուրոյն օրէնքներով զարգացող, նպատակը ինքն իր մէջ ունեցող // Ինքնուրույնաբար՝ ինքն իր մէջ ծրագրված:** Ինչպէս կը յայտնուի իր նամակներէն՝ ինքնածրագրուած բանաստեղծութեան մը մէջ կ'ընթանար (Վեհանոյշ Թեքեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԻՆՔՆԱԿԱՅԱՅՈՒՄ, գ., **Ինքզինք՝ իր բուն էութիւնը ճանչնալը եւ այն արտայայտելը // Ինքն իր կայանալը գիտակցելը:** Ժամանակ չունէին ենթակայի ինքնակայացումով զբաղելու (Մ.Ն., 2015, էջ 28):

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, գ., **Ինքզինք կառավարելը՝ որոշումներ ընդունելու եւ անոնք գործադրելու ազատութիւն, հոս՝ պզտիկ եւ մեծ համայնքներու գործունէութեան անկախութիւն // Տեղական ինքնակառավարում, տեղական (քաղաքի, գյուղի, թաղի են) նշանակության խնդիրների լուծմամբ զբաղվող ընտրովի մարմին:** Կիրակի, 17 հոկտեմբերին տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմիններու համամասնական ընտրակարգով հերթական ընտրութիւններ Շիրակի, Սիւնիքի եւ Տաւուշի մարզերու 6 համայնքներու մէջ... (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԻՆՔՆԱՀԱՄՈԶԻԶ, ած., **Ինքնավստահ երեւացող, ինքն իր անձի նկատմամբ վստահութիւն ներշնչող // Ինքնավստահ:** Երկչոտ, որոնող հայեացք, ինքնահամոզիչ ուղիղ քալուածք, տեղը չէողո

երիտասարդի մը ինքնապարտադիր, մտամուր, հեռուէն հասած այցելութիւն մըն է իրը (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 43):

ԻՆՔՆԱՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ (Autoscopy, Autoscopie), ած., Մարդու՝ իր անձէն դուրս եղող չէզոք դիրքէ մը իր նիւթէղէն կազմի ընկալումին՝ դիտումին բնորոշ, այդ փորձառութեան յատկանշական // Ինքնատեսողութեան հասուկ՝ բնորոշ, ինքնադիտողական: Անոր կեանքը - ազգին կեանքը - մահուան տեսանկիւնէն դիտուած է («ինքնահայեցողական» կերպով), կենսապաշտութիւն մըն է որ երեւան կու գայ «մահապաշտութեան» մը խորքէն զատուելով (Բագ, թիւ 2-3 2021, էջ 141):

ԻՆՔՆԱՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ, գ., Իր իսկ իսկութեան ըմբռնում, սեփական գոյութեան իմաստաւորում՝ արդարացում // Ինքն իրեն՝ իր էութիւնը հասկանալը, ինքնըմբռնողություն: Անիկա «զոհագործական արարմունք»ին նշանն է: «Զոհագործական արարմունք»ը կը ծառայէ կայսրութեան կազմումին: Ուրեմն, կայսրութեան կարգուսարքը «կրօնական» է: Անիկա «եղանակ մը»ն է համայնական ինքնահասկացողութեան եւ ինքնահաստատման (Բագ, թիւ 2-3 2021, էջ 178):

ԻՆՔՆԱՀԱՐՑԱԴՐՈՒՄ, գ., Ինքն իր անձը քննել՝ ինքնագիտակցութեան գալու, իր իսկ ինքնութիւնը ճանչնալու ի խնդիր // ինքն իրեն քննելը, ինքնաքննություն: Հարցումը հոն հարցում չէր՝ հաւանօրէն՝ պատասխանի սպասող: Քեզի համար, ըսիր արդէն, հարցադրում է: Ինքնահարցադրում (Բագ, թիւ 2-3 2021, էջ 24):

ԻՆՔՆԱՀՆԱԲՈՒՄ, գ., Ինքզինք՝ ինքն իր էութիւնը գիտակցիլը, այն ստեղծելը // ինքն իրեն գիտակցելը: Վերլուծաբանը սա հարցադրումը կատարած է. ինչպէ՞ս կը բանի ազգայնական խօսոյթը, եւ ազգայնական ամէն խօսոյթէ առաջ՝ ինչպէ՞ս տեղի կ'ունենայ ազգի մը ինքնահնարումը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 181):

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹԻՒՆ, գ., **Ինքզինք՝ իր իսկ կարողությունները, արժանիքներն ու թերությունները ճանչնալը, իր նպատակներու գիտակցումը // Ինքն իրեն՝ իր ներքին էությունը ճանաչելը, ինքնաճանաչում:** Իր բազմաբնոյթ հրապարակումներով «Ազդարար»-ը նաեւ անդրադարձած էր հայ ժողովուրդի լուսաւորութեան, ազգային **ինքնաճանաչողութեան** եւ հայրենիքի ազատագրութեան հետ առնչուող խնդիրներու լուսաբանութեան.... (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԻՆՔՆԱՄԱՔՐԱԶՏՈՒՄ, գ., **Իր հոգին՝ էությունը աւելորդ եւ պատահական տարրերէ ազատելը, զայն բիրեղացնելը՝ սկզբնական անբիծ վիճակին հասցնելը // Ինքն իրեն մաքրելով զտելը, ինքնամաքրագործում:** Ուժի կամեցողութիւնը, հոս, **մաքրագտման** կամեցողութիւն է կամ, աւելի ճիշդ, **ինքնամաքրագտման** (Բագ, թիւ 2-3 2021, էջ 154):

ԻՆՔՆԱՄՇԱԿՈՒՄ, գ., **Անհատ, որ իր իսկ կամքով ինքզինք եւ իրեն ժառանգուած արժէքները կը զարգացնէ, անոնց ծիրը կ'ընդարձակէ // Ինքն իրեն մշակելը՝ զարգացնելը:** Անոնք ինքնաշխատ **ինքնամշակումով** ոչ թէ առկայ մտայնութեան ու ապրումներու կրողն ու փոխադրողը կը դառնան, այլ զանոնք վերստեղծող, վերամշակող ու առաւել յառաջացեալ դրսետրումով նորովի կը յանձնեն գալիքին ու կը դառնան մասնակիցը գալիքի ստեղծութեան (Բագին, 2010, 1, էջ 83):

ԻՆՔՆԱՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ, գ., **Ինքն իր՝ իր գոյութեան մասին մտածելը, զայն մեկնաբանելը, անոր ծնունդը՝ սկզբիբը լուսաբանելը // ինքնութայն՝ միայն իրեն բնորոշ մտածողություն:** Մէջբերումները պիտի կարդամ քիչ մը ետքը ու պահ մը պիտի հրաւիրուինք միասին սանկ կէս-աստուածաբանական խորհրդածութեան մը, յիշելու համար թէ ի՛նչ էր «մնացորդք»ի այդ գաղափարը աստուածա-

շնչական – ուրեմն հրեական **ինքնամտածողութեան** – սահմաններէն ներս (Բագ, թիւ 2-3 2021, էջ 105):

ԻՆՔՆԱՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ, գ., Իր յոյզերը արտահայտելով **զանոնք գիտակցիր՝ ճանչնալը՝ ինքզինք ըմբռնելը // Ինքն իրեն ճանաչելը՝ հայտնաբերելը, ինքնաճանաչում:** Նորիկեան գեղանկարեց որպէս **ինքնայայտնաբերումի**, հաւաքական ինքնաճանաչումի միջոց, ինքնապեղում մը՝ որ կը խորանայ ու կը տարածուի իրեն ամենէն աւելի ծանօթ հայ ազգին մէջէն դէպի մարդն ու մարդկութիւնը (Բագին, 2010, 1, էջ 83):

ԻՆՔՆԱՆԴՐԱԴԱՐՉԱՅԻՆ, ած., **Այն գործողութեանը՝ արարքին վերաբերող, որուն արդիւնքը կը կրէ զայն կատարողը նաեւ // ինքն իրեն անդարադառնալուն հատուկ՝ բնորոշ, ինքն իրեն անդարադառնող:** «Վերապրիլ» բառը կը պարունակէ անջնջելի երկդիմութիւն մը... երկդիմութիւնը այն է, որ բառը ունի նաեւ **ինքնանդարադառնային** գործածութիւն մը, որուն համաձայն՝ երոպական լեզուներով կը վերապրիս «դուն քեզի», այսինքն «քու վերջաւորութենէդ ետք» (Բագ, թիւ 2-3 2021, էջ 107):

ԻՆՔՆԱՆՈՐՈԳՈՒՄ, գ., Իր իսկ **վիճակը փոխելը, հինէն եւ փտածէն ազատելուով զայն բարելաւելը // ինքն իրեն նորոգելը:** Ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ, ինչպէ՞ս կ'իրագործուի **ինքնանորոգման**, ընդլայնումի այդպիսի գործընթաց մը... (Բագ, թիւ 2-3 2021, էջ 24):

ԻՆՔՆԱՊԱՏԿԵՐԱՅՈՒՄ, գ., Իր անձը՝ **գոյութիւնը ընկալելու՝ ըմբռնելու ձեւը, այդ գոյութեան մասին մարդու ունեցած համոզումները // Ինքն իրեն պատկերացնելը:** Սերունդներ հոն գտած են իրենց ծանօթ աշխարհահայեացք մը, հոն տեսած են իրենց իսկ ունեցած **ինքնապատկերացումին** հաստատումը՝ օտարութեան մէջ օտարումին մատնանշումը, կը բացատրէ Նշանեան (Բագ, թիւ 2-3 2021, էջ 225):

ԻՆՔՆԱՊԱՐՏԱԴԻՐ, ած., **Ինքն իրեն գործ մը ընելուն պարտադրող՝ մղող // ինքն իրեն պարտադրող:** Երկչոտ, որոնող հայեացք, ինքնահամոզիչ ուղիղ քալուածք, տեղը չեղող երիտասարդի մը **ինքնապարտադիր**, մտամոլոր, հեռուն հասած այցելութիւն մըն է իրը (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 43):

ԻՆՔՆԱՊԵՂՈՒՄ, գ., Պեղելով՝ խուզարկելով **անհատի առօրեայ քողով ծածկուած ինքնութեան վեր հանում՝ ճանաչում // Ինքն իր էության խորքերը թափանցելը, ինքնաճանաչում, ինքնահայտնաբերում:** Նորիկեան գեղանկարեց որպէս ինքնայայտնաբերումի, հաւաքական ինքնաճանաչումի միջոց, **ինքնապեղում** մը՝ որ կը խորանայ ու կը տարածուի իրեն ամենէն աւելի ծանօթ հայ ազգին մէջէն դէպի մարդն ու մարդկութիւնը (Բագին, 2010, 1, էջ 83):

ԻՆՔՆԱՅՈՒՍՈՒՄ, գ., **Ուշադրութիւնը իր անձին վրայ կեդրոնացնելը, հոս՝ դիտելու կարողութիւնը գննելը՝ քննելը, այն վերլուծելը // 1. Ինքն իրեն ցուցում, ինքն իրեն ցուլար: 2. փխբ. Ինքն իր վրա բնեովելը:** Հո՛ս է լուսանկարչութեան լման յարակարծիքը նաեւ. կը ստիպէ միշտ, կամ գրեթէ միշտ, որ դիտողին նայուածքը դառնայ ինքն իր վրայ, կատարեալ շրջադարձով մը: Մտածող նայուածք մը կը ստեղծէ, նայուածքին **ինքնացուցումը** (Մ.Ն., 2015, էջ 31):

ԻՆՔՆԱՅՈՒՄ, գ., **Այոց հետ եւ հանգամանքներու մէջ իր դիրքը հասկնալը, ինքզինք գիտակցիլը // Ինքնանալը, ինքնության՝ անհատականության կայացումը:** Մեր հարկը ուրիշներուն, այսինքրն ինչ որ մեր միտքը պարտական է գիրքերու որոնցմէ սնած է, պայմաններու՝ որոնց մէջ աճած կամ պարզապէս ծնած է, այդ հարկը ընդունիլ ու անձնատրել որեւէ **ինքնացման** առաջին փուլն է (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչէնց, ՓՐԻՆԹՐԵՆՏՈՒՆ, Իմացոթյուն գրադարան՝, Անտարես, 2017, էջ 16):

ԻՆՔՆՈՒԹԵՆԱԿԱՆ, ան., Անձի իր իսկ էությունը՝ իսկու-
թեանը յատուկ, այդ ներքին բնույթը արտացոլելուն վերաբերող // **Ինքնությանը հատուկ՝ բնորոշ:** ...այս եզրերէն ինրաքանչիւրը կը
յղուի քաղաքական ու **ինքնութենական** տարբեր համաձիւրներու
(Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոթյուն
գրադարան', Անտարես, 2017, էջ 43): և

ԻՇԽԱՆԱՓՈՒՄՈՒԹԻՒՆ, գ., Պետութիւն մը կառավարելու՝
կարելորդ որոշումներ ընդունելու համար ընտրուած մարդոց փո-
փոխութիւն // **Իշխանության փոփոխություն:** Դուն բոլորէն լաւ գի-
տես, որ եթէ չըլլար 2018-ի դուրսի ուժերու մեծ օժանդակութեամբ
Հայաստանի մէջ տեղի ունեցած **իշխանափոխութիւնը**, ապա դուն
քու ականջիդ ետեւը աւելի շուտ կը տեսնէիր, քան Շուշին ու
Հատրուրը (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ԻՏԼԻՊԵԱՆ, ան., Մուրիոյ Իտլէպ քաղաքին յատուկ, այդ քա-
ղաքին կամ անոր շուրջը տեղի ունեցող // **Միրիայի Իդլիբ քաղաքին
հատուկ, Իդլիբի շրջակայքում տեղի ունեցող: Իտլիպեան** տեղա-
շարժը սակայն կրնար մտահոգիչ ըլլալ հայկական կողմին համար
(Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԻՐԱՆԱՍԵՐԶ, ան., Իրանի՝ Պարսկաստանի սահմաններուն
մօտիկ՝ կից // **Իրան պետությունը մերձ, Իրանի մոտ՝ հարևանու-
թյամբ:** Միջանցքի գաղափարի արծարծման հետեւեցան ազրպեյ-
ճանական զօրքերու **իրանամերձ** տարածքներու վրայ ռազմափոր-
ձերը (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԻՐԱՐԱՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ, թեան, գ., Մէկզմէկու հասկնա-
լը, յանուն մէկ նպատակի զիրար լսելը եւ համախմբուիլը // **Իրար՝
միմյանց հասկանալը, փոխըմբռնողություն:** 1949-ի առաւօտուն
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան խորհրդանիշ եւ սիրտ՝
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարէն հնչող Երջանկայիշատակ

Գարեգին Ա. Կաթողիկոսի ձայնը հայութիւնը կը հրաւիրէր **իրաւահասկացողութեան** (Զարթօնք, Կիրակի, 10.07. 2022)

ԻՐԱԻԱԴՐՈՅԹ, գ., Այս կամ այն բանը ընդունելու կամ մերժելու օրինական անատարկելի հիմք // **իրավական՝ իրավունքի դրույթ**: Անվաւեր հռչակուելու բոլոր **իրաւադրոյթները** կ'ամփոփեն թէ Ալեքսանդրոպոլի, թէ Կարսի եւ թէ զայն նախորդած Մոսկուայի դաշնագիրները (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԻՐԱԻԱԺԱՌԱՆԳՈՐԴ, գ., **Ըստ օրէնքի՝ արդարօրէն այս կամ այն բանի ժառանգորդը ըլլալը // Իրավական ժառանգորդ**: Որքան ալ նկատի առնուի, որ Ռուսիոյ դաշնութիւնը Խորհրդային Միութեան **իրաւաժառանգորդն է**, ապա այս պարագային անվաւերականութիւնը կը հիմնուի միութեան մը երբեմնի տարածքին տարանջատութեան վրայ (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԻՐԱԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Վիճակ՝ **կացութիւն որ եղած օրէնքներուն կը համապատասխանէ // իրավական՝ իրավունքին համապատասխան լինելը, լեգալութիւն**: Պատմագիրներ ու իրաւագէտներ արդարօրէն հարցականի տակ կ'առնեն յիշեալ պայմանագիրին օրինականութիւնը (legitimacy) եւ **իրաւականութիւնը** (legality), որովհետեւ ան չի համապատասխանէր միջազգային օրէնքին եւ միջպետական համաձայնագիրներու սկզբունքներուն եւ գործընթացներուն (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԻՐԱԻԱՊԱՀ, ած., **Պետութեան օրէնքներով ընկերութեան մը անդամներուն տրուած իրաւունքները պաշտպանող // Հասարակական կարգի և մարդու իրավունքների պահպանությամբ զբաղվող**: Գլխաւոր դատախազները անդրադարձան.... Հայաստանի ու Արցախի **իրաւապահ** մարմիններուն միջեւ գործակցութեան կառուցակազմերուն.... (Սպարեզ, 5 Յունիս 2021, էջ 9):

ԻՐԱՔԵԱՆ, ան., **Իրաքի պետության յատուկ, անոր պատկանող // Իրաքին հատուկ՝ վերաբերող, Իրաքի:** Ճ. Պուչիքեան բարձր գնահատեց լիբանանեան արտադրութիւններուն դիմաց **իրաքեան** շուկաները բանալու պատրաստակամութիւնը (Ազգակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 8): - էջ 8

ԻՐԵՐԱԾԱՆՈԹ, ան., **Իրարու ճանչող // Միմյանց ծանոթ:** Գերնօսրացած, **իրերածանօթ** մեր շուկային մէջ գրախօսին համար ուրիշ ի՞նչ կարելի է բացի քաջաբար լռելէն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 56):

ԻՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Այն որ իրողութիւն մը՝ անուրանալի ճշմարտութիւն մըն է // Իրական՝ ռեալ լինելը, ռեալականություն:** Սկիզբը բացատրեցի որ Մարկ Նշանեան կը գրէ մահուան մասին, մահուան **իրողականութեան** մասին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 139):

ԼԵԶՈՒԱԲՈՒԺ (յանձնարարելի՝ ԼԵԶՈՒԱԲՈՅԺ), գ., դիպվ., փխբ. **Անսխալ՝ անթերի լեզուով խօսող եւ լեզուագիտական հետաքրքրութիւններ ունեցող մարդ // Լեզվի բժիշկ, խոսքի լեզվագետ ուսուցիչ:** Այս հռետորական հարցումը յղեց ինձի սիրելի բարեկամս՝ դոկտ. Արմենակ Եղիայեանը, որ ուսումնական պատրաստութեամբ ու ասպարեզով ատամնաբուժ կը համարուի, սակայն կոչումով **լեզուաբուժ է...** (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 112):

ԼԵԶՈՒԱՊԱՆԱԿ, գ., բնստ., փխբ., **Այն ամբողջը որ անձ մը գիտէ այս կամ այն լեզուի մասին // Լեզվի բառապաշարի՝ արտահայտչական միջոցների ամբողջությունը:** Իբրեւ թէ կեանքին ընթացքն է ասիկա, ծնէր ենք հոս հասնելու, թէ ինք ըրած է իր կարելին, որդիական պարտականութիւնը լիովի կատարած, բոլոր պէտքերը... եւ նման տափակութիւններ, որոնցմով լեզուն է մեր **լեզուապանակը** (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 48)):

ԼԵՌՆԱԾՈՐ, ած., բնատ., **Լեռներէ՝ վսեմ բարձունքներէ՝ հոգեւոր կատարներէ իջնող՝ կաթկթող // Լեռներից ծորացող՝ իջնող:** ...Բայց կը մերժեր/ **լեռնածոր** ասպետի ոգին/ իրեն ուղղուած խնդրանքներուն/ տառապանքին/ հալածանքին/ տակ սմբիլ... (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 27)):

ԼԻԱԺԱՄ, մկբ., **Գործի որոշուած ժամերու ամբողջ տեւողութեամբ (աշխատիլ) // Աշխատածամանակի լրիվ չափով, ամբողջ դրույքով (աշխատել):** Աւելի ուշ ժողովրդային ցոյցերու, ճամբաներու փակման ու առհասարակ տնտեսական պայմաններու բերումով ամուսինը՝ Ժանը, ստիպուեցաւ փոխան **լիածամի**, կիսածամ աշխատելու (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԼԻԱՔԻՍ, ած., **Հասունացած ցորենի հասկի լեցուն գլխիկի նման // Լի քիստերով՝ հասկերով, բեղուն:** Անսպառ են Վարուժանի արուեստի զգլխիչ ոլորտները, հայ լեզուի շքեղ զանձարանը ձեռքերուն մէջ եւ յաւերժութեան հունտերով **լիաքիստ** իր անդաստանը (Վեհանոյշ Թեքեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ, ած., **Լիբանան ծնած եւ հոն բնակող հայ, նաեւ՝ այնտեղ ծնած բայց ուրիշ տեղ ապրող հայ // Լիբանանում ծնված՝ բնակվող հայ:**Մարինա Մաթեոսեան կը գրէ, թէ անցեալ տարուան 10 Նոյեմբերին, ատրպէյճանական ուժերուն կողմէ Բերձորի մէջ գերի բռնուած **լիբանանահայ** Վիգեն Էլճէքճեան անցեալ շաբաթ հիւանդանոց փոխադրուեցաւ (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 1):

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԻԹԻՆ, գ., **Լիբանան ապրող հայերը որպէս ամբողջութիւն՝ միասնական համայնք // Լիբանանի՝ Լիբանանում բնակվող հայություն:** Այսօր, երբ կ'անդրադառնանք **լիբանա-**

նահայութեան վերականգնումի կարեւոր գործօնին, հայ դպրոցը դարձեալ կու գայ կանգնելու իբրեւ առաջամարտիկ մեր հաւաքական երթին (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ-ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ, ան., **Լիբանանի եւ Յորդանանի պետութիւններուն միաժամանակ յատուկ, անոնց վերաբերող // Լիբանանին եւ Յորդանանին հատուկ՝ վերաբերող, լիբանանահորդանանյան:** Ան հաստատեց լիբանանեան-յորդանանեան պատմական յարաբերութիւններուն ամրութիւնը, ինչպէս նաեւ երկու ժողովուրդներուն միջեւ գոյութիւն ունեցող սիրոյ եւ յարգանքի զգացումները (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 1, 2):

ԼԻԲԱՆԱՆՏԻ, ան., գ., **Լիբանան ծնած, հոն ապրող մարդ // Լիբանանի բնակիչ, Լիբանանում ծնված անձ:** Այստեղ կարեւորութեամբ պէտք է նշել նաեւ, որ արաբական այս մրցաշարքի իրաւարարներուն կարգին է նաեւ **լիբանանցի Ճենիֆըր Ամմուրի** (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 7):

ԼՈՂԱՐՇԱԻ, գ., **Նպատակի մը համար լողալով երկար տարածութիւն անցնիլը, հոս ինքնաճանաչումի յարտեւ ճիգ ջանք // 1. Լողի արշավ՝ մրցություն: 2. փխբ. Ինքն իր էության խորքերը արշավելը, ինքնաճանաչում:** Հիմա կը հասկնար, որ ինքզինք լիովին ճանչնալու համար, պէտք է անպայման մտերմանայ իր ներքին ծովուն մութամութ հրաւերներուն հետ, վերծանէ փսփսուքները ոստրէներուն, որսայ լոյսերը խաւարներուն, դառնայ երկնային զօրութիւն եւ երգէ փառքը սահմանազանց եւ անվախճան **լողարշալին** (Բագին, 2010, 1, էջ 4):

ԼՈՆՏՈՆԵԱՆ, ան., **Անգլիոյ մայրաքաղաք Լոնտոնին միայն յատուկ՝ ուրոյն, զայն բնորոշող // Անգլիայի մայրաքաղաք Լոնդոնին հատուկ՝ բնորոշ, Լոնդոնի:** [...] Պատուհանին պզտիկ, տողանջատ փեղկերէն ներս կը հոսէր ծիրանեգոյն լոյսը **լոնտոնեան** ամառ-

նային օրուան մը (Օսգար Ուայլդ, Տորիլն Կրէյի Պատկերը, Պէյրուֆ, 1992, էջ 73):

ԼՈՒՍԱԿՐՈՒԹԻՒՆ, գ., **Էութինս՝ հոգի, որ շաղուած, պատուած է լոյսով // Լուսակիր լինելը, լույսով՝ պայծառությամբ օժտված լինելը:** Վարուժանի քերթողութեան շեղքը կ'իջնէր, իր բառերով «պաղպաջուն, մերկ ու արու» պատեանէն դուրս քաշուած սուրի շողարձակութեամբ, եւ մեծ սիրոյ խոստովանանքի նման՝ յաւիտենական **լուսակրութեամբ** (Վեհանոյշ Թէքէեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԼՈՒՍԱՆՑՔԱՅԻՆ, ած., **Էջի մը երեսին չգրուած՝ պարապ մնացած չորս կողմերուն վերաբերող, թուղթի այդ մասին յատուկ // Լուսանցքին հատուկ, լուսանցքում գտնվող, լուսանցքի, լուսանցային:** «Հայ Ղուրաններու» նիւթին ամենէն նոր ու հետաքրքրական կողմը ան է, որ գրեթէ բոլորը, եւ սկիզբէն, եղած են առիթներ ընդդիմախօսական յաւելուածներու, դաշնագիրներու օրինակներու, **լուսանցքային** գրութեանց... (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԼՈՒՍԱՆՑՔԱՅՆԱՑՈՒՄ, գ., փխբ. **Ուշադրութեան արժանի երեւոյթ մը մասնաւոր նպատակով անտեսելը, արժէքէ զրկելը, զայն երկրորդական դարձնելը // փխբ. Լուսանցքային՝ ոչ կարևոր՝ ոչ էական դարձնելը:** Ջիւանիի նման հայրենասերներու եւ ազգային գիծի հաւատարիմներու գործերը եւս պիտի ենթարկուէին **լուսանցքայնացումի**, անոր մէկ ստուար բաժինը պիտի ենթարկուէր քանադրանքի (Բագին, 2010, 1, էջ 69):

ԼՈՒՍԱՆՑՔԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., փխբ. **Ուշադրութեան արժանի երեւոյթ մը մասնաւոր նպատակով անտեսուած, արժէքէ զրկուած՝ ըլլալը, աննշան՝ չնչին ըլլալու իրողութիւնը // փխբ. Լուսանցքային՝ անկարևոր՝ երկրորդական լինելը:** Խորքին մէջ, ան զանոնք չէ որ գեղանկարեց, այլ տեղահանուածութիւնը, **լուսանցքայնութիւնը,**

աքսորը՝ համամարդկային երեւոյթներ, որոնք երբեք ալ իրենց այժմեականութիւնը պիտի չկորսնցնեն (Բագին, 2010, 1, էջ 84):

ԼՈՒՄՆԱՇՂԱՐՇ, գ., բնատ., **Լուսինի լոյսէն հիւսուած բարակ՝ նուրբ քող՝ շղարշ // լուսնի շողերը իբրև շղարշ՝ քող՝ վարագույր:** Հիմա ափին եմ ուր դուն դեռ չկաս/ **լուսնաշղարշով մերկութիւնս ծածկած/ սպասումով տաք** (Բագ., թիւ 2 2020, էջ 23):

ԼՈՒՄՆԱՍԷՐ, ած., **Լուսինը սիրող, հոս՝ տարտամ, երագային, անստոյգ // 1. Լուսինը սիրող: 2. փխբ. Անորոշություն՝ երագայնություն սիրող:** Պոլիս. երբ 1880-էն ի վեր վենետիկեան դասականութիւնը բառարուեստի թռիչքներուն սանձ կը դնէր, երբ **լուսնասէր** ու քնաբեր մեղեդիներ մեր մամուլը կ'օրօրէին՝ ինչ պատահեցաւ, ինչ ոյժի պոռթկում էր յանկարծ դարասկիզբին՝ երբ բազմուդի ձայնարձակութիւն մը սկսաւ, աստուածներու վերածննդեան, անցեալի յարութեան, հերոսներու ոգեկոչման (Վեհանոյշ Թէքէան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordiev-nakhahayr/>):

ԼՈՒՏԱՍՍԳԵՂ, ած., **Լուտաս ծաղիկներով զարդարուած // Լոտոսներով գեղազարդված՝ զարդարուն:** Կարդաց Բլաս տը լա Գոնգորտի կոթողին մասին, որ կրանիդէ արցունքներ կը թափէ, իր մենաւորիկ եւ անարեւ աքսորին մէջ ու կը ցանկայ վերադառնալ Նեղոսի տաք ու **լուտասագեղ** ափերը.... (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէրուլթ, 1992, էջ 270):

ԼՐԱՀՈՍ, գ., **Լուրերու՝ նորութիւններու մէկը միւսին յաջորդող շարքը՝ շղթան // լուրերի՝ նորությունների հոսք:** Միջազգային լրահոսին մէջ կար առատ նիւթ Իտլիպի մասին.... (Ազգակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑ, գ., **Լուրը՝ նորութիւնը սփռելու համար հիմնուած թերթ, ձայնասփիւռի՝ հեռուստատեսութեան կայան,**

կայքէջ // լրատվություն տարածելու՝ լրատվական միջոց (մամուլ, հեռուստատաղիո, համացանցային հրատարակումներ): Երէկ՝ 30 սեպտեմբեր 2021-ին, Հայաստանի լրատուամիջոցները շրջանառութեան մէջ դրին Հայաստանի Ազգային անվտանգութեան ծառայութեան տեղեկութիւնները այն մասին, որ... ձերբակալուեցան պաշտպանութեան նախկին նախարար Դավիթ Տոնոյեան ու անոր ընկերը՝ մատակարար կազմակերպութեան տնօրէն Դավիթ Գալստեան (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 1, 4):

ԽԱՂԱՐԿԱՅԻՆ, ան., Յօրինուած կերպարներու մարմնաւորումով, անոնց ներկայացումով պայմանաւորուած՝ ստեղծուած // Դերասանների խաղով կառուցված, բեմադրված, գեղարվեստական: Ես այդ սկսած եմ ուսանողական տարիներէս եւ ցարդ 2012-2013 թուականին ստեղծած եմ «Թեւանիկը» իմ առաջին խաղարկային ծապաւէնս (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 4): - էջ 4

ԽԱՆԴԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ, թեան, գ., Մաստիկ՝ բուռն կիրք, անսանձ եռանդ՝ աշխուժութիւն // ջերմեռանդություն, փութաջանություն: - Չո՛րս ամուսին... հաւատացէք, չափազանց բուռն խանդեռանդութիւն է ատիկա (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 292):

ԽԵՅՈՒՂԻ, ի, գ., Նոյն տեղէն շարունակ երթ ու դարձի հետեւանքով բնականօրէն առաջացած հողէ ճամբայ // հողային գրունտային ճանապարհ: Քիչ ետք, բաժանուեցան խեցուղիէն, ու կառքը թաւալեցաւ նորէն գէշ սալայատակուած փողոցներու մէջ (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 305):

ԽՆԱՄԱԿԱԼԱՅԻՆ, ան., Թանգարաններու կամ ցուցասրահներու մէջ ներկայացուելիք արժէքներու ընտրութեան եւ կազմակերպումի գործին վերաբերող, այդ պաշտօնին յատուկ // ինամակային՝ ինամակալութեանը հատուկ վերաբերող: Մեծ գաղտնիք մը չէ նաեւ, որ վերջին յիսուն տարիներուն թանգարանները դադրած են

տիրող մշակոյթներու գլուխ գործոցներ ցուցադրելու ծառայող տարածքներ ըլլալէ, որպէս հետեւանք՝ ցուցահանդէսներ համադրող խնամակալներու տուած որոշումներուն ու առած քայլերուն. **խնամակալային** (curatorial) արարքներ, որոնք հիմնովին խախտած են թանգարաններու նախկին այդ հանգամանքը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 198):

ԽՆԴՐԱԿԱՆԱՑՆԵԼ, ք., Շատերու կողմէ հաւանութեան արժանացած միտք մը, համոզում մը քննութեան ենթակայ՝ քննելի դարձնել, անքննելին քննել // Խնդրական՝ խնդրահարոյց դարձնել, պրոբլեմատիկ դարձնել: 1. Տարիներու ընթացքին վարժուեր ես ամէն ինչ հարցադրելու, **խնդրականացնելու**՝ յատկապէս որոշ ուսումնառութենէ ետք (Բագ., թիւ 3 2020, էջ 78):

ԽՆԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Հաւանութիւն վայելող համոզումի մը քննելի ըլլալը, անքննելին քննելը // խնդրական՝ խնդրահարոյց լինելը: Եւ ամէն պարագայի՝ աստուածային նմանութեան եւ պատկերի ամբողջ **խնդրականութիւնը** պիտի վերարժարծուի «Պատկեր, պատում, պատմութիւն» շարքին յաջորդ հատորներէն մէկուն մէջ (Մ.Ն., 2015, էջ 15):

ԽՆԴՐԱՀԱՐՑ, գ., Երեւոյթի մը մէջ քննելին՝ խնդրականը՝ փոփոխութեան ենթական // Հիմնահարց, հիմնախնդիր, պրոբլեմ: Խնդրահարցը (problematique) ան է, որ սկսեալ հին մատենագրութենէն եւ գրեթէ ամէն տեղ հայագիտութիւնը չէ մշակուած... իբրեւ ուժական (dynamic) եւ յարաճուն գիտութիւնը մերձաւոր-միջինարեւելեան ժողովուրդի մը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ԽՈՀԱԿԵՐՊ, ած., Մտածումի՝ խորհելու ուժով կազմուած, մասնաւոր խորհուրդ ունեցող // Խոհուն, խորհրդավոր: Սակայն պահ մը կը ներգգամ եւ կարծես,/ Թէ կը ծնիս իբրեւ տիպար **խոհակերպ/** Ֆաուսթի մէջ վերստին (Բագին, 2010, 1, էջ 41):

ԽՈՆԱՐՀԱՄԱԾ, մկբ., Հեզօրէն, ակնածանքով, հլութեամբ՝ հաւատքով գլուխը խոնարհելով //Խոնարհվելով, գետնամած: ...Ներս կը մտնեն մզկիթի կանաչ դուռէն, խոնարհամած աղօթելու համար Աստթօծոյ եւ անոր մարգարէին (Բագին, 2010, 1, էջ 20):

ԽՈՐՀՐԴԱԶԳԱԾԱԿԱՆ, ած., Կեանքի առեղծուածներուն հետամուտ, անոր ծածուկ եւ խորհրդաւոր էութեանը հասու //խորհրդագագացութեանը հատուկ՝ բնորոշ, խորհրդագիտական, գաղտնիքների մեջ թափանցող: Անոր ճամբան խորհրդագգածական, կամ խորհրդանշական որոնումի ձեռնարկած մէկուն ճամբան չէ (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոթյուն գրադարան', Անտարես, 2017, էջ 120):

ԽՈՐՔԱՅԻՆ*, ած., փխբ., Այն ինչ կը վերաբերի երեւոյթի մը էական՝ առանցքային կողմերուն // Հիմնական, ներքին էութեամբ պայմանավորված, էական: Հանդիպումը արդիւնք էր Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտընի եւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի միջեւ 22 սեպտեմբերին տեղի ունեցած հեռաձայնային հաղորդակցութեան, որուն ընթացքին երկու նախագահները համաձայնած էին շարք մը ռազմավարական հարցերու շուրջ խորքային խորհրդակցութիւններու սկսելու.... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԽՕՍԵԼԻՈՒԹԻՒՆ, գ., Համայն աշխարհը արտայայտելու լեզուի մը կարելիութիւնը, այդ ամբողջը լեզուի միջոցով առարկայական (խօսելի) դարձնելու կարողութիւնը // խօսելի լինելը, խոսվելը: Որովհետեւ լեզու մը որ գուրկ է հնարաւորութենէն ըսելու իմացութեան ու աշխարհի ամբողջը (միշտ յարաբերական իմաստով, քանզի ոչ մէկ լեզու կը յաւակնի այդ ամբողջի լման վերարտադրութեան այլ միայն անոր հաւանական խօսելիութեան) կորսնցուցած՝ իր «տիեզերականութիւնը» կը վերածուի առտնին բարբառի մը, ժարգոնի մը կամ գաւառային խօսուածքի մը (Գրիգոր Պըլտեան,

Սարգիս Խաչենց, ՓԲԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոթյուն գրադարան', Անտարես, 2017, էջ 25):

ԾՍԳՈՒՄՆԱՅԻՆ, ան., Ծնունդով եւ զարգացումով որեւէ տեղի հետ կապուած // ծագումնաբանական, ծագման: ...Նորափետուր դպիր մը, որ հայերէն կը գրէր ու մեր գրականութենէն որոշ բան կը թուէր հասկնալ՝ առանց Միջին Արեւելքի կամ Հայաստանի հետ **ծագումնային** կամ ուսումնական որեւէ յարաբերութիւն ունեցած ըլլալու, բաւականաչափ «տարաշխարհիկ» տուեալներ կ'ընծայէր, որպէսզի իր առաջին նամակը ընդարձակածաւալ պատասխանի մը արժանանար գրեթէ կայծակնային արագութեամբ... (Բագ, թիւ 2-3 2021, էջ 45):

ԾԱԾԿԱՂՕԹՔ, գ., Գաղտնաբար՝ ցած ձայնով ըսուած սրտի խօսք // Ծածուկ՝ մտքում ասված աղոթք: Կան քերթողներ, որոնք վարարուն թախիծով մը իրենց **ծածկաղօթքը** կը մրմնջեն, եւ բարութեան քնքշութեան գեղեցկութեան դուռ մը կը բանան մարդկութեան համար (Վեհանոյշ Թէքէեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ԾԱՅԴԱԿԱՇԻ, ի, գ., Որեւէ սուր առարկայի ծայրը պահպանող եւ մարդուն անկէ վնասուելէ պաշտպանող պատեան // Կաշվից ծայրակալ, որ հագցվում է մարզական սուսերի ծայրին՝ մրցակցին վնասվածքներից պաշտպանելու համար: – Ի՞նչ կը փնտռես, – հարցուց Դքսուհին: – Քու մարզասուսերիդ **ծայրակաշին, գորկորսնցուցեր ես (Օսգար Ուայլդ, Տորիլն Կրէյի Պատկերը, Պէյրուք, 1992, էջ 338):**

ԾԱՌԱՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ., 1. Նպատակի մը նուիրում՝ պիտանի ըլլալու պատրաստակամութիւն, անոր անձնուրացօրէն ծառայելու յատկութիւն: 2. Ծառայութիւնը սիրելը //1. Ծառայասեր լինելը, ծառայասերի հատկանիշը: 2. Ծառայությունը՝ իր ծառայողական պարտականությունները՝ աշխատանքը սիրելը: ...Սարհատը

մեզի համար էր ու կը մնայ Դաշնակցութեան բարոյական արժէքներու պատմութենէն եկած ընկերասիրութեան, համեստութեան ու **ծառայասիրութեան** իբրեւ կենդանի օրինակ, ծնողքի, ընկերոջ, ընտանիքի, հայրենիքի ու ազգի հանդէպ սիրոյ խորհրդանիշ (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԾՆՆԴԱԲԱՆԱԿԱՆՕՐԷՆ, մկբ., **Անհատի՝ ազգի ծագումով, սերման պատմութեամբ պայմանաւորուած, անկէ բխող՝ սկիզբ առնող // Ծնունդով, ծագումնաբանական ձևով, գենետիկորէն: 1915–ը հայերու մէջ ծննդաբանականօրէն կը փոխանցուի սերունդէ սերունդ (Զարթօնք, 24.12.2019):**

ԾՈՎԱԳՐԵԼ, բ., **Մարդուն կամքէն անկախ գրել՝ որոշել անոր անցնելիք ճամբան, ճակատագրական ըլլալ // ...Կը յանձնուի աղին հմայքին եւ իր քաղցր ջուրին այբուբենով իր երկրորդ կեանքին նախերգանքը կը ծովագրէ (Բագին, 2010, 1, էջ 6):**

ԾՈՎԱՇԱՐԺ*, գ., **Երկրաշարժի պատճառով առաջացած վիթխարի ալիք // Օվկիանոսային հսկա ալիք, որ առաջանում է ստորջրյա երկրաշարժի պատճառով, ցունամի: Քաղաքացիները նախազգուշացուած են հաւանական ծովաշարժի մասին. արձանագրուած է 92 յետցնցում (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 8):**

ԿԱԶՄԱԶՐԿՈՒՄ, գ., **Բարդ՝ բազմաթիւ բաժիններէ կազմութեան մը անկապակից մասերու տրոհումը, հոս՝ երեւոյթի մը իմաստը կազմող բարդ հանգոյցի քանդումը // կազմազրկելը, կազմազրկվելը, կազմութիւնից՝ կառուցվածքից զրկ(վ)ելը: Ինչո՞ւ «երկրորդիմի» է պատկերը եւ պատկերին հետ՝ երեւակայութիւնը... որովհետեւ կը մասնակցի երկու աշխարհներու, կը գործակցի մէկուն եւ միւսին, իմաստի կազմաւորման եւ իմաստի կազմազրկման, իմաստաւորման եւ իմաստազրկման (Մ.Ն., 2015, էջ 63):**

ԿԱԶՄԱԼՈՒԾՍԿԱՆ, ան., Անբաժանելի մեկ ամբողջություն դիտուող երեւոյթի մասերու բաժանումի արարքին վերաբերող, միութիւնը խախտելուն յատուկ // Կազմալուծելուն կազմալուծվելուն կազմալուծութեանը հատուկ բնորոշ: Այս առիթով, Նշանեանի «Շելլինգէն մինչեւ Ֆրանց Կաֆկա եւ Դանիէլ Վարուժան» դասախօսութիւնը կը յղէ Ժան-Լիւք Նանսիի *Անգործ համայնութիւնը* աշխատութեան... անդրադառնալով արդի առասպելի մեկնաբանութեան որպէս ինքնին առասպել, ինչպէս նաեւ մատնանշելով ֆրոյդեան սկզբնաւորող տեսարան-յղացքի խաղցած կարեւոր դերը այս կազմալուծական աշխատանքի մէջ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 95):

ԿԱՄԱՐՈՒՂԻ, ի, գ., Կամար՝ աղեղնաձեւ ծածկ ունեցող ճամբայ // Կառուցվածքի պատերը՝ հենարանները են միացնող աղեղնաձև ծածկով անցուղի: Յետոյ, ուժգնօրէն բռնեց Տորիըն Կրէյը եւ քաշեց կամարուղիէն դուրս (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէրուր, 1992, էջ 314):

ԿԱՅԵՆԱԲԱՐՈՅ, ան., փխբ. Հարազատին՝ եղբօրը վնասելու գաղտնի մտադրութեամբ կատարուող // Ոճրագործի՝ մարդասպանի՝ եղբայրասպանի բնավորություն ունեցող: Երբ ծանօթացանք... տակաւին ջուրի երես չէին ելած արեւելեան Հայաստանի բնակիչներէն անոնք, որոնք արեւմտահայերէնը յետագային պիտի շփոթէին գրաբարի հետ՝ մեկնելով անգիտութենէ թէ կայենաբարոյ չարամտութենէ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 54):

ԿԱՅՄԵԼ, բ., բնստ., Ամուր կապ՝ յարաբերութիւն ստեղծել, վստահելի՝ ապահով դարձնել // Կայմի նման՝ որպէս կայմ ամբացնել: Մեր հարցումները, մեր բողոքները, մեր գրաւոր արտայայտութիւնները կը կայմէին մեզ անոր լուսաւորեալ մարդու նաւակին, ու մեզ կը տանէին դէպի աւելի ապահով ափեր (Բագ, թիւ 2-3 2021, էջ 67):

ԿԱՆԱԶԱՇԱՊԻԿ, անձ., Կանաչ վերնաշապիկ հագած, կանաչ վերնաշապիկով // Կանաչ գույնի շապիկ հագած, կանաչ շապիկով: ...Կալիֆոռնիայի պես, իրախճաններ էր Կրկեսին կանաչաշապիկ ձիաուորներուն հետ... (Օսգար Ուայլդ, Տորիլն Կրկի Պատկերը, Պէյրուֆ, 1992, էջ 237):

ԿԱՆԽԱԾՐԱԳՐՈՒԵԼ, բ. և չբ. Մտադրութիւն մը կատարել՝ իրագործել, անոր կատարումի ընթացքը նախօրօք ուրուագծել // Նախապես՝ կանխավ ծրագրվել: Ըստ դէտերու, Թայյունէի դէպքերը պատահական չէին եւ անոնք կանխածրագրուած էին (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԿԱՆԽԱՐԳԻԼՈՒՄ, գ., Անբաղձալի իրադարձութեան մը իրականանալուն արգելք ըլլալը, զայն կանխելը, անոր առաջքը առնելը, անկէ խուսափիլը // Կանխարգելելը, նախապես կանխելը: «Մենք կը մեկնինք անկէ, որ Ռուսիոյ, Հայաստանի եւ Ազրպէյճանի դեկաւարներու 9 նոյեմբեր 2020-ի յայտարարութիւնները կը գործեն իբրեւ ապագային նման ողբերգական իրադարձութիւններու կանխարգիլման յուսալի երաշխիք», ըսած է Զայցել (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ, անձ., Գործունէութիւն մը կանոնաւորող վարչական օրէնքները որոշելուն՝ սահմանելուն՝ գրելուն հատուկ, անոր վերաբերող // Կանոնագրքին հատուկ, օրէնագրքի: ԺԷ. Արտակարգ Ընդհանուր ժողովը, փոքր սրբագրումներ կատարելով արտասահմանեան շրջաններու կանոնագրային տրամադրութիւններուն մէջ, յառաջացուց Հայաստանի Հանրապետութեան յատուկ կառոյց մը (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԿԱՌՈՒՑԱԶԳՎՈՒՄ, գ., Կառուցուածք մը իր առանցքէն զրկելով քակելը՝ կազմատելը, այն պզտիկ հաւասար մասերու բաժնելը՝ վերածելը // Կառուցազրկելը, կառուցազրկվելը, կառուցվածքային ամբողջականութիւնից՝ կառուցիկութիւնից զրկելը: Ինչպէս

ալ բնորոշուի՝ հիմնականին մէջ մտածողական արարքը (անդրադարձ, նկատառում տրամաբանական ռազմավարութեան, նշանակութեան ցանցի շօշափում, իմաստի կառուցում կամ **կառուցազրկում**) գրական կալուածի երկայնքին՝ անհանգիստ, անդադար ինքզինք քննութեան ենթարկող գործողութիւն մըն է... (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹՐԻՆՏՈՆ, 'Իմացոթյուն գրարարան', Անտարես, 2017, էջ 12):

ԿԱՌՈՒՑԱԿԱԶՄ, գ., **Այս կամ այն նպատակով ստեղծուած խումբի մը բաղկացուցիչ անդամներու կազմը // Կառուցվածքի ձևը՝ բաղկացոթյունը:** Գլխաւոր դատախազները անդրադարձան... Ռուսիոյ դատախազութեան եւ քննչական մարմինի աշխատակիցներու եւ Հայաստանի ու Արցախի իրաւապահ մարմիններուն միջեւ գործակցութեան **կառուցակազմերուն**, հայ-ատրպէյճանական շփման գիծին մէջ հրադադարի դրութեան խախտման... դէպքերը տեղոյն վրայ արձանագրելու եւ արձագանգելու գծով Հայաստանի եւ Ռուսիոյ գլխաւոր դատախազներուն միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու կատարման (Սսպարէզ, 5 Յունիս 2021, էջ 9):

ԿԱՌՉԱԾՈՒԹԻՒՆ, թեան, գ., **Ամբողջովին գաղափարի մը կապված՝ փարած ըլլալը, անկէ կառչիլը // Կառչած լինելը, կառչելը:** Հայ աշխարհի ցուրտ օդին պատճառով նաեւ շուշմայի ձեռքով պատրաստուած է Միւռնը, եւ սա՝ տառէն անդին ոգիին նկատմամբ մեր ունեցած **կառչածութեան** ապացոյցն է (Զարթօնք, Կիրակի, 10.07.2022)

ԿԱՐԳԱՎԻՃԱԿ, գ., **Երկիրի մը կացութեան՝ իրաւունքներու եւ սահմաններու օրինականացումը՝ վաւերացումը այլ երկիրներու կողմէ // Պաշտօնական վիճակ՝ տեղ իրավական կամ այլ կառուցում:** Արցախի հարցը լուծուած չէ, քանի տակաւին յստակացած չէ Արցախի **կարգավիճակի** հարցը եւ քանի տակաւին արցախահա-

յութեան անվտանգութիւնը լրջագոյն սպառնալիքի տակ է....(Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7):

**ԿԱՐԾՐԱՍՏԵԻ, անծ., Կենդանիի կոշտ՝ կարծր մազէ պատ-
րաստուած // Կարծր ստն՝ կոշտ ու սրածայր մազեր ունեցող: Բերել
տուաւ.... կարծրաստել թաւիշներ Սպանիայէն.... (Օսգար Ուայլը,
Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 227):**

**ԿԵՆԴԱՆԱՊԱՐՏԷԶ, գ., Տարբեր տեսակի կենդանիներ
պահելու եւ զանոնք հանրութեան ցուցադրելու համար շինուած
պարտէզ // Կենդանաբանական այգի:Կենդանապարտէզի մը մէջ,
թափանցիկ որմի մը ետեւը բանտարկուած կապիկ մը, որ խելա-
գարած է բանտարկութեան պատճառով ու իր թաթերով կը քերէ,
կը քերծէ որմը (Մ.Ն., 2015, էջ 34):**

**ԿԵՆՍԱՀՈՒՐ, անծ., Հակառակ բոլոր դժուարութիւններուն
ապրելու եռանդ՝ ալիւն // 1. գ. Կենսական՝ կյանքի կրակ: 2.անծ. փխբ.
Վերապրելու՝ դժվարությունները հաղթահարելու ուժ՝ կարո-
ղություն: Պատերազմի մէջ ինկանք որկրամոլ դրացի ազգերուն
հետ: Մեր պարանոցը եւ ձեր սուրբը. մեր սուրբ լերան ոյժով օծուած
սուրբ եւ ձեր բքած բուրգերու հուրը. ձեր խողխողող եաթաղանը,
մեր կենսահուր փիւնիկը:**

**ԿԵՆՍՍՏԻՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ, գ., Քաղաքացիներուն հնազան-
դեցնելու պետութեան մը որդեգրած առողջապահական, ժառան-
գականութեան կանոնաւորման մասնաւոր եղանակ // Կյանքի մա-
սին գիտելիքների (կենսաբանություն, գենետիկա, էկոլոգիա եւն)
տվյալները քաղաքական իշխանությանը ծառայեցնելը, կենսիշխա-
նություն: Իշխանութեան այդ նոր եղանակը կը ստանայ «կենսիշ-
խանութիւն» կամ «կենսատիրակալութիւն» անունը (biopouvoir)
(Բագ, թիւ 2-3 2021, էջ 113):**

ԿԵՆՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ած., Քաղաքացիներուն/բնակչությանը իշխելու՝ ղեկավարելու համար կենսաբանական գիտելիքի վրայ հիմնուած քաղաքականութեան յատուկ, անոր վերաբերող //1. Կենսական և քաղաքական: 2. Կենսաքաղաքականությանը բնորոշ հատուկ: Այդտեղ՝ Ջորջո Ագամբէն արեւմտեան արանդութեան մէջ քաղաքական գերիշխանութիւնը սահմանելու եւ գործադրելու եղանակները ինտրոյ առարկայ կը դարձնէր.... կը բացատրէր որ Ի. դարու -համակերրոնացման ճամբարը պետք է հասկցուէր ու մեկնաբանուէր «որպէս արդիականութեան կենսաքաղաքական յարացոյց»ը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 105):

ԿԵՆՍԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Քաղաքական տեսութիւն, որ բնակիչներուն հպատակեցնելու համար կը հիմնուի կենսաբանական գիտելիքի վրա // Իշխանական քաղաքականություն, որ հիմնված է կյանքի մասին գիտելիքների վրա: «Մնացորդք Աւշուիցի» գիրքին նոր շրջածիրին մէջ՝ Ֆուկոյի կենսաքաղաքականութիւնը եւ այդ յղացքին ագամբէնեան փոփոխակը քիչ դեր կը խաղան (Բագ, թիւ 2-3 2021, էջ 114):

ԿԵՆՍԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, գ., Քաղաքացիներուն հնազանդեցնելու, անոնց իշխելու պետութեան մը որդեգրած առողջապահական, ժառանգականութեան կանոնաւորման մասնաւոր եղանակ //Կյանքի մասին գիտելիքների (կենսաբանություն, գենետիկա, էկոլոգիա եւն) տվյալները քաղաքական իշխանությանը ծառայեցնելը, կենսատիրակալություն: Իշխանութեան այդ նոր եղանակը կը ստանայ «կենսիշխանութիւն» կամ «կենսատիրակալութիւն» անունը (biopouvoir) (Բագ, թիւ 2-3 2021, էջ 113):

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ-ՏԱՐԲԱԿԱՆ, ած., Ամենօրեայ կեանքի բնական յարատեւութեան համար ամենէն անհրաժեշտ՝ էական // Տարրական՝ հասարակ՝ ամենատվորական կենցաղային: Առօրեայ կենցաղային-տարրական կարիքներու կողքին նորահաս սերունդ-

ներու կրթութիւնը նաեւ արժանացաւ համապատասխան գուրգուրանքի ու հոգածութեան (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ԿԻՂԻՑԻԿ, գ., գվռ., **Պզտիկ եկեղեցի // փոքր եկեղեցի, եկեղեցիկ:** Անտիոքի շրջանի հայոց սրբատեղիները՝ քարայրներ, ծառեր, աղբիւրներ, **կիռիցիկներ** (փոքրիկ եկեղեցիներու աւերակներ) եւ այլն, միշտ ալ այցելուներ ունեցած են, եղած են անհատական, ընտանեկան եւ հաւաքական ուխտագնացութեան վայրեր (Յ. Չոլաքեան, ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ԶՐՈՅՑՆԵՐ - 2 ԱՆՈՆՔ ԱԼ ՅԱՐԳԱՆՔ ՈՒ ԵՐԿԻՒՂ ՈՒՆԻՆ, <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ԿԻՆՈԼԼԱԳՐՈՂ, գ., **Շարժապատկերի ասպարեզին մէջ տեղի ունեցող անցուդարձի՝ նորութիւններու մասին լուրեր գրող անձ // Կինոյի մասին՝ թեմայով գրող լրագրող:** Հիմնուած է 2004 թուականին՝ «Ոսկէ ծիրան» շարժանկարի զարգացման հիմնադրամի, Կինոգէտներու եւ **կինոլրագրողներու** հայկական միութեան կողմէ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ԿԻՊՐԱՀԱՅ, ած. գ., 1. **Կիպրոս ծնած կամ կիպրոս ծնած ծնողներ ունեցող հայ:** 2. **Կիպրոս ապրող հայերը ամբողջութեանը վերաբերող // Կիպրոսի հայությանը՝ հատուկ, կիպրահայության, կիպրահայերի:** 30 օգոստոսին **կիպրահայ** համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան.... ներկայ գտնուեցաւ նախագահական պալատի արարողութեան եւ պաշտօնական ընթրիքին.... (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 4):

ԿԻՍԱԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ, ած., **Իրականութեան հետ քիչ աղերս ունեցող, հեքիաթային՝ վիպային երանգ ունեցող // Կիսով չափ առասպելական, երևակայական:** Միայն ֆաթիմական հայերու պարագան, որ ամբողջութեամբ հիմնուած է արաբական աղբիւրներու վրայ, բաւարար էր փաստելու, թէ այն **կիսաառասպելական** պատկերը կամ տպաւորութիւնը, որ յառաջացած է հայոց մասին իբրեւ փոքր, միատարր, սահմանափակ, յարատեւօրէն ճնշուած ու

անիրաւուած փոքրամասնութիւն, իրողապէս ճիշդ չէ (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԿԻՍԱԺԱՍ, մկբ., **Գործառուի մը ութժամեայ աշխատելու ժամանակին մէկ մասի՝ սովորաբար կէսի չափով (աշխատի) // աշխատաժամանակի կիսով չափ, կես դրույքով (աշխատել):** Աւելի ուշ ժողովրդային ցոյցերու, ճամբաներու փակման ու առհասարակ տնտեսական պայմաններու բերումով ամուսինը՝ Ժանը, ստիպուեցաւ փոխան լիաժամի, **կիսաժամ** աշխատելու (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԿԻՍԱԾԱՆԸ*, ած., փխբ., **Թշնամի գորքի ուժին վնաս տալու գորութեամբ միջին սաստկութիւն՝ ներգործութիւն ունեցող (զէնք) // Միջին հզորություն ունեցող (սպառազինության մասին):** Երկար ժամանակէ ի վեր փոխադարձ եւ առաստաղագուրկ յայտարարողական յարակումները գետնի վրայ թարգմանուեցան պատերազմը յիշեցնող գործողութիւններով, փոքր եւ **կիսաձանր** զէնքերու գործածութեամբ, նահատակներու եւ վիրաւորներու արձանագրութեամբ (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ԿԻՍԱՀԱՅԵՐԷՆ, ած., **Լեզու մը ուրիշ լեզուի մը բառերով, քերականութեամբ խառնուած՝ մաքրութիւնը կորսնցուցած (հոս արաբերէնը հայերէնով) // Կիսով չափ հայերէնախառն օտար լեզուով:** Խնդիրը շատ պիտի մեծնար, որովհետեւ սուրիական բանակի զինուորը ո՛չ մեր խօսած **կիսահայերէն** արաբերէնէն, ո՛չ Վարդավառէն, ոչ ալ մեր թափած արցունքներէն բան կը հասկնար... (Գրական Սփյուռք - 9, էջ 118)

ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ, ած., մարգ., **Ախոյանական մրցաշարի վերջին որոշիչ խաղին նախորդող խաղ, որուն յաղթողը ախոյանութեան հաւակնորդ կ'ըլլայ // Կիսանեզրափակիչ մրցում՝ խաղ: Կիսաւարտականին Ուքրանիա կը մրցի Ռուսիոյ դէմ, մինչ կիսա-**

ւարտականի երկրորդ մրցումին Վրաստան կը մրցի Հնդկաստանի դէմ (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ԿԻՍԱՓԱՍՏ, գ., Երեւոյթի մը վերաբերող մասնակի՝ անկատար՝ մակերեսային փաստ, անոր էութիւնը՝ ամբողջականութիւնը անտեսող փաստ // կիսատ՝ ոչ լիարժէք փաստ, խեղաթյուրված փաստ: Յաճախ, ինչպէս հինաւորց օրէնք է մեր մէջ, այդ պատասխանները յանգած են լուտանքներու, խեղաթիւրումներու եւ արհեստագործ կիսափաստերու տարատեսակ գումարումին, վերահաստատելով Յակոբ Պարոնեանի «հայեցողական փաստի սով է» խօսքին անժամանցելիութիւնը... (Բազ, թիւ 2-3 2021, էջ 44):

ԿԻՍԱՔԱՅԼ, գ., 1. Կէս քայլ: 2. փխբ. Խնդիրի մը յարաբերական՝ պայմանական լուծում, որ այդ պահին կրնայ ելք ըլլալ, բայց փրկութիւն չի դառնար // 1. Կէս քայլ: 2. փխբ. Կիսամիջոց, ոչ արմատական լուծում սովոր քայլ՝ միջոց: Նման զարգացումէ բխող գոհունակութիւնը լիարժէք չէ, այլ զայն կարելի է կոչել միայն կիսաքայլ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 3, 6): - էջ 3

ԿՈՄԻՏԱՍԵԱՆ, ած., 1. Հայ համբաւատը երգահան եւ երաժիշտ Կոմիտաս վարդապետին, անոր ստեղծագործութեան յատուկ բնորոշ: 2. փխբ. Կոմիտաս վարդապետին նմանող, անոր իւրայատուկ նկարագիրը ունեցող // Հայ մեծ երգահան Կոմիտասին եւ նրա ստեղծագործությանը բնորոշ՝ հատուկ: Ան դիտել տուաւ, որ Գեորգ Հաճեանի սրբանուէր արեան հետքերով բազում պատանիներ ու երիտասարդներ պիտի ուղղորդուին դէպի բարձունքը՝ յաղթանակի, «ուր պիտի դիմաւորէ զիրենք ձայնդ կոմիտասեանի բերելու ռահվիրայ գալիք յաղթանակներուն» (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 3,6):

ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ, գ., Որեւէ քաղաքական կազմակերպութեան ղեկավար մարմին կամ զայն ներկայացնող յանձնաժողով // Որեւէ քաղաքական կազմակերպության ղեկավար մարմին: Այսպէս,

համաձայն Հայաստանի վարչական բաժանումներուն, կը յառաջանան **կոմիտէութիւններ**, մարզային կոմիտէութիւններ, Երեւանի քաղաքային կոմիտէութիւն, Հայաստանի կազմակերպութիւն (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ԿՈՊԵՌՆԻԿԵԱՆ, ան., **Քոփեռնիքոսի գիտական գործունէութեանը վերաբերող, հոս՝ ըմբռնումներու, գաղափարներու բեկումնային՝ անկոսահեղի եւ անակնկալ մեծ փոփոխութեան բերող // 1. Ն. Կոպեռնիկոսին վերաբերող, Ն. Կոպեռնիկոսի: 2. փխբ. Մեծ՝ արմատական նորույթներ բերող, շրջադարձային:** Նաեւ համոզուած էի, որ այս նիւթերուն պատմականացումը պիտի պատճառէր **կոպեռնիկեան** յեղափոխութիւն մը այն տարազներուն մէջ, որոնցմով ներկայացուած են, այսպէս կոչուած, «հայկական բաները» աւանդական եւ ընդունուած-տիրական (mainstream) պատմագրութեան մէջ (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԿՈՐՈՒՍՏԵԱԼ, ան., **Կորուած, արժէքաւոր բանի մը կորուստին յատուկ // Կորուսյալ:** Մնաց հոն՝ տէր կանգնելու կորուստեալ հողին... մնաց մեր լեռներում՝ իբրեւ ռազմական տնով մուսալեռեան (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ԿՐԱՂԻԻՍԵԱՅ, ան., **Կրաղիսէ շինուած՝ պատրաստուած // Կրաշաղախով պատրաստված աղյուսից, աղյուսէ:** Ինք ալ իր կարգին, հազար կտոր ըլլալէ եւ գլուխը ֆրիվէյի կրաղիսեայ պատին բիւր անգամ զարնելէ ետք, հասած էր վերջնական իր որոշման (Բագին, 2010, 1, էջ 23):

ԿՐԹԱՆՊԱՍՏ, գ., **Ուսանելու՝ կրթուելու կարելիութիւն ստեղծելու համար նիւթական օժանդակութիւն // Կրթության համար տրվող նպաստ:** Նշենք, որ Հայ Կրթական հիմնարկութիւնը հաստատուած է 1950ին, կրթանպաստներ տրամադրելու համար հայ ուսանողներու եւ կրթական հաստատութիւններու՝ Հայաս-

տանի, Արցախի եւ Սփիւռքի տարածքին (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 16):

ԿՐԾՐԾԵԼ, Բ., Շատ անգամ կամ ասդիէն ու անդիէն խաճնել, խաճոտել, խաճիճել // Հաճախ՝ տնականորեն՝ շատ տեղերից կրծել, կրծոտել, կրծկրտել: Ատելութիւնը սանձարձակութեան մէջ կը պայթի: Ինքնամեղադրանքը՝ մո՛ւկ, կը կրծէ, **կը կրծործէ:** (Պարութճեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 22):

ԿՐԿՆԱՊԱՍԿԵՐ*, գ., Մարգական խաղի տեսագրութեան որեւէ պահի կրկնութիւնը // Մարգական միջոցառման հեռուստատեսային հեռարձակման որնէ դրվագի կրկնություն: Օրուան իրաւարարը, ՎԱՐ համակարգով դիտելէ ետք **կրկնապատկերը**, Հայաստանի ի նպաստ տուաւ փենալթի մը (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 7):

ԿՐԿՆԱՐԱՐՔ, գ., Որեւէ գործողութիւն՝ արարք կրկնելը // Կրկնված՝ կրկնվող արարք՝ հանցանք, ռեցիդիվ: Լման պետութիւններ հիմնուած են եւ կը ծաղկին այսօր հսկայածաւալ չափերու հասած եւ բրտօրէն վերանորոգուած նման **կրկնարարքերու** տարբերակները գործադրելով (Բագ, թիւ 2-3 2021, էջ 144):

ԿՐՕՆԱԲԱՐՈՅԱԽՕՍԱԿԱՆ, ած., Բարոյական սկզբունքներ, որոնք կրօնական համոզումներէ կը բխին // Կրօնական և բարոյախոսական: Շմաւոնեան... կը տպէր նաեւ Խաչատուր Զուղայեցիի «Պատմութիւն պարսից» բաւական մեծ պատմական ուսումնասիրութիւնը, որ պատմական ակնարկներու նկարագրական հաւաքածոյ մըն էր՝ համեմուած **կրօնաբարոյախօսական** դատողութիւններով եւ խոհերով (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԿՐՕՆԱՊԱՍՏՈՒՃԱՆ, գ., 1. Կղերականի երկայն պարեզօտ: 2. փխբ. Երեւոյթի մը կրօնին՝ հոգեւորին յատուկ երանգ՝ նշանակութիւն տալը, անոր կրօնական յատկանիշներ վերագրելը // 1. Կրօ-

նական պատմուճան: 2. փխբ. Կրոնական գունավորում, կրոնագարդում: Բայց անշուշտ մոմիաները եւ նշխարատուփերը այդ խորհրդաւոր պահուն ցուցադրումը չէին միայն, նաեւ անոր օգտագործումն էին, թարգմանութիւնը ուրիշ լեզուով մը, հաւատքի լեզուով, ուրեմն անոր բռնի (եւ հաւանաբար անխուսափելի) իմաստաւորումը, սրբացումը, **կրօնապատմուճանով** ներկայացումը (61): (Բագ, թիւ 2-3 2021, էջ 84):

ՀԱԿԱԺԱՀՐԱՅԻՆ, ան., **Հիւանդութեան մը ազդակի ներգործութեան ուժը նուազեցնող, անոր ազդեցութեանը դիմադրող // Հակավիրուսային:** «Մոլնուփիրաւիր» (Molnupiravir) **հակաժահրային** բերնի դեղամիջոցը նախատեսուած է բուժելու մեղմ եւ չափաւոր «Քորոնա» այն մեծահասակներուն մօտ, որոնք կը գտնուին ծանր «Քորոնա»-ի պարագայի կամ հիւանդանոցային վտանգի տակ (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ, գ., **Ոչ թէ ժողովրդի, այլ պզտիկ խումբի կողմէ դեկավարուող կարգ // Անհամապատասխանություն ժողովրդավարության սկզբունքներին, ժողովրդավարական ազատությունների բացակայություն:** Նման միաձայնութիւն չի նշանակեր **հակաժողովրդավարութիւն**, ազատութիւններու սահմանափակում կամ իսկական բազմակարծութեան ոտնակոխում, որովհետեւ բազմաթիւ ենթաուղիներ ունեցող ճամբան մէկ է եւ կը հարկադրէ միասնութիւն.... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ՀԱԿԱԻԴԷԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., փիլ., **Որեւէ երեւոյթի յաւիտենական՝ անփոփոխ եութիւն մը ունենալը չընդունիլը, ամբողջովին առարկայական ըլլալը // Հակազադափարապաշտություն, հակաիդէալիզմ:** Չափազանց շահագրգռական են Բատայլի մօտ (որպէս բնանիւթ կամ որպէս յատկանիշ) սրբազնութեան երկակիութիւնը, կատարեալ **հակաիդէապաշտութիւնը**, քաղաքական գործունէութեան իմաստին ապաիմաստնութեան շուրջ վարա-

նումներն ու վերիվայրումները, հեզելեան փիլիսոփայութեան քննադատութիւնը... (Մ.Ն., 2015, էջ 18):

ՀԱԿԱՍՏԱՆԸ ՈՒԹԻՒՆ, գ., Բանի մը ծանրութիւնը հաւասարակշռող բեռ, հոս՝ նիւթը իր ամբողջ տարողութեամբ չընդգրկելը // 1. Հավասակշռութիւնը պահպանող ծանրութիւն, բալաստ: 2. փխր. Ավելորդ բեռ: Ազատել՝ «մանաւանդ իւճաւազեայ **հակածանրութենէն**», որ պատմական ու քաղաքական մօտեցումներն են (Բագ, թիւ 2-3 2021, էջ 172):

ՀԱԿԱՍՏԱՆԸ ԿԱՅՆԱՊԱՇՏ, ած., Մարդու ի բնէ ձիրքերուն, ունակութիւններուն եւ անոր վեհ ձգտումներուն չհաւատացող // Հակամարդկային, ոչ մարդասիրական: Քննադատելով Սայիտը, Նշանեան կը փորձէ աւելի մօտ կենալ ֆուկոյական **հակամարդկայնապաշտ** հնախօսութեան, կամ գոնէ անիկա յարակարծական կերպով չգործածել (Բագին, թիւ 2-3 2021, էջ 90):

ՀԱԿԱՍՏԱՆԸ ՄԻՆ, գ., Մարմինի կանոնաւոր աշխատանքը իսթարող վնասաբեր մանրէներու ազդեցութիւնը չեզոքացնող բնական հակաթոյն, հոս՝ մարդու ձեռքով պատրաստուած նման հակաթոյն // Արյան սպիտակուցային միացութիւն, որը խոչընդոտում է վնասակար մանրէների և դրանց արտադրած թունավոր նյութերի տարածմանը: «Դեղահատեր կառավարելն ու օգտագործելը շատ աւելի դիւրին է, քան՝ ներկայիս մոնոքլոնըլ **հակամարմինները** (monoclonal antibodies), որոնք կը պահանջեն ներարկումներ եւ ներերակային միջոցներ» (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՀԱԿԵՐԵՍ, գ., Որեւէ բանի հակադիր՝ ներհակ կողմը, սակայն, միեւնոյն ատեն, զայն լրացնող՝ ամբողջական դարձնող կողմը // Հակառակ երեսը՝ կողմը, հկոտնյան: Այդ պատմական պահուն է ուրեմն, որ մահը կարող կը դառնայ իր **հակերեսը** կեանքը լուսաւորելու: «Մահուան դիտանկիւնէն է» որ կեանքը հասկնալի կը դառնայ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 135):

ՀԱՄԱԹՈՒՐԱՆԱԿԱՆ, ան., Բոլոր թրքալեզու ժողովուրդներուն մէկ թրքական պետութեան մը սահմաններուն մէջ համախմբելու քաղաքական ծրագիրին վերաբերող, անոր իրագործումին յատուկ // Համաթուրանականությանը վերաբերող՝ հատուկ, համաթուրանության: Ուրիշ երազանք չէ, եթէ ոչ համաթուրանական դարաւոր ծրագրի իրականացման առիթ (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՀԱՄԱԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Բոլոր թրքալեզու ժողովուրդներուն մէկ թրքական պետութեան մը սահմաններուն մէջ համախմբելու ազգայնամոլական քաղաքական ծրագիր // Եվրասիայի բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին մէկ պետության մէջ միավորելու քաղաքական գաղափարախոսություն: Մենք ալ յուսանք, որ տարինէ ր ետք, քաղաքակիրթ, մարդկային իրաւունքներու պաշտպան եւ համաթուրանականութեան ոճրային ծրագիրներէ խորշող աշխարհը յայտարարէ, թէ թերացած է 44 օրեայ պատերազմին.... (Սսպարէզ, 5 Յունիս 2021, էջ 18,19):

ՀԱՄԱԿԱՐԳԵԱԼ, ան., Կանոնաւոր՝ շարունակական ձեռով, տեսականօրէն // Համակարգված ձևով: Քանի որ այդ տարի, Կիպրոսի մէջ, ուր կ'ապրէր, Յ. Օշական, որ գրելու վրայ էր իր «Մնացորդացը», սկսաւ համակարգեալ եղանակով զայն [«աղէտ» բառը] գործածել՝ նշելու համար դէպքը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 171):

ՀԱՄԱԿԱՐԳՉՍՅԻՆ, ան., Համակարգիչի կարելիութիւններու կիրարկմամբ կատարուող՝ իրականութիւն դարձող // Համակարգչին հատուկ՝ վերաբերող, համակարգչով կատարվող: Այս ուղղութեամբ յատկապէս խանդավառ են անոնք, որոնք համակարգչային միջամտութեամբ թուային տարբերակները կը վերածեն վիտտօխաղի մը, ուր դիտողը հնարաւորութիւն ունի տարբերակներու միջեւ ընտրութիւններ կատարելու (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՀԱՄԱՀԻՄՆԱԴԻՐ, գ., Որեւէ կազմակերպութեան՝ ընկերութեան եւ այլնի հիմքը դնողներէն՝ զայն ստեղծողներէն ամէն մէկը // **Համատեղ հիմնադրողներից յուրաքանչյուրը:** Ֆինիի վերաբերմունքը դրամի նկատմամբ կտրականապէս կը հակասէ անոր Duty Free Shoppers-ի **համահիմնադիր** Ռոպերթ Միլըրին՝ աշխարհի 293-րդ ամէնէն հարուստ մարդուն, որ ունի 6 միլիար տոլար (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՀԱՄԱՁԵԻՈՒԻԼ, բ., **Երկու երեւոյթներու միեւնոյն ձեւը՝ տեսքը տալ, միաձել՝ միակերպ՝ համանման դառնալ** // **Համաձև միանման դառնալ:** Եթէ մինչեւ հոս հակադրական, երկփեղկումի մը կառոյցին զետեղուեցաւ երեւոյթը ատիկա անոր համար է որ.... այդ մարտը, մաքառումը երկու տիեզերքներու, որոնք կը յարաբերին իրարու, կը շփուին իրարու երբեմն բերնիս մէջ, մտմտութիս, չեն **համաձեւուիր**, չեն յարմարիր իրարու, չեն համընկնիր....

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ* (ընտրակարգ), ան., **Խորհրդարանական ընտրութեան ձեւ, երբ քուէարկողը կ'ընտրէ կուսակցութիւն մը, ոչ թէ անհատ քաղաքական գործիչներու** // **Ընտրական կարգ, որին մասնակցում են միայն կուսակցությունները, ոչ թէ անհատները:** Կիրակի, 17 հոկտեմբերին տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմիններու **համամասնական** ընտրակարգով հերթական ընտրութիւններ.... (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ, գ., 1. **Որեւէ կազմակերպութիւն կամ ընկերութիւն, որ միաժամանակ մէկէ աւելի նախագահներ ունի:** 2. (քղք.) **Խումբ, որ բաղկացած է տարբեր երկիրներու շահագրգռութիւնները պաշտպանող անհատներէ** // **Համատեղ՝ միաժամանակյա նախագահություն:** Նախարար Միքայելեան վերահաստատած է Հայաստանի պատրաստակամութիւնը՝ վերսկսելու Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման լիարժէք հոլո-

վոյթին՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահության ներքև (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՀԱՄԱՆՈՒԲԱԳԱՅԻՆ, ան., Համանուագին՝ երաժշտական մեծ եւ բազմաձայն ստեղծագործություններուն յատուկ // Համանվագին՝ սիմֆոնիային հատուկ՝ բնորոշ, սիմֆոնիկ: Ստեղծած է զայն անշուշտ իբրեւ «համապատկեր», քանի որ հասած է իր համերգներուն մէջ անոնց համանուագային ճարտարապետության (Բագ, թիւ 2-3 2021, էջ 11):

ՀԱՄԱՐԿՈՒՄ, գ., Խումբերու կամ երկիրներու աւելի մեծ ընկերության կամ կազմակերպության մը մէջ ընդգրկումը, անոնց հաւասար անդամ դարձնելը // Մասերի՝ բաղադրիչների՝ անդամների միավորումը մեկ ամբողջության մէջ, ինտեգրացիա:Միացեալ Նահանգներ յանձնառու են օգնելու Վրաստանին անոր պաշտպանունակության ամրապնդման եւ երատլանտեան համակրման աջակցելու գործին մէջ.... (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՀԱՄԸԹԵՐՑՈՒՄ, գ., Սովորաբար համակարգիչի օգնութեամբ մեծ թիւով գրական գործերու համաժամանակեայ քննութիւն՝ անոնց նմանութիւնները եւ գրական փոփոխութիւնները յայտնաբերելու նպատակով // Մի քանի գրական գործերի միաժամանակյա ընթերցումը՝ ընդհանրությունները և տարբերությունները վերհանելու նպատակով: Մանրընթերցում թէ համընթերցում, մէկ թեմա-հարցի թէ տասնամեակի արտադրության ընդարձակ քննութիւն կը պահանջեն նոյն ուշադիր մօտեցումը նիւթի բազմաթիւ մակարդակներու (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈՒ, Իմացոթյուն գրադարան՝ Անտարես, 2017, էջ 12):

ՀԱՅԱԹԱՓՈՒԹԻՒՆ, գ., Հայութեամբ հոծ հայկական վայրի մը հայութենէ պարպուիլը՝ դատարկուիլը (հոս՝ ստիպողաբար) // Հայերից թափուր՝ դատարկ մնալը, հայաթափ լինելը, հայ բնակ-

չությունից զրկվելը: Հայաթափությունը վերջնական է Նախիջեւանի մէջ, Պարսկահայքի մէջ, Ջաւախքի մէջ կը նօսրանանք, Հիմա Արցախն է սեղմուած օղակի մէջ (ԱԶԳԱԳՐԱԳԵՏ ԵՒ ՈՒՍՈՒՅԻՉ՝ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄՂՈՒՒՍՈՎ, <https://www.azg.am>):

ՀԱՅԱԿԵԴԴՈՆԱՑՈՒՄ, գ., **Նախապատուութիւնը հայկականին տալով՝ միայն հայի ճակատագրին անդրադառնալը, երեւոյթները այդ դիտանկիւնէն քննելը՝ բացառելով ու ժխտելով միւս ազգերը եւ անոնց ճակատագիրը // Հայկականության՝ հայեցիության վրա կենտրոնացում:** Հայոց պատմութիւնները պէտք էր որ ըլլային հայ իրողական վիճակին եւ փորձառութեանց ցոլացումները՝ առանց գոյացապաշտութեան (essentialism) եւ **հայակեդրոնացումի** (armenocentrism), որ նշանակէ այսպէս կոչուած, «հայկական բաները» նկատել կեդրոնական, իսկ մնացեալը՝ շրջանակային (peripheral), երկրորդական եւ ոչ կենսական (Ազգակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՀԱՅԵԼԱԲԱՐ, մկբ., 1. **Հայլելիի պէս արտացոլել՝ պատկերը անդրադարձնել:** փխբ. Ինքզինքը անաչառօրէն քննելով, ինքնադատօրէն // 1. Ինչպէս հայելու մէջ, արտացոլվելով: 2. փխբ. **Ճշմարտացիորեն:** Եւ ուրեմն անհրաժեշտութիւնը ինքզինք կարենալ տեսնելու ինչպէս որ է՝ **հայելաբար**, բայց նաեւ այլին մէջէն որպէս թարգմանելի իրականութիւն ու ինքնութիւն (Բագ., թիւ 2-3 2021, էջ 1):

ՀԱՅԵՑԱԽՈՀԱԿԱՆ, ած., **Մտաւոր՝ տեսական, ուստի փորձով չքննուող՝ չվաւերացուող (ենթադրութիւն, վարկած) // Հայեցողությանը և խոհականությանը հատուկ՝ բնորոշ, մտովի ընկալվող, իրականությունից կտրված:**Մարկն ու ես քանիցս դարձանք Ֆրոյտի Մովսէս եւ միաստուածութիւն գիրքին շուրջ, որ **հայեցախոհական** (speculative) առաջադրութենէ մը կը մեկնի, Ֆրոյտին կողմէ ընդունուած որպէս թէ՛ հնարաւոր եւ թէ՛ անստուգելի. Ինչ-

պէս ինք կ'ըսէ Ա. Մասի խորագրին մէջ՝ «Եթէ Մովսէս եզիպտացի ըլլար» (Բագ, թիւ 2-3 2021, էջ 157):

ՀԱՅԿԱՎԱՆՍԷՆ, Բ., չբ., Հայերէնի թարգմանուիլ՝ հայեցի դառնալ // Հայկական դառնալ, հայկական բնույթ ստանալ: Ի՞նչ կ'ուզեր ըսել Խորենացին երբ... ասորական անանդութեան մը վրայ (որ ի դէպ այդքան դարերէ ի վեր՝ իր **հայկականացած** տարբերակով, եւ ուրեմն սկիզբէն՝ թարգմանաբար...), կը յիշեր Քրիստոսի դէմքին Եղեսիա բերուած պատկերը (Մ.Ն., 2015, էջ 14):

ՀԱՅՐԵՆԱՀԱՆ, ած., Հայրենի հողէն՝ աշխարհէն բնութեամբ վտարուած՝ տարագրուած, արմատէն կտրուած // Հայրենիքից հանված, հայրենիքից զրկված՝ ստիպողաբար հեռացած: 1915էն ետք... Օշականի ակնարկած «հզօր տազնապներ»ուն ու «ծանր բեկումներ»ուն ամենէն ուժգինը ապահովաբար տարաբնակութիւնն է, որ **հայրենասեան** մարդուն անցեալ ու ներկայ կեանքերուն միջեւ... անդարձութեան տարածք մը կը ծաւալէ (Բագ., թիւ 4, 2020, էջ 64):

ՀԱՅՐԵՆԱՇԻՆՈՒԹԻՒՆ, գ., Հայրենիքի զարգացումը՝ ծաղկումը՝ բարգաւաճումը // Հայրենիքի շինարարություն, հայրենակերտում, հայրենիքի շենացում: Ան ալ իրատունք ունի սպասելու, որ նախընթաց վարչակազմերու օրով տեղի ունեցած յոռի իրականութիւնները չվերադառնան, այլ **հայրենաշինութիւնը**, հայրենիքի պաշտպանութիւնն ու մեր ԲՈԼՈՐ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒ կենսագործումը մտնեն յաջորդ իշխանութեան օրակարգին մէջ... (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 19):

ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ., Ճոխ եւ շքեղ հանդիսութիւն մը՝ տօն մը գլխաւորելը, այն իր ներկայութեամբ փառաւորելը // Հանդիսության գլխավորումը: Անթիլիասի Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ... **հանդիսապետութեամբ** Արամ Ա. վեհափառ հայրապետին... կատարուեցաւ Հանրապետական

Մաղթանք՝ Հայաստանի Ա. Հանրապետության անկախության տօնին առիթով (Ասպարեզ, 5 Յունիս 2021, էջ 17)

ՀԱՆԴԻՍԱՎԱՐ, գ., **Առիթով մը կազմակերպուած հանդիսատր հաւաքոյթի կանոնատր ընթացքը ապահովող անձ // Հանդիստր յայտնեց, որ ձեռնարկը կազմակերպուած է Արցախի Ուշուի ֆետերասիոնը....** (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԱՅԻՆ, ած., **Համայնագիտարաններուն յատուկ, անոնց բնոյթն ու նկարագիրը ունեցող // Հանրագիտարանին վերաբերող՝ հատուկ, հանրագիտարանի:** Մակայն արաբական փիլիսոփայութեան ծանօթ մէկու համար պարզ էր, որ Երզնկացիի 40 էջոնց փոքր ձեռագիր.... ամփոփումն էր տասներորդ դարուն Պասարայի մէջ խումբ մը գիտնականներու չորս հատորանի **հանրագիտարանային** գործին (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՀԱՍՏԱՏԵԼԻ, ած., **Ստոյգ, անտարակուսելի, աներկբայելի // Հաստատոված, այն, որ հաստատովել է:** Մեր ազգի պարզած ներկայի անմխիթար իրականութեան մէջ, ուր գրեթէ ամէն ճակատի վրայ **հաստատելի** են տեղատուութիւնը, նահանջն ու համատարած յուսաբեկութիւնը, իսկապէս մխիթարութեան նշոյլ մը կը բերէ հայ մարդու որբէլ նախաձեռնութիւն.... (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ, ած., **Հաստատունությանը հատուկ՝ բնորոշ, հաստատունության:** Ընկերային արարում մըն է կատարումը, պատկերին **հաստատութենական** այլակերպումը (Մ.Ն., 2015, էջ 44-45):

ՀԱՏՈՒՄԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., **Ընկերութեան զանազան խաւերու՝ ազգային, ցեղային, սեռային եւ այլ խտրականութեան խնդիրներու հետ առնչուիլը // Տարբեր տեսակի ճնշումների՝ խտրականության**

(ռասայական, ազգային, սեռային եւ այլն) տրամախաչում, **փոխադարձ հատում**: Օրին ապակառուցում հոլովեր եւ, հիմա քննադատողական տեսութիւն կը կարդաս, կը բարկանաս, կը զարմանաս, **հատումայնութիւններ** (intersectionalities) եւ անոնց մասերն ու ճուտերը կը փորձես համադրել եւ չիւճճուիլ գաղափարախօսական մտասելեռումներու թնճուկին մէջ... (Բագ, թիւ 3 2020, էջ 78):

ՀԱՏՎԱԾԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ., **Կողմնապաշտութիւն, մեծամասնութեան օգուտը անտեսելով պզտիկ խումբի մը (հոս քաղաքական կուսակցութեան մը) շահերը գերադաս նկատելը, անմիաբանութիւն // Որնէ հատվածի պաշտելը՝ պաշտպանելը (ի հակադրութիւն ամբողջի), երկպառակություն**: Աւելի եւս կը մերժենք **հատումաձապաշտութիւնը** երկրի մը մէջ, որուն սահմանադրութիւնը յստակօրէն կը նշէ, որ երեսփոխան մը ազգին երեսփոխանն է եւ ո՛չ երկրին բաղկացուցիչ հատումածի մը (Զարթօնք, Շաբաթ, 23. 04. 2022)

ՀԱՐՑԱԴՐԱԿԱՆ, ած., **Երեւոյթ մը, ստոյգ՝ հաւաստի համարուող միտք մը խնդրականացնող՝ քննող // Հարցադրումով կատարվող, հիմնախնդիրներ առաջադրող: Հարցադրական այդ մօտեցումներուն մէջ ամենէն տպաւորիչը հաւանաբար Վալտեր Բենիամինին կը պատկանի (Մ.Ն., 2015, էջ 32):**

ՀԱԻԱՍԱՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., **Քաղաքականութիւն որ ընկերութեան անդամներու հաւասար իրաւունքները գերակայ, անկասկածելի արժէք կը համարէ (egalitarianism) // Տեսությունը ըստ որի հասարակության մէջ պետք է հաստատվի քաղաքական, իրավական և տնտեսական հավասարություն**: Ան (արեւելասիրութիւնը) այսօր կու գայ զգեստաւորուած... տիրական տեսութիւններու պատմուճանով՝ յետգաղութարարական տեսութենէն **հաւասարապաշտութեան** ու խտրականութեան տարբեր կիրարկումները եւ

անոնց խաչաձեւման գօտիները «էլիտար» լեզուով (Բագ, թիւ 2-3 2021, էջ 56):

ՀԱԻԱՏԱԴՐԺՈՂԱԿԱՆ, ան., **Համոզումը՝ դասանանքը ուրացող, զայն մերժող կամ անտեսող // Հավատը դրժող, աստվածամերժական, աթեիստական:** Մէլիտ Նասրալլա բացայայտօրէն.... Սամիր Ժահժահը պատասխանատու նկատեց Թայյունէի դէպքերուն՝ ընդգծելով, որ Հրգպալլայի պայքարը Իսրայէլի եւ **հաւատադրժողական** ծրագիրին դէմ է (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՀԱԻԿԹԱԾԻՐ, ան., **Հակիթի կոր շրջագիծի ձեւը ունեցող, անոր եզրագիծին նմանող // Ձվաձև:Հակթաճիր** ու ծանր կոպերով այդ աչքերը ունէին կարծես անսովոր նայուածք մը իր վրայ (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 235)

ՀԵԶԱՍԱՀՕՐԷՆ, մկբ., փխբ. **Առանց ուշադրութիւն գրաւելու՝ առանց կռուի ու տարաձայնութեան, աննկատօրէն // փխբ. Հեզասահ ձևով, հանդարտօրէն սահելով:** Եւ ահա Հայաստանի իշխանաւորները կը յայտնեն **հեզասահօրէն** եւ շուտով լծուիլ երկխօսութեան՝ առանց նախապայմաններու.... (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ, ան., **Հեռագիրի տողերուն պէս համառօտ՝ սեղմ եւ քիչ մը չոր ու գործնական //1. Հեռագրին հաստուկ՝ վերաբերող, հեռագրի: 2. փխբ. Մեղմ և չոր ոճով գրված:** Եթէ կանգ չառնէք լսելու համար, տողերը կը շփոթէք օրաթերթի լուրերուն հետ եւ կանգ կ'առնէ մտերիմ գրոյցը: Բանաստեղծական **հեռագրական** տողերը յաճախուած են սկիզբի եւ վերջի հարցականներով (Բագին, 2011, 1, էջ 56):

ՀԵՌԱՅՈՒՇԱՐԱՐ, գ., **Հրապարակաւ հանդէս եկող անձի ելոյթի բնագիրը յուշող՝ յիշեցնող պաստառ՝ թուղթ կամ որեւէ այլ եղանակ // Էկրան, որի վրա հեռուստահաղորդման մասնակցի հա-**

մար գրվում է հաղորդման տեքստը, և որը հանդիսատեսի համար աննկատ է: Այնուամենայնիւ, Փաշինեան իր ելոյթը կարդալու համար խելամտօրէն օգտագործեց **հեռայուշարարը**, որ շատ անլի հետաքրքրական դարձուց դիտումը.... (Սապարէզ, 30 Սեպտեմբեր, 2021, էջ 3):

ՀԵՐԹԱԲԱՐ, մկբ., **Որոշ յաջորդականութեամբ, մէկը միւսի ետեւէն, կարգով // Հերթականորէն, հերթով:** Մեռտական, ինչպէս նաեւ քուէյթեան արտաքին գործոց նախարարութիւնները **հերթաբար** իրենց քաղաքացիներուն թելադրեցին խուսափիլ Լիբանան այցելելէ ապահովական նկատառումներով (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՀԶՕԲԱՆՔ, գ., **Ուժ, աւին, եռանդ եւ կորով, թափ // Հզորութուն, ուժ:** Մեզի հանդէպ դրական տրամադրութիւններ կան միջազգային շրջանակներու մէջ, պէտք է յաւելեալ **հզօրանքով** լարել մեր դիւանագիտական եւ իրաւագիտական մկանները՝ յաւելեալ գետին նուաճելու համար (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ, գ., **Երեւոյթի մը (հոս՝ պետութեան) առաջընթացը՝ զարգացումը խոչընդոտող գլխաւոր՝ էական հարց՝ պարագայ, անոր գոյութեանը սպառնացող ուղղակի սպառնալիք՝ վտանգ // Հիմնական՝ գլխավոր խնդիր, հիմնահարց, պրոբլեմ:** Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի խմբակցութիւններու ղեկավարները շնորհակալութիւն յայտնած են հանդիպումի նախաձեռնութեան համար, ներկայացուցած ներքին ու արտաքին **հիմնախնդիրները**.... (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՀԻՄՆԱՆԻԻԹ, գ., **Որեւէ նիւթի՝ իրի առանցքը՝ միջուկը, ան որմէ կը բխին եւ որուն կը շուրջը կը պտըտին նիւթին բոլոր միւս տարրերը՝ մասերը // 1. Հիմնական նյութ, բուն բաղադրութիւնը: 2. փխբ. Լուծում:** Բնականաբար՝ իսկական համակարգումը տեղի

կ'ունենայ Համապատկերի ծրագիրով, քանի որ ասոր **հիմնանիւթն** իսկ պատմական է (Բագ, թիւ 2-3 2021, էջ 17):

ՀԻՄՆԱՎԱՅՐ, գ., 1. **Հիմնական՝ գլխաւոր վայր: 2. փխբ. Նիւթ մը քննելը նկատի ունենալով զայն ստեղծող՝ յառաջ բերող բոլոր պարագաները // Հմնական վայրը, հիմնվելու՝ տարածման վայրը: 2. փխբ. Համատեքստ, կոնտեքստ:** Մերձաւոր-միջինարեւելեան կը նշանակէ, այսպէս կոչուած, «հայկական բաները» դիտել, վերլուծել եւ պատմականացնել ըստ իրենց աշխարհագրական, քաղաքական եւ պատմական **հիմնավայրին՝** (context), որ է Մերձաւոր-Միջին Արեւելքը եւ ոչ միայն «Հայաստանը» (Ազգակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5,6): - էջ 5

ՀՄԱՅՔԱԹԱՓ, ան., **Հրապոյրը՝ կախարդանքը՝ թովչանքը կորսնցուցած, հմայաթափ // Հմայքները կորցրած, հմայքներից զրկված, տեսքից ընկած:** Հիմա այնտեղ բակին մէջ փակ / Խնձորենին է մնացած / **Հմայքաթափ** կարոտաբաղձ / Մեծ մօր մը պէս մեկուսացած(Թ. Ի. Ե., Ե., 2021, էջ 154):

ՀՈԳԵԽՈՅ, գ., **Մարդու հոգին տակն ու վրայ ընող՝ ալեկոծող ստառպալից՝ մղձաւանջային եւ սոսկալի փորձառութիւն // Հոգու՝ հոգեկան խոց՝ վերք:** «Ամէն մարդ կը խորհի որ trauma-ն (հոգեխոցը) արխիւ կը պահանջէ... արխիւը ինքն է նոյն այն **հոգեխոցը**, զոր ան կը փորձէ լուծել», անուած Rebecca Comay-ի Lost in the Archives (Արխիւներուն մէջ կորսուած) հատորի յառաջաբանէն, Alphabet City, Թորոնթօ, 20

ՀՈԳԵԽՈՅԻՉ, ան., **Մարդու հոգին տակն ու վրայ ընող՝ ալեկոծող // Հոգին խոցող:** Անոնք կը սերին **հոգեխոցիչ** կրկնակի փորձառութենէ մը. առաջինը՝ երկրին խորտակումն է, երկրորդը՝ յանկարծակի վայրասուզումը արեւմտեան յորձանքներու մէջ (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, Իմացոթյուն գրադարան, Անտարես, 2017, էջ 41):

ՀՈԳԵԽՈՑՈՒՄ, գ., Իբրեւ հետեւանք սուկայի փորձանքի մը՝ մարդու հոգիին ուժգին ալեկոծումը, բուն խտվքը //Հոգին խոցելը, հոգեկան վերք պատճառելը: Պէյրութահայ կեանքի մեզ հետաքրքրող ժամանակներուն հայրենագրկութիւնը, գաղթականութիւնը, որբութիւնը, հարազատներու կորուստը, **հոգեխոցումը** մեծապէս ներկայ, տեսանելի, զգալի եւ շօշափելի երեւոյթներ էին (Բագ., թիւ 3 2020, էջ 66-67)

ՀՈԳԵՔԱՆԴԱԿ, գ., Մարդու հոգիի կատարեալ՝ ամբողջական ձեւ առած՝ վարպետօրէն մշակուած մարմնաւորումը // 1. Հոգեկան կերտվածք: 2. փխր. Ստեղծագործական սկզբունք(ներ): Ասոնցմէ էր քսաներորդ դարուն սկիզբը, հայ բանաստեղծութեան կամարին վրայ իր շքեղ **հոգեքանդակը** դրած քերթողը՝ Դանիէլ Վարուժան (Վեհանոյշ Թեքեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ՀՈՂԱՀԱԻԱՔ, գ., Հայրենիքի՝ մայրենի հողի գրաւուած գիւղերն ու քաղաքները ազատագրելը // Կորցրած հողերը՝ տարածքները հավաքելը՝ հայրենիքին վերամիավորելը: Դաշնակցական հասկացողութեամբ, սփիւռքը ժամանակաւոր երեւոյթ է, քանի որ ՀՅ Դաշնակցութեան նպատակը **հողահաւաքի** եւ հայահաւաքի իրականացումն է (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):02: (Բագ, թիւ 2-3 2021, էջ 197):

ՀՈՒՏՈՐԱԲԱՆԱԿԱՆ, ած., Ճարտասանական, հոս՝ երկիրի մը որդեգրած քաղաքական գծի արտայայտելուն՝ յայտնելուն վերաբերող //Հռետորական խոսքին հատուկ, ճարտասանական: Դասախօսը իր զեկուցումը բաժնեց երեք մասի. առաջին՝ յետնոյեմբերեան ժամանակահատուածին Թուրքիոյ արձանագրած **հռետորաբանական** փոփոխութիւնը... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Գեղեցիկ, ազդեցիկ եւ համոզիչ խօսելու հմտություն, ճարտասանություն: 2. փխբ. Մնամեջ՝ անիմաստ պերճախօսություն // փխբ. Գեղեցիկ, ազդեցիկ, բայց անբովանդակ դատարկ խոսք՝ ճառ, ռիտորիկա:** Երեսուն տարի շարունակ հասարակությունը կերակրած ենք... սուտերով ու անհեթեթի սահմանները հատող **հռետորաբանությամբ** (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ՀՌՈՄԵԱՆ, ան., **Հոռմ քաղաքին պատկանող, անոր վերաբերող // Հոռմ քաղաքին վերաբերող, Հոռմի:** Նշենք, որ Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականի միջնապահ Հենրիխ Մխիթարեան **հռոմեան** կազմին հետ այս մրցումին իր մասնակցությունը չբերաւ (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ-ՍՊԱՅԱԿՈՅՏԱՅԻՆ, ան., **Զօրքին մեջ սպայի աստիճան ունեցողներու խումբին՝ կազմին վերաբերող, անոնց համար կազմակերպուած // Հրամանատարական և սպայակույտային՝ շտաբային, հրամանատարաշտաբային: ... Հրամանատարական-սպայակոյտային ռազմափորձերը կը կատարուին կապի եւ կողմնորոշման տարատեսակ միջոցներու լայնածաւալ կիրարկումով** (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՀՐԱՇԱՔԱՂԱՔ, գ., **Սքանչելի՝ նմանը չունեցող քաղաք՝ ստան // Հրաշալի՝ հրաշքներով լեցուն քաղաք:** ... Փնտռէ ծովամոյն եղած **հրաշաքաղաքին** հետ դարեր առաջ թաղուած եօթը դիւցազուններուն եօթը երգերը (Բագին, 2010, 1, էջ 4):

ՀՐԷՇԱՅՆՈՐԷՆ, մկբ., **Հրէշի պէս, վայրագօրէն, հրէշաբար // Հրէշային՝ հրէշավոր ձևով, հրէշաբար, վայրենաբար:** Ատամնափայլ խափշիկներ **հրէշայնօրէն** կը դափափէին պղինձէ թմբուկներ... (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէրուրթ, 1992, էջ 218-219):

ՁԱՅՆԱՆԱԼ, բ., Երեւոյթէ մը ներշնչուիլ, անոր ձայնը՝ արձագանգը դառնալ // Ձայն դառնալ, նյութական ձևավորում ստանալ: Իր ծննդավայր Բրգնիկէն Պոլիս, յետոյ Վենետիկ, Պելճիքա, յետոյ դարձեալ գաւառ եւ Պոլիս դարձեալ, այս քնարակիրին ամենէն տոկուն լարը՝ մարդկային հոգիի տառապանքէն կրճայնանայ (Վեհանոյշ Թէքէեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ՁԵԻԱՉԱՓ, գ., Որոշ կերպ՝ եղանակ՝ ձեւ ունենալը, յստակ նկարագիր ունենալը // Որեւ բանի կառուցվածքի՝ մատուցման ձևը՝ եղանակը: Նոր ձեւաչափի թատրոնը պիտի ունենայ կատարումի նոր ըմբռնումներ, բայց կանուխ է այդ մասին հաստատումներ կատարելու համար (Ազգակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՁԵԻԱՌԻԿ, ած., Իրեն յատուկ սկզբնական ձեւը կորսնցուցած, անսովոր, արտառոց դարձած // Իր ձևը կորցրած, իր ձևից կերպարանքից զրկված: Քեզ կը ձեւափոխէ, քեզ կը ձեւազրկէ, ձեւառիկ ցաւագարի մը կը վերածէ (Պարուծեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 49)):

ՂԱԴԱԲԱՂԵԱՆ, ած., Արցախի պետութեանը (Ղարաբաղ) եւ անոր բնակիչներուն առնչուող, անոնց վերաբերող // Ղարաբաղին վերաբերող հատուկ, Ղարաբաղի, արցախյան: Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին ԱՊՂ երկիրներու դեկլարներու խորհուրդի նիստին ընթացքին անդրադարձած է **ղարաբաղեան** տագնապի լուծման ու Ռուսիոյ դերակատարութեան (Ազգակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԻՑ, ած., Նոյն ճակատագիրը՝ բախտը ունեցող, նոյն վործուրիւններուն ենթարկուած // Միննոյն ճակատագիրն ունեցող: Կը մատնեն հայութեան ցաւերով տագնապող ճակատագրակից ժողովուրդի մը գոյութիւնը (Բագին, 2010, 1, էջ 73):

ՃԱԿՏԵՆԵՍ, գ., Որեւէ բանի (հոս՝ շէնքի) առջեւի երեւցող մասը // Շէնքի՝ կառույցի ճակատային՝ դեպի փողոցը նայող մաս, **Ֆասադ:** Քարափ հասած մակոյկը զիս կը հանէ... / Շէնքի մ'առջեւ, ճակտերեւտով վարդագոյն / Սանդուխներուն վրայ անոր մարմարէ (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 270):

ՃԱՌԱԳՈՒՆԵԼ, բ., Լոյսի՝ ճաճանչի, հոս՝ իմաստութեան լոյսի գոյն՝ փայլքը առնել՝ ունենալ // Ճառագայթող, լոյս՝ իմաստութիւն սփռող: Իր տաղերուն մէջ հռետորութենէ անդին ճառագունող իմաստութիւն մը կայ: (Վեհանոյշ Թէքէեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ՃԵՄԱՊԱՐՏԵԶ, գ., Զբօսնելու՝ պտրտելով հանգստանալու՝ կազդորութիւնը համար ստեղծուած պարտէզ // Ճեմելու պարտէզ, **զբոսայգի:** Ճեմապարտէզի մը մէջ կանգնած է արձաններու շարք մը, բոլորը՝ փաթթուած եւ ուրեմն անտեսանելի որպէս արձան (Մ.Ն., 2015, էջ 34):

ՃԵՊՈՒՏԵՍ, գ., Հապճեպ եւ փութով ուտելու համար առանց մասնաւոր խնամքի եւ յոգնութեան արագ պատրաստուող կերակուր // Արագ սնվելու ուտեստ, **ֆաստֆուդ:** Դէպ, իրմէ պիտի ստրվիմ գրասեղանիս դարակիւն մէջ «Մելպա թոսթի» տուփ մը պահել՝ օրուան վերջաւորութեան զգացուող անօթութիւնս հակակշռի տակ պահելու համար, առանց դիմելու աւելի համով, քաղցր բայց վտանգաւոր **ճեպուտեստներու...** (Կրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 32):

ՃՇՄԱՐՏԱԶԵՐԾ, ած., Իրականին՝ ճշմարիտին անհաղորդ, ստուգութենէ՝ արժանահաւատութենէ զուրկ // Ճշմարտութիւնից զերծ՝ անմասն, ճշմարտութիւնից խուսափող: Նկատի առնելով աղէտի «ճշմարտագերծ» «փորձառութիւնը», արդէօք տակաւին իրաւունք ունի նք «արխիւ» եզրը գործածելու (Բագ, թիւ 2-3 2021, էջ 82):

ՃՇՄԱՐՏԱԶՈՒԲԿ, ան., **Հաաստիութենէ՝ վաերականութենէ գուրկ, անասոյգ, երկբայելի //Ճշմարտությունից գուրկ, ոչ ճշմարտացի:** ...Մարկ Նշանեան 2015ին ընթերցողին հրամցուցած էր Մորիս Պլանշոյի ու Ժորժ Պաթայի փիլիսոփայական բարեկամութեան ընդհանուր յայտարարին տակ գրուող վերապրողի, անոր մէջ վկային մահուան, **ճշմարտագուրկ** դէպքին ու անոր պատումնային կառոյցի գաղափարները (Բագ, թիւ 2-3 2021, էջ 217):

ՃՇՄԱՐՏԱՄՈԼ, ան., **Ճշմարտութեան բուն՝ ախտաւոր կիրքով կապուած, հոս՝ անձնական համոզումներէ յամառ կախումաձութիւն // Խիստ ճշմարտասեր, ճշմարտության նկատմամբ մոլորցրունէցող:** Շինծու աղօթագիրքերու խաբեբայ հեղինակները մոռցեր են **ճշմարտամոլ** ծերերու փտած բարոյականութիւնը (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 77)):

ՄՄԳՈԳԱՅԻՆ*, ան., **Խնդիրի մը լուծումով մտահոգ չէգոք կողմի մը նախաձեռնութեամբ երկու կամ աւելի տարակարծիք կողմերու միջեւ համաձայնութիւն գոյացնելու միտումով կատարուող // Երկու վայրերի՝ հաստատությունների՝ անձերի միջև կանոնավոր երթնեկությամբ՝ փոխայցելություններով կարարվող:** Միւս կողմէ, Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ռալիս Ժումպլաթ երէկ շարունակեց իր **մագոգային** այցելութիւնները առնչակից կողմերու պատասխանատուներուն (Ազգակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՄԱՀԱԴԻՄԱԿ, գ., **Դիմակը՝ նկարը՝ պատկերը ննջեցեալի մը, որ ննջած ըլլալու փաստը կը սքողէ՝ կը ծածկէ, հանգուցեալին տալով կրկրորդ կենդանութիւն մը //Մահվան դիմակ, հանգուցյալի դէմքից հանված գիպսե ծեփապատճեն:** ...եւ կը կոչէր զայն «կենդանագրութիւն», որ իր բառերով ահաւասիկ «զկենդանագրութիւն

փրկչական պատկերի», խորքին մեջ արդեն իսկ մահադիմակ մը (Մ.Ն., 2015, էջ 14):

ՄԱՀԱԹՈՐ, ան., **Կաթիլ առ կաթիլ մահ սփռող՝ տարածող // Մահաբեր, մահ սփռող:** Այաշի մահաթոր բանտին մեջ մինչև վերջին օրը կը գրեր կեանքի երգը, կը քակեր ու կը հիսեր հողին արդար քրտինքին ու կենարար արգասիքին գովքը, ուր հո ղը կար մեծ սեմնացաններուն համար իբրև բաղձանք ու հրաւեր.... (Վեհանոյ թէքէան, Իբրև Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ՄԱՀԱԽՕՍ, ան., **Մահ՝ աւերում՝ խորտակում գուժող, սարսափեցնող // Մահ գուժող, մահվան մասին խոսող:** Ուրկէ՞ ուր այս համեմատութիւնը, յետոյ՝ ցուլը ի՞նչ գործ ունէր այս **մահախօս** ալիքներուն հետ (Բագին, 2010, 1, էջ 5):

ՄԱՀԱԾԻԾԱՂ, ան., **Անխուսափելի մահուան՝ կործանումի հեգնանքը՝ ծաղրը ունեցող, անոնց նման անյաղթելի // Մահվան ծիծաղ ունեցող, մահ բերող՝ գուժող:** Ո՞ւր էր արդեօք երակներէդ հրահոսող / Վարար աւիշը կամքիդ, / Որուն հօր ներգործութեամբ / Դուն կրնայիր հակակշռել / **Մահածիծաղ** փորձութեան քեզ ենթարկող / Ամէն ձգտում սանձազերծ... (Բագին, 2010, 1, էջ 41):

ՄԱՀԱՊԱՇՏՈՒԹԻԻՆ, գ., **Իբրև փրկութիւն անեացումի՝ չգոյութեան վիճակի սէր՝ հակում՝ պաշտամունք // Մահը պաշտելը, մահվան պաշտամունք:** Անոր կեանքը - ազգին կեանքը - մահուան տեսանկիւնէն դիտուած է... կենսապաշտութիւն մըն է որ երեւան կու գայ «**մահապաշտութեան**» մը խորքէն զատուելով (Բագ, թիւ 2-3 2021, էջ 141):

ՄԱՍՌԱԹՈՅՐ, ան., **Մամուռի գոյն ունեցող // Մամուռի գույնով, մամուագույն:** Հագած էր կինամոնագոյն թեզնիքներով՝ **մամուա-**

թոյր պգտիկ լօղիկ մը թավիշէ... (Օսգար Ուսայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 122):

ՄԱՆՐԱՏԻՊ, ած., **Առարկայի մը իրական՝ բնական չափէն աւելի պգտիկ շինուած (նմուշ) // Իրականից մանր տեսք՝ չափսեր ունեցող, փոքրաչափ:** Հանդիսութիւնը իսկապէս որ շքեղ էր եւ... կարելի էր մինչեւ իսկ գոհունակութիւն արտայայտել երգ ու պարին... նաեւ **մանրատիպ** սաւառնակներու միջոցով երկինքին մէջ ցուցադրուող լուսաւոր պատկերներուն նկատմամբ (Ազգակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՄԱՇԵՑՈՒՄ, գ., **Հիւծելը, որեւէ մէկու ունեցած ուժը՝ զօրութիւնը սպառելը, անոնց հատնիլը // Մաշեցնելը, քայքայելը:** Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը իր կարգին հաստատեց. ...«Մենք չենք ուզեր մեր հիւլեական ծրագիրին շուրջ **մաշեցման** բանակցութիւններու մէջ ժամանակ կորսնցնել» (Ազգակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՄԱՏՐԻՏԵԱՆ, ած., **Մատրիտ քաղաքին առնչուող, անոր պատկանող, զայն ներկայացնող // Մադրիդին հատուկ՝ պատկանող, Մադրիդի:** Ֆրանսացի Թոմաս Լեմար նշանակեց մրցումին առաջին կողմը (22-րդ), մինչ Պարսելոնայի նախկին յառաջապահ Լուիս Սուարեզ **մատրիտեան** կազմին երկրորդ կողմը (44-րդ) (Ազգակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՄԱՐԴԿԱՅՆԱՊԱՇՏԱԿԱՆ, ած., **Մարդու, անոր բանականութեան եւ ի ծնէ ունեցած շնորհքներուն՝ ճարտարութեան պաշտամունքին վերաբերող, այդ տեսակէտին յատուկ // Մարդկայնապաշտին՝ մարդկայնապաշտութեանը հատուկ՝ բնորոշ, հումանիստական:** Ֆուկոյի հնախօսութիւնը, ուրեմն, կը փորձէ նախապատրաստել այսպիսով ճշգրտօրէն որոշադրուած յետ-արդիական մտածողութեան դաշտ մը... կազմալուծելով **մարդկայնապաշտական** զանազան կեցուածքներ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 89):

ՄԱՐԴՈՒԺ*, գ., Աշխատելու՝ ստեղծելու եւ արտադրելու ա-տակ մարդոց ամբողջական թիւը // Հավաքական մարդկային ուժ, մարդկային ռեսուրս: Նոր որակի հայութեան մը երազը շօշափելի կը դառնար այստեղ հաւաքուած մարդուժով ու քաղաքին ընձեռած կարելիութիւններով (Բազ., թիւ 3 2020, էջ 1):

ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻԲ, գ., Գլխաւորապէս մարզական խաղերու համար շինուած եւ մէկ ամբողջութիւն կազմող զանազան շէնքերու խումբ, մարզապալատ // Մարզական և մշակութային միջոցառումներ անցկացնելու համալիր շինություն: Վաղը՝ կիրակի, Միշէլ Մըրի անուան մարզահամալիրին մէջ, ժամը 17:45-ին, Պիպլոս հիւրը կ'ըլլայ Հուփսին (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՄԱՐԶԱՇԱՊԻԿ, գ., Մարզանք ընելու, մասնաւորապէս մարզական խաղերու ժամանակ խաղցողներուն հագած շապիկը // Մարզական՝ սպորտային շապիկ: Արքայական ակումբին հետ ան դաշտ պիտի ներկայանայ՝ կրելով թիւ 25 մարզաշապիկը (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 7):

ՄԱՐԶԱՇԽԱՐՀ, գ., Մարզական զանազան անցուդարձեր, անոնց մասին լուրեր // Մարզական իրադարձությունների ամբողջությունը: Մարզաշխարհ [օրաթերթի առանձին բաժինի խորագիր] (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 7):

ՄԱՐԶԱՍՈՒՍԵՐ, գ., Սոււերամարտի մրցումներու համար մարզուելու եւ մրցումներու ժամանակ գործածուող մասնաւոր սուսեր // Մարզումների և մարզական մրցումների համար նախատեսված սուսեր: –Ի՞նչ կը փնտռես,–հարցուց Դքսուհին: –Քու մարզասուսերիդ ծայրակաշին, գոր կորսնցուցեր ես (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 338):

ՄԱՐՏԱՐՈՒԵՍ, գ., Ասիային ծագած եւ տարածուած մար-
զանքի զանազան ձեւեր, որոնք մեծ կարեւորութիւն կու տան
անձնապաշտպանութեան եւ մարզուողի հոգեւոր
ներդաշնակութեան // Մարտ՝ ձեռնամարտ վարելու արվեստ:
«Կարօ Քեպապճեան տիտղոսակիր հայ է, սրտաբեկ հայ է,
մարտարունեստի Մեծ վարպետ է, մեծ մարդասէր է», հաստատած է
նախարար Լուսինէ Ղարախանեան (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021,
էջ 4): - էջ 4

ՄԱՔՐԱՊԱՇՏ, ած., 1. Մաքրութիւնը ամենավերին արժէք եւ
նպատակ համարող: 2. Իր սեփականը անխաթար պահելու միտու-
մով ուրիշ ազգ մը, անոր մշակոյթը ջնջելու ձգտող // 1. Մաքրություն
պաշտող: 2. Ազգային՝ էթնիկական գտումների ձգտող: Ի՞նչ հարկ
խօսելու մաքրապաշտ կամքէն որ կը միտի բնաջնջել բնիկն ու
օտարը, անբուժելի ախտն ու արմատական տարբերը (Բագ, թիւ 2-
3 2021, էջ 30):

ՄԵԽԱԿԱՁԵԻ, ած., Մեխակ ծաղիկի պէս ծոպաւոր փունջի
ձեւ ունեցող // Մեխակ ծաղիկի ձև ունեցող, մեխականման: Ահավա-
սիկ, գունատիլ սկսած պաստառին վրայէն կը ժպտեր Լէյտի Էլի-
զապեթ Տէվրբուն, շղարշէ կնգուղով, մարգարտահուռ կրծազգես-
տով ու մեխակաձեւ վերջաւորութեամբ թեզանիքներով (Օսգար
Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 234)

ՄԵԾԱԳԱՂՈՒԹ, գ., Հայահոծ գաղութ // Մեծ գաղութ, հայա-
շատ գաղթօջախ: Եւ [Վահէ Օշական] յիշատակովը իր մէկ ցնցիչ,
կենարար գործին, որուն կշիռքով կշռուեցաւ այդ մեծագաղութը,
եւ... թեթեւ գտնուեցաւ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 22):

ՄԵԾԱԽՆԱՄ, ած., Մասնաւոր ուշադրութեամբ՝ վարպետո-
րէն եւ հմտօրէն մշակուած, հոս՝ կարուած // Լավ՝ մեծապէս խնամ-
ված: Մեծախնամ համազգեստներով երեք երիտասարդներ, հան-
դիսաւոր շարժուձեւերով, կարկանդակ կը հրամցնէին հրաւիրեալ-

ներուն (Օսգար Ուայլդ, Տորիլն Կրեյի Պատկերը, Պեյրուֆ, 1992, էջ 317):

ՄԵԾԱՄԱՍՆԱԲԱՐ, մկբ., Երևոյթի մը բաղկացուցիչ տարրերուն մեծ մասը կազմելով, առաւելաբար, գերազանցօրէն //Մեծ մասամբ՝ մասով, առավելապէս, հիմնականում:Մեծամասնաբար՝ այս շրջանակներէն գաղթած հայերով կազմուած էին Լաթաքիոյ, Անտիոքի եւ Գրըգիսանի նախաեղեռնեան նորակազմ գաղութները (Յ. Չոլաքեան, ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ (պատմա-ազգագրական ակնարկ), <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ՄԵԾԱՄԱՍՆԱԲԱՐ, մկբ., Մեծաւ մասամբ //Մեծ մասով, մեծամասնութեամբ: Մեծամասնաբար փորանկարչութենէ կազմուած իր գործերը արտացոլացումն էին խռովիչ երազանքի, ցնցոտիապաշտ թշուառութեան, սրտաճմլիկ տառապանքի եւ արմատախիլ բեկորներու (Գրիգոր Քեօսէեան, Պրիսմակին Գոյները, էջ 238):

ՄԵԿՆԱԳԷՏ, գ., Գրութեան մը գաղտնի՝ քողարկուած իմաստը լուսաբանելու մեջ հմուտ գիտնական //Մեկնությունների՝ մեկնաբանությունների մասնագետ: Եւ բաւական է որ հասկցուինք այդ կէտին շուրջ, ինքը՝ փիլիսոփայ, բանասէր, մեկնագէտ, թարգմանիչ, եւ ես՝ ոչինչ... որպէսզի հասկցուինք ընդհանրապէս (Բագ, թիւ 2-3 2021, էջ 125):

ՄԵՌԵԼԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ., դիպվ., Հանգուցեալներու եւ մահուան առեղծուածի ու խորհրդաւորութեան նկատմամբ ուժգին սէր, բռուն կիրք // Մահացածների՝ մեռած բաների հանդէպ սէր: Պարոքը յատկանշող պատկերային յորդումին կ'ընկերակցի ի հարկէ շեշտուած ճաշակ մը դէպի մեռելայինը, մահուան բուրումը, մեռեալ մարմնի ներկայացումը, թատերական համեմատութիւններու հասցուած մեռելասիրութիւնը (Մ.Ն., 2015, էջ 52-53):

ՄԵՏԱԼԱԿԻՐ, գ., Որեւէ ասպարեզի մէջ նշանակալի ձեռքբերումի մը՝ յաջողութեան մը առթիւ շքադրամի՝ մետալի արժանացած (անձ) // Մեդալի արժանացած, մեդալով պարգևատրված: Հայաստանի ներկայացուցիչ, Եւրոպայի մեծերու պրոնզէ մետալակիր, աշխարհի երիտասարդական ախոյեան Լիանա Գիրջեան (81 քկ) նուաճեց... Եւրոպայի ծանրաբարձութեան երիտասարդական ախոյեանութեան ախոյեանի կոչումը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՄԻԱՀԵԾՄԱՆՕՐԷՆ, մկբ., Առանց բացառութիւններու, միակերպ, միաձեւ, միօրինակ //Միահեծան ձևով, ինչպես միահեծանը: Յետպատերազմեան նոր ստեղծուող միջազգային համակարգը միահեծանօրէն կը հետեւէր գաղափարական այս ուղիին (Բազ., թիւ 3 2020, էջ 64):

ՄԻԼԻԱՌԱՏԵՐ, ած., Հազար միլիոնէ աւելի դրամ ունեցող, խոշոր հարստիւն ունեցող // Միլիարդներ ունեցող, մեծահարուստ: Ֆինին, որ իր գումարին մեծ մասը գաղտնի տրամադրած է, յոյս յայտնեց, որ աւելի շատ միլիառատերեր կը հետեւին իր օրինակին եւ իրենց դրամները կը յատկացնեն աշխարհի ամենէն մեծ խնդիրներու լուծման (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՄԻԼԻԱՌԱՏԵՐ, գ., ած., Միլիառներու տեր եղող, անբաւ հարստութիւն ունեցող //Միլիարդատեր, մեծահարուստ: Հին օրերուն պատահած էր որ ֆրիվէյներու երկրի տարածքին, դրամը ծառերուն վրայ բուսներ քոքոյի հատիկներու տեսքին տակ, պարարտացնելով Ինգա ցեղապետերուն քսակը: Հիմա ալ, միլիառատերերուն պարտեզը միայն կ'աճէր ան (Բազին, 2010, 1, էջ 25):

ՄԻՆԻ-ՖՈՒԹՊՈՒԼ, գ. Տուրպոլի տեսակ մը, որուն քիչ թիւով մարզիկներ կը մասնակցին եւ պզտիկ ու գոց մարզական սրահի մը մէջ կը խաղցուի // Տուրպոլ խաղի մի տարատեսակը, որ խաղում են ավելի փոքրաթիվ մարզիկներով չափերով ավելի փոքր ծածկած

խաղահրապարակում, ֆուտզալ: Շաբաթ, 2 Յուլիս 2022-ի յետմիջօրէին պաշտօնապէս մեկնարկեց Լիբանանի **Մինի-ֆուտբոլի Ա. դասակարգի** ախոյեանութիւնը (Զարթօնք, Կիրակի, 10.07. 2022)

ՄԻԶԳԱԻԱՌԱԿԱՆ, ան., **Մէկէ աւելի գաւառներու մէջ տարածուած // Տարբեր գավառներում տարածված:** «Միջգաւառական անէքթոսներ» [գիրքի վերնագիր] <https://www.azg.am>):

ՄԻԶԳՈՐԾՕՆԱՅԻՆ, ան., **Փոխադարձաբար իրարու վրայ ազդեցություն ունեցող, մէկը միւսը ամբողջացնող // Փոխներգործության վրա հիմնված, ինտերակտիվ:** Հայ-իսլամական **միջգործօնային** (interactive) պատմութիւնը կարելոր մէկ մասը կը կազմէ հայոց մերձաւոր-միջինարեւելեան պատմական փորձառութեանց (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՄԻԶԳՈՐԾՕՆՈՒԹԻՒՆ, գ., **Երկու կամ աւելի կողմերու միջեւ եղած աշխոյժ՝ ներգծուն կապ, փոխադարձաբար մէկուն միւսով պայմանաւորուած ըլլալը // Փոխներգործություն, փոխազդեցություն:** Իրողապէս հայոց պատմական եւ մշակութային զարգացումն ու գոյատեւումը ուղղակիօրէն առնչուած են իրենց ունեցած ուժական **միջգործօնութեանց** (interaction) եւ ոչ թէ պատեանային գոյութեան.... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՄԻԶԵԻՈՒԹԻՒՆ, գ., դիպվ., **Իրարմէ հեռու՝ գատուած երկու կամ աւելի անձերու միջեւ գտնուելով՝ անոնց մէջ կապ ստեղծելը // Երկու առարկաների՝ անձերի միջև լինելով կապ հաստատելը:** Այժմ կ'առաջադրուին թատերական կատարման եւ ընկալման նոր, վիճելի ըմբռնումներ: Անոնցմէ մէկն է «միջեւութիւնը»: Երկխօսութիւն կատարող դերակատարները կը նային քամերային, այսինքն՝ հանդիսատեսին (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՄԻԶԻՆԱՐԵԻԵԼՔՅԻ, գ., **Միջին Արեւելքի երկիրներէն մէկուն մէջ ծնած, անոր կարգ մը յատկութիւնները ունեցող անձ // Միջին**

Արևելքի բնակիչ, միջինարևելյի: Այդ ո՞ր օրուան ֆրիվեյջի «եանքի» ոստիկան էին, առանց կոպտութեան ու թատերական թոյնչքի մարդ ձերբակալէին, այն ալ **միջինարևելքցիի** տեսքով ահաբեկիչ մը (Բագին, 2010, 1, էջ 31):

ՄԻԶԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ, ան., **Զանազան երկիրներու երեսփոխանական ժողովներու ներկայացուցիչներէ բաղկացած // Տարբեր երկրների խորհրդարանների պատգամավորներից կազմված բաղկացած:** Կողմերը կարելոր նկատած են Հայաստան-Արցախ միջխորհրդարանական յանձնախումբի ձեւաւորումը... (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՄԻԶԿՐՕՆԱԿԱՆ, ան., **Միեւնոյն ժամանակ մէկէ աւելի կրօններու կամ անոնց հաւատացեալներու յարաբերութիւններուն առնչուող //Տարբեր կրօնների վերաբերող՝ նվիրված:** Աշխատութիւնը նոր էր եւ անհրաժեշտ՝ ոչ միայն հայոց պատմութեան, այլ նաեւ արաբագիտութեան, արեւելագիտութեան եւ **միջկրօնական** գիտութեանց (Interfaith Studies) համար (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՄԻԶՄԱՐԶԱՅԻՆ, ան., **Հուասար չափով մէկէ աւելի գիտութիւններու առնչուող, գիտական զանազան ճիւղերու մէջ գործակցութիւն ստեղծող //Գիտության տարբեր մարզերի, տարբեր գիտաճյուղերի վերաբերող, միջառարկայական:** Ճիշդ է, որ անցեալ տասնամեակներուն լոյս տեսան կարգ մը, այսպէս կոչուած, «**միջմարգային**» (interdisciplinary) աշխատութիւններ, մանաւանդ՝ Միացեալ Նահանգներու մէջ... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՄԻԶՆՈՐԴՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ., **Երկու իրերու միջեւ միջնորդ՝ կապ ըլլալու պարագան, հոս՝ անոնց մէջ ուղղակի կապի բացակայութիւն //Միջնորդված լինելը:** Գրաւոր խօսքը, գրաւոր խօսքին անհուն **մինջնորդուածութիւնը** Բլանշոյին հետ հանդիպումէն ետք ասպարէզ պիտի գային իր մօտ (Մ.Ն., 2015, էջ 13):

ՄԻԻՌՈՆՈՒԻԼ, բ և չբ Միտոնով՝ սուրբ իւղով օծուիլ, օրհնուիլ // Մյուտոնով օծվել՝ պատվել, մեռնվել: Միտոնը Միտոնուածին համար մտքի լոյս եւ խոհականութեան հուր է (Զարթօնք, Կիրակի, 10.07.2022)

ՄԻԱՄԱՐՄԻՆ, ած., բնատ., փխբ.Մուխի՝ ծուխի դիրափոխ տեսք ունեցող // Մուխի՝ ծխի նման, թափանցիկ, ոչ նյութական: Նեղանցքներէն դուրս սողացող/ մխամարմին դիրանքով/ դրան կանչը յափշտակեց/ անձկութիւնս սրափուն... (Պարութեան Նորա, Զեյրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 23)):

ՄՈԼՈՐԱԿԱՆԱԼ, չբ., 1. Մոլորակի ձեւն առնել, փոխակերպուիլ: 2. փխբ. Երկրագունդի բնակիչներէն իւրաքանչիւրին վերաբերիլ, տեղական գոյնը՝ իւրայատկութիւնը կորսնցնել // 1. Մոլորակ դառնալ, մոլորալի վերածվել: 2. փխբ. Համամոլորակային դառնալ, ամբողջ Երկիր մոլորակը ընդգրկել: Թէկո Իզ ընդլայնուող, մոլորակացող 21-րդ դարեան աշխարհի մը մէջ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 21):

ՄՈԼՏՈՎԱՍԻ, ած., Մոլտովա ծնած՝ քաղաքացի, հոն ապրող կամ նման ծնողներէ սերած // Մոլդովայում ծնված, մոլդովացի: Կիսաւարտականին Էլիդա Քոչարեան պիտի մրցի մոլտովացի Քրիսթինա Չիփերի դէմ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՄՈՆԿՈԼԱԿԱՆ, ած., Մոնկոլներուն (մոնղոլներուն) վերաբերող, անոնց յատուկ // Մոնղոլներին հատուկ, մոնղոլների: ...եօթներորդ դարէն ի վեր այս շրջանը (Մերձաւոր-միջինարեւելեան) մեծ մասամբ եղած է իսլամական իշխանութեանց տակ՝ արաբական, սելճուքեան, թրքական, մոնկոլական, պարսկական... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՄՈՆՐԵԱԼԱՀԱՅ, գ., Մոնրեալ քաղաքը ծնած, այդ քաղաքը բնակող հայ // Մոնրեալում ծնված կամ բնակվող հայ:Տենի

Քոտսեր յայտարարեց իր խմբակցութեան կողմէ առաջադրուած շարք մը թեկնածուներուն անունները, որոնց մէջ ներառուած էր **մոնրէալաիսայ** Վանայ Նազարեանը (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 4):

ՄՈՐԹԱՏԱԿԵԱՅ, ան. 1. Մորթին տակը եղող: 2. փխբ. Չարտայայտուած, չգիտակցուած, սակայն գոյութիւն ունեցող եւ մարդու վարքին վրայ ազդող //1. Մորթու՝ մաշկի տակ գտնվող, ենթամաշկային: 2. փխբ. Ենթագիտակցությամբ՝ բնագրով ընկալվող: Ուրտուն տարի ուղեղային լուացում, կազմակերպուած սուտ, գաւառականութիւն, մշակութային կէթոյականացում, **մորթատակեայ** սարսափ, ոստիկանութեան կողմէ հսկողութիւն, եւ գրաքննութեան կողմէ ոգեկան կրտում, ա՛յդ եղած է իրականութիւնը (Բագ., թիւ 3 2020, էջ 93-94):

ՄՈՐՄՈՔԱԽԱՌՆ, ան., Միրտը կսկծացնող՝ այրող լուռ՝ չարտայայտուող ցառով խառնուած //Մորմոքի հետ խառն: Հոն զգալի է **մորմոքախառն** ու խորաշունչ ալիքներու երանգը (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ՄՈՒԹՆԱՄՈՒԹ, ան., Թանձր՝ անթափանցելի մութ՝ խաւար, հոս՝ տակաւին չճանչուած՝ չբացայայտուած //Խիստ՝ թանձր՝ անթափանց մութ: Հիմա կը հասկնար, որ ինքզինք լիովին ճանչնալու համար, պէտք է անպայման մտերմանայ իր ներքին ծովուն **մութնամութ** հրաւերներուն հետ... (Բագին, 2010, 1, էջ 4):

ՄՈՒՍԱԼԵՌԵԱՆ, ան., Մուսա լեբան յատուկ, հոս՝ արիութեան, պայքարի, նուիրուածութեան կոչ՝ հրաւեր եղող //Մուսա լեռանը՝ Մուսա լեռան հերոսամարտին հատուկ, այդ հերոսամարտի: Մնաց հոն՝ տէր կանգնելու կորուսեալ հողին, ամբողջ մշակոյթ մը, ազգի մը ցատումը երգով արտայայտուած մնաց մեր լեռներուն մէջ՝ իբրեւ լեռների քայլերգ, մնաց մեր լեռներում՝ իբրեւ ռազմական տեղ **մուսալեռեան** (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ՄՈՒՍԱԼԵՌՑԻ, գ., ած., **Կիլիկիայի լեռներեն մեկուն բնակիչները եւ անոնց ժառանգները, որոնց մեծամասնությունը կ'ապրի Այնճար՝ Լիբանան //Մուսա լեռան հերոսամարտի մասնակից: Ձեռնարկէն ետք ներկաները ուղղուեցան «Ս. Ջէյթեան» կեդրոն, ուր.... ծաղկեպսակ մը զետեղեցին **մուսալեռցի** նահատակներուն յուշարձանին դիմաց (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 6):**

ՄՍԱԽԱՅՏ, ած., **Այն, որուն ցնծութիւն՝ բերկրանք կը պատճառէ միտքը՝ իմացութիւնը՝ խորհուրդը //Խելամիտ մտքերով ուրախացող՝ ցնծացող:** Հակառակ որ առաջին պետութիւնն ենք որ Քրիստոսութիւնը ընդունեցինք, չպաշտպանուեցանք: Պատերազմ ու պատերազմ: Ծնունդ ու ոճիր: Գիւտ ու աղէտ... Զարադուստրա ու Մատամ Պովարի: Մանրանկար ու ժայռակերտ տաճար: Գիւտաբարութիւն եւ փիլիսոփայութիւն (ուրեմն **մտախայտ** ազգ)... (Վեհանոյշ Թէքէեան, Բարեկամ՝ Անունը Տաղանդ, <https://granish.org/barekam-anuuny-tagahnd/>):

ՄՍԱԿԱՌՈՅՑ, գ., **Միտք, որուն բաղկացուցիչ դրոյթները մեծաւ մասամբ ոչ թէ փորձառական են, այլ ենթակայական // Մտովի կառույց՝ պատկերացում:** Ընթացիկ եւ ամենօրեայ (mainstream) հայ պատմագրութեան նեղ եւ միակողմանի տարազներուն եւ հեղինակներու **մտակառոյցներուն** (construct) համար անմատչելի կամ անբաղձալի էին պատմական փորձառութեանց եւ գործունեութեանց իրողական պարագաները (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՄՍԱՀԵՐԶՈՒԹԻՒՆ, գ., **Հակասական կացութեան մը մէջ, իմա՝ մէկը միւսը չէզոքացնող հրամաններու կատարումը, մտքի անդարձ տրոհումը մասերու, որոշում մը ընդունելու անհնարիւնութիւնը // Միտքը՝ հրամանը իրար հակասող մասերի բաժանելը, կրկնակի ուղերձ:** Մարկ, սակայն, հագուագիւտ կերպով, եթէ երբեւիցէ, կը յիշէ Կրեկորի Պէյթսոնի անունը, որ յայտնագործողը եղած

Է double-bind կոչուածին (կրկնակի հարկադրանք) կամ գոնէ՝ անոր մասին առաջին բանաձեւումները կատարողներէն հաղորդակցութեան տեսութեան մը շրջածիրէն ներս, որ կը վերաբերի **մտահերձութեան** պատճառախօսութեան (Բագ, թիւ 2-3 2021, էջ 118):

ՄՏԵՐՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ., Մտերիմ՝ հոգիին հարազատ մարդ մը սիրելը, անոր հետ նրբանկատօրէն վարուիլը // Փափկանկատություն, նրբամտություն: Անձայն կը մտնէ գրասենեակս, երբ առանձին եմ եւ փափկօրէն ուշադրութեանս կը յանձնէ բացթողում մը. առանց ցուցադրութեան կը պաշտպանէ զիս չար լզուներէ: Կը զգացուիմ իր **մտերմասիրութենէն** (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 17)):

ՅԱՂԹԱԶԻԳ, ան., Յաղթողի մը՝ գլուխը տնկած՝ շիփ-շիտակ՝ անյողորդդ կենալու ձեւը // Հաղթականորէն հպարտ և ձիգ: ...Հպարտ քլորներու պէս կանգնեցան **յաղթաձիգ**, քայլ կապեցին իր քայլերուն հետ եւ յուզեցին ոլորապտոյտը յիշողութեան անել շրջանակին (Բագին, 2010, 1, էջ 3):

ՅԱՂԹԵՐԳԱԿԱՆ, ան., Յաղթութիւն մը տօնելու՝ փառաբանելու համար յօրինուած երգի, կազմակերպուած հանդիսութեան նմանող, անոնց յատուկ նկարագիրը ունեցող // Հաղթերգին հատուկ՝ բնորոշ, հաղթերգի: «Թաղմանական այլազան տարօրինակութիւններու ընդմէջէն կը տեսնուի թէ ինչպէս հպարտ պերճանքը արագօրէն կը վերածուի մեծամոլ իստամբերութեան մը, ամբարտաւան ճգնաւորութեան մը, **յաղթերգական** համտեսութեան մը թատերականացած ձեւերուն... (Մ.Ն., 2015, էջ 53):

ՅԱՅՏԱՐԱՐՈՂԱԿԱՆ, ան., Հրապարակաւ պաշտօնական որոշում մը յայտնելուն յատուկ, հոս՝ այն խօսքը, որուն գործը՝ որոշումին իրագործումը չի հետեւիր // Հայտարարության ձևով առանց բավարար հիմնավորվածության ասված, դեկլերատիվ: Երկար ժամանակէ ի վեր փոխադարձ եւ առաստաղագուրկ յայտա-

բարոդական յարձակումները գետնի վրայ թարգմանուեցան պատերազմը յիշեցնող գործողություններով... (Ազգակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՅԱՅՏՆԱՏԵՍԱԿԱՆ, ան., **Անյայտը յայտնի դարձնելու ունակ, յստակատես, հոս նանե՝ երեւոյթի էութիւնը ճիշդ կռահելու հոգիի կարողութեանը յատուկ //1. Հայտնատեսութեանը՝ հայտնատեսին հատուկ՝ բնորոշ, կանխագուշական: 2. Ներմտնողական, ինտուիտիվ:** Մեկնաբանելով օշականեան յայտնատեսական միտքը, վերլուծաբանը ըսած է. «Բացայայտ է՝ թուրք սիրերգն է այդ ժողովուրդին միակ յաջողութիւնը, յայտնի անով՝ որ անոր մէջ արիւնը միաժամանակ զգալի է ու զանցուած է...» (Բագ, թիւ 2-3 2021, էջ 179):

ՅԱՆԳԱԿԷՏ, գ., **Նպատակ, (պատմութեան) յանգման կէտը, անոր վերջաւորութեան մասին գոյացած համոզումը //Հանգման կէտ, վախճանակէտ, վերջնակէտ:** Այո, այդ պատմութեան «փիլիսոփայութիւն»ն է, որովհետեւ անոր **յանգակէտին** գաղափարը միայն հնարաւոր կը դարձնէ ժամանակին մէջ ծուարած պատմական տուեալներուն նկատմամբ քննադատական, կտրուկ ու վճռական դիրքորոշում մը (Բագ, թիւ 2-3 2021, էջ 112):

ՅԱՆԿԱՐԾՍՅԱՅՏ, մկբ., բնատ. **Անսպասելիորէն՝ անակնկալօրէն ոստնելով՝ նետուելով, յանկարծակի // Հանկարծակիորէն ցայտելով՝ ոստնելով, անակնկալ կերպով:** Ի՛նչ հաճոյք իր ծոած դէմքին վրայ, երբ կինը **յանկարծացայտ** ետեւ կը թռչի (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 36)):

ՅԱՊԱՂՈՂԱԿԱՆ, ան., **Դանդաղօրէն զարգացող, երկարաձգուած, ձգձգուած //Հապաղող բնույթ կրող, հապաղական:** Ի հեճուկս անոր հոգեվերլուծական ներշնչումին, արխիւի **յապաղողական** կառոյցը կարելի է նկատել որպէս մէկ այլընտրանքը բենիամինեան «իրականութիւն կոչուածին եւ արձանագրութեան արխի-

լացումի միջոցներուն խորագոյն փոխներթափանցում»ին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 86):

ՅԱՐԶԱԿՈՂԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., Պատերազմը պաշտելը, այն այլ երկիրներու իր հակօրինական պայմանները թելադրելու միակ եղանակ սեպելը // Այլ երկրների վրա ռազմական նախահարձակում, հարձակապաշտություն, ագրեսիա: Անարդար է, երբ յարձակողապաշտութեան պատճառով հազարաւոր կեանքեր խլել է եւ բազմահազար հայեր հայրենագրկել է տք այժմ մեզի կը փորձեն թելադրել, այսպէս ըսուած, խաղաղասիրական օրակարգ (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՅԱՐՈՒԹԵՆԱԿԱՆ, ան., Յարութին առնելուն՝ վերադառնալուն, վերագարթնելուն յատուկ, հոգեկան վերափոխումին վերաբերող // Հարությանը՝ վերակենդանացմանը՝ վերածնունդին հատուկ՝ բնորոշ: Մարկ Նշանեանի մեկնողական այս գործը... ընթերցողի մտքին կը յարուցանէ հարցեր որոնք ուղղակիօրէն կրնան առնչութիւն չունենալ Թեքէանի **յարութենական** մտահայեացքին հետ, բայց կրնան անուղղակիօրէն կապուած ըլլալ նիւթին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 211):

ՅԵՏԱՄՂԵԼ, բ., Ետեւ տանիլ՝ հրել, առաջին շարքէ՝ աչքերէ՝ ուշադրութենէ հեռացնել, երկրորդական՝ աննկատ դարձնել, սքողել // Դեպի հետ մղել՝ շարժել, հետմղել: Որ բարձրը, սուրբը, գեղեցիկը, ձեւաւորը միջոցներ են դասաւորելու, եւ վերջին հաշուով արգիլելու, **յետամղելու**.... Այն՝ ինչ որ բարձրին կողմէ որոշուած է որպէս ցած (Մ.Ն., 2015, էջ 16)

ՅԵՏԱԲԻՒԱԿԱՆ, ան., Քսաներորդ դարու վերջին առաջ եկած փիլիսոփայական եւ գրական շարժում (postmodern) // Փիլիսոփայական և գրական ուղղություն, պոստմոտեռն:Յետարդիական այս դարուն այլեւս չկան հաւաքական մեծ ասքեր, կան լոկ տարանջատ մանրութներ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՅԵՏԳԱՂՈՒԹԱՐԱՐԱԿԱՆ, ան., Այն ժամանակին վերաբերող, երբ կայսրությունները նուաճուած օտար երկիրները ազատագրուած էին՝ դառնալով անկախ պետություններ // Գաղութարարությանը՝ գաղութատիրությանը հաջորդող ժամանակաշրջանին բնորոշ՝ հատուկ, հետգաղութատիրական: Ան (արեւելասիրությունը) այսօր կու գայ զգեստաւորուած... տիրական տեսութիւններու պատմուճանով՝ յետգաղութարարական տեսութենէն հաւասարապաշտութեան ու խտրականութեան տարբեր կիրարկումները եւ անոնց իսաչաձեւման գօտիները «Էլիտար» լեզուով (Բագ, թիւ 2-3 2021, էջ 56):

ՅԵՏԵՐԿՐԱՇԱՐԺԱՅԻՆ, ան., 1. Երկրաշարժի հօգր ցնցումին յաջորդող նուազ ուժգնութեամբ ցնցումներուն յատուկ: 2. փխբ. Ծանր հիւանդութեան մը յաջորդող նուազ տագնապալի անհանգստութեան յատուկ // 1. Երկրաշարժին հաջորդող: 2. փխբ. Աստիճանաբար թուլացող՝ մարող: Ներքին գործարաններու ելեւէջը նդամէնը, յետերկրաշարժային ցնցումներ, որ չեն ալ ցնցեր այլեւս (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 67)):

ՅԵՏ-ԿԱՌՈՒՑԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., գիտ. Ընկերային եւ մշակութային երեւոյթներու հետազօտութեան կառուցապաշտական եղանակի ստուգութիւնը ժխտող փիլիսոփայական շարժում // Կառուցապաշտությանը՝ ստրուկտուրալիզմին հաջորդող ժամանակաշրջանը գիտության մեջ, հետարուկտուրալիզմ: Ըստ Նշանեանի, Անտըրսընի երեւակայութեան ստորոգութիւնը... թիրիմացաբար կը թելադրէ ազգայնականութեան պատրանքայնութիւնը՝ մէկ կողմէ իբր թէ որպէս քննադատութիւն, միւս կողմէ՝ ոգեկոչելով «յետկառուցապաշտութեան» վայելած համբաւը... (Բագ, թիւ 2-3 2021, էջ 92):

ՅԵՏՏԱԿԱՄԱՐՏԱՅԻՆ, ան., Որևէ խնդրի երկու ներհակ կողմերու պայքարէն անմիջապէս յետոյ եկող, այդ պայքարին յաջորդող // Հակամարտությանը հաջորդող:Յետհակամարտային ժամանակաշրջանը, ընդհանուր առմամբ, հանգիստ կ'անցնի (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՅԵՏՆԱՄԱՍ*, գ., Նկարի մը ընդհանուր այն գոյնը, որուն վրայ կը պատկերուի առարկան եւ այն աւելի յստակ եւ ցցուն կը դարձնէ // Նկարի խորքը, հետին պլանը, ֆոն: Մինչեւ հիմա ալ այդ ճերմակ պատը որպէս յետնամաս կայ գործերուս մէջ (Բագ., թիւ 3 2020, էջ 103):

ՅԵՏՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ, ան., Հայաստանի, Ռուսիոյ և Ազրայէ-ճանի մէջ 2020 թ-ի Նոյեմբերի 9-ի յայտարարութենէն յետոյ եկող // 2020թ. նոյեմբերի 9-ի պայմանավորվածությանը հաջորդող: Դասա-լիօսը իր գեկուցումը բաժնեց երեք մասի. առաջին՝ յետնոյեմբերեան ժամանակահատուածին Թուրքիոյ արձանագրած հռետորա-բանական փոփոխութիւնը.... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՅԵՏՍԻՐԱԲԱՆԱԿԱՆ, ան., 1. Միրային՝ փաղաքշական յա-րաբերութենէ ետք: 2. փխբ. Մեղկ, քիչ մը անգոր եւ անուժ, տկար // Միրաբանելուց՝ սիրաբանությունից հետո տեղի ունեցող՝ կա-տարվող: Կիւնը.... հեռաձայնած էր ճիշդ անոնց լոգարանէն դուրս ելլելէն ետք՝ մաքուր, յետսիրաբանական եւ տակաւին քիչ մը խմած.... (Բագ., թիւ 3 2020, էջ 8):

ՅԵՏՏՆՅՈՒՄ, գ., Երկրաշարժի հզօր ցնցումին յաջորդող նուազ ուժգնութեամբ ցնցումներ // Երկրաշարժի ցնցումին հաջոր-դող ավելի թույլ ցնցում: Քաղաքացիները նախազգուշացուած են հաւանական ծովաշարժի մասին. արձանագրուած է 92 յետցնցում (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 8):

ՅԻՇԱԶՐԿՈՒՄ, գ., Յիշողութիւնը սրբելը, կապը անցեալին հետ խափանելը՝ խզելը // Հիշողութիւնից գրկում, հուշի՝ հիշողութեան ջնջում: Շէնքերը յիշողութիւն ունին, այնքան աստէն որ կան: Հաւաքական յիշագրկումի գործողութիւնը, որ բուն նպատակն էր պատերազմի աւարտին յաջորդած կիսավուր բայց կանգուն մնացած հազարաւոր շէնքեր փլելու մոլուցքին, չի կրնար ջնջել նկարներդ (Բագ., թիւ 3 2020, էջ 43):

ՅՈՅՆԱՆԱԼ, բ., Յոյն՝ հին յունական քաղաքակրթութեան ժառանգ ըլլալ // Հին հույներին նմանվել: Այսինքն՝ յոյները կը նմանակեն եւրոպացիները, որոնք կը նմանակեն հին յոյները. այս ճանապարհով է որ յոյները՝ արդի ազգայնական առումով, կը յոյնանան (Բագ., թիւ 2-3 2021, էջ 91):

ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ, ած., Յորդանանին պատկանող, Յորդանանը ներկայացնող // Հորդանանին հատուկ, Հորդանանի: Լիբանանի պաքթթալի աղջկանց ախոյեան Պէյրութ.... իր կատարած երկրորդ մրցումին յաջողեցաւ արձանագրել իր առաջին յաղթանակը **յորդանանեան** Ֆուհէյս խումբին դէմ.... (Ազգակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 7):

ՅՈՐԴԱՆԱՆՅԻ, ած., Յորդանան ծնած կամ Յորդանանի մէջ ծնած ու ապրած ծնողներէ սերած // Հորդանանի բնակիչ, հորդանանցի: Վարչապետ Նեճիպ Միքաթի վարչապետարանին մէջ ընդունեց **յորդանանցի** իր պաշտօնակիցը.... (Ազգակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՅՈՒԶԱՅԱՐՈՅՅ, ած., Բուն զգացումներ արթնցնող, հոգեկան ալեկոծութիւն պատճառող // Հույզեր հարուցող՝ առաջացնող: Ոմանք կ'ընեն ստիկա՝ անձնատուր ըլլալով **յուզայարոյց** գոյներու (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 165)

ՅՈՒՂԱՐԿԱՅԻՆ, ած., Յուղարկաւորութեան արարողութեան՝ թաղման հանդէսին յատուկ, այդ արարողութեան դրոշմը ունեցող // Հուղարկավորությանը հատուկ՝ բնորոշ: Նոյն արուեստաբանը, որ մասնագէտն է (եւ սիրահարը) պարոքի այս յուղարկային կամ դամբանական ոճին, կը գրէ հետեւեալը.... (Մ. Ն., 2015, էջ 53):

ՅՈՒՇԱԼԻՃ, գ., բնստ. Յիշողութեան մէջ ապրուած փորձառութիւններու առանձին-առանձին կղզեակներ՝ լիճեր // Հուշերի լիճ, հուշեր արթնացնող լիճ: Եւ հիմա միայն ծաղկած մատեանը/ պտուղ քաղցրահամ/ յուշիկ բաց դուռը/ յուշալիճերէն ճայեր չթոշին/ ջուրը չճողփայ/ չլուայ յանկարծ ոտնահետքերը սէրերու գաղտնի (Բագ., թիւ 2 2020, էջ 22-23):

ՅՈՒՇԱԾԱՌ, գ., բնստ. Յիշատակութեան արժանի որեւէ իրադարձութեան կամ անձի պատուին տնկուած ծառ // Որևէ դէպքի՝ անձի հիշատակին նվիրված ծառ: Ծառատօնի ելոյթին / Յուշածառեր տնկելու՝ / Մէյմէկ ընձիղ մեր ձեռքին / Բարունակով կաղնիի / Բարձրանանք վեր բարձունքին.... (Թ. Ի. Ե., Ե., 2021, էջ 145):

ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ, գ., Անկիւնադարձային անցքի մը յիշատակը յաւերժացնելու համար շինուած եւ մէկ ամբողջութիւն կազմող կոթողներու եւ արձաններու խումբ // Որևէ նշանավոր դէպքի՝ անձի հիշատակին նվիրված կառույցների՝ հուշարձանների համալիր: Քանդակագործ Յակոբ Ճամպագեան պատիւ եւ բերկրանք նկատեց.... որ Արամ Մանուկեանի մահուան 100-րդ տարելիցին առիթով Մարդարապատ յուշահամալիրին մէջ եւս տեղադրուած է իր հեղինակած՝ Արամ Մանուկեանի յուշակոթողը (Ազգակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՅՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ, գ., Նշանակալի ձեռքբերումներ ունեցող հոշակաւոր մարզիկի մը անունը վառ պահելու համար անոր անունով կազմակերպուած մրցաշարք // Որևէ նշանավոր մարզիկի՝ մարզական գործչի հիշատակին նվիրված մրցաշար: Աւարտին,

տեղի ունեցած է 10 մենամարտով **յուշամրցաշար** (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՅՕԴՈՒԱԾՍԱԳՐՈՒԹԻՒՆ, գ., Յօդուածներ (հոս՝ գիտական) գրելը //Հոդվածներ (սովորաբար գիտական) գրելը: Երկրորդ յիշատակը առնչուած է իմ մասնագիտութեան վերաբերող **յօդուածագրութեան**, որ չեմ յիշեր ի՞մ նախաձեռնութեամբ, թէ՞ աւելի հաւանաբար բարեկամ պաշտօնակիցի մը թելադրութեամբ սկսայ.... (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 96):

ՆԱԽԱ-ԱՐԴԻԱԿԱՆ, [նախընտրելի գրությունն է՝ **ՆԱԽԱԱՐ-ԴԻԱԿԱՆ**] ած., **Արդի՝ 20-րդ դարէն առաջ եղած բարբերուն, նիստ ու կացին, պետութեան կազմակերպման եղանակին վերաբերող, այդ ժամանակին յատուկ // Արդիականությունը նախորդող:** Երկուքն ալ Յակոբ Օշական մեկնաբանելով կը փորձեն մտածել **նախաարդիական** Օսմանեան կայսրութեան զոհաբերական համակարգի եւ անոր արդիական իմաստով պետականացումին միջեւ կապակցութիւնը.... (Բագ, թիւ 2-3 2021, էջ 99):

ՆԱԽԱԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ, գ., Որեւէ բանի սկզբնական՝ նախկին գործածութեան ձեւը //Նախնական՝ առաջին՝ ամենավաղ գործածություն: Մասնակի ակնարկութիւններով ու ընդարձակ բացատրութիւններով օժման անուշաբոյր իւղին՝ երկնաբոյր Միւռնին, **նախագործածութեան** ձեւն ու պատրաստութեան մանրամասնութիւնները կը տեսնենք Հին Կտակարանի էջերուն մէջ (Զարթօնք, Կիրակի, 10.07. 2022)

ՆԱԽԱԴՐԱՄՍՍԻՐԱԿԱՆ, ած., Երկիրի մը տնտեսութիւնը եւ քաղաքականութիւնը վարելու դրամատիրական եղանակին նախորդող եղանակ //Դրամատիրական՝ կապիտալիստական հարաբերությունների դարաշրջանին նախորդող, մինչդրամատիրական, նախակապիտալիստական: Մինչ Արեւմուտքի մէջ, արուեստի մօ-

տեցումներուն մէջ յաճախ տիրական են մարքսիստ՝ ձախակողմեանի միտող կողմնորոշումներ, հայկականին մէջ կը յամենան ու գերիշխող կը մնան **նախադրամատիրական** չափանիշներ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 199):

ՆԱԽԱԵՂԵՌՆԵԱՆ, ան., **Ժամանակովհայութեան մեծ աղետին՝ եղեռնին առաջ եղած, մինչեւ եղեռնը տեղի ունեցած // Հայոց Մեծ եղեռնին նախորդող**: Մեծամասնաբար՝ այս շրջանակներէն գաղթած հայերով կազմուած էին Լաթաքիոյ, Անտիոքի եւ Գրըգխանի **նախաեղեռնեան** նորակազմ գաղութները (Յ. Չոլաքեան, ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԻՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ (պատմա-ազգագրական ակնարկ), <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ՆԱԽԱԼՍԵԼ, ք., **Նախօրօք՝ կանխաւ լսել, պէտք եղածէն շուտ լսել // Նախապէս լսել**: Կը նախալսես գարուններէն մինչեւ ձմեռը երկարող դաժան/ ստեղնաշարը որ իրականութիւնը կը մրճահարէ ականջիդ տակ (Բագ, թիւ 2 2020, էջ 38):

ՆԱԽԱՄԱՀ, գ., բնատ., **Մահէն, հոս՝ ցմահ բանտարկութենէն ու անէացումէն առաջ եղած ժամանակը՝ կեանքը // 1. Մահվանը նախորդող շրջանը: 2. փխք. Կյանք**: Օշական, արդարօրէն, կը խորհի **նախամահին**, այսինքն՝ կեանքի ա՛յն հանդէսին, որ իւրաքանչիւր մահապարտը կը պաշտպանէր, նախքան նկուղը, գերեզմանը հարիւր մէկ տարուան արգելափակումին (Բագ, թիւ 2-3 2021, էջ 16):

ՆԱԽԱՊԱՅՄԱՆԱՅԻՆ, ան., **Որեւէ բան սկսելէ առաջ պայմաններ թելադրող, իր պահանջներ պարտադրող // Նախապայմանին հատուկ, նախապայման պարունակող, նախապայմանով կատարվող**: Յայտնապէս այս կէտը [Զանգեզուրեան միջանցք] ոչ միայն ներառուած է Անգարայի **նախապայմանային** քաղաքակա-

նույնիան հիմնադրոյթներուն մէջ, այլ ստացած է առաջնային նշանակութիւն (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՆԱԽԱՊԱՇԱՐԵԱԼ, ան., Առանց քննելու որեւէ մէկու կամ բանի մասին անզիջող՝ յամատ կարծիք՝ համոզում ունեցող // Նախապաշարմունքներ ունեցող, նախապաշարված: Ան իր կողքին ունէր լայնախոհ հոյլ մը եկեղեցականներ, բայց **նախապաշարեալները** զօրաւոր էին. հայ եկեղեցոյ նկատմամբ անհանդուրժող էր յատկապէս Աստրախանի մետրոպոլիտը (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՆԱԽԱՏԵՍԵԼԻ, ան., Այն, ինչ հաւանական է, որ տեղի ունենայ, ենթադրելի, սպասելի // Նախատեսված: Նախատեսելի է, որ դասադուլերը եւ ընդհատումները այս կացութեան մէջ դառնան տիրական, մինչեւ որ կարելի ըլլայ այս օրակարգին շուրջ ունենալ ամբողջական եւ համալիր լուծման պատկերացում ու համապատասխան աշխատանքային գործընթաց (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՆԱԽԱՏՈՒԵԱԼ, գ., Նիւթի մը մասին նախապէս եղած տեղեկութիւններ՝ փաստեր // Նախնական՝ առաջին տվյալ: Ուրեմն կրօնքը եւ պատմութիւնը անխուսափելի են: Անոնց պիտի մօտենամ «դէմք»ի, «մոմիա»ի, «ծալք»ի եզրերուն ընդմէջէն: Ասոնց **նախատուեալներուն՝** ցրուած կերպով հանդիպեցանք արդէն իսկ ասկէ առաջ (Մ.Ն., 2015, էջ 47):

ՆԱԽԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ան., Քաղաքական նպատակներ՝ նկատառումներէ անդին՝ վեր, անոնցմէ առաջ գոյութիւն ունեցող // Քաղաքականութեանը նախորդող, քաղաքականութիւնից վեր գտնվող: ...առիթ մը ընծայուեցաւ Ժորժ Բատայի մօտ անմարդկայնութեան փորձընկալումին մասին խորհրդածելու, հասկնալու համար ի միջի այլոց թէ ի՛նչ յղացական եւ կիրառական (այսինքն **նախաքաղաքական,** յետոյ բացայայտ կերպով կրօնական, ենթա-

դրաբար նիցչեական կրօնականութեամբ մը) միջոցներով Բատայլը եւ իր կողմնակիցները դէմ կը դնէին ժամանակաշրջանի ֆաշակա-նութեան (Մ.Ն., 2015, էջ 17):

ՆԱՐՏԱԽԱՂ, գ., **Զատերով եւ տասնհինգ քարերով երկու հոգիով խաղցուող խաղ, տապալի // Նարդի սեղանի խաղը: ...** Խարդախեր էր նարտախաղին քուէն՝ իր հօրը հոգիին վրայ գրաւի գալէ ետք.... (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 240)

ՆԱԻՈՒԺ, գ., **Պետութեան մը զօրքին ծովային ուժը՝ բաղկացած զինուորական պզտիկ եւ մեծ նաւերէ, սուզանաւերէ, նաւատորմիդ // Ռազմածովային նավատորմ: Չէի գիտեր, սակայն, թէ ուսումը նախ ստացած էր զինուորական գոլէժին մէջ, ծառայած էր նաւուժին մէջ....** (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 53):

ՆԵՏԵՐԼԱՆՏՅԻ, ած., **Հոլանտա ծնած կամ հոլանտացի ծնողներէ սերած, այդ պետութեան քաղաքացի եղող // Նիդերլանդցի, հոլանդացի: ...**Պարսելոնայի այժմու գլխաւոր մարզիչ, նետերլանդցի Ռոնալտ ֆէոմանի պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ այս տարեշրջանի աւարտը.... (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՆԵՐԴՐՈՂ, ած., **Եկամտոյի ակնկալիքով որեւէ գործի զարգացման համար նիւթական աջակցութիւն ցուցաբերող // 1. Ենթ. դրբ. Ներդնել-ի: 2. տնտգ. Որեւէ նպատակի՝ ձեռնարկութեան նն համար որոշակի գումար հատկացնող: ...**Ալէքս ըսած էր, որ ներդրողի մը հետ կարճ ժողով մը ունէր (Բագ., թիւ 3 2020, էջ 9):

ՆԵՐԻՄԱՅՈՒՄ, գ., **Ենթազիտակցօրէն՝ բնագօրէն ընկալուած ըլլալը //Ներքուստ իմացում, ներըմբռնում: Դուք....** կ'ապրէիք ներիմացումը նոր տեսիլքի մը. ձեր մէջ արդէն կ'ուրուագծուէր մեր-

ծումը Արեւելք/Արեւմուտք, հայապահպանում/ձուլում մանիքեական երկուութեան (Բագ, թիւ 2-3 2021, էջ 19):

ՆԵՐՅԱՅՏ, ան., Քօղարկուած, առաջին հայեացքէն անորոշ աղօտ, սակայն յայտնաբերելի // Ներքուստ հայտնի, ոչ բացահայտ, ծածուկ: Գիտնալու է որ երկի մը ներյայտ ու բացայայտ յղումները մէկ չեն, այլ են բազմաթիւ (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈՒ, Իմացոթյուն գրադարան՝ Անտարես, 2017, էջ 36):

ՆԵՐՈՒՔՐԱՆԱԿԱՆ, ան., Ուքրանիոյ պետութեան սահմաններէն ներս եղող խնդիրներու առնչուող, անոնց վերաբերող // Ուքրահինայի ներքին խնդիրներին՝ հարաբերություններին վերաբերող: Ըստ հաղորդագրութեան, Լաւրով եւ Մաուրեր հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին միտքեր փոխանակած են աշխարհի տարբեր շրջաններու մէջ ճգնաժամային արձագանգման նիւթերու շուրջ, ներառեալ Սուրիոյ, Աֆղանիստանի, Միանմարի, **ներուքրանական** եւ դարաբաղեան հակամարտութիւններու գօտիներուն մէջ մարդասիրական կացութիւնը (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՆԻԶԱԿԱՆԱԼ, բ. փխբ., Նիզակի՝ ցիցի պէս տնկուիլ եւ անշարժ կանգնիլ, քարանայ, պրկուիլ // Նիզակների նման վերցցվել: Անոր կարկառուն թելերը երեք անգամ **նիզակացան** ջղաձգօրէն, շարժելով օդին մէջ այլանդակ ու կարծրացած մատներով ձեռքեր (Օսգար Ուայլը, Տորիլըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 261):

ՆԻԿԵՐԻԱՅԻ, ան., Նիկերիա պետութեան մէջ ծնած՝ քաղաքացի, հոն ապրող կամ նման ծնողներէ սերած // Նիզերիայի բնակիչ, նիզերիացի: Մրցումին միակ կողմը նշանակեց **նիկերիացի** յառաջապահ Վիքթոր Օսիմէն, 81-րդ վայրկեանին (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՆԻԻԹԱԲԱՐՈՅԱԿԱՆ, ան., Միեւնոյն ժամանակ դրամական աջակցութեան եւ աշխատանքի՝ վաստակի արժէքաւորումին վերաբերող //Նյութական և բարոյական: Չմոռնանք սակայն, որ մամուլը կ'ապրի շնորհիւ զայն կեանքի կոչողներու նիւթաբարոյական նեցուկին (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՆԿԱՐԱԳՐԱՅԻՆ, ան., Իրաքանչիւր անհատի նկարագիրին, միայն անոր յատուկ բնոյթին՝ էութեանը վերաբերող //Նկարագրին հատուկ՝ բնորոշ: Աշխարհի վրայ կ'ուզեմ մարդկայնութիւն աւելցնել. եթէ ժպիտ մը, նայուածք մը, նկարագրային գիծ մը կըրցայ յայտնաբերել տիպարին մէջ ու անով ջերմութիւն փոխանցել ուրիշներու... ապա կըկարծեմ մոր հասած կ'ըլլամ նպատակիս (Բագին, 2010, 1, էջ 90):

ՆՄԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ*, թեան, գ., Երեւոյթի մը այս կամ այն աննկատ առանձնայատկութիւնը աւելի յայտնի՝ ճանչցուած մէկ ուրիշով բացատրելը, բաղդատութիւն // Համեմատություն: -Տգեղութիւնն, ուրեմն, մէկն է եօթը մահացու մեղքերէն,- գոչեց Դքսուհին: -Ո՞ր կը մնայ, այն ատեն, խոլորձներու մասին կատարած քու նմանաբանութիւնդ (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուր, 1992, էջ 319)

ՆՇԴԲԱԿԵԼ, Բ., Վիրաբուժական սուր գործիքով կտրել // Փոքր նշտարով հատել՝ կտրել, նշտարել: Նշդակելու եւ ցաւը արմատախիլ ընելու համար ամուր ձեռքեր ու ջիղեր էին հարկաւոր (Բագին, 2010, 1, էջ 26):

ՆՇԽԱՐԱՅԻՆ, ան., 1. Սուրբի մը մատունքներուն՝ նշխարներուն կամ արժէքաւոր մէկէ կամ դէպքէ մնացած յիշատակին՝ առարկային ուրոյն, անոնց յատկացուած // 1. Նշխարին հատուկ՝ բնորոշ, նշխարի: 2. փխբ. Որևէ թանկագին հիշատակի՝ մնացորդի հատուկ՝ բնորոշ, դրանք պարունակող: Եւ Սեւիլիի մէջ գտայ նշխարային պահարանը, barocco ոճով կառուցուած ու զարդարուած

Ժանսենական եկեղեցիի մը մէջ, պահարան մը որ գետնէն մինչեւ առաստաղ կը բարձրանար (Մ.Ն., 2015, էջ 39):

ՆՈՅՆԱՇԵՇՏ, ան., **Բառի նոյն շեշտը ունեցող, հոս՝ մօտաւորապէս նոյն իմաստը ունեցող, նոյն տեսակէտները արտայայտող // 1. Նոյն շեշտը ունեցող՝ կրող: 2. փխբ. Նոյն կարևորությունն ունեցող: Նոյնաշեշտ** ելոյթներ կարելի է գտնել արդէն 30ական այլ գրագէտներու մօտ, անշուշտ ֆրանսահայ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 20):

ՆՈՐԱԲԱՆԵԼ, ք., **Նոր բառ ստեղծել, հին բառի մը նոր իմաստ տալ // Նոր խոսք՝ բառ ասել:** Բնականութիւնը, «Վարք Մաշտոցի»ին մէջ.... չունի բնաւ ներկայ իմաստը.... Կորին հաւանաբար կը նորաբանէ եւ կը յուշէ բունի հետ կապ, ինչպէս բնակի հետ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 35):

ՆՈՐԱԶԵԻԱՍԷՐ, ան., **Նոր ձեռով հագուիլը, իր օրին ընդունուած արդուգարդի ճաշակին հետեւեող, նորոյթը կարելորդ՝ սիրող // Նորաձևությունն սիրող, ամեն նորաձևության հետամուտ:** Տաղաւարը լայն ճանաչում ունէր նորաձեւասէր փարիզցիներու շրջանին եւ լաւ եկամտուներ կ'ապահովէր ընտանիքին (Զարթօնք, Շարաթ, 16.07.2022):

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ, ան., **Պաշտօն մը նոր ստանձնած, այն նոր սկսած // Նոր նշանակված, պաշտոնավարումը նոր սկսած:** Հանդիպումին ընթացքին Վ. Օհանեան-Գեորգեան նախագահ Աունին յանձնեց.... երիտասարդական խորհրդարանի մը կազմութեան նախագիծը, որ կարելոր ծրագիր մըն է եւ որուն իրականացման համար նորանշանակ նախարարէն խնդրած է հետապնդել զայն (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՆՈՐԱՕՕ, ան., **Միւռնով նոր օծուած՝ նուիրագործուած՝ սրբազան շնորհքի արժանացած // Նոր օծված:** Միւռնի միջոցաւ Սուրբ Հոգին կը հանգչի մեր վրայ, իսկ դրոշմի խորհուրդով Ամե-

նասուրբը կը մաքրէ մարդուն մարմնի անդամները եւ կը վերածէ **նորած** տաճարի (Զարթօնք, Կիրակի, 10.07.2022)

ՆՈՐԵՓ, ան., **Նոր եփած՝ տաք՝ թարմ // Նոր՝ թարմ եփված:** Հիները դափնի ծառերուն տակ դափնիի հատիկներով մանղալա կը խաղային.... իսկ մասարայի ատեն, **նորեփ** ռուպէն "փրփէօր" ուտելու դգալը դափնի տերեւով կը շինէին.... (Յ. Չոլաքեան, ԴԱՓ-ՆԻ...ԿԱՍԼԻ, <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ՆՈՐՊՂԱՏՈՆՆԱԿԱՆ, գ., ան., **Քրիստոսէ ետք 3-րդ դարուն երեւան եկած Պղատոնական փիլիսոփայութեան մէկ փոփոխակի հետեւող, այդ ուսմունքը դաւանող իմաստասէր // Անտիկ նորալատոնական փիլիսոփայության հետևորդ:** Այս գիտնականները ոչ միայն հաւաքաբանական **նորալատոնականներ** (eclectic Neoplatonists) էին, այլ նաեւ ունէին յստակ խորհրդապաշտական եւ իսմայիլական աշխարհահայեացք եւ բնագանցութիւն (metaphysics) (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՆՈՐՎԵԿԻԱՅԻ, ան., **Անձ, որ ծնունդով Նորվեկիոյ ժողորդին կը պատկանի, Նորվեկիոյ մէջ ծնած՝ բնիկ՝ պետութեան քաղաքացի // Նորվեգիայում ծնված՝ ապրող անձ, նորվեգացի:** Պարագլուխի դիրքին վրայ կը շարունակէ մնալ աշխարհի **նորվեկիացի** գործող ախոյեան Մակնուս Քարլսըն (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՆՈՒԻՐԱՀԱԻԱՔՈՒՄ, քման և ի, գ., **Կարիքաւորներուն օգնելու՝ աջակցելու նպատակով նուէրներ (գլխաւորապէս դրամական) ժողվելը, նուիրահաւաք ընելը // Նվիրատվություն՝ նվերներ հավաքելը:** [Պատրիարք] թելադրութիւններ ըրաւ կատարելի **նուիրահաւաքման**. ինչպէս նաեւ մատակարարութեան եւ վարչութեան համար մշակելի ծրագիրներու մասին (Նոր Մարմարա, 08 Յուլիս 2022, Ուրբաթ):

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ, գ., Մնունդի՝ ուտեստի համար ապրանք՝ սննդանիւթ ծախող խանութ //Նպարեղենի՝ պարենային խանութ: Մէկուն ակնոցավաճառատունը, միւսին նպարավաճառատունը, երրորդի մը կառատունը, չորրորդի մը աշխատանոցը կամ ճաշարանը եւ այլն (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 66):

ՆԲԲԱԹԵԼ*, գ., փխբ. Նուրբ ջիւ՝ ջիւ, երակ // փխբ. Ջիւ, նյարդ, նյարդաթել:... Պառկեր էր Տորիըն Կրէյ, բազմոցի մը վրայ երկարած, ու կը սաստկանար սարսափը՝ իւրաքանչիւր նրբաթելին մէջ իր թրթռացող մարմինին (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուր, 1992, էջ 338):

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ, ած., Շարժապատկերի արուեստին ուրոյն, անոր բնոյթին՝ էութեանը բնորոշ //Շարժապատկերին հատուկ՝ բնորոշ, շարժանկարային, կինոյի: Մշակոյթի նախարար... ներողութիւն, պիտի ըսէի տեղակալ Արա Խզմալեան դրական կը համարէ քամերայի մուտքը: Կ'ենթադրէ, որ թատրոնը այդպիսով կը ստանայ յաւելեալ շարժապատկերային հմայք (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՇԱՐԺԱՓԱՌԱՏՕՆ, գ., Շարժապատկերի արուեստին նուիրուած փառատօն՝ հանդիսութիւններու շարք //Շարժանկարների փառատոն, կինոփառատոն: «Ոսկէ ծիրան» միջազգային շարժափառատօնը Երեւանի մէջ տեղի ունեցող ամէնէն մեծ մշակութային իրադարձութիւններէն է (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՇԱՐԺԸՆԹԱՅ, գ., Փոփոխութեան՝ զարգացումի՝ աճի ուղին՝ ընթացքը //Շարժման ընթացքը, գործընթաց: Երեւակայութեան շուրջ ուսմունքը «պատկեր»ի էութիւնն է, որ կ'ուզէ բացայայտել, որոշ իմաստով մը, իրերու պատկերայնութիւնը, կամ պատկերային պահը առարկայի կազմութեան ներյայտ շարժընթացին մէջ (Մ.Ն., 2015, էջ 70):

ՇԱՐԺՐՆԹԱՑՔ, գ., **Տե՛ս շարժընթաց:** Այս շարժընթացը սահուն շարունակականությամբ պետք չէ որ հասկնանք (Բագ, թիւ 2-3 2021, էջ 102):

ՇԻՆԵԼԱՁԵԻ, գ., **Որեւէ բան կառուցելու՝ շինելու եղանակը՝ ձեռք չէնք կառուցելու** // **Շինելու՝ շինարարության ձև՝ եղանակ:** Փոխուեցան ոչ միայն շինանիւթերը, այլև **շինելաձեւերը** (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Մոնթրէալ, 2021, էջ 14):

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ, գ., **Շնորհատրելու նպատակով կազմակերպուած հանդիսութիւն՝ հանրութեանը հետաքրքրող գործ մը կատարած ըլլալու համար** // **Նոր որևէ բանի հանրայնորեն ներկայացնելը:** ... Համազգայինի Երեւանի գրասենեակին նախաձեռնությամբ տեղի ունեցաւ արցախեան վերջին պատերազմին զոհուած հերոսներուն նուիրուած «Իմ ընկեր» երգին **շնորհահանդէսը** (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ՇՈՂԱՍԼԱՔ, գ., բնատ. **Սլաքի պէս արեւի՝ լոյսի բարակ եւ սուր ճառագայթ** // **Արեգակի՝ լոյսի սուրբ սլաքածն շերտ:** ...Մութին գտած թէ արարած **շողասլաքը/** կոյրի մտքին պայծառութիւն կը բանայ/ ու կը տեղայ/ երկինքէն/ չսպասուածը/ սեղանին... (Պարութեան Նորա, Զեո (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 25)):

ՇՈՃԵԲՈՅՐ, ան., **Սոճիի՝ շոճիի անուշ հոտ ունեցող, այդ ծառի բոյրով լի** // **Սոճի ծառի բուրմունք ունեցող, սոճեբույր:** Ձմեռնային առաւօտեան այդ վճիտ ու **շոճեբույր** օդին մէջ կար բան մը, որ կարծես կը վերադարձնէր իրեն իր զուարթութիւնն ու տենչը կեանքի (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէրուր, 1992, էջ 329)

ՇՌԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Հարստության անհարկի մսխում՝ վատնում, բանի մը չափեն աւելի զարդարուած ըլլալը // Շոայլում, ավելորդ շոայլություն:** Մանաւանդ հոս, Փարիզի մէջ, ուր հարստութիւնը երբեմն կը հոսի հեղեղի պէս, միշտ ալ պիտի գանէի **շոայլաբանութիւններէն**, բայց միաժամանակ պիտի զօրանար յարումս՝ հանդէպ գեղեցիկին (Շահան Շահնուր, Լրագրական Էջեր, Երեւան, 2016, էջ 20):

ՇՌԱՅԼԵԼԻՑ, ան., **Անհտանում՝ անսպառ հարստութեամբ լեցուն, փարթամ, ճոխ // Շոայլություններով լեցուն՝ լցված:** Նիւ Եորք քաղաքը առլցուն է անվերջ հակասութիւններով. **շոայլելից** հարստութեան կողքին կարելի է գտնել կարիքաւորներու բանակ մը (Զարթօնք, Հինգշաբթի, 14.07.2022):

ՇՐՁԱՆԱԿԱՅԻՆ, ան., **Երեւոյթի մը ոչ թէ եւութեանը՝ միջուկին, այլ այն պատող ծիրին վերաբերող, հոս՝ նշանակութենէ գուրկ, ուշադրութիւն չգրաւող // փխբ. Որնէ բանի սահմանների եզրին գտնվող, ոչ կենտրոնական, ոչ կարևոր:** Հայոց պատմութիւնները պէտք էր որ ըլլային հայ իրողական վիճակին եւ փորձառութեանց ցոլացումները՝ առանց գոյացապաշտութեան (essentialism) եւ հայակեդրոնացումի (armenocentrism), որ նշանակէ այսպէս կոչուած, «հայկական բաները» նկատել կեդրոնական, իսկ մնացեալը՝ **շրջանակային** (peripheral), երկրորդական եւ ոչ կենսական (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՇՕՇԱՓԵԼԻԱԿԱՆԱՑՆԵԼ, բ., փխբ. **Զգացում մը, ներքին յուզում մը առարկայական, հետեւաբար զայն գիտակցիլը եւ քննելի դարձնելը // Շոշափելի՝ իրական՝ առարկայական դարձնել:** Մանաւանդ գոյնի ու գիծի միջոցաւ **շոշափելիականացուց** զգացումներ ու զգացական եւ զգայական պոռթկումները անցելապաշտութեամբ օրօրուող Եղեռնի յիսնամեակը լիբանանահայ սերունդին (Բագին, 2010, 1, էջ 83):

ՈՃՐԱԳՈՐԾՈՒՄ, գ., ՈՃիր՝ եղեռն կատարելը, ուրիշի մը կեանքը բռնութեամբ խլելը // ՈՃիր գործելը, ոճրագործություն: Հետեւաբար, երբ վերապրողը տեղի կու տայ իրապաշտ, փաստակեղրոն պատմութեան պահանջներուն եւ անոր միջոցներով կը փորձէ վերապրումի իր «փորձառութիւնը» պատմել եւ պատմականացնել.... ան անգամ մը եւս կը հնազանդի **ոճրագործումի** տրամաբանութեան խորքին նստած ապացուցելու պահանջին եւ նոյն ստեն կը հերքէ վերապրումի իր իսկ «փորձառութիւնը» (Բագ., թիւ 2-3 2021, էջ 80):

ՈՍԿԵՆԱՐՕՏ, ած., գ., Ոսկեգոյն թելերով հիւսք՝ ժայալէն, որ կը զարդարէ զայն դնողը, անոր արժանացողը // Ոսկեթել նարոտով պարուրված: Երբ բնութիւնը համայն/ Վեհապանձ էր քեզի/ Հազար ու բիւր վարդածիծաղ զարուններ,/ Որոնք պիտի պսակէին օրերը քու / **Ոսկենարօտ** վայելչութեամբ...: (Բագին, 2010, 1, էջ 38):

ՈՍԿԵՎԱՅՐ, գ., 1. Ոսկիով հարուստ վայր՝ տեղ: 2. փխր. Քաղաքի մը անխնամ մնացած թաղերը // 1. Ոսկու հանքավայր: 2. փխր. Քաղաքի ետնախորշերը: Պետք չէ՛ր բնաւ, որ երթար ոսկեվայրերը: Գարշելի՛ տեղեր են անոնք, ուր մարդիկ կը հարբենան, գէշ լեզու կը գործածեն ու կը սպաննեն զիրար, զինետուններու մէջ (Օսգար Ուայլը, Տորիլըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 106):

ՈՍԿՐԱԳՈՒՆԵՐ, գ., 1. Ոսկորներու կոյտ: 2. փխր. Մաշած ու ծիրած ըլլարը, հատնիլը, կաշի ու ոսկոր մնալը // 1. Ոսկորների գունդ: 2. փխր. Խիստ նիհար՝ ոսկրացած մարմին: Խնդալով, կատակելով.... հասցուցած էի այն միջանցքները, ուրկէ փսփսալով կ'անցնին, ոչ թէ որպէսզի չխանգարեն անկողնին մէջ սաւանին նոյնացած **ոսկրագունդը**, այլ իբրեւ յարգանք անոր վերջին ոտնաձայներէն կախուած մոռցուելիք անցեալին (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 32):

ՈՍԿՐՏՈՒՔ, գ., **Ոսկորներ, հստ՝ մասունք, սուրբի մը աճիւնի մնացորդները // Ոսկորներ:** Երբ նշխարատուփը կը ներկայանայ լուսանկարով, ամեն ինչ նոյնն է տեսողութեան համար, ամեն ինչ նոյնն է, բացի ենթադրեալ սուրբերու **ոսկրտուքէն** (Մ.Ն., 2015, էջ 43):

ՈՐԱԿԱՊԷՍ, ան., **Ըստ որակի, ըստ այն յատկանիշների, որոնք երեւոյթի մը մակարդակը կ'որոշեն // Որակի վրա հիմնված, որակով:** Յառաջիկայ ժամանակաշրջանին Սուրիոյ մէջ ահաբեկչութեան դէմ պայքարը **որակապէս** նոր մակարդակի պիտի հասնի (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՈՐՄՆԱԳՈՐԳ, եր, գ. **Պատը զարդարելու կամ ծածկելու համար գործուած գորգ // Պատին կախելու կախած գորգ:** Կը սարսռար, եթէ հովը պզտիկ մը շարժեր որմնագորգերը (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 327):

ՈՒԺՆԼԹԱՅՔ, գ., **Տակաւին աճող՝ փոփոխուող ամբողջութեան մը բաղկացուցիչ մասնիկներու մէկը միւսի վրայ ունեցած ազդեցութիւնը // Զարգացման՝ փոփոխությունների ընթացքը, դինամիկա:** Բնագիրները միշտ ներկայացուած՝ ըստ իրենց պատմական հիմնավայրերուն (context) եւ **ուժընթացքին** (dynamics) եւ իբրեւ մասեր անոնց (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՈՒԽՏԱԿԻՐ, ան., **Վեհ բաղձանքի մը իրականանալուն համար անխախտ խոստում մը ընող՝ ըրած // Ուխտ ունեցող՝ կրող, ուխտի գնացող:** Ու ես պատկերացուցի, որ Ստեփանակերտի կից, դէպի Պապիկի եւ Մամիկի յուշարձան բարձրացող մեծ հօրը հօր փոխարէն հիմա այս **ուխտակիր** ծոռնուհին կը բարձրանայ... (Յ. Չոլաքեան, «ԿԱՐՄԻՐ ՇՈՒԿԱՅԻ ԱՂԶԻԿԸ»), <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ՈՒՂՂԱՆՇԻՉ, ան., Ուղի ցոյց տուող, հոս՝ նիւթի մը հետագօտութեան ընթացքին ուղղութիւն ցոյց տուող կեդրոնական յղացքները // Ուղղանշող, ուղղութիւնը նշող, կողմնորոշիչ: Բայց որպէսզի ուղղանշիչ յղացքը կարենայ իր պաշտօնը կատարել, պէտք է զայն ազատել ամէն ինչէ՝ որ արգելք կ'ըլլայ երեւոյթը հասկնալու (Բագ, թիւ 2-3 2021, էջ 172):

ՈՒՂՏԱԾԻՏԻԿ, գ., Պզտիկ թռչուն մը // Մի տեսակ փոքրիկ թռչնակ: Օգոստոսէն Հոկտեմբեր կը բռնէին գլխաւորաբար մանր թռչուններ՝ թըզկա (թզկի).... ըզտը չըտտէկ (ուտսածիտիկ).... (Յ. Չոլաքեան, ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԲԸ),
<https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ՈՒՄԱՅԱԿԱՆ, ան., Արաբական Ումայյական պետութեան առնչուող, այդ պետութեանը վերաբերող // Հին արաբական Ումայյիների տոհմին վերաբերող՝ հասուկ: Սեբէոսի պատմութեան մէջ առաջին անգամ յիշատակուած Մուաւիյայի (661-ին՝ ումայյական առաջին խալիֆան) «խաղաղութեան ուխտէն» (652) մինչէւ օսմանեան պետութեան, այսպէս կոչուած, «Էօմէրի ուխտ»-ին «վերահաստատումը».... հաւաքած եմ իմ թարգմանութեամբ (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՈՒՇԱՅԱԾՈՒԹԻԻՆ, գ., Բանկ մը ուշացած ըլլալը, բանի մը ճիշդ ատենին չհասնիլը // Ուշացած լինելը, ուշանալը: Որոնումներու, սպասումներու, հարցումներու օրեր, որոնք կերպով մըն ալ իրենց հետքը կը թողէին մեր սերունդի ամբողջ հմայքին, ուշացածութեան զգացումին ու մերժուած ըլլալու մեծ «հաճոյք»ին վրայ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 67):

ՈՒՍՈՒՅՉԱԿԱԶՄ, գ., Դպրոցի մը ուսուցիչներու ամբողջութիւնը // Ուսուցչական կազմ, ուսուցիչների ամբողջությունը: Այսօրուան դրութեամբ առկայ մարտահրաւերները բազմաթիւ են. ուսուցչակազմի եւ պաշտօնէութեանց ամսականներու աննախըն-

թաց արժեզրկում եւ տակաւին՝ մտահոգութիւններու եւ դժուարութիւններու շարքը կարելի է երկարել.... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՈՒՔՐԱՆՍԱԿԱՆ, ան., **Ուքրանիոյ պետութեան յատուկ, անոր պատկանող՝ վերաբերող // Ուկրաինայի հատուկ, ուկրաինական:** Իտալական Ա. Էս. Ռոմա ֆուլթայոլի ակումբը.... Երէկ գիշեր իր կատարած երկրորդ մրցումին եւս յաղթանակ արձանագրեց, այս անգամ **ուքրանական** Զորիայի դէմ, 3-0 արդիւնքով (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՈՒՔՐԱՆՍԱՅԻ, ան., **Անձ, որ ծնունդով Ուքրանիոյ ժողորդին կը պատկանի, Ուքրանիոյ մէջ ծնած՝ բնիկ՝ պետութեան քաղաքացի // Ուկրաինայում ծնված՝ բնակվող (մարդ), ուկրաինացի:** Հայ մարզիկը իր յաղթանակը արձանագրեց **ուքրանացի** Քրիսթինա Եուսչուքի դէմ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՉԵԽՈՎԱՇՈՒՆՉ, ան., դիպվ. Ռուս գրող Ա. Չեխովի ոգիով լեցուն՝ **ողողուած, անոր ոճին դրոշմը ունեցող // Ռուս գրող Ա. Չեխովի ոճին՝ աշխարհընկալմանը հատուկ՝ բնորոշ:** Դուրեան անձամբ կը կարդայ **չեխովաշունչ** բնագրերը (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 6):

ՉԵԽՈՎԵԱՆ, ան., **Ա. Չեխովի գեղարուեստական ոճին բնորոշ // Ռուս գրող Ա. Չեխովի ստեղծագործությանը բնորոշ:** Իմ դիտած երեսուն վարկեան տետր շուրջ վեց երեսոյթները հիմնուած էին Ստեփան Զօրեանի (1889-1967) եւ այլ **չեխովեան** թախծոտ հիւմըրի պատմուածներու վրայ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 6):

ՉՕՊԱՆԵԱՆԱԳԷՏ, ի, գ. **Հայ գրող, հանրային գործիչ Արշակ Չօպանեանի կեանքի եւ ստեղծագործութիւններու գիտակ, զանոնք հետազօտող // Հայ գրող, քննադատ, հասարակական գործիչ Ա. Չօպանյանի ստեղծագործությունը և գործունեությունը ուսումնա-**

սիրող մասնագետ: Տրինեայեան ներկաներուն փոխանցեց գիտա-
ժողովին եօթներորդ մասնակիցին՝ թէքէանագէտ և չօպանեանա-
գէտ.... Դոկտ. Վաչէ Ղազարեանի ողջոյնները գիտաժողովի մաս-
նակիցներուն («Աղթամար» գրական, մշակութային, հասարակա-
կան, քաղաքական օրաթերթ, 2022թ., Սեպտեմբեր 28)

ՊԱԼՔԱՆԵԱՆ, ած., **Պայքանեան թերակղզիին յատուկ, անոր
հետ կապուած՝ առնչուող, հոն տեղի ունեցող՝ ունեցած // Բալկան-
յան թերակղզու պետություններին հատուկ վերաբերող, Բալկան-
ներում տեղի ունեցած: Պայքանեան** երկու եւ Ա. Համաշխարհային
պատերազմներէն ետք Յունաստան ստացաւ ներկայի իր աշխար-
հագրական տեսքը.... (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ, ած., **Իր իսկ իրաւունքներուն տէր
եղող, զանոնք պահանջող, հոս՝ հայութեան արդար իրաւունքները
պաշտպանող // Պահանջատիրոջանը՝ պահանջատերին հատուկ,
Հայ դատին վերաբերող:** «Գէորգ Հաճեան իր.... երգերով կը
դաստիարակէր, ան իր զմայլելի երգեցողութեամբ ոչ միայն հայ
կոմիտասեան երաժշտութեան հազուագիւտ գեղեցկութիւնը կը
հրամցներ, այլ նաեւ հայ ժողովուրդի պահանջատիրական ոգին կը
փառաբաներ.... (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ՊԱՀԲԵՅՆԵԱՆ, ած., **Պահրէյնի թագաւորութեանը առնչուող՝
պատկանող, զայն ներկայացնող // Բահրէյնին հատուկ՝ պատկա-
նող, Բահրէյնի:**Դ. խմբակին մաս կազմող Պէյրութ երէկ արձա-
նագրեց իր երրորդ յաջորդական յաղթանակը, երբ 99-88 արդիւն-
քով պարտութեան մատնեց պահրէյնեան Սանաման (Ազդակ, 4
Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ, ած., **Պաղեստինի պետութեան (տակաւին
չօրինականացած), անոր ժողովուրդին վերաբերող, անոնց յատուկ //
Պաղեստինին պաղեստինցիներին հատուկ, պաղեստինցիների:
Միւֆթի Տրրիան եւ շէյխ Ախթարի ընդգծեցին նաեւ իսլամական**

միասնականութիւնը ամրապնդելու, ինչպէս նաեւ իսլամական եւ **պաղեստինեան** դիմադրութիւնները հզօրացնելու կարեւորութիւնը.... (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 2):

ՊԱՂԵՍՏԻՆՑԻ, գ., **Անձ, որ ծնունդով Պաղեստինի ժողորդին կը պատկանի, Պաղեստինի մէջ ծնած՝ բնիկ՝ պետութեան քաղաքացի // Պաղեստին տարածաշրջանի բնակիչ:** Ռայի պատրիարքը ընդգծեց նաեւ, որ զիրենք կը մտահոգէ նաեւ սուրիացի տեղահանուածներուն ու **պաղեստինցի** գաղթականներուն ընթացքը եւ Լիբանանի վրայ անոնց պարտադրած ծանր բեռը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7): - էջ 7

ՊԱՅԹԻԻՆԱՎՏԱՆԳ, ան., **փխբ. Անակնկալ՝ բուռն արտայայտուելու կարելիութիւնը ունեցող, բոլորքուելու տրամադիր, խռովայոյզ // փխբ. Վտանգավոր:** Դուն կը նախազգաս բոլոր զիրերը **պայթիւնավտանգ/** դուն կը նախատեսես աղէտը թռչուններու սողուններու զեռուններու անօրինակ ելոյթներով (Բագ., թիւ 2 2020, էջ 37):

ՊԱՆԴՈՎԱՊԵՏՈՒԶԻ, գ., **Պանդկի՝ իջեանատունի մը տիրուհին, անոր տէրը // Կին՝ Աղջիկ պանդկապետ, պանդկապանուհի:** Պանդկապետուհին աւելի կատղեցաւ, բայց վիճաբանութեան ամենէն տաք կէտին վրայ՝ յանկարծ դուրս նետուեցաւ սենեակէն, առարկելով թէ բոպէ մը իսկ աւելի եթէ մնայ հոն, ձեռքէն դժբախտութիւն մը պիտի ելլէ (Շահան Շահնուր, Գեղարուեստական Գործեր, Երեւան, 2016, էջ 297):

ՊԱՍՔԵԹՊՈՒԼ, գ., **Մարգական խմբային խաղ, երբ ախոյեանները կը փորձեն խաղի գնդակը սիւնի մը վրայ բարձր դրուած ցանցը մտցնել եւ կէտեր շահիլ // Մարգական բասկետբոլ խաղը:** Լիբանանի պասքեթպոլի աղջկանց ախոյեան Պէրոյթ.... իր կատարած երկրորդ մրցումին յաջողեցաւ արձանագրել իր առաջին յաղթանակը.... (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 7):

ՊԱՏԱՆԵԴԱԲՁՈՒԹԻՒՆ, գ., բնստ. Պատանենական տարիներուն ապրածները, զգացածները յիշելը, անոնց դառնալը // Մտովի վերադարձ դեպի պատանություն՝ պատանեկան հայացքների և պահվածքի: Թոյլ տուի, չմիջամտեցի, կը յայտնագործէի միայն իր կոպտութիւններուն մասին խօսիլ տուող այն կնոջ պատանեդարձութիւնը (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 37)):

ՊԱՏԵԱՆԱՅԻՆ, անծ., փխբ. Կողիացած, աշխարհին հետ կապերը կտրած, լճացած // փխբ. Ներփակված, պատենավոր: Իրողապէս հայոց պատմական եւ մշակութային զարգացումն ու գոյատեւումը ուղղակիօրէն առնչուած են իրենց ունեցած ուժական միջգործօնութեանց (interaction) եւ ոչ թէ պատենային գոյութեան, կամ խորհրդաւոր էութեան (essence) մը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՊԱՏԿԵՐԱԿԱՅԱՍԿԱՆ, անծ., Անիրական, մտացածին, փաստերու վրայ չհիմնուած // Պատկերացումին՝ երևակայությանը հատուկ՝ բնորոշ, երևակայական: Երկար մեջբերեցի, որովհետեւ բացատրուածը երևակայական, պատկերակայական (imaginaire) յարաբերութիւնն է օտարին հետ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 227):

ՊԱՏԿԵՐԱԿԱՅԱՑՆԵԼ, բ., Տեղի ունեցած դէպք մը պատմել՝ զայն փոխելով եւ անոր մտացածին փաստեր աւելցնելով //Իբրև պատկեր կայացնել, հորինել: Ուրեմն, դէպքերու մասին խօսելու ատեն, անխուսափելի ըլլալու է զանոնք պատկերակայացնելը (to fictionalize) (Բագ, թիւ 2-3 2021, էջ 174):

ՊԱՏԿԵՐԱԿԱՅԱՑՈՒՄ, գ., Տեղի ունեցած դէպք մը փոխելով եւ անոր մտացածին փաստեր աւելցնելով պատմելը // Պատկերակայացնելը, պատկերակայանալը, հորինում: Այն առումով՝ թէ «պատկերակայացում» կը նշանակէ անոնց վրայ ձգել վերկայացում

մը (representation), որ կրնաս յետոյ որպէս հիմք գործածել (Բագ, թիւ 2-3 2021, էջ 174):

ՊԱՏԿԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ, գ., Անիրական՝ մտացածին՝ փաստերու վրայ հիմնուած չըլլալը, պատկերայնութիւն // Իբրև պատկեր կայանալը, պատկերի կայացումը: Այդ հակասական երեւութաբանութիւնն էր կարծեմ 1949ին Բլանշոյին փորձածը, իր վեպերով ու պատումներով, պատկերի ու **պատկերակայութեան** մասին 1955ի յաւելուածը գրելէն քանի մը տարի առաջ արդէն իսկ (Մ.Ն., 2015, էջ 26):

ՊԱՏԿԵՐԱԿԵՐՊՈՒՄ, գ., Պատկերներով՝ խորհրդանիշներով ձեւ ու կերպարանք առած՝ մարմնաւորուած՝ գոյացած // Պատկերումը, պատկերելը, պատկերակերպելը: Զգացած է վերջին անգամ.... այդ հայրենիքին խուլ, խորունկ, անվերածելի **պատկերակերպումները**, որոնք իր էջերուն մէջ կը մնան ընդմիշտ շահուած (Բագ, թիւ 2-3 2021, էջ 5):

ՊԱՏԿԵՐԱԿԵՐՏԱԿԱՆ, ած., Գեղարուեստական պատկերներ յօրինելու՝ ստեղծելու դրոշմը՝ իւրայատկութիւնը ունեցող // (Գեղարվեստական) պատկերներ կերտող: Յաջորդը «Հեթանոս Երգեր» 1912-ին: Այս շարքը՝ **պատկերակերտական** ցանց մը, բազմակողմանի ու յարատեւ հմայիչ: Կը դնէ երեւոյթները դիմագիծի մը կամ շրջագիծի մը մէջ, եւ այս յայտնումին մէջէն կը քաշուի, կը պահուի անկիւն մը (Վեհանոյշ Թեքէեան, Իբրև Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ՊԱՏԿԵՐԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., փիլ. Պատկերուած ըլլալը՝ իբրև բացակայ որեւէ երեւոյթի փոխարինող, զայն ողջ՝ ներկայ պահող, պատկերակայութիւն // Պատկերային լինելը, պատկերված լինելը, պատկերվածություն: Պատկերի կարգավիճակը մտածել կարենալու համար, Նշանեան երոպական լեզուներուն մէջ տեղ գտած imaginaire բառը կը բերէ արեւմտահայերէնի, դարբնելով «պատկե-

րակայություն» (կամ «պատկերայնություն») եզրը (Բազ, թիւ 2-3 2021, էջ 83):

ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴ, ան., Փաստերու վրայ չհիմնուած համոզումներու խնդրականացում, իրականությունը քողարկող ընդհանրացած տեսակետի քննադատություն // Պատկերները՝ պատկերացումները քանդող: Այդտեղ է ի հարկէ որ Բատայլ սկսած է իր օրինազանց եւ պատկերաքանդ մտածողութիւնը կիրառել, իր գրութիւններով, ուսումնասիրութիւններով, բայց նաեւ ու մանաւանդ պատկերներու վերիվայրիչ ընտրութեամբ (Մ.Ն., 2015, էջ 15):

ՊԱՏՄԱԻՐԱԻԱԿԱՆ, ան., Միեւնոյն ժամանակ պատմութեան եւ օրինականութեան դիտանկիւններէ քննուող՝ բացատրուող // Պատմական և իրավական: Հայ քաղաքական միտքը պայմանագիրին պատմաիրաւական հիմքերը, բովանդակութիւնն ու այդ բոլորին այժմեականացումը կը կատարէ անպայման (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՊԱՏՄԱԿԱՆԱՑՈՒԻԼ, կշբ., Պատմութեան տեսանկիւնէ քննուիլ՝ մեկնաբանուիլ՝ գրի առնուիլ // կր. Պատմականացնել-ի: Պատմական դառնալ: Ուրեմն, այսպէս կոչուած, «հայկական բաները» (things Armenian) միաժամանակ են նաեւ «մերձաւոր-միջին-արեւելեան բաներ», որոնք պէտք է որ ուսումնասիրուին եւ պատմականացուին իբրեւ այդպիսիք... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՊԱՏՄԱԿԱՆԱՑՈՒՄ, գ., Պատմագետի կողմէ երեւոյթ մը գիտականօրէն հետազօտելը՝ քննելը, զայն փաստական նիւթի վերածելը // Պատմականացնելը, պատմականացվելը, իրականում գոյություն ունեցող դառնալը լինելը: Բնիկին յայտնաբերումը որպէս բանասերին շուքը, որպէս մնացորդ, արեւելաբանութեան ձեւն է իր առարկային պատմականացումը իրականացնելու (Բազ, թիւ 2-3 2021, էջ 141):

ՊԱՏՄԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ, ան., **Երևոյթները ճանչնալու՝ ըմբռնելու պատմագիտական եղանակին յատուկ, անոր վերաբերող // Պատմական և ճանաչողական:** Այլ կերպ ըսած՝ այս գիտաժողովը պատմաճանաչողական նշանակութենէն աւելի գիտական, գործնական եւ քաղաքական նշանակութիւններ պիտի ունենայ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ, ան., **Պատմական եւ ճարտարապետական արժէք՝ նշանակութիւն ունեցող՝ ըլլալով իւրայատուկ վկայութիւն եւ նմոյշ // Պատմական և ճարտարապետական:** «Ազրպէյճանցիներուն մօտ մնացած է ընդհանուրը 20 հազար 885 ցուցանմուշ, 617 հազար գիրք, այլ գրականութիւն», յայտնեց նախարարը՝ դիտել տալով, որ կորսուածները միայն հայկական պատմաճարտարապետական եւ պատմամշակութային յուշարձաններ չեն.... (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ան., **Պատմական եւ մշակութային արժէք՝ նշանակութիւն ունեցող՝ ըլլալով իւրայատուկ վկայութիւն եւ նմոյշ // Պատմական և մշակութային:** «Ազրպէյճանցիներուն մօտ մնացած է ընդհանուրը 20 հազար 885 ցուցանմուշ, 617 հազար գիրք, այլ գրականութիւն», յայտնեց նախարարը՝ դիտել տալով, որ կորսուածները միայն հայկական պատմաճարտարապետական եւ պատմամշակութային յուշարձաններ չեն.... (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՊԱՏՄԱՄՈԼՈՒԹԻԻՆ, գ., դիպվ. **Տեղի ունեցած երևոյթները, համոզումներու եւ բարքերու ծագումը պատմութեամբ բացատրելու միտում՝ տեսութիւն // Մուրցք պատմական անցյալի հանդէպ:** Դարձեալ, ձախերուն հետապնդած ազգայնացումը հիմնովին հերքումն էր վաթսունի մարդոց հռետորական օգտապաշտութեան, պատմամոլութեան, լիպերալիզմին.... (Բազ, թիւ 2-3 2021, էջ 8):

ՊԱՏՄԱՅՂԱՅԱԿԱՆ, ան., Պատմագիտական արժեք ունեցող որևէ գաղափարի՝ մտքի վերաբերող, անոր յատուկ // Պատմագիտական արժեք ունեցող մտահղացում: Իսկ մեր ապրած օրերուն, երբ «վկայութիւն» բառին իմաստը մեր աչքերուն առջեւ փոխուեցաւ երոպական լեզուներուն մէջ... եւ սկսաւ... հրեական Ողջակէզի վերապրողներուն վկայութիւնները պարփակել իր **պատմադրացական** տարողութեան սահմաններէն ներս... (Մ.Ն., 2015, էջ 21):

ՊԱՏՄԱՍԱՆ, գ., Իրադարձութիւն մը՝ պատահար մը ուրիշներուն պատմողը // Պատմութեան աստղը, դէպքերի մասին պատմողը: Այն տեսարանն է ուր **պատմասանը** կը տեսնէ հեռուն կին մը, որ կը փորձէ երեխայի ձեռնակառք մը մտցնել դուռ-դարպասէ մը... (Մարկ Նշանեան, Պատկեր, պատում, պատմություն, Հտ. 1, Ակտուալ արվեստ, Ե., 20.., էջ 196)

ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ան., Անցեալին տեղի ունեցած անցքերու օգնութեամբ քաղաքական ընթացքի մեկնաբանութեան՝ լուսաբանումին բնորոշ՝ յատուկ // Պատմական և քաղաքական: Պատմական այս ճակատագրական իրողութեան **պատմաքաղաքական** պրիսմակէն կ'անդրադառնայ պատմաբան Անի Մելքոնեանը (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ՊԱՏՄՈՒՄՍԱԳԻՐ, գ., Պատմուածքներ գրող անձ // Պատմվածքներ գրող արձակագիր: Մանֆալտի յայտնի է առաւելաբար որպէս արձակագիր եւ **պատմուածագիր** (Բագին, 2010, 1, էջ 76):

ՊԱՏՈՒՄԱՅԻՆ, ան., Ստեղծագործական պատմութիւններուն յատուկ, անտնց վերաբերող // Պատումին՝ պատմելուն հատուկ՝ բնորոշ: Պէտք է ուշադիր ըլլանք անոր դժուարամատոյց ժամանակայնութեան, որովհետեւ այդտեղ երկու զատ իրադարձութիւններու հետ չէ՛ որ գործ ունինք, ո՛չ ալ տեսակ մը **պատումային** կամարի մը հետ (Բագ, թիւ 2-3 2021, էջ 140):

ՊԱՐԱԳՐԿԵԼ, բ., **Նիւթ մը՝ երեւոյթ մը իր ամբողջ ծաւալով որոշուած սահմաններու մէջ խտացնել՝ պարփակել // Ամբողջովին ամբողջությամբ գրկել, ընդգրկել:** Աքսորի հայ գրականութեան ամբողջութիւնը **պարագրկելու** իրենց փորձին մէջ անոնք մեծ թիւով երկեր աննկատ կը ձգեն... (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹՐԻՆՖՈՒՆ, 'Իմացոյթուն գրադարան', Անտարես, 2017, էջ 51):

ՊԱՐՈՅԿԱԶԻԳ, ան., փխբ. **Հարցում մը արտասանելու ելեւէջին պէս պտոյտաձեւ բարձրացող եւ իջնող // փխբ. Պարուկի նման՝ գալարներով իջնող:** ...Վարագոյր մ'իջաւ երկաթեայ/ միտքը զատեց մարմինէն/ թիւն ի սպառ անհետացաւ նշանն անոր **պարոյկաձիգ/ տեսողութիւնն** պղտորեց.... (Պարութեան Նորա, Զէրօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 55)):

ՊԶՏԻԿՑՈՒԻԼ, բ., **Իր մը իր սովորական չափէն պզիտկ դարձնել // կր. Պզտիկցնել-ի: Փորքրացնել:** Այդ իմաստով է, որ **պզտիկցուած** առարկաները, որոնք կը պատկանին անվերադարձ անցեալի մը, մօտիկը կրնան դրուիլ մասունքներու եւ նշխարքներու շարքին.... (Մ.Ն., 2015, էջ 38):

ՊԶՐԱԲԱՆԵԼ, բ., **Ուշադրութիւն գրաւելու եւ հրապուրելու միտումով նազանքով՝ ձեքձեքանքով խօսիլ // Սիրախաղով՝ ֆիրտով զբաղվել:** Կին մը կը պչրաբանէ ո՞ր եւէ մարդու հետ, կը բաւէ միայն՝ որ գիտնայ թէ ուրիշներ կը տեսնեն զինք (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 334):

ՊՏՂԱՆՈՒԷՐ, ան., **Տարիներու վաստակի՝ տքնաջան աշխատանքի արգասիքը՝ նուէրը եղող // Պտուղ՝ արգասիք տվող, արգասաբեր, արդյունավետ:** Պատմաբան Մարրլեանը նոյնքա՛ն արժանի է մեր խորագոյն ու բարձր գնահատանքին՝ տասնամեակներու վրայ տարածուող **պտղանուէր** գործով, լոյսին բերելով տասնեակ հատորներ հայոց պատմութեան եւ մանաւանդ Հայ դատի իրագեկման ճամբուն վրայ <https://www.aztagdaily.com/archives/511202>

ՊՏՏԿԱՆ, ան., **Պտղտիլ՝ գրօսնուլ սիրող // Պտտկող, շարունակ կամ շատ անգամ պտտվող՝ շրջող:** Ի դեպ, Քեսապի մէջ շատ կը գործածեն այս ասոյթը՝ նկատի ունենալով տունը խմորի տաշտն ու օրօրօցը ձգած դուռէ դուռ անցնող **պտտկան** կիները.... (Յ. Չոլաքեան, ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ԶՐՈՅՑՆԵՐ - 3 ԽԱՍՈՒՐ ՓԱԹ-ՓԱԹ, ՉՈՃՈՒԽ ՉԱԹ-ՉԱԹ, <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ՊՐԱԶԻԼԻԱԿԱՆ, ան., **Պրազիլիոյ յատուկ, այդ պետութեան՝ հողին սեփական // Բրազիլիային հատուկ՝ վերաբերող, բրազիլական:** Դեղձագոյն բազմոցի մը վրայ նստեր էր Լէյտի Նարպըրոն ու մտիկ ընել կը ձեւացնէր Դուքսին, որ կը նկարագրէր իր հաւաքածոյին վրայ աւելցուած **պրազիլական** վերջին բգեզը (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 317)

ԶՈՒՂԱՅԵՑԻ, գ., **Զուղա կամ Պարսկաստանի Նոր Զուղա քաղաքին մէջ ծնած, այնտեղի բնակիչ // Զուղայում կամ Նոր Զուղայում ծնված անձ:** Նիւթերու լեզուն գրաբար էր, մերթ ընդ մերթ ալ՝ **ջուղայեցիներու** ռամկախառն աշխարհաբառով, որովհետեւ ընթերցողներու մեծ մասը կը կազմէին Իրանի Նոր Զուղայէն Հնդկաստան գաղթած հայերը (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ԶՐԻԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Անլուրջ՝ անմիտ ձեւով խօսիլը, շահակրատելու համար խօսիլը, ձանձրալի խօսք՝ միտք // 1. Ոչ բովանդակալից՝ ավելորդ դատողություններով ուռձացրած՝ ջրիկ խոսք: 2. Տափակաբանություն:** Պատկառելի հասակը, որ երիտասարդութեան աչքառու դարձուցած է զինք, այսօր քիչ մը կծկուած է իր անցեալին եւ անկէ հեռանալու իր **ջրիկաբանութիւններուն** միջեւ (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 36)):

ՌԱԶՄԱՍԱԻԱՌՆԱԿ, գ., **Զինուորական՝ պատերազմի համար շինուած օդանավ // Ռազմական՝ մարտական ինքնաթիռ:** Էֆ-16 ռազմասաւառնակներու վաճառքի հարցը երկար ատենէ ի վեր թնճուկի վերածուած է Ամերիկայի եւ Թուրքիոյ միջեւ (Նոր Մարմարա, 08 Յուլիս 2022, Ուրբաթ):

ՌԱԶՄԱՎԱՐԺԱՆՔ, գ., **Զինուորներու մարտի հմտութիւնները զորացնելու նպատակով զօրքի բազմօրեայ փորձնական վարժութիւն // Ռազմական վարժանք, զորախաղ:** Իրանը պատասխանեց ակտի քան համարժէք, կազմակերպելով «Խայպարի նուաճողներ» անուանակոչուող ռազմավարժանքները (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՌԱՄԿԱԽԱՌՆ, ած., **Ժողովուրդի առօրեայ, անմշակ լեզուով խառնուած // Ռամկորենի՝ խոսակցական լեզվի հետ խառնված:** Նիւթերու լեզուն գրաբար էր, մերթ ընդ մերթ ալ՝ ջուղայեցիներու ռամկախառն աշխարհաբառով (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՍԱՂԱԻԱՐՏԱՆՄԱՆ, ած., **Գլուխը պաշտպանող մետաղէ զրահին յար եւ նման // Մաղավարտի տեսք ունեցող:** Յոյն դերակատարները կը կրէին սաղաւարտանման դիմակներ, որոնք կը պարփակէին գլուխը եւ գրեթէ ամբողջապէս կը խափանէին անոնց տեսողաշտը (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՍՄՏԱՆԻՆ ԱԿԱՆԶ, դարձվ., **Սատանային ծառայող, հոգին՝ խիղճը չար ոգիին ծախած (անձ) // Սատանայի բաժին, հոգին սատանային վաճառած (մարդ):** -Ահա կը մեկնի սա՛ տանին ականջը, փռշտաց ան խռպոտ ձայնով մը (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէրուլթ, 1992, էջ 310)

ՍԱՓՐԱԳԼՈՒԽ, գ., ած., **Գլուխը ածիլած, մազերը ամբողջութեամբ հեռացուցած՝ ճաղատացած մարդ // Ամբողջովին սափրած**

գլխավ (մարդ): Մե՛ճ ընկերս.../ Որ չի հաւատար Նոր Եորքի ցուցա-
սրահներու **սասիրագլուխներուն** (Բագին, 2010, 1, էջ 37):

ՄԵԼՃՈՒՔԵԱՆ, ան., Օդուգ թուրքերու առաջնորդ Մելճուքի
հիմնած կայսրութեան վերաբերող, անոր բնորոշ // Թյուրքական մի
ցեղախմբի՝ սելջուկներին հատուկ, սելջուկյան:Եօթներորդ դա-
րէն ի վեր այս շրջանը մեծ մասամբ եղած է իսլամական իշխա-
նութեանց տակ՝ արաբական, **սելճութեան**, թրքական, մոնկոլական,
պարսկական.... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՄԻՈՆԱԿԱՆ, ան., Միոն՝ Երուսաղէմ վերադառնալու հրեա-
կան ազգային ծրագիրին յատուկ, այդ ուղեգիծին հետեւող՝ հաւա-
տացող, զայն պաշտպանող // Միոնականութեանը բնորոշ՝ հատուկ,
սիոնիզմի: Իրան չի հանդուրժեր իր ազգային անվտանգութեան դէմ
սիոնական վարչակարգին ներկայութիւնն ու գործունէութիւնը եւ
այդ առումով պիտի կատարէ որեւէ անհրաժեշտ քայլ (Ազդակ, 1
Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՄԿԱՌԻՏԱԿԱՆ, ան., Պատանիներու մարմնական եւ մտաւոր
գարգացումը խթանող միջազգային շարժումին վերաբերող, անոր
պատկանող //Մկաուտներին հատուկ՝ վերաբերող, սկաուտների:
Ահա այսպիսի ընտաքինի մէջ ծնած ու դաստիարակուած է
Մեսրոպ Շիրանեան, որ կանուխ տարիքէն մաս կազմած է ՀՍԸՄ-ի
սկաուտական շարքերուն.... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3,7):

ՄՆՆԴԱԿԱՐԳ, գ., Աւելի առողջ՝ առոյգ ապրելու նպատակով
աննդառութեան մասնաւոր կարգի՝ սովորութեան հետեւիլը // Մնվե-
լու՝ սնունդի որոշակի կարգ բուժական նպատակով, դիետա: Դուք
կը հետեւի ք առողջ սննդակարգի (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ
5):

ՍՈՎԱՀԱՐԵԼ, բ., Մէկու մը կամ խումբի մը հնազանդեցնելու
նպատակով զայն սովի ենթարկել, անօթի ձգելով չարչարել //Սո-

վահարության մատնել, սովով տանջել: ... Մարդիկ ջանացել էին հպատակեցնել զանոնք...**սովահարելով**, կամ սպաննել՝ տանջանքով... (Օսգար Ուայլդ, Տորիլն Կրեյի Պատկերը, Պեյրութ, 1992, էջ 212)

ՍՈՎԵՏԱՀԱՅԵՐԷՆ, գ., ան., մկբ., Արեւելեան Հայաստանի մէջ Սովետական իշխանութեան տարիներուն պաշտօնապէս ընդունուած ուղղագրութիւն //1. Խորհրդային՝ սովետական Հայաստանում գործածված հայերենը, խորհրդաբանություններով (սովետիզմներով) ողողված հայերեն: **2.** փխբ. **Հայաստանում ընդունված արդի պաշտոնական ուղղագրությունը:** Որպէսզի **սովետահայերէն** անհերթէ ուղղագրութիւնս սրբագրեմ, մեր սքանչելի արեւմտահայերէն ուղղագրութեանս համար կ'օգտուիմ Գույումճեանի Անգլերէնէ հայերէն բառարանէն (Բագին, 2011, 1, էջ 77):

ՍՈՒՐԻՒԱԿԱՆ, ան., Սուրիոյ արաբական պետութեանը պատկանող՝ յատուկ // Սիրիային՝ սիրիացի արաբներին հատուկ՝ պատկանող: Նշենք, որ իր կատարած առաջին մրցումին, տիտղոսակիր Պեյրութ 72-69 արդիւնքով պարտութիւն մը կրած էր **սուրիական** Սաուրայէն (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 7):

ՍՈՒՐԻՒԱՀԱՅ, 1. գ., Սուրիա ծնած կամ Սուրիա ապրող՝ ապրած ծնողներէ սերած (անձ): 2. Սուրիոյ հայկական գաղթօջախին վերաբերող // Սիրիայում ծնված՝ բնակվող հայ: **2. ան., Սիրիահայությանը հատուկ՝ վերաբերող:** Քաջալերած եւ օգտակար հանդիսացած է «Ա. Ահարոնեան» կեդրոնի հովանիին տակ գործող... **Սուրիահայ օգնութեան խաչին...** (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ՍՈՒՐԻՒԱՅԻ, ան., Սուրիա ծնած՝ ապրող, Սուրիոյի քաղաքացի ծնողներէ սերած // Սիրիայի քաղաքացի՝ բնակիչ, սիրիացի: ... Եթէ միջազգային կազմակերպութիւնները յանձնառու ըլլային **սուրիացի** տեղահանուածներուն արժանապատուութեան, ապա

անոնք դիւրացուցած կ'ըլլային անոնց տունդարձը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 2, 7):

ՄՊԱՅԱԿՈՅՍԱՅԻՆ, անծ., **Զօրքին մէջ սպայի բարձր աստիճան ունեցողներու խումբին՝ կազմին վերաբերող, անոնց համար կազմակերպուած // Սպայակոյտին հաստուկ վերաբերող, շտաբային: ...** Հրամանատարական-սպայակոյտային ռազմափորձերը կը կատարուին կապի եւ կողմնորոշման տարատեսակ միջոցներու լայնածաւալ կիրարկումով (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՄՐԲԱԽՈՐՀՈՒՐԴ, անծ., **Նուիրական՝ սրբազան իմաստ՝ խորհուրդ ունեցող, վսեմ, վեհ // Մուրբ խորհուրդով լեցուն՝ տոգորված, վեհաշուք: Երբ Փարիզի Ատուածամօր Տաճարին/ Սրբախորհուրդ վայելչութեան յանդիման: (Բագին, 2010, 1, էջ 41):**

ՄՐՆԳԱՆՄԱՆ, անծ., **Սրինգի նմանող, հոս՝ այդ գործիքի վճիտ՝ պարզ եւ տխուր ու անուշ ձայնին պէս ձայն ունեցող // 1. Սրինգի նման, սրնգաձև: 2. փխբ., Նուրբ, բարակ: Եղած է ամենէ, ու նախանձին սեւ ձեռքերը ճմլած են իր կոկորդը սրնգանման (Օսգար Ուայլը, Տորիլըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 84):**

ՄՓԻԻՌՔԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ., **Իրենց երկիրներէն դուրս արքողներու, նա՛ մանաւանդ հայերու, պատմութեան հոլովոյթը, մշակութային ձեռքբերումները եւ խնդիրները ուսումնասիրող գիտութիւն // Հայկական Մփյուռքի պատմության, մշակութի, կրթության, լեզվի, գրականության ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունների ամբողջությունը: Քննարկումը պիտի առաջնորդէ դոկտ. Արման Ս. Եղիազարեան, որ Երեւանի պետական համալսարանի Մփիւռքագիտութեան ամպիոնի վարիչն է (Սսպարէգ, 5 Յունիս 2021, էջ 13):**

ՄՓԻԻՌՔԱՅՆԱՑՈՒՄ, գ., **Զանազան պատճառներով տարագրուիլը, հայերնիքէն զրկուիլը՝ հեռանալը, սփռուիլը, գաղթական՝**

պանդուխտ դառնալը // **Սփյուռքայնացները, սփյուռքայնանալը, սփյուռք դառնալը, հայրենագրկվելը:** Իր ժամանակին մեջ կը տրորել բոլոր երանգները.... քեզ կը խառնէ **սփիւռքայնացման**, անհայրենիքութեան, եւ մահէն ու արքտրէն վերադարձած ու մեռնիլ չուզած փիլիսոփայութեան հմայիլներուն (Բագ, թիւ 2-3 2021, էջ 67):

ՍՓԻԻՌՔԵԱՆ, ան., **Այլեայլ պատճառներով իրենց հայրենիքէն դուրս ապրողներուն, հոս՝ հայկական գաղթօջախներուն վերաբերող, անոնց յատուկ // Հայկական Սփյուռքին վերաբերող հատուկ, Սփյուռքի:** Կարծես սփիւռքեան մեր կեանքը, առօրեան եւ իրավիճակը քննելու կամ գննելու կարիք ալ չկար: (Գրական Սփյուռք - 9, էջ 116):

ՎԱԽՃԱՆԱԿԱՆԱՑՆԵԼ, բ., փխբ., **Երեւոյթ մը իր լրումին՝ նպատակին հասցնել, վերջակէտ դնել՝ զայն ազատելով դիպուածայինէն՝ վախճանցիկէն // Վախճանին՝ վերջին հասցնել, վերջնականացնել:** Բայց եթէ Օշական կրնայ հետապնդել պատմութիւնը որպէս արուեստ, պատճառը այն է, որ արուեստի խորքին՝ կայ ժամանակը, վերջնականացնող, **վախճանականացնող** ժամանակը (Բագին, թիւ 2-3 2021, էջ 14):

ՎԱԽՎԽՈՒՆ, ան., **Վախնալով՝ երկիւղով՝ անհամարձակօրէն կատարուող // Վախով լեցուն, վախվորած:** Մաթոս Եաղուպի տունը.... Փողոցի վրայ բացուող պատուհան չունի, եւ հոն տիրող լռութիւնը աւելի կը շեշտէ մեր **վախվախուն** երեւակայութիւնը (Բագին, 2010, 1, էջ 16):

ՎԱՐԴԱՍՊԻՏԱԿ, ան., **Ճերմակ վարդի գոյն ունեցող, հոս՝ անարատ, անմեղ // 1. Մայիտակ վարդի գոյնով: 2. փխբ., Անեղ, անբիծ, մաքուր:** Դուք, Պրն. Կրէյ, դուք ինքներդ, վարդակարմիր ձեր երիտասարդութեամբ ու **վարդասպիտակ** մանկութեամբ, ունեցած էք կիրքեր, որոնք անաբեկած են ձեզ... (Օսգար Ուսայլդ, Տորիլն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 32):

ՎԱՐԿԱԾՍԱԲԱՐ, մկբ., Իբրեւ ենթադրություն, որպէս մեկնակէտ՝ երեւոյթ մը մեկնաբանելու՝ հասկնալու, որ տակաւին պէտք է ապացուցել // Որպէս վարկած, վարկածի ձևով: Վարկածաբար կարելի է ըսել. հոն ուր արեւմտեան աշխարհին հետ առճակատումը ամենէն սաստիկն է, այդ առճակատումը համարկելու ջանքը եւ ինքն իր անձին հարցադրումը ամենէն արդիւնաւէտը եղած են (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, Իմացոթյուն գրադարան՝ Անտարես, 2017, էջ 55):

ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ, գ., Հոն ուր երկիրի մը վարչապետը իր պաշտօնը կը կատարէ (կարգ մը երկիրներու մէջ նաեւ կը բնակի) // Վարչապետի նստավայրը աշխատավայրը: Վարչապետ Նեճիպ Միքաթի վարչապետարանին մէջ ընդունեց յորդանանցի իր պաշտօնակիցը.... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՎԵՆԵՏԻԿԵԱՆ, ած., Վենետիկ քաղաքին կամ անոր բնակիչներուն յատկանշական՝ առանձնայատուկ // Վենետիկին հատուկ վերաբերող, Վենետիկի, վենետիկցիների:.... Տիկին Ըրլինը՝ ինքզինք պարտադրել ջանացող ոչնչութիւն մը՝ զուարճալի թեթեւաբանութիւններով ու վենետիկեան կարմիր մագերով.... (Օսգար Ուայլդ, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրութ, 1992, էջ 289)

ՎԵՐԱԲԱՆԱԶԵԻԵԼԻ, ած., Աւարտուն ձեւ ստացած միտք մը՝ օրէնք մը փոփոխելու, այն անգամ մըն ալ բանաձեւելու կարելիութիւն ունեցող // Ինչ հնարավոր է վերաբանաձեւել՝ վերստին՝ նորովի բանաձեւել: Նշանեան այս մեկնաբանութիւնը նաեւ վերաբանաձեւելի տեսած է այսպէս. «Յարդ չէի կրնար խօսիլ, քանի որ չունէի իսկական լեզուն....» (Բագ, թիւ 2-3 2021, էջ 182):

ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿԵԼ, բ., Այլեւայլ պատճառներով չաշխատող՝ չգործող որեւէ գործարան կամ հիմնարկ վերստին աշխատցնել գործի դնել // Վերստին՝ նորից գործարկել: Այդ յայտարարութիւն-

ներուն մէջ մենք կը տեսնենք... հայ-թրքական երկաթուղին եւ ճամբաները **վերագործարկելու** մասին խօսելու առիթ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 1):

ՎԵՐԱԳՈՐԾՕՆԱՑՆԵԼ, ք., **Ներգծող, սակայն ընդարմացած ուժ մը դարձեալ աշխուժացնել, ուժը՝ եռանդը վերականգնել //Վերստին՝ կրկին գործոն դարձնել, նորից գործոնի վերածել:** Բայց ան կրնայ իր ճամբան ընել «ռոպէնսոնաբար»՝ «առանց երկար-բարակ չափելու, առանց վախի», եթէ գիտնայ իր մէջ **վերագործօնացնել** դարաւոր ատակութիւն մը միջ-մշակութային «բացուածք»ի... (Բագին, թիւ 2-3 2021, էջ 21):

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԻ, ան., **Քայքայուած՝ աւերակ դարձած՝ ինկած (հոս՝ խզուած) որեւէ բան իր նախկին վիճակին դարձնելու կարելիութիւն ունեցող //Այն, որ հնարավոր է վերականգնել, վերականգնման ենթակա:Վերականգնելի** եւ նոր զարգացում սպասող բարեկամութիւններու ցանկը կարելի է երկարել՝ սկսելով Ռուսիայէն ու Իրանէն... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ, ան., **Քայքայուածն ու աւերուածը իրենց նախկին վիճակին դադանելու աշխատանքին վերաբերող, անոր յատուկ // Վերականգնելուն՝ վերականգնողությանը հատուկ:** ՀՕՄ-ը կ'աշխատի նաեւ Երեւանի «Հերացի թիւ 1» հիւանդանոցի Հայրենիքի պաշտպանի **վերականգնողական** կեդրոնին օժանդակութիւն տրամադրելու գծով... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ՎԵՐԱԿԵՐՊԱԻՈՐԵԼ, ք., **Բանի մը նոր եղանակով կրկին կերպարանք՝ ձեւ տալ, նոր ձեւով նորէն ստեղծել //Նորովի կերպավորել:** ...Ֆէկէտէ Ֆիլիպ դը Շամպելնի Յիսուսին դէմքը կը **վերակերպաւորէ** ո՛չ թէ նկարին մէկ մանրամասը իր հանդիսատեսին աւելի մօտէն մատուցելու նպատակով... այլ հաստատելու համար լուսանկարչութեան կարողութիւնները նկարչութեան դէմ յանդիման... (Մ.Ն., 2015, էջ 51):

ՎԵՐԱՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., Իր ազդեցությունը կորսնցուցած համաձայնություն մը (հոս՝ դաշինք) յիշեցնել, այն կրկին ամրացնել՝ անխախտ դարձնել //Վերստին կրկին կամ նորովի համաձայնություն: Բոլոր առիթներուն սակայն ըստ էության Կարսի պայմանագիրի վերահաստատումն է կամ վերահամաձայնությունն է... (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՎԵՐԱՀԱՄԱՐԿՈՒՄ, գ., Այլեւայլ պատճառներով ամբողջն՝ ընդհանուրէն բաժնուած մասնիկ մը կրկին ամբողջին միացնելը // Նորից՝ կրկին միավորելը՝ միասնացնելը, վերահնտեգրում: «Մենք կը կարծենք, որ այս քայլը կարելոր դեր պիտի խաղայ ազատագրուած տարածքներուն մէջ հանքարդիւնաբերութեան գործարկման... եւ պիտի արագացնէ շրջանի տնտեսական վերահամարկումը», գրած է ան (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՎԵՐԱՄԵԿՆԱԲԱՆԵԼ, բ., Նոր տեղեկություններ յայտնաբերելու պատճառով մեկնուած բանը անգամ մը եւս քննել՝ մեկնել //Վերստին՝ կրկին՝ նորովի մեկնաբանել: Ահա ինչու, կը գրէ Նշանեան, այս վէպը, այսինքն «Շրջումը», կը պահանջէ նախորդներուն վերընթերցումը, որովհետեւ անիկա դուրը կը բանայ մինչեւ հիմա գրուածը վերամեկնաբանելու անհրաժեշտութեան... (Բազին, թիւ 2-3 2021, էջ 225):

ՎԵՐԱՄՏԱԾՈՒԻԼ, բ., Արդէն հետեւություններու յանգած քննություն մը՝ վերլուծում մը անգամ մըն ալ քննել // Վերստին՝ կրկին՝ նորովի մտածվել: Վկայություն կոչուածը ի հարկէ պէտք ունէր վերամտածուելու (Բազին, թիւ 2-3 2021, էջ 103):

ՎԵՐԱՆԵՐՄՈՒԾՈՒՄ, գ., Կրկին ներածելը, հոս՝ վերստին ընկերութեան անդամ մը ըլլալու փափաք, ընկերություն մտնելու իդձ, հոս՝ օտարութեան զգացումի յաղթահարում // 1. Վերստին՝ կրկին ներմուծում: 2. փխք. Վերահամարկում: Շուշանեան կը յա-

ջողի երիտասարդներուն միջավայրը, երազները, ապրելու եւ սիրելու պապակը վերստեղծել, սակայն՝ կը ձախողի պարագրկելու իր թեման որ **վերաներմուծումն** է եւ արմատաւորումը (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓԲԻՆԹԻՆՖՈ, ‘Իմացոթյուն գրադարան’, Անտարես, 2017, էջ 147):

ՎԵՐԱՆԿԱԽԱՅՈՒՄ, գ., **Կորսնցուցած պետական ինքնավարութեան՝ ազատութեան կրկին հասնիլը, զայն նորէն նուաճելը // Վերստին անկախացում, անկախության վերականգնում:** Ան ալ իրաւունք ունի սպասելու, որ... մեր ԲՈՒՈՐ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒ կենսագործումը մտնէ յաջորդ իշխանութեան օրակարգին մէջ, շրջադարձի ենթարկելով **վերանկախացումէն** ասդին աշխարհին կողմէ մեզի պարտադրուած աննպաստ պայմաններուն համակերպումը... (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 19):

ՎԵՐԱՆԿԱԽԱՅՈՒՄ, գ., **Կորսնցուցած պետական ինքնավարութեան՝ ազատութեան կրկին հասնիլը, զայն նորէն նուաճելը // Կորցված անկախությունը վերանվաճելը, վերստին անկախություն ձեռք բերելը:** Որոշ գիծեր դժբախտաբար կը շարունակուին **վերանկախացումէն** ասդին ալ: (Բագին, 2010, 1, էջ 69):

ՎԵՐԱՇԵՇՏՈՒՄ, գ., փխբ. **Որեւէ նիւթի կամ երեւոյթի կարելորութիւնը՝ ուշադրութեան արժանի ըլլալը՝ անգամ մը եւս ցոյց տալը // փխբ. Վերաշեշտելը, կրկին շեշտելը ընդգծելը:** Այսօր, երբ աշխարհաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծուած Կովկասի մէջ... Կարսի պայմանագրի վերարժեւորումը ու անոր այժմեականութեան **վերաշեշտումը** աւելի քան հրամայական է (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՎԵՐԱՇԵՇՏՈՒՄ, գ., **Իր կորովը կորսնցուցած՝ ընդամացած ուժի մը եռանդը՝ աւինը՝ խանդավառութիւնը արթնցնելը, ոգեւորելը // Վերաշխուժացնելը, վերստին՝ նորից աշխույժ գործունյա՝ բուն դարձնելը:** Մեր ազգի պարզած ներկայի անմխիթար

իրականության մեջ... մխիթարության նշոյլ մը կը բերէ հայ մարդու որեւէ նախաձեռնութիւն, որ գաղութային-համայնքային կեանքի վերաշխուժացման քիչ մը յոյս կը ներշնչէ (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՎԵՐԱՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ., **Նոր մեկնաբանութիւններու լոյսի տակ արդէն իսկ ուսումնասիրուած նիւթը անգամ մըն էլ ուսումնասիրելը քննելը վերլուծելը // Վերասին կրկին՝ նորովի ուսումնասիրություն:** ...Վստահաբար գրականութեան գիտաշխատողներուն շատ պիտի հետաքրքրեն իր տեսակետները, որոնք Մ. Նշանեանի յղացումները ուսումնասիրած ատեն, ինքնաբերաբար պիտի մտնեն նաեւ Թէքէանի վերաուսումնասիրութեան մէջ (Բագին, թիւ 2-3 2021, էջ 214):

ՎԵՐԱՊՐԿՈՒՄ, գ., փխբ. **Պայքարելու՝ կռուելու սաստկութիւնը եւ զօրութիւնը կորսնցուցած մէկու մը (հոս՝ ժողովուրդի) մարտնչելու կորովը արթնցնել ուժերը լարել // փխբ. Վերապրկելը, կրկին ուժգնորեն ձգելը ուժերը լարել:** Հոս ալ, փաստօրէն, կորուսեալ հողերուն վերատիրանալու... ճիգերը, կոչերը իրենց դիմաց կը շարուակէն գտնել մաշած յանկերգներ, որոնք այլապէս չեն նպաստեր հայկական ներուժին միաւորման, բռունցքին վերապրկումին (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՎԵՐԱՐԺԵԻՈՐՈՒՄ, գ., **Արժէքը՝ նշանակութիւնը կորսնցուցած բանի մը կրկին արժէք տալը, զայն կրկին գնահատելը // Կրկին՝ նորովի արժևորելը, վերագնահատում:** Այսօր, երբ աշխարհաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծուած Կովկասի մէջ... Կարսի պայմանագրի վերարժեւորումը ու անոր այժմէականութեան վերաշեշտումը աւելի քան հրամայական է (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՎԵՐԱՐՏԱԴՐԻՉ, ան., **Կեանքի՝ գործելու նոր եռանդ՝ աւին պարզեւող, նոր կացութիւն ստեղծող // Վերարտադրող, նորից ար-**

տաղթող՝ ստեղծող: Որոշ մտքեր կան որոնք ունին ծնիչ ուժ, որոնք կ'արձակեն գաղափարներու անկաշկանդ հոսանքներ, որոնց վերաբարտադրիչ ուժով կ'ոռոգուին նոր մտքեր.... (Բագին, թիւ 2-3 2021, էջ 59):

ՎԵՐԸՆԿՂՄԻԼ, ք., փխբ. Նորէն սուգուիլ՝ խորասուգուիլ մտածումներու կամ գործի մէջ, մտքերու՝ ընթերցանութեան մէջ մխրձուիլ // փխբ. Վերաստին՝ կրկին ընկղմվել: Երբեմն, զբաղումի թեժ ժամու, մոռցուած բացութենէ մը դուրս կը հանեմ քիթս, թէկուզ մի քանի վայրկեան, մինակս մի քանի խօսք կ'ընեմ, կը յիշեմ ինքզինքս, գօտապնդուած կը վերընկղմիմ դարակիս մէջ (Պարութեան Նորա, Զերօ (2016-2021), Երեւան, Լուսակն, 2022, 80 էջ (էջ 7)):

ՎԵՐԻՎԱՅՐԻՉ, ած., Առանց օրէնքի՝ յստակ ծրագիրի տեղի ունեցող, զարտուղի, անկանոն // Վերիվայրող, տակնուվրա անող: Այդտեղ է ի հարկէ որ Բատայլ սկսած է իր օրինագանց եւ պատկերաքանդ մտածողութիւնը կիրառել, իր գրութիւններով, ուսումնասիրութիւններով, բայց նաեւ ու մանաւանդ պատկերներու վերիվայրիչ ընտրութեամբ (Մ.Ն., 2015, էջ 15):

ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ, ած., Նիւթ մը վերլուծելով քննելու՝ ուսումնասիրելու եղանակին յատուկ, այդ եղանակով կատարուած // Վերլուծաբանին՝ վերլուծաբանությանը հատուկ՝ բնորոշ: Մարկ Նշանեանէն առաջին ընթերցումս եղած է Վահան Թեքեանի առթիւ կատարած վերլուծաբանական իր լայնածաւալ աշխատութիւնը (Բագին, թիւ 2-3 2021, էջ 207):

ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՆԵԼ, ք., Անաւարտ միտք մը՝ խօսք մը ամբողջացնել՝ իր լրումին հասցնել, վերջակէտ դնել // Վերջնական դարձնել, ավարտին հասցնել: Օշական, Համապատկերի տասներորդ հատորին մէջ, այդ խոնարհներէն, այդ գրողներէն մէկն է, բայց է՝ միեւնոյն ատեն իրենց խօսքը վերջնականացնողը, որովհե-

տել եղած է հո՛ւն, իրենց հետ, նկուղին եւ դամբանին մէջ (Բագին, թիւ 2-3 2021, էջ 98):

ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՈՒՄ, գ., Անաւարտ միտք մը՝ խօսք մը ամբողջացնելը՝ իր լրումին հասցնելը, վերջակէտ դնելը // Վերջնականացնելը, վերջնականանալը: Երգին ու լեզուին վերջաւորութիւնը եւ ուրեմն «վերջնականացում»ը վիճակներ չեն, այլ՝ արդիւնքներ (Բագին, թիւ 2-3 2021, էջ 13):

ՎԵՐՋՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Երեւոյթի մը ամբողջացած՝ ասարտուն՝ արդէն փոփոխութիւն եւ զարգացում չենթադրող վիճակը // Վերջնական լինելը, ավարտվածություն: Կոմիտասեան դիմագիծով՝ համանուագի ճարտարապետը կը միջամտէ երբ կենդանի երգը հասած է իր վերջաւորութեան, բայց ո՛չ տակաւին իր վերջնականութեան (Բագին, թիւ 2-3 2021, էջ 12):

ՎԻՃԱՐԿՈՂԱԿԱՆ, ած., Արտայայտուած կարծիքին հակառակը պնդող, առակութիւններ բերող, հակաճառող // Վիճարկողին բնորոշ՝ հատուկ, վիճարկության բնույթ կրող: Վերջիններս չեն սահմանափակուիլ բնանիւթերու մակերեսային կիրարկումով, այլ կը միտին նաեւ երեւան բերել զանոնք որոշադրող վիճարկողական համագիրները (Բագին, թիւ 2-3 2021, էջ 79):

ՎԻՇԱՊԱՃԱՆՃ, գ., փխբ. դիպ. Զինուորական ուղղաթիւ // փխբ. դիպ. Ռազմական ուղղաթիւ:Ռուսական ռազմական ուղղաթիւներ սկսած էին կիսաւեր Բերիաշէն վրայ շրջիլ... ու չափահաս մարդիկ ու ծերեր այրած Լենինեան հրապարակը իջան հիացմունքով ու երկիւղով վեր դիտելու, հսկայական վիշապաճանձի նման օդին մէջ ծփացող գործիքները (Բագին, թիւ 3 2020, էջ 26):

ՎԻՊԱՇԱՐ, գ., Նախորդը յաջորդին միտքը զարգացնող՝ մէկը միւսը ամբողջացնող վեպերու շարք // Բովանդակությամբ և ընդհանուր թեմայով կապված վեպերի շարք: Սփիւռքի վիպագրութեան

մէջ, երկար ատեն՝ տողերուն տակէն իր ճամբան բացող, լուսանկարչական պատկերի խնդիր մը կայ... Փաստ մանաւանդ այսօր՝ Գրիգոր Պլտեանի **Վիպաշարին** մէջ լուսանկարներու ճնշիչ ներկայութիւնը (Մ.Ն., 2015, էջ 32-33):

ՎԻՊՈՂ, ան., **Տեղի ունեցածը մշակելով՝ դէպքերը որոշ ձեւով կապելով՝ պատմութիւններ հիւստղ՝ պատմող** //1. Ենթակայական դերք. **Վիպել-ի: 2. Վիպելով պատմող, Վիպագրող:** Սփիւռքի առաջին օրերը **Վիպողները**, բիրեղացնողները, անոր ներքին վէճը վկայագրողները (Բագին, թիւ 4 2020, էջ 65):

ՎԻՊՈՂԱԿԱՆ, ան., **Տեղի ունեցածը մշակելով պատմելուն յատուկ, հոս՝ սկիզբ, միջին մաս եւ արարտ՝ զարգացման անշեղ եւ կոռ ընթացք ունեցող (պատմութիւն) // Վիպելուն բնորոշ՝ հատուկ, Վիպելու:** «Վիպում»ի յարակարծիքներուն հետեւելով, կը պեղէ ու կը բացայայտէ ինչ որ Դերիդա կոչած է «Դէպքին **Վիպողական** կառոյցը» (Մ.Ն., 2015, էջ 11):

ՎԻՏԵՕ-ԽԱՂ, գ., **Պատկերներով, մասնաւոր նկարներու արագ յաջորդականութեամբ համակարգչային խաղ // Համակարգչային խաղ:** Այս ուղղութեամբ յատկապէս խանդավառ են անոնք, որոնք համակարգչային միջամտութեամբ թուային տարբերակները կը վերածեն **Վիտէօ-խաղի** մը, ուր դիտողը հնարաւորութիւն ունի տարբերակներու միջեւ ընտրութիւններ կատարելու (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՏԱՐԱԶՈՒՄ, գ., փխբ. **Երեւոյթները լուսաբանելու՝ իմաստաւորելու քարացած երկտարր կաղապարներ՝ տեսակէտներ** //փխբ. **Ձևավորում, երկհակադրություն:** «Իշխողի եւ իշխուածի», «անիրաւողի եւ անիրաւուածի» **տարագումները** պարզաբանումներ են, եւ գործնականապէս իսկական հարցերը մնացած են մութի մէջ (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ, գ., Արտաքին յարաբերություններու մէջ երկիրներու պայմանականօրէն ընդունուած բաժանում, որ կը բխի աշխարհագրական շարք մը առանձնայատկութիւններէ //Աշխարհագրական և տնտեսական ընդհանրություններ ունեցող մի քանի երկրներ ընդգրկող մեծ շրջան:Իրանը իր հզօրութեամբ եւ քաղաքակրթական իր բարձր մակարդակով կրնայ մեծ դերակատարութիւն ունենալ **տարածաշրջանի** խաղաղութեան կառուցողական գործին մէջ (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 4):

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ, ան., Այս կամ այն տարածաշրջանին մէջ կատարուող՝ տեղի ունեցող, այդ տարածաշրջանին վերաբերող //Տարածաշրջանին հատուկ՝ վերաբերող, տարածաշրջանում տեղի ունեցող, տարածաշրջանի: Սրբազան հայրը անդրադառնալով **տարածաշրջանային** իրադարձութիւններուն, շեշտեց Իրանի դերակատարութեան կարեւորութիւնը.... (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 4):

ՏԱՐԱԾԱԶԱՓԱՅԻՆ, ան., Տարածութեան երեք որոշիչ յատկութիւններուն՝ երկարութեան, լայնութեան, խորութեան վերաբերող, այդ յատկութիւնների ունեցող // Տարածաչափությանը հատուկ՝ վերաբերող, տարածաչափական: Արհեստագիտութեան ընծայած առաւելութիւններուն շնորհիւ, ինչպէս՝ թուային անկաշկանդ գրաւիչ բեմայարդարում, երեք **տարածաչափային** (3D) քամերաներ.... եւ այլն, պիտի վերացնեն նոր «թատրոն»-ի հանդէպ վերապահութիւնները (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ան., Սահմաններ ունեցող որոշ վայրի՝ տեղի վերաբերող, այդ տարածութեան՝ միջոցին յատուկ //Տարածքին հատուկ, տարածքի: Այս բոլոր սուտերն ու մնացեալները.... ըսելէ ետք.... համարձակութիւնը ունի յորդորելու Հայաստանը՝ ստորագրելու «խաղաղութեան պայմանագիր... իրարու ինքնիշխանութեան եւ **տարածքային** ամբողջականութեան փոխադարձ ճանաչման հիման վրայ» (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 7, 8):

ՏԱՐԱԾՔԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., **Տարածքային ըլլալը, հոս՝ ընդգրկած ժամանակը //Ընդգրկում, տարածվածություն:** Մօտեցումով, նիւթերով, բովանդակութեամբ, աղբիւրագիտական եւ տասնչորս դարերու վրայ **տարածքայնութեամբ**, անիկա առաջինն է հայագիտական եւ արեւելագիտական ուսմանց մէջ (Ազգակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՏԱՐԱՏԿԵԼ, բ., 1. **Բոյս մը իր աճած տեղէն հանել եւ ուրիշ՝ հեռու տեղ մը տնկել:** 2. **փխբ. Անձնական փորձառութեամբ՝ բնականօրէն չձագած գաղափար մը որդեգրել // 1. Տարբեր տեղերում՝ այլ վայրում տնկել:** 2. **փխբ. Բնօրրանից կտրել և տեղափոխել օտար վայր՝ բնագավառ:** Դժբախտաբար սակայն անոնք եւրոամերիկեան տազնապներու ակնոցին ետեւէն կատարուած վերլուծումները գրեթէ հում-հում կը տարատնկեն հայկական աշխարհ (Բագին, թիւ 2-3 2021, էջ 56):

ՏԱՐԱՏԿՈՒՄ, գ., 1. **Բոյս մը իր աճած տեղէն հանելը եւ ուրիշ՝ հեռու տեղ մը տնկելը:** 2. **փխբ. Մարդուն իր ժառանգական եւ բնական միջավայրէն հեռացնելը, տարագրելը // 1. Տարատնկելը, տարբեր տեղերում՝ այլ վայրում տնկելը:** 2. **փխբ. Բնօրրանից կտրելը, բնաջնջում:** Կ'ենթադրէ քիչ մը ոլորոդ, իսխատող բռնութիւն մը, բիրտ, հաւաքական, քաղաքային, այսինքն՝ ստիպողական ու անարգել ուժ՝ որ հաստատունը կը դարձնէ յեղյէղուկ, կը տարագրէ մարդիկը.... մինչեւ հնարաւոր **տարատնկում**, աւելի ճիշդ՝ ապահով բնաջնջում (Բագին, թիւ 2-3 2021, էջ 31):

ՏԱՐՀԱՆԵԼ, բ., **Որեւէ բան իր որոշուած տեղէն հանել եւ ուրիշ տեղ տանիլ, տեղէ տեղ փոխադրել //Գտնվելու մշտական վայրից տեղափոխել այլ վայր:** Նախարար Լուսինէ Ղարախանեան ներկայացուց, թէ նախորդ տարի Ազրպէյճանի կողմէ սանձազերծուած պատերազմի ընթացքին մշակութային ժառանգութեան

ինչ նմուշներ կարելի եղած է **տարհանել** (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 4,6):

ՏԱՐՀԱՆՈՒՄ, գ., Տարհանելը, որեւէ բան իր որոշուած տեղէն հանելը եւ ուրիշ տեղ տանիլը, տեղէ տեղ փոխադրելը // Տարհանելը, տարհանվելը, տեղփոխում: Ղարախանեան այդ օրը հեռախօսով զրուցած է նաեւ Շուշիի Գորգերու թանգարանի տնօրէնին եւ Շուշիի Պատմութեան թանգարանի տնօրէնին հետ ու յայտնած է, որ Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի, մարմնակրթութեան նախարարութեան աջակցութեամբ կազմակերպած են **տարհանում** (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՏԱՐՓԱՆՈՒՇ, ան., Մեծ սիրոյ՝ տենչի արթնցուցած հաճելի թովչանքին, անոր տուած բերկրանքին՝ ցնծութեանը նմանող // Հաճելի տարփանքով առլեցուն: Ճակատագրի խորշակներէն ընդարմացած՝ Երազանքիս ծաղիկները **տարփանուշ** (Բագին, 2010, 1, էջ 39):

ՏԵՂԱԴԻՐՔ, գ., Որեւէ բան նախապէս մտածուած եւ դժուարութեամբ կռահելի որոշ կարգով (դիրքով) մը շարելը՝ դասաւորելը // Տեղադրման դիրքը, գտնվելու վայրը: Ատիկա պէտք է կատարուի այդ շարքին նաեւ տեղադրուած ականներու բնութագիրներու եւ **տեղադիրքի** մասին ամբողջական եւ ճշգրիտ տեղեկութեան տրամադրումով... (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՏԵՂԱՀԱՆՈՒՄՈՒԹԻՒՆ, գ., Տեղահանուած՝ բռնի տարագրուած ըլլալը, բռնի գաղթի ենթարկուած ըլլալը // Բնօրրանից՝ հիմնական բնակւոյթյան վայրից տեղահանված լինելը: Արդարեւ անտունի Նորիկեան չբաւականացաւ անհրաւուածներ, տառապեալներ, զրկեալներ, աքսորեալներ գեղանկարելով. խորքին մէջ, ան զանոնք չէ որ գեղանկարեց, այլ՝ **տեղահանուածութիւնը**, լուսանցքայնութիւնը, աքսորը՝ համամակդկային երեւոյթներ, որոնք

երբեք ալ իրենց այժմեականութիւնը պիտի չկորսնցնեն (Բագին, 2010, 1, էջ 84):

ՏԵՂԵԿԱԴԱՇՏ, գ., Գիտելիքներու համապարփակ հաւաքածոյի մէջ մասնաւոր նիւթի մը մասին եղած փաստերը ամբողջութեամբ ընդգրկող բաժին // Տեղեկատվական տեղեկատվությունների դաշտ: Յուցահանդէսի գրքոյկը կը բացատրէ, թէ.... զանազան փաստաթուղթերու մէջ ի յայտ կու գան տեղեկութեան բաց ձգուած, պարապ մնացած տողեր կամ ստորաբաժիններ, **տեղեկադաշտեր**, որոնք հիմնականապէս կը վերաբերին արեւմտահայութեան ու մասամբ նաեւ յունախօս համայնքներու.... (Բագին, թիւ 2-3 2021, էջ 199):

ՏԵՍԱԵՐԻԶ, գ., Տեսողական պատկերներու մասնաւոր ժապաւնի մը վրայ եղած պատճէնը՝ ընթօինակումը, որ կարելի է կրկին դիտել // Տեսաձայնագրված երիզ: Գովազդային տեսաերիզէն դատած բեմադրութիւնը կը թուի անտեսած ըլլալ համավարակի սահմանափակումները (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 6):

ՏԵՍԱԶՐՈՅՑ, գ., Համացանցի օգնութեամբ նոյն վայրը չգտնուող անձերու զիրար տեսնելով երկխօսելը // Տեսակապով առցանց զրոյց: Տեսագրոյցի մը ընթացքին, Աճեմօղլու ուղղակիօրէն հակասեց Էրտողանին՝ Թուրքիոյ տնտեսութեան վերաբերող քարոզչական պատկերին.... (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 10):

ՏԵՍԱՆԻԻԹ, գ., Հրապարակային այս կամ այն ելոյթի՝ խօսքի տեսողական պատճէնը // Տեսագրված նյութ: Խնդիրը սոսկ ելոյթը չէ, որ անոնք ունեցան **տեսանիւթով**, այլ անոնց բացակայութիւնը աշխարհի տարբեր ծայրերէն մօտաւորապէս 200 դեկաւարներու միջազգային կարեւոր հաւաքէն (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3,7):

ՏԵՍԱՆԿԻՆԱՅԻՆ, ած., փխբ. Երեւոյթ մը միայն անձնական դիրքի՝ փորձի վրայ գնահատելուն՝ արժեւորելուն բնորոշ, սահմա-

նափակ //Տեսանկյունին բնորոշ՝ հատուկ, տեսանկյունով կատարվող: Գաղութատիրական գործիք «օրիէնտալիզմ»ը... գաղութատիրոջ տեսանկյունային եւ քաղաքական խեղաթիւրուած պատկերացում մըն էր (Բագին, թիւ 2-3 2021, էջ 180):

ՏԻԵԶԵՐԱԿԱՆԱՆԱԼ, ք., Ընդհանրական՝ տիեզերական դառնալ, հոս՝ երեւոյթը ամբողջապէս ներկայացնել, անոր լիակատար արտայայտութիւնը դառնալ //1. Տիեզերական դառնալ: 2. փխք. Ամբողջ աշխարհին հատուկ՝ անպարփակելի՝ անսահման դառնալ: Միւռոնը հաւատք է: Սովորական անուշաբոյր իւղ ըլլալէ վեր, քրիստոնէական վսեմ հաւատքին արտայայտութեան ամենահարազատ ու տիեզերականացած արտացոլացումը հանդիսացած է Միւռոնը (Զարթօնք, Կիրակի, 10. 07. 2022)

ՏՂԱՅԱՍՏԱԿԱՆ, ած., Փորձի վրայ չհիմնուած մտածելու կարողութեանը յատուկ, երեխայական: 2. փխք. Տակաւին խակ՝ չմշակուած, անմիտ, սնտոտի // Տղայամիտին՝ տղայամտոյթյանը հատուկ՝ բնորոշ, մանկամտական, միամիտ: Օշականի պատասխանը աւաղում մըն է այդ օրերու սփիւքբահայ թատրոնին, որ կը ներկայանար «հոս ու հոն տպուած տղայամտական փորձերով եւ կամ ծանր հանդէսներու մէջ խորթ զակի պէս նետուած գործերով... (Բագին, թիւ 4 2020, էջ 64):

ՏՈԼԱՐԱՆՈՑ, գ., ած., Տոլարի արժէք ունեցող դրամ // Դոլարային թղթադրամ կամ մետաղադրամ: Մետաղեայ նոր թուագրուած տոլարանոցներ ցանած էր կրակիին շուրջբոլորը, որոնք երկինքէն մաղուած ոսկիի նման կը փալփլէին (Բագին, 2010, 1, էջ 25):

ՏՐԱՄԱԴՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ., Հակամիտութիւն, բան մը ընելու պատրաստականութիւն՝ համաձայնութիւն // Տրամադրված լինելը, հակվածություն: Մեր կողմէ ողջունենք Պաքուի եւ Երեւանի դրական տրամադրուածութիւնը փոխադարձաբար ընդունելի, փա-

թեթային համաձայնություններու հասնելու հարցին մէջ... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, գ., Բան մը ուրիշի մը յանձնելը՝ տալը //Տրամադրելը, տրամադրվելը, հատկացում: Ատիկա պէտք է կատարուի այդ շարքին նաեւ տեղադրուած ականներու բնութագիրներու եւ տեղադիրքի մասին ամբողջական եւ ճշգրիտ տեղեկութեան **տրամադրումով...** (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՅԱՆՅԱՅԻՆ, ան., Մէկ ամբողջութիւն կազմող երեսոյթի մը բաժնուած՝ սփռուած մասերու ցանցի ձեւով միաւորումին նման, ուստայնի պէս // Միմյանց խաչաձևվող՝ ներհյուսված միատեսակ բաների ցանցանման ամբողջոյթանը հատուկ: «Հայաստան» համահայկական հիմնադրամի առաքելութիւնը համահայկական **ցանցային** համակարգի ձեւաւորումն է... հիմնուելով ընդհանուր ինքնութեան վրայ (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ, ան., Ազգ մը ոչնչացնելու միտուած, այդ դիտաւորութեամբ կատարուող // Յեղասպանութեանը հատուկ՝ բնորոշ, ցեղասպանութեան: Բացայայտ է, որ դար մը առաջ իր կատարած Յեղասպանութեան մեծ ոճիրին համար պատժուած չըլլալով՝ Թուրքիան եւ իրեն ցեղակից-զինակից Ազրպէյճանը հայ ժողովուրդին վրայ կրկնեցին **ցեղասպանական** նոր ոճիրը (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՅԻԻՐԻԽԵԱՆ, ան., Զուիցերիոյ Զիրիխ քաղաքին յատուկ, անոր հետ կապուած՝ առնչուող //Շվեյցարական Զյուրիխ քաղաքին բնորոշ, Զյուրիխում տեղի ունեցած: Խօսելով ֆութպոլային դիւնազիտութեան շրջագիծին մէջ **ցիրիխեան** արձանագրութիւններու շրջանին արձանագրուած որոշ բացթողումներուն մասին՝ դոկտ. Տէր Մաթեոսեան կեղրոնացաւ վեց կէտերու վրայ... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՓԱԹԵԹԱՅԻՆ*, ան., Քաղաքական այս կամ այն վեճի լուծման եղանակին բնորոշ, որ վիճող կողմերու սկզբնական համաձայնությունը կ'ենթադրե վեճի առարկայ բոլոր կետերու վերաբերեալ (package solution) // Առաջարկությունների որոշումների քայլերի են խմբին՝ ամբողջությանը հատուկ՝ բնորոշ, փաթեթին հատուկ, փաթեթի: Մեր կողմէ ողջունենք Պաքուի եւ Երեւանի դրական տրամադրուածութիւնը փոխադարձաբար ընդունելի, փաթեթային համաձայնութիւններու հասնելու հարցին մէջ... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՓԱԿՈՒԹԻՒՆ, գ., Բանի գոց ըլլալը, հոս՝ ինքն իրմով սահմանափակուած, իրմէ անդին միջավայրէն մեկուսացած, անկէ չազդուող եւ անոր վրայ ազդեցութիւն չունեցող //1. Փակ՝ ներփակված լինելը: 2. փխբ. Փակուղի, անելանելի վիճակ: Գրական հայերէնի դէմ ծիծաղաշարժ պայքարը, ներկայիս, առտնինի, այսինքն՝ պզտիկ մտքերու եւ տղայական խիզախումներու պիրոսեան յաղթանակը կ'աւետէ եւ կ'առաջնորդէ այն փակութեան ուրկէ հազիւ ազատագրուեր էին արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 'Իմացոթյուն գրադարան', Անտարես, 2017, էջ 25):

ՓԱՍՏԱԿԵԴՐՈՆ, ան., Իրապէս տեղի ունեցածի առանցքի շուրջ հիստուած, զայն անքննելի արժէք դարձուցած //Փաստն իբր կենտրոն ունեցող, փաստերի վրա հենված՝ հիմնված: Իրապաշտ, փաստակեղրոն արդիականութիւնն է մեր ժամանակին տեսք տուողը (Բագին, թիւ 2-3 2021, էջ 79):

ՓՇԱՔԱՂԻՉ, ան., Մարմնին դող պատճառող, հոս՝ սուկալի դէպքի մը առթած սարսափէն՝ զարհուրանքէն դողացող՝ սարսառացող // 1. Փշաքաղեցնող: 2. փխբ. Սարսռեցնող, անով լցնող: Ատանայէն ետք աւելի մօտիկ վայրերէ ջարդերու փշաքաղիչ լուրեր կը հասնին Քեսապ (Յ. Չոլաքեան, Հատուած՝ «Քեսապի երեք օրերը, 21-23 Մարտ 2014» գիրքէս):

<https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ՓՈԹՈՐԿԱԺԱՅԹՔ, ան., **Փոթորիկի** պէս յանկարծական, բուռն եւ կատաղի պտոթկում, զսպուած ուժի ժայթքումին նմանող // **Փոթորիկ ժայթքող, բուռն և հանկարծահաս:** Չայնը մասնատուէցաւ, վերածուէցաւ անհամար բեկորներու, անհասկնալի վանկերու, փրփուրներու պէս տարանջատուող տառերու եւ կորսուէցաւ իր **փոթորկածայթք** ներաշխարհին բաղաձայն աղմուկին մէջ (Բագին, 2010, 1, էջ 6):

ՓՈՒՍԱԴԴԱՄԻԶՈՑԱՅԻՆ, ան., **Մարդ կամ ապրանք տեղափոխող ինքնաշարժերուն՝ փոխադրակառքերուն յատուկ, անոնց առնչուող // Փոխադրամիջոցներին վերաբերող, տրանսպորտային:** Ռուսական կողմէն ընդգծուած է, որ կողմերը պէտք է փոխզիջումնային լուծում փնտռեն սահմանազատման եւ **փոխադրամիջոցային** ենթակառոյցներու զարգացման վերաբերեալ... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՓՈՒՍԱԽՈՅԵԱՆ, գ., **Այս կամ այն մրցութեան մէջ երկրորդ տեղը գրաւած մարզիկ // Ախոյանին՝ չեմպիոնի փոխարինող, փոխչեմպիոն:** Նոյն դասակարգին մէջ, 18 տարեկան Սուրէն Գրիգորեան բարձրացնելով 328 քկ (145+186), հանդիսացաւ Եւրոպայի **փոխախոյեան** (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՓՈՒՍԱՆՑՈՐԴ, գ., **Երկու տարբեր երեւոյթներու (հոս՝ լեզուներու) միջեւ գտնուող, այդ դիրքին շնորհիւ անցումը մէկէն միւսին՝ կապը երկուքին միջեւ կարելի դարձնող // Փոխանցող, միջնորդ:** Տեսակ մը միջնորդ (թարգմանիչը) երկլեզու գրողի երկու Եսերուն, երկու գրողական գիտակցութիւններուն, երկու մշակոյթներու կամ աշխարհներու միջեւ: **Փոխանցողը** մը, սահմանողը մը (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՏՈ, ‘Իմացոյթուն գրադարան’, Անտարես, 2017, էջ 17):

ՓՈՒԽԶԻԶՈՒՄՆԱՅԻՆ, ան., Հակընդդեմ կողմերու միջև համաձայնություն կայացնելուն միտուած, հաշտութեան ձգտող եղանակին բնորոշ, որ կ'ենթադրէ երկուստեք հրաժարումը կարգ մը սկզբունքներէ // Փոխադարձ զիջում(ներ)ին բնորոշ՝ հատուկ, փոխադարձ զիջում(ներ)ով կատարվող: Փութին Էրտողանի հետ հանդիպումի ընթացքին ընդգծած է Լեռնային Ղարաբաղի տագնապի փոխզիջումնային լուծումներու անհրաժեշտութիւնը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՓՈՒՆԸՆԴՈՒՆԵԼԻ, ան., Միեւնոյն ժամանակ երկու կամ աւելի կողմերու՝ խումբերու հաւանութեանը արժանացած //Միմյանց համար փոխադարձաբար ընդունելի: Փոխարէնը չափազանց կարեւոր է կարելիութիւն ստեղծել փոխընդունելի հանգուցալուծումներ գտնելու համար.... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՓՈՒՆԸՆԿԱԼՈՒՄ, գ., Մէկը միւսին ներկայութիւնը ամբողջապէս զգալը՝ ըմբռնելը, միմեանց վրայ ազդելը, որեւէ բան ներշնչելը // Փոխադարձաբար իրար ընկալում: Ոչինչ կրնայ համարժեք ըլլալ կենդանի կատարումի եւ կենդանի սրահի փոխընկալումին (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 3):

ՓՈՒՆԸՆՏՐԱՆՔ, գ., Ընտրելու՝ ընտրութեան կարելիութիւն, որեւէ բան հաւասարաժեք այլ երկրորդ բանով փոխարինելը, նախապատուութիւնը երկրորդին տալը //Միմյանց բացառող երկու կամ ավելի հնարավորությունների ընտրություն, մեկի փոխարեն մեկ այլի ընտրություն, այլընտրանք: Նման միաձայնութիւն չի նշանակեր հակաժողովրդավարութիւն.... որովհետեւ բազմաթիւ ենթատղիներ ունեցող ճամբան մէկ է եւ կը հարկադրէ միասնութիւն՝ ձախողած ըլլալը փաստած իշխանաւորներուն փոխընտրանքին բիրեղացումով (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ՓՈՒՆՄԲԱՊԵՏ, գ., Խմբապետին՝ ղեկավարին բացակայութեան ժամանակ անոր ստանձնած պարտաւորութիւնները կատա-

րող անձ //Խմբապետի տեղակալը՝ փոխարինողը: ...Կը տուայտեր անոր սարդոստայնին մէջ, ինչպէս պատահեցաւ Թաթօ Յակոբին, սկառուտական փոխխմբապետ Սերգոյին, մեր դրացուհի Վիոլէթին (Բագին, 2010, 1, էջ 19):

ՓՈՒՃԱՆԱԶԵԼ, բ., Մէկը միւսին ծանօթ ըլլալ, հոս՝ կողմի մը մէկ ուրիշի օրինական իրաւունքները վաւերական եւ իրաւական համարել, զանոնք ընդունիլ՝ օրինականացնել // Փախադարձաբար իրար ճանաչել՝ գիտենալ: ...Եթէ Կարսը իրաւականօրէն ուժի մէջ ըլլար, այդ պարագային ինչո՞ւ նման նախապայման պիտի արծարծէր Անգարան՝ նոր պայմանագիրով տարածքներն ու սահմանները փոխճանաչելու (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՓՈՒՄԻԶՆՈՐԴՈՒՄ, գ., Մէկուն մէկ ուրիշի վրայ ունեցած ազդեցութիւնը, միեւնոյն ժամանակ անկէ ազդուիլը // Փոխմիջնորդելը, փոխադարձ միջնորդում՝ միջնորդություն, փոխադարձ մեջբերում: Գրական շարժումներու նման յաջորդականութիւնը չէր կրնար անդրադարձներ չունենալ Փարիզի հայ գրողներուն մօտ: Յղումները, մեջբերումները, փոխմիջնորդումները, փոխանակումները մեծաթիւ են ու սերտ (Գրիգոր Պըլտեան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹՐԻՆՖՈՒՆ, 'Իմացություն գրադարան', Անտարես, 2017, էջ 57):

ՓՈՒՎԱՐԶԱՊԵՏ, գ., Վարչապետի բացակայութեան ժամանակ անոր փոխարինող կամ որեւէ պաշտօնական ժողովի՝ նիստի ժամանակ զայն ներկայացնող // Վարչապետի տեղակալ: Անդրկովկասի մէջ փոխադրամիջոցային ուղիներու ապաշրջափակման ուղղուած եռակողմ աշխատանքային խումբը՝ Ռուսիոյ, Ազրայէճանի եւ Հայաստանի փոխվարչապետներու ձեւաչափով, կը շարունակէ աշխատիլ (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՓՈՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ, գ., Փորելով՝ փոսեր ընելով պատկերներ ստեղծելը, փորանկարելը // Փորագրելով նկարելը, փորանկարելը, գրավյուրա: Մեծամասնաբար փորանկարչութենէ կազ-

մուսձ իր գործերը արտացոլացումն էին խռովիչ երազանքի, ցնցոտիապաշտ թշուառութեան, սրտաճմիկ տառապանքի եւ արմատախիլ բեկորներու (Գրիգոր Քեօսէեան, Պրիսմակին Գոյները, էջ 238):

ՓՈՐԹՈՒԳԱԼՅԻ, աձ., Փորթուգալիա պետութեան մէջ ծնած՝ քաղաքացի, Փորթուգալիոյ բնիկ ծնողներու զաւակ // Պորտուգալիայի բնակիչ՝ քաղաքացի, Պորտուգալիայում ծնված անձ: Անգլիական Մանչեսթըր Եունայթըդի 36 տարեկան փորթուգալցի յառաջապահ Քրիսթիանօ Ռոնալսօ բարելաւեց իր մրցանիշը.... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՓՈՐՁԱԳՐՈՒԹԻՒՆ, գ., 1. Ստեղծագործելու ջանք՝ փորձ: 2. Այս կամ այն նիւթի մասին անձնական փորձի՝ մտածողութեան վրայ հիմնուած կարճ գրութիւն, էսսե // Գրելու՝ գրական ստեղծագործության փորձ: Ելեկտրոնային կայքերէ ու հանդէսներէ անկախ՝ մեր օրերուն գրական փորձագրութեան հարթակ կը դառնան նաեւ անձնական օգտագործման ընկերային ցանցերը, մանաւանդ դիմատետրը (Յ. Չոլաքեան, ԱՐԵԻՄՏԱՀԱՅԵՐԷՆ... ՄՓԻՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ... (4), <https://www.facebook.com/hagop.cholakian.9>):

ՓՈՐՁԱՆԱԲԵՐ, աձ., Աղէտաբեր, դժբախտութիւն բերող՝ պատճառող // Փորձանք բերող, փորձանքների պատճառ հանդիսացող: Իր կէանքէն հեռացեր էր հիմա այն բարեկամը, որուն յօրինած փորձանաբեր պատկերին հետեւանքներն էին իր բոլոր դժբախտութիւնները (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 262):

ՓՈՐՁԸՆԿԱԼՈՒՄ, գ., Եղերական՝ աղէտալի կացութենէ անցնիլը, համբերութեամբ՝ տոկալով այն յաղթահարելը, անկէ փրկուիլը, յետապրիլը // Չարաղետ փորձի ընկալումը՝ յուրացումը: Ինչո՞ւ գրականութիւնը: Որովհետեւ մտածողութիւնը, մտնելու

համար նոր կալուածի մը մէջ, դիմագրաւելու համար անլուրը, կ'ենթադրէ տագնապ մը, կ'ենթադրէ տագնապի մը **փորձընկալումը** եւ արձանագրութիւնը (Բագին, թիւ 3 2020, էջ 82):

ՓՐՓՐԱԽՕՍ, ան., փխբ. **Մոլեգնօրէն՝ խենթի պէս խօսող, անսանձ, անհուն // Փրփրաբերան՝ մոլեգին խոսելը:** ...Մինչ ինք, տարուած ծաւալող փոթորիկին սաւառնաթել երգերէն, կը կարծէր, որ **փրփրախօս** ձայնանիշերուն գորդեան հանգոյցները կը քակէ եւ կ'ապրի յարագնաց երթը սա կապոյտ խայտանքին (Բագին, 2010, 1, էջ 3):

ՔԱԹԱԼՈՆԱԿԱՆ, ան., **Սպանիոյ Քաթալոնիա ինքնավար նահանգին պատկանող, այդ նահանգի մի մասը կազմող // Իսպանիայի Կատալոնիա մարզին հաստուկ՝ բնորոշ, Կատալոնիայի: Քաթալոնական Սիթկես քաղաքին մէջ...** Հայաստանի հաւաքականը չկրցաւ յաղթահարել Ուքրանիոյ արգելքը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՔԱԹԱՐԵԱՆ, ան., **Քաթար պետութեան պատկանող, այդ պետութիւնը ներկայացնող // Քաթար պետությանը հաստուկ՝ բնորոշ, Քաթարի:** Այսօր՝ ուրբաթ, Պէյրութ կը կատարէ իր երկրորդ մրցումը, **քաթարեան** Ղարրաֆիի դէմ... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՔԱԹԱՐՅԻ, ան., գ., **Քաթար ծնած կամ Քաթարի բնիկ ծնողներէ սերած, այդ պետութեան քաղաքացի եղող // Քաթար պետության բնակիչ՝ քաղաքացի:** Այս մասին յայտարարած է Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Ճէյհուն Պայրամով՝ **քաթարցի** իր պաշտօնակից Մուհամետ պըն Ապտելշահման Ալ Թանիի հետ հանդիպումի ընթացքին (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 8):

ՔԱՂԱՔԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., **Երեւոյթի մը քաղաքական տարողութիւն՝ նկարագիր առնելը, այն քաղաքականութեան ծիրին մէջ**

ընդգրկելը // Քաղաքականալը, քաղաքականացնելը: Նոր կազմաւորուող գաղութներու ազգային դիմագիծի պահպանման, **քաղաքականացման** անհրաժեշտութիւնը մղեց Ժ. Ընդհանուր ժողովը (Փարիզ, 1924) յառաջացնելու այժմու կառոյցին մօտիկ համակարգ մը... (Ազդակ, 16 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ՔԱՂՔԱՊԵՏՈՒՀԻ, գ., Քաղաքի մը գործերը ղեկավարող կին կառավարիչ // Կին քաղաքապետ: Այն ստեն տակաւին հեծանիւով գործի գացող **քաղաքապետուհի** չունէր Սոնթրէալը... (Վրէժ-Արմէն, Ոստայն 16 – Ճարտարապետի մը ծոցատետրէն, Սոնթրէալ, 2021, էջ 20):

ՔԱՂՔԵՆԻԱՅՈՒՄ, գ., Բարեկեցիկ՝ հանգիստ կեանք ապրող քաղաքի բնակիչ դառնալը // Քաղքենի դառնալը՝ դարձնելը: Քանի մը տասնամեակ առաջ սկսած **քաղքենիացումը** նոր թափ կը ստանար, եւ հետզհետէ հարուստ ու աղքատ դասակարգերուն միջեւ տարբերութիւնները կը շեշտուէին... (Բագին, թիւ 3 2020, էջ 56):

ՔԱՅԼԱԿ, գ., Նոր քալել սորվող պզտիկներու կամ քալելու դժուարութիւն ունեցող մարդոց շարժելու՝ տեղէ տեղ երթալու ճկունութիւն տուող գործիք // Երեխաների կամ տեղափոխութեան դժվարություն ունեցող մարդկանց քայլելուն օժանդակող սարք: Բեռները կը պարունակէին՝ դեղորայք, վերարկուներ... մանկական ուտելիք, կաթ, սայլակներ, **քայլակներ**, սննդեղէն եւ այլն (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 6):

ՔԱՆԱՏԱԾԻՆ, ած., Քանատա ծնած (հոս՝ հայ) // Կանադայում ծնված: Մատուցուեցան չորս դասախօսութիւններ. «Հաւատքի դրսեւորումը ինքնութեան մէջ»..., «Այսօր, երիտասարդին ի՞նչ կը հրամցնենք»..., «**Քանատաձին** երիտասարդին կրօնական կենսաբանական հիմքը»..., «Հաւատքը ի՞նչպէս անմիջական դարձնել»... (Ազդակ, 9 Սեպտեմբեր 2021, էջ 6):

ՔԱՆՍՏԱՆՍՅ, ան., Հայ, որ ծնած է Քանաստա կամ հոն ապրած ծնողքի զուակ է // Կանադայում ծնված կամ ապրող հայ: Նախաձեռնություն է քանդակին հեղինակը քանաստահայ քանդակագործ Յակոբ Ճամպազեանն է (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՍՕՐԵԱՅ, ան., Քառասունչորս օր տեւած՝ երկարած // Քառասունչորս օր տեւող: Քառասունչորսօրեայ պատերազմի առաջին տարելիցէն ընդամենը օրեր առաջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան է Ազրայէճանի նախագահ Իլհամ Ալիեւ կրկին բախեցան իրարու, այս անգամ անարիւն ճակատումով՝ տեսանիւթերով.... (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 3):

ՔԱՐԻԻՂԱՅՈՐ, գ., Գետնին խորքերէն քարիւղ հանելու համար բացուած հոր // Քարյուղ՝ նավթ արդյունահանելու հանքահոր, նավթահոր: «Բախտը» հանրապետականներու, Թեքսասի քարիւղահորերու տերերուն է Սան Ֆրանսիսքոյի իգացած արուններուն բաժին ինկած էր (Բագին, 2010, 1, էջ 25):

ՔԱՐԻԻՂԱՕԾ, ան., Քարիւղի մէջ թաթխուած, ամբողջովին քարիւղոյ պատուած // Քարյուղով՝ նավթով օծված՝ յուղված: Այդ նոյն սիւնը գոր գիշերային դեզերումներուն, գառանցանքին մէջ բոցավառեր էր քարիւղած անիւներու օղակով (Բագին, 2010, 1, էջ 28):

ՔԵՄԱԼԱԿԱՆ, ան., Քեմալ Աթաթուրքի հիմնած Թուրքիոյ հանրապետութեանը վերագրուող, այդ հանրապետութեան գործունէութեանը վերաբերող // Մ. Քեմալի կառավարման ժամանակներին վերաբերող՝ հատուկ: Պարզ է, որ պայմանագիրը պոլշեիկեան Ռուսիոյ էր քեմալական Թուրքիոյ միջեւ կայացած համաձայնութեան կարեւորագոյն դրսեւորումն է՝ Հարաւային Կովկասի վրայ տարածուող (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 1):

ՔԵՆԹՈՂԱՇԱՐՔ, գ., **Ընդհանուր մտայնացումով մը իրարու կապուած բանաստեղծութիւններու շարք, բանաստեղծութիւններու ժողովածու //Ընդհանուր գաղափարով կապված քերթվածքների՝ գրական ստեղծագործությունների շարք:** Ինչպիսի՛ երաժշտականութեամբ, արեւամաղ յոյգերով կ'ընթանայ այս **քերթողաշարքը**, կը ցուցնէ հրճուանքը, ինքնավաստահութիւնը մարդոց որ կը ստեղծեն հացը կենաց (Վեհանոյշ Թեքէեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ՔԵՆԾՈՒԿ, գ., **Կարծր բանի մը քունելին առաջացած թեթև վերք //Թեթև՝ աննշան քերծվածք:** Սա այն վայրն էր, ուր տարիներ առաջ, մանչը քուրրտուելով ֆրիվէյի սիւներուն, իր անդրանիկ խիզախումը անոր դէմ առանց **քերծուկի** գլուխ հանած էր (Բագին, 2010, 1, էջ 23):

ՔՆԱՐԱԿԻՐ, գ., ած., փխբ.**Արուեստագէտի շնորհք՝ տաղանդ ունեցող, արուեստին նուիրուած //Քնարով՝ բանաստեղծի ձիրքով օժտված, տաղանդավոր:** Իր ծննդավայր Բրգնիկէն Պոլիս, յետոյ Վենետիկ, Պելճիքա, յետոյ դարձեալ գաւառ եւ Պոլիս դարձեալ, այս **քնարակիրին** ամենէն տոկուն լարը մարդկային հոգիի տառապանքէն կը ձայնանայ (Վեհանոյշ Թեքէեան, Իբրեւ Որդի եւ Նախահայր, <https://granish.org/ibrev-vordi-ev-nakhahayr/>):

ՔՈՐԷԱԿԱՆ, ած., **Հիւսիսային եւ հարաւային Քորիաներուն բնորոշ, հոս՝ անոնց միջեւ տեղի ունեցած պատերազմին վերաբերող // Կորիային (հյուսիսային եւ հարավային) հատուկ՝ վերաբերող:** ...Ան **քորէական** պատերազմի ժամանակ Միացեալ Նահանգներու օդուծի մէջ ծառայելէ ետք անվճար ուսանած է պանդոկի կառավարում մասնագիտութիւնը (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՔՈՒԷՅԹԵԱՆ, ած., **Քուէթ պետութեան պատկանող, այդ պետութիւնը ներկայացնող //Քուվէյթ պետությանը բնորոշ՝ հատուկ, Քուվէյթի:** Պէրուր թէւ սպահովեց քառորդ աւարտականի իր

տումը, սակայն.... յաւելեալ յաղթանակի մը կարիք ունի՝ գրաւելու համար իր խմբակին պարագլուխի դիրքը, անշուշտ եթէ կարենայ յաղթել **քուլթեան** Քուլթօ խումբին (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 7):

ՔՈՒԼԻՍՍՅԻՆ*, ան., փխբ. **Քաղաքական գործիչներու պաշտօնական հանգամանք չունեցող հանդիպումներ քննարկումներ** // փխբ. **Կուլիսների ետևում, ոչ պաշտոնական, ծածուկ:** Փաստօրէն, նախքան նիստին մեկնարկը, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի **քուլիսային** տեսակցութիւններ ունեցած էր առնչակից կողմերու պատասխանատուներուն հետ.... (Ազդակ, 20 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՔՍՈՒԱԾՔ, գ. **Վրձինով գոյնի մը կտաւին վրայ տարածուած ձեւը** // **Գեղանկարչության մեջ վրձնելու ձեւ:** Յակոբեան կը սիրէ գոյնի հարթ **քսուածքը**, սակայն, ի պահանջել հարկին, կը գործածէ նաեւ ստուերը, միշտ պահելով մակերեսի մաքրութիւնն ու թեթելութիւնը (Զարթօնք, Հինգշաբթի, 26. 05. 2022):

ՔՍՍՄՆԱՊԻՂԾ, ան., **Անագնի՝ անարգ ըլլալուն պատճառով խորշելի՝ հակակրելի եղող** // **Քստմնելի և պիղծ, գարշելիորեն պիղծ:** Երբ ծանօթացանք՝ դեռ ոչ ոք կը համարձակէր հայերէն-արեւմտահայերէն **քստմնապիղծ** երկուութիւնը բերանն առնելու մոլորութիւնը ունենալ.... (Բագին, թիւ 2-3 2021, էջ 54):

ՔՐԷԱԻՐԱԻԱԿԱՆ, ան., **Քրեական իրաւունքին՝ օրէնքներուն վերաբերող, անոնց յատուկ** // **Քրեական և իրավական, քրեական իրավունքին վերաբերող:** Գլխաւոր դատախազները անդրադարձան.... զինուորական անձնակազմերու **քրեախրաւական** պաշտպանութեան ծիրին մէջ.... Հայաստանի եւ Ռուսիոյ գլխաւոր դատախազներուն միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու կատարման (Ասպարէզ, 5 Յունիս 2021, էջ 9):

ՔՐԻՍՏՈՍԱՍՏԻՊ, ան., Քրիստոսի ձեռով՝ նմանութեան եղած, անոր օրինակին հետեւած // Քրիստոսի նման տեսքով, քրիստոսակերպ: Թեքէանի Յարութեան փոխաբերութիւնը բացայայտ է որ չի հետեւիր Քրիստոսատիպ Յարութեան հետքերուն այլապէս Անցքը կարելի պիտի ըլլար, որովհետեւ Քրիստոսի Յարութիւնը մահուան յաղթանակին կարելիութիւնն է (Բագին, թիւ 2-3 2021, էջ 212):

ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆՆ, ան., Քրիստոսի կողմէ տրուած պատուէր, խրատ՝ նուէր // Քրիստոսից ավանդված, Քրիստոսից իբրև ավանդ հասած: Իսկ այս նիւթերուն միացումով գոյացած Միւռոնը առաքինի գաղափարներու ու Քրիստոսաւանդ ուսուցումներու ամբողջութիւնն է (Զարթօնք, Կիրակի, 10.07.2022):

ՔՐՈՆԻԿԱԳՐԵԼ, բ., Տեղի ունեցած անցքերը ժամանակագրական կարգով արձանագրել // Ժամանակագրել: Կարոյ Տէկէտէի լուսանկարչական գործը չի վկայեր, ո՛չ մէկ ձեռով, չիքրոնիկագրեր (Մ.Ն., 2015, էջ 36):

ՔՕՂԱՐԿԵԱԼ, ան., Գաղտնի՝ թաքուն պահուած, ճշմարտութիւնը սքողած՝ պարտկած // Քողարկված, ծածուկ: Պատերազմին պայթումէն տարի մը ետք որոշ յստակեցումներ կան, սակայն շատ բան կը մնայ անյստակ (եւ բացորոշ է, որ իշխանաւոր իմբակը ամէն ճիգ կ'ընէ որոշ իրականութիւններ քողարկեալ պահելու համար).... (Ազդակ, 1 Հոկտեմբեր 2021, էջ 5):

ՕՂԱԿԱԶ, գ., Թափանցիկ՝ անգոյն՝ օդի նմանող քիմիական նիւթ, որ զանազան գործածութիւններ ունի // Օդանման ցնդող գոյացություն, որ ծառայում է ջեռուցման, լուսավորության և այլ նպատակների համար, գագ: -Կրակ կա՞յ վերը, սենեակին մէջ,- հարցուց: -Այո՛, օդակազի ծորակ մը՝ կտաւաքարով (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէրուփ, 1992, էջ 281)

ՕԹՈՊԻԻՍ, Գ., **Հանրակառք** // Ավտորուս: Նեոյիյն օթոպիւսը կը հասնէր մինչեւ Լուվրի թանգարան (Բագին, 2011, 1, էջ 12):

ՕՂԱԿ*, գ., փխբ. **Անհատի մը ապրած տարիները՝ հաշուած կտրուած ծառի բունին վրայ երեւացող բոլորակաձեւ գիծերու թիւով** // փխբ. **Տարիք, ապրած տարիները (ծառի կոճղի վրայի տարեկան շրջանակների համաբանությունը):** Կենսունակ, շէն, կատակասէր ու արագաշարժ այս մարդը շատ փոխուած էր.... կը մեղադրէր ինքզինք, որ հակառակ իր վաթսունչորսերորդ **օղակին** ծերունիի մը կերպարանքը ստացած էր (Գրական Միջուրք, 6, տարեգիրք, Երևան, 2016, էջ 263)

ՕՐԱՀՐԱՄԱՆ, գ., **Ներկայի գերիսնդիրը, այս պահին անմիջական լուծում պահանջող պարագան** // **Անհրաժեշտություն, օրվա հրամայական:** Իր «Մթափելու օրահրամանը...» յօդուածին մէջ Միհրան Քիրստօղլեան դիտել կու տայ.... (Ազդակ, 19 Հոկտեմբեր 2021, էջ 2):

ՕՐԻՆԱԶՐԿՈՒԻԼ, բ., **Մարդուն իր օրինական իրաւունքներէն զրկելը, զանոնք կորսնցնելը** // **Օրենքից՝ օրինականությունից զրկվելը:** Այդտեղ՝ Ջորջօ Ագամբէն.... ցոյց կու տար որ չկայ գերիշխանութիւն առանց օրէնքով **օրինազրկուած** կեանքի մը արտադրութեան.... (Բագին, թիւ 2-3 2021, էջ 105):

ՕՐՅԵՐԵԿՈՎ, մկբ., իսկց., **Օրուան լուսաւոր ժամին, հոս՝ բոլորի աչքի առջեւ, առանց թաքնուելու** // 1. Տերեկ ժամանակ: 2. փխբ. **Բացահայտորեն:** Մահը կը շրջէր այնտեղ՝ օրցերեկով (Օսգար Ուայլդ, Տորիլըն Կրէյի Պատկերը, Պէլրուրք, 1992, էջ 338):

ՖԱԹԻՄԱԿԱՆ, անծ., **Մուհամետ մարգարէի աղջկայ՝ Ֆաթմայի անունով հիմնուած միջնադարեան արաբական ամիրապետութեան (խալիֆայութեան) առնչուող, Ֆաթիմայի անունէն սերած** // **Մուհամեդի դուստր Ֆաթիմայի անունով հիմնված խալիֆայութեան**

յանն առնչվող՝ վերաբերող: Այսպես, **Ֆաթիմական** խալիֆայութեան մէջ «հայկական շրջանին» պատմականացումը պետք էր որ կատարուէր հայ գիտնականի մը կողմէ, որ միաժամանակ նաեւ «բնիկն» էր իսլամական աշխարհին, այսինքն իր մէջ կը միացնէր տարբեր մշակոյթներ (Ազդակ, 2 Հոկտեմբեր 2021, էջ 4):

ՖԵՏԱՅԱԿԱՆ, ած., Հայ ժողովուրդին, մանաւանդ զիւղացիներուն, աւագակային հարձակումներէ եւ պետական հալածանքներէ պաշտպանող մարտիկին, արդարութեան զինուորին գործունէութեանը նմանող, անոր բնորոշ // Ֆիդայիներին՝ ազատամարտիկներին վերաբերող, հատուկ, ֆիդայիների: Այս ձեռնարկը երկու նպատակ կը հետապնդէր. խումբերը օժտել անձերով, որոնք Երկիր հասնելով՝ կրնան դառնալ տեղական գործիչներ եւ **Ֆետայական** խմբապետներ (Ազդակ, 4 Հոկտեմբեր 2021, էջ 5,6):

ՖԼՈՐԵՆԴԵԱՆ, ած., Տե՛ս *Ֆլորենսական* // Նույնն է՝ *Ֆլորենսական*: ...Տորիընը ելաւ ոտքի, գնաց քովի սենեակը, գիրքը դրաւ **Ֆլորենդեան պզտիկ սեղանին վրայ... (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 206):**

ՖԼՈՐԵՆՍԱԿԱՆ, ած., Իտալիոյ Ֆլորանս քաղաքին յատկանշական, հոն շինուած // Իտալական Ֆլորենցիա քաղաքին հատուկ՝ վերաբերող, Ֆլորենցիայում ստեղծված՝ պատրաստված: Հին գործ մըն է ֆլորենսական (Օսգար Ուայլը, Տորիըն Կրէյի Պատկերը, Պէյրուօ, 1992, էջ 197):

ՖՈՒԿՈՅԱԿԱՆ, ած., Տրանսացի փիլիսոփայ, գրող, գրադատ Միշէլ Ֆուկոյի տեսութեանը՝ տեսակէտներուն առնչուող՝ վերաբերող // Տրանսիացի փիլիսոփա, պատմաբան, սոցիոլոգ Մ. Ֆուկոյին և նրա հայացքներին հատուկ՝ բնորոշ: Քննադատելով Մայիտը, Նշանեան կը փորձէ աւելի մօտ կենալ **ֆուկոյական** հակա-մարդկայնապաշտ հնախօսութեան, կամ գոնէ անիկա յարակարծական կերպով չգործածել (Բազին, թիւ 2-3 2021, էջ 90):

ՀՀ ԳԱԱ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐ ԲԱՌԵՐ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ

Բ. ԳԻՐՔ

Ձևավորումը և էջադրումը՝

Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի